



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(52)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2020

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
 Вестник издается два раза в год по решению ученого совета Государственного университета имени В. Брюсова.
 Bulletin is published twice a year by the decision of Brusov State University Scientific Council.

Խմբագրական խորհուրդ՝

<i>Եղիազարյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>գլխավոր խմբագիր</i>)
<i>Արզումանյան Լիլիթ</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Բարլեգիզյան Արամ</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Բիմ-Բադ Բորիս</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ կրթության ակադեմիայի իսկական անդամ
<i>Գասպարյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Թովուզյան Աիդա</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Խաչատրյան Կարեն</i>	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Խաչատրյան Նարայա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Մարկոսյան Աշոտ</i>	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
<i>Միրումյան Կառլեն</i>	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Նալբանդյան Ջոն</i>	հանրային կառավարման դոկտոր, պրոֆեսոր
<i>Պախսարյան Նարայա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Սերերյակովա Սվետլանա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Տարկալո Նինա</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խմբագրական կազմ՝

<i>Աբրահամյան Կարինե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Գևորգյան Գայանե</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Համբարձումյան Դիանա</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Ալավերդյան Անահիտ</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ապրեսովա Սոնյա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ասատրյան Սուսաննա</i>	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Հովհաննիսյան Ֆրունզե</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ղազարյան Էլիզա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Ղարիբյան Դավիթ</i>	բանասիրական գիտությունների թեկնածու
<i>Մաղոյան Հակոբ</i>	փիլիսոփայական գիտությունների թեկնածու
<i>Մանուկյան Նաիրա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Մարգարյան Բելա</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Սողիկյան Քրիստինե</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Տեխնիկական խմբագիրներ՝

Փիլավջյան Հասմիկ (գլխավոր տեխնիկական խմբագիր)
Ավետիսյան Աննա (տեխնիկական խմբագիր)

Редакционный совет:

Егуазарян Гаяне, доктор филологических наук, профессор (гл. редактор)
Арзуманян Лилит, доктор филологических наук, профессор
Барлезизян Арам, доктор филологических наук, профессор
Бим-Бад Борис, доктор педагогических наук, профессор, диств. член
Академии Наук РД.

Гаспарян Гаяне, доктор филологических наук, профессор
Топузьян Аида, доктор педагогических наук, профессор
Хачатрян Карен, доктор исторических наук, профессор
Хачатрян Наталья, доктор филологических наук, профессор
Маркосян Ашот, доктор экономических наук, профессор
Мирумян Карлен, доктор философских наук, профессор
Налбандян Джон, доктор государственного управления, профессор
Пахсарян Наталья, доктор филологических наук, профессор
Серебрякова Светлана, доктор филологических наук, профессор
Таткало Нина, доктор педагогических наук, профессор

Редакционная коллегия:

Абрамян Карине, доктор филологических наук, профессор
Геворгян Гаяне, доктор филологических наук, профессор
Амбарцумян Диана, доктор филологических наук, профессор
Алавердян Анаит, кандидат филологических наук, доцент
Апресова Соня, кандидат филологических наук, доцент
Асатрян Сусанна, кандидат педагогических наук, доцент
Оганнисян Фрунзе, кандидат филологических наук, доцент
Казарян Элиза, кандидат филологических наук, доцент
Гарибян Давид, кандидат филологических наук
Мадоян Акоп, кандидат философических наук
Манукян Наира, кандидат филологических наук, доцент
Маргарян Бела, кандидат филологических наук, доцент
Согикян Кристине, кандидат филологических наук, до

Технические редакторы:

Пилавджян Асмик (главный технический редактор)
Аветисян Анна (технический редактор)

Editorial Council:

Yeghiazaryan Gayane, Doctor of Sciences (Philology), Professor
Arzumanyan Lilit, Doctor of Sciences (Philology), Professor
Barlezizyan Aram, Doctor of Sciences (Philology), Professor
Bim-Bad Boris, Doctor of Sciences (Pedagogy), Professor, Active Member
(academician) of the Russian Academy of Sciences
Gasparyan Gayane, Doctor of Sciences (Philology), Professor
Topuzyan Aida, Doctor of Sciences (Pedagogy), Professor

Khachatryan Karen, Doctor of Sciences (History), Professor
Khachatryan Natalya, Doctor of Sciences (Philology), Professor
Markosyan Ashot, Doctor of Sciences (Economics), Professor
Mirumyan Karlen, Doctor of Sciences (Philosophy), Professor
Nalbandyan John, Doctor of Sciences (Public Administration), Professor
Pakhsaryan Natalya, Doctor of Sciences (Philology), Professor
Serebryakova Svetlana, Doctor of Sciences (Philology), Professor
Tatkalo Nina, Doctor of Sciences (Pedagogy), Professor

Editorial Board:

Abrahamyan Karine, Doctor of Sciences (Philology), Professor
Gevorgyan Gayane, Doctor of Sciences (Philology), Professor
Hambarzumyan Diana, Doctor of Sciences (Philology), Professor
Alaverdyan Anahit, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Apresova Sonya, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Asatryan Susanna, Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
Hovhannisyanyan Frunze, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Ghazaryan Eliza, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Gharibyan David, Candidate of Sciences (Pedagogy)
Madoyan Hakob, Candidate of Sciences (Philosophy)
Manukyan Naira, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Margaryan Bela, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Soghikyan Kristine, Candidate of Sciences (Philology), Associate Professor

Technical Editors:

Pilavjyan Hasmik (Chief Technical Editor)
Avetisyan Anna (Technical Editor)

Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 1(52): – Երևան,
Լինգվա, 2020, 223 էջ:
Вестник Государственного университета имени В. Брюсова 1(52). –
Ереван, Лингва, 2020, 223 с.
Bulletin of BRUSOV State University 1(52). – Yerevan, Lingva, 2020, 223
pages.

ISSN 1829-3107
© Լինգվա, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ЛИНГВИСТИКА И МЕЖКУЛЬТУРНАЯ КОММУНИКАЦИЯ
LINGUISTICS AND INTERCULTURAL COMMUNICATION

ՄԱՐԻԱՄ ԱԴԱՄՅԱՆ	ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՏԱՐԻՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ (ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)	12
МАРИАМ АДАМЯН	ЛИНГВИСТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ДЕФИНИЦИОННЫХ АССОЦИАЦИЙ В СЕМАНТИЧЕСКОМ ПОЛЕ "ВОЗРАСТ" (НА МАТЕРИАЛЕ АРМЯНСКОГО И АНГЛИЙСКОГО ЯЗЫКОВ)	
MARIAM ADAMYAN	LINGUISTIC MANIFESTATIONS OF DESCRIPTIVE ASSOCIATIONS IN THE SEMANTIC FIELD "AGE" (ON THE MATERIAL OF ARMENIAN AND ENGLISH LANGUAGES)	
ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵԴՅԱՆ	«ՄԵՂՐ» ԲԱՂԱԴՐԻԶՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՓՐԱՅԵՕԼՈԳԻԿԵՍԿԻԵ ԵԴԻՆԻՇՅ ԿՈՄՓՈՆԵՆՏՈՄ «ՄԵԴ» ԵՆ ԲՐԻՏԱՆՍԿՈՅ ԵՎ ԱՐՄՅԱՆՍԿՈՅ ԼԻՆԳՎՈԿՍՆԿՈՒԹՅԱՆ ՓՐԱՅԵՕԼՈԳԻԿԵՍԿԻԵ ԵԴԻՆԻՇՅ ԿՈՄՓՈՆԵՆՏՈՄ «ՄԵԴ» ԵՆ ԲՐԻՏԱՆՍԿՈՅ ԵՎ ԱՐՄՅԱՆՍԿՈՅ ԼԻՆԳՎՈԿՍՆԿՈՒԹՅԱՆ	24
ГАЯНЕ БАРСЕГЯН	ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ С КОМПОНЕНТОМ «МЁД» В БРИТАНСКОЙ И АРМЯНСКОЙ ЛИНГВОКУЛЬТУРАХ	
GAYANE BARSEGHYAN	PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENT "HONEY" IN BRITISH AND ARMENIAN LINGUOCULTURES	

ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	“TO MAKE UP” ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՄԵՔԵՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ	40
ГАЯНЕ ЕГИАЗАРЯН	МАТЕМАТИЧЕСКОЕ МОДЕЛИРОВАНИЕ ФРАЗОВОГО ГЛАГОЛА “TO MAKE UP” ПРИ МАШИИНОМ ПЕРЕВОДЕ	
GAYANE YEGHIAZARYAN	MATHEMATICAL MODELING OF THE PHRASAL VERB “TO MAKE UP” IN MACHINE TRANSLATION	
ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎՄԱՍՅԱՆ	ՏԵՔՍՏԻ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	54
ГРАНУШ ТОВМАСЯН	МЕЖДИСЦИПЛИНАРНЫЙ ПОДХОД К ТЕКСТУ	
HRANUSH TOUMASYAN	THE TEXT FROM AN INTERDISCIPLINARY PERSPECTIVE	
ԳԱՅԱՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ, ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՐՍԵԴՅԱՆ	Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ЭКВИВАЛЕНТНОСТЬ ПЕРЕВОДОВ ЗАГЛАВИЙ ПРОИЗВЕДЕНИЙ О. ТУМАНЯНА И Г. МАТЕВОСЯНА НА РУССКИЙ ЯЗЫК: КРОСС-КУЛЬТУРНЫЙ АСПЕКТ	69
ГАЯНЕ ХАЧАТРЯН СВЕТЛАНА БАРСЕГЯН	EQUIVALENCE OF RUSSIAN TRANSLATIONS OF THE TITLES OF WORKS BY HOVH. TOUMANYAN AND H. MATEVOSYAN FROM A CROSS- CULTURAL PERSPECTIVE	
GAYANE KHACHATRYAN, SVETLANA BARSEGHYAN		
ԱՆՆԱ ԿՆՅԱԶՅԱՆ	ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԿԱՆԱՆՑ ՀՈՒՋԱԶԳԱՑԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ	85

АННА КНЯЗЯН	ՀԱՐԱԽՈՍՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ПАРАВЕРБАЛЬНЫЕ СРЕДСТВА В ЭМОЦИОНАЛЬНОЙ РЕЧИ МУЖЧИН И ЖЕНЩИН	
ANNA KNYAZYAN	PARAVERBAL MEANS IN MALE AND FEMALE EMOTIONAL SPEECH	
ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ КАРИНЕ ОАНИСЯН, РУЗАННА КАРАПЕТЯН	ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ և ՆՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ ПОЛИСЕМИЯ АФФИКСОВ ИМЕН СУЩЕСТВИТЕЛЬНЫХ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ И ИХ ЭКВИВАЛЕНТЫ В АРМЯНСКОМ POLYSEMY OF GERMAN SUBSTANTIVE AFFIXES AND THEIR EQUIVALENTS IN ARMENIAN	98
KARINE HOVHANNISYAN, RUZANNA KARAPETYAN		
ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱԴՂԱՄՅԱՆ ДОНАРА КАЗАРЯН, МАРГАРИТА БАГРАМЯН DONARA GHAZARYAN, MARGARITA BAGHRAMYAN	ԻՍՊԱՆԱԿԱՆ ՊԻԿԱՐՈՅԱԿԱՆ ՎԵՊԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ СИНТАКСИЧЕСКАЯ СТРУКТУРА ИСПАНСКИХ ПЛУТОВСКИХ РОМАНОВ SYNTACTICAL STRUCTURE OF SPANISH PICARESQUE NOVELS	111
ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ	ԱՐՎԵՍՏԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԲԱԴԱԴՐՅԱԼ ԵԶՐԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ МОРФОЛОГИЧЕСКИЕ И ЛЕКСИКО- ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СОСТАВНЫХ ТЕРМИНОВ ИСКУССТВА ИТАЛЬЯНСКОГО И АРМЯНСКОГО ЯЗЫКОВ	122
АНАИТ МКРЯН		

ANAHIT MKRYAN	THE SEMANTIC, FUNCTIONAL AND MORPHOLOGICAL CHARACTERISTICS OF SOME COMPOUND ART TERMS IN ITALIAN AND ARMENIAN	
ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ	«ՀԱՅՐԵՆԻՔ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԸՍՏ ՉՈՒԳՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ)	136
СИРАНУШ ПАПОЯН	СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОНЦЕПТА „РОДИНА” (В СВЕТЕ АССОЦИАТИВНОГО ЭКСПЕРИМЕНТА)	
SIRANUSH PAPOYAN	SEMANTIC FEATURES OF CONCEPT “HOMELAND” (FROM THE PERSPECTIVE OF ASSOCIATIVE EXPERIMENT)	
ԱՄԱԼՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ	ՏԱՐՈՒՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ (ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)	144
АМАЛИЯ ПОГОСЯН	ЧАСТЕРЕЧНЫЕ ОСОБЕННОСТИ ТАБУИРОВАННЫХ СЛОВ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ (СИНХРОННОЕ ИССЛЕДОВАНИЕ)	
AMALYA POGHOSYAN	PART OF SPEECH PECULIARITIES OF TABOO WORDS IN THE ENGLISH LANGUAGE (SYNCHRONIC EXAMINATION)	

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ЛИТЕРАТУРА И КУЛЬТУРА
LITERATURE AND CULTURE**

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ	ՄՈԳԱԿԱՆ ՌԵԱԼԻՉՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆՋԵԼԱ ՔԱՐԹԵՐԻ «ԱՐՅՈՒՆՈՏ ՍԵՆՅԱԿԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ	162
--------------	---	-----

АНИ АСЛАНЯН	ПРОЯВЛЕНИЕ МАГИЧЕСКОГО РЕАЛИЗМА В РАССКАЗЕ АНДЖЕЛЫ КАРТЕР “КРОВАВАЯ КОМНАТА”	
ANI ASLANYAN	MAGICAL REALISM IN THE NOVEL “THE BLOODY CHAMBER” BY ANGELA CARTER	
ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԾԱՌԻ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ ԺԱՆ ԺԻՈՆՈՅԻ «ՄԱՐԴԸ, ՈՐ ԾԱՌԵՐ ԷՐ ՏՆԿՈՒՄ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ	174
АРПИНЕ АРУТЮНЯН	СИМВОЛИКА ДЕРЕВА В РАССКАЗЕ ЖАНА ЖИОНО «ЧЕЛОВЕК, КОТОРЫЙ САЖАЛ ДЕРЕВЬЯ»	
ARPINE HARUTYUNYAN	THE SYMBOL OF TREE IN “THE MAN WHO PLANTED TREES” BY JEAN GIONO	
ՀԵՂԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ	Ա.ՌԵՄԻՋՈՎԻ «ՆԱՐԲԵԿ ԱՐՔԱ» ՀԵՔԻԱԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.	181
ЭГИНЕ СААКЯН	ԽՆԱՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԸ ՏՐՈՒԿՏՈՐՆԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ ՏԿԱԶԿԻ Ա. ՐԵՄԻՅՈՎԱ «ՇԱՐԻՆԱՐԵԿ»: ՄՈՏԻՎ ՍՎԱԾՈՒԹՅԱՆ	
HEGHINE SAHAKYAN	STRUCTURAL ANALYSIS OF A. REMIZOV'S TALE "TSAR NARBEC": MATCHMAKER MOTIVE	
ԼԻԼԻԹ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ	ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	191
ЛИЛИТ САФРАСТЯН	ՔԵՐԵՕՏՄՅՍԼԵՆԻՍԵՆԻՍՏԻՄ ԻԴԵՆՏԻԿՈՒՄՆԻՍՏԻՆ Բ ԿՈՆՏԵՔՏԵ ԽՈՒԺՅԵՏՎԵՆՆՈՅ ԼԻՏԵՐԱՏՈՐԱԿՈՒՐԻ ՎԻՐԱՆՈ-ԱՄԵՐԻԿԱՆԱԿԱՆ ԴԻԱՍՊՈՐԻ	
LILIT SAFRASTYAN	REDIFYNING IDENTITY IN THE CONTEXST OF LITERATURE OF IRANIAN-AMERICAN DIASPORA	

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ
HISTORY**

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ КАРЕН АЙРАПЕТЯН ВОПРОС ЕДИНОЙ АРМЕНИИ В ОТНОШЕНИЯХ ИСПОЛНИТЕЛЬНОГО ОРГАНА ЗАПАДНЫХ АРМЯН С ВЛАСТЯМИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ KAREN HAYRAPETYAN THE ISSUE OF UNIFIED ARMENIA IN THE INTERRELATION OF THE EXECUTIVE BODY OF WESTERN ARMENIANS WITH THE AUTHORITIES OF THE REPUBLIC OF ARMENIA	198
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ INFORMATION ABOUT THE AUTHORS		219

**ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ «ՏԱՐԻՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ
(ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ՄԱՐԻԱՄ ԱԴԱՄՅԱՆ

Հիմնաբառեր՝ լեզվամշակույթ, «տարիք» իմաստային դաշտ, բացատրական սահմանում, գնահատողական սահմանում, համեմատական սահմանում, ժամանակագրական սահմանում

Մեր օրերում լեզվամշակույթը մեկնաբանվում է տարբեր տեսանկյուններից: Մի կողմից, լեզվական մշակույթն առկայանում է մարդու մտածողության մեջ, մյուս կողմից այն հանդես է գալիս որպես մարդկային մշակույթի և արժեքների արտացոլման միջոց: Հոդվածում ուսումնասիրվել է անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտը՝ հայ և անգլոամերիկյան լեզվամշակույթներում: Համեմատական ուսումնասիրության են ենթարկվել սույն մշակույթները կրողների կողմից առաջարկված տարիքային սահմանումները:

Արդի գիտության մեջ լեզվամշակութաբանությունը առանձին ինքնուրույն միջգիտակարգ է, որի վերաբերյալ կան բազմաթիվ աշխատություններ, և որի ուսումնասիրությունները սկսվել են դեռևս XIX դարի վերջից: Ըստ Վ. Ֆոն Հումբոլդտի՝ լեզվամշակութաբանությունը, առաջանալով լեզվի մարդաբանական ուսումնասիրությունների հարացույցի զարգացման արդյունքում, ամրապնդեց լեզվի և ժողովրդի հարաբերությունների փոխկապակցվածությունը (Гумбольдт 1985: 377):

Այսպես, Է. Սեպիրի աշխատություններում մշակույթն ընկալվում է որպես այնպիսի մի փորձառություն, որին տիրապետում է տվյալ հասարակությունը, իսկ լեզուն ըստ Ա. Լեոնտևի՝ «շփման և ընդհանրացման միասնություն է, իմաստային համակարգ, որն առկայանում է խոսքի և՛ բանավոր, և՛ գրավոր ձևերում» (Леонтьев 1993: 16-21): «Լեզվամշակույթ» եզրը տարբեր մեկնաբանություններ է ստացել լեզվաբան Վ. Կրասնիխի աշխատանքներում, որտեղ հեղինակն այն բնորոշում է որպես մի մշակույթ, որն ամրագրված է լեզվում՝ լեզվական նշանների միջոցով (Красных 2012: 71-72):

Հայտնի է, որ լեզուն ազգային մշակույթի հայելին է, այն արտացոլում է ոչ միայն անհատի ապրելակերպի պայմաններն իրական

աշխարհում, այլև ժողովրդի հասարակական ինքնագիտակցությունը (Тер-Минасова 2000: 13):

Տվյալ հետազոտության **նորույթը** տարիքային նորմերի և առանձնահատկությունների, ազգային բնավորության և տարիքային աշխարհընկալման լեզվաբանական ուսումնասիրությունն է, իսկ քննության հիմնական նպատակը՝ լեզվի, ազգային գիտակցության, մշակույթի ուսումնասիրությունը:

Լեզվական գիտակցությունը բնութագրվում է զուգորդային կապերի միջոցով (սեռային, տարիքային, մշակութային և այլն): Միևնույն հասկացության հետ զուգորդային կապերը կարող են տարատեսակ լինել՝ կախված մշակութային առանձնահատկություններից, այնուհանդերձ այդ կապերը կարծրատիպային են յուրաքանչյուր մշակույթի համար:

Հետազոտության **արդիականությունն** այն է, որ ուսումնասիրությունը կատարվում է երկու հեռու ցեղակից տարբեր տիպերի լեզուների նյութի հիման վրա: Բացի այդ, նմանատիպ վերլուծությունները մշտապես արդիական են, քանի որ իմաստային դաշտերում առկա միավորներն անընդհատ կարող են փոփոխվել՝ համաձայն լեզվի դինամիկ բնույթի, ինչպես նաև լեզվամշակութային առանձնահատկությունների:

Հիմնվելով այս փաստի վրա՝ սույն հոդվածում կատարվել է «տարիք» իմաստային դաշտի լեզվամշակութային առանձնահատկությունների ուսումնասիրություն հայ և անգլոամերիկյան մշակույթների տեսակետից: Նշված նպատակին հասնելու համար մեր կողմից մշակվել են առանձին հարցաթերթիկներ հայերեն և անգլերեն լեզուներով, որոնց պահանջն էր ներկայացնել «տարիք» իմաստ արտահայտող բառերի բացատրությունները՝ ըստ ունեցած առաջնային զուգորդումների: Հայ մշակույթը կրողներին առաջարկվել է հարցաթերթիկ, որը ներառում է տարիք ցույց տվող 22 բառ՝ *աղջիկ, տղա, չափահաս, անչափահաս, ավագ, երեխա, երիտասարդ, ծեր, կրտսեր, մանուկ, մեծ, փոքր, նորածին, դեռահաս, պատանի, տարեց, միջահասակ, երկարակյաց, տարիք, հասակակից, մեծահասակ, փոքրահասակ*: Իսկ անգլոամերիկյան մշակույթը կրողներին տրվել է հետևյալ 21 բառերը ներառող հարցաթերթիկ՝ *young, old, child, aged, adolescnet, grown-up, juvenile, adult, girl, boy, infant, junior, senior, toddler, newborn, middle-aged, long-lived, age, little, elderly, baby*: Երկու լեզուներում էլ առանձնացվել են այն բառերը, որոնք

1. վերոնշյալ լեզուների ազգային կորպուսներում ունեն ամենաբարձր հաճախականությունը,

2. բառարաններում ամրագրված են կա՛մ որպես մենիմաստ բառեր, կա՛մ դրանց բացատրությունների շարքում տարիքի նշանակությունը տրվում է որպես առաջնային,

3. չեզոք են ոճական տեսակետից,

4. ուսումնասիրվող իմաստային դաշտի միջուկային միավորներ են:

Հարկ է նշել, որ հարցումները կատարվել են երկու փուլով: Առաջին փուլում հարցաթերթիկները ներառում էին ավելի քիչ թվով միավորներ, որոնք բոլորն էլ համապատասխանում էին վերոնշյալ չափանիշներին: Սակայն հարցման արդյունքները թույլ տվեցին ընդլայնել հարցաթերթիկում ներառված բառերի քանակը՝ մի փոքր շեղվելով մեր կողմից ընտրված չափանիշներից: Բանն այն է, որ հայերենի նախնական հարցաթերթիկը չէր ներառում *մեծ և փոքր*, ինչպես նաև *մեծահասակ, միջահասակ* և *փոքրահասակ* միավորները, քանի որ *մեծ* և *փոքր* բառազույգի դեպքում հայերենի բացատրական բառարաններում դրանց տարիքի նշանակությունները առաջնային չեն՝ *մեծ-մեծահասակ, հասակավոր* (10-րդ իմաստ), *փոքր-մանկական փարիք ունեցող, փոքրահասակ, անչափահաս* (14-րդ իմաստ) (Աղայան 1976: 987, 1537), իսկ *մեծահասակ, միջահասակ* և *փոքրահասակ* միավորների տարիքի նշանակությունները ոչ միայն բառարաններում առաջնային չեն, այլև ազգային կորպուսում ունեն ցածր հաճախականություն (մեծահասակ՝ 403, միջահասակ՝ 847, փոքրահասակ՝ 196): Առաջին փուլով կատարված հարցման արդյունքներում հայ լեզվակիրների կողմից տրված բացատրություններում գերակշռում էր *մեծ* և *փոքր* միավորների կիրառությունը: Քանի որ, ինչպես արդեն նշվել է՝ բառարաններում այս միավորների տարիքի նշանակությունները 10-րդն ու 14-րդն են, փորձեցինք գտնել այս բառերի՝ տարիքի իմաստով այդքան հաճախ կիրառության պատճառաբանությունը: Ըստ մեզ՝ այս միավորները կիրառվում են *մեծահասակ* և *փոքրահասակ* բառերի՝ տարիք ցույց տվող իմաստներով: Այս է պատճառը, որ *մեծ* և *փոքր* բառերի հետ հարցումների երկրորդ փուլ ընդգրկվեցին նաև *մեծահասակ, միջահասակ* և *փոքրահասակ* միավորները: Որպես զուգահեռ կարելի է բերել անգլերենի *big* և *small* միավորների առկայության գրեթե բացակայությունը մեր ունեցած արդյունքներում. անգլերենում բացակայում են հայերենի *մեծահասակ* և *փոքրահասակ* միավորների համարժեքները:

Անգլերեն հարցաթերթիկում առաջին փուլում բացակայում էին *little* և *elderly* միավորները. առաջինի համար տարիքի նշանակությունը նույնպես առաջնային չէ՝ *little- a. being at an early stage of growth; young, b. younger or youngest* (6-րդ բացատրություն) (Hornby 2005), իսկ *elderly*

միավորը թեև ազգային կորպուսում ունի բարձր հաճախականություն (4877), իսկ բառարանում՝ տարիքի առաջնային իմաստ, չեզոքացվել էր իմաստային դաշտի նույնացուցիչ, կորպուսում ավելի հաճախադեպ *old* բառի համեմատությամբ (52171) և չէր ներառվել հարցաթերթիկ: Սակայն ինչպես հայերենի դեպքում, անգլերենի դեպքում ևս՝ արդյունքներում վերոնշյալ բառերի չափազանց բարձր հաճախականությունը ստիպեց ընդլայնել հարցաթերթիկում առկա միավորների քանակը: Հարցմանը մասնակցել է բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող 18-35 տարեկան հարյուրական կամավոր լեզվակիր:

Հետաքրքրական է, որ արդյունքներն առաջին հայացքից կարելի է բաժանել երկու տեսակի՝ բառային զուգորդումներ, որոնք առանձնանում են իրենց հակիրճությամբ, և նկարագրական զուգորդումներ, որոնք ավելի երկարաշունչ են և ներառում են մանրամասն բացատրություն: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում նկարագրական զուգորդումների ուսումնասիրությանը, քանի որ դրանք հիմնականում անհատական գործածություն ունեցող միավորներ են՝ կախված տվյալ անձի բնավորության առանձնահատկություններից: Այսպիսի զուգորդումների յուրահատկությունը պայմանավորված է դրանց երկարաշունչ լինելով, ինչն էլ կիրառում է տվյալ անհատը՝ բացատրելու և ներկայացնելու իր ուրույն աշխարհընկալումը, որը տարբերվում է մյուսների ունեցած պատկերացումներից: Ըստ ռուս լեզվաբան Ժ. Վ. Ֆոմինայի՝ նկարագրական զուգորդումները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

1. բացատրական սահմանում,
2. գնահատողական սահմանում,
3. համեմատական սահմանում,
4. ժամանակագրական սահմանում (Фомина 2014: 97):

Հետաքրքրական է, որ մեր կատարած ուսումնասիրության շրջանակներում նկարագրական զուգորդումներն ավելի բնորոշ են անգլաամերիկյան (հարցվածների 48,7%), քան հայ (հարցվածների 39,4%) լեզվամշակույթը կրողներին: Այս հանգամանքը կարելի է բացատրել հատկապես հարցագրույցների ժամանակ հայերին բնորոշ կաշկանդվածությամբ, ինչն էլ արտահայտվում է զուգորդումների լակոնիկ և հակիրճ նկարագրություններով:

Ուսումնասիրված նյութը ցույց տվեց, որ նկարագրական զուգորդումների շարքում բացատրական սահմանումների տեսակը ամենախիտն ու հաճախադեպն է անգլաամերիկյան (21,6%, 227 օրինակ) և ոչ պակաս կիրառելի հայ (18,8%, 207 օրինակ) լեզվամշակույթներում: Հետաքրքրական է, որ հայերենում այն ամենաբնորոշն է *աղջիկ* և *տղա*

բառերին, քանի որ այս միավորները հիմնականում նկարագրվել են իգական սեռի ներկայացուցիչ և արական սեռի ներկայացուցիչ սահմանումներով համապատասխանաբար: *Չափահաս* բառը հիմնականում բնորոշվում է 18 տարին լրացած անձ, իսկ *անչափահաս* բառը՝ 18 տարեկանից ցածր անձ մեկնաբանություններով, թեև այս վերջին երկու բացատրությունները կարելի է ներառել նաև ժամանակագրական սահմանումների ցանկում, քանի որ նրանք պարունակում են թվային նշում: Այլ օրինակներ՝

Երեխա-Փոքր բալիկ, մինչև 10 տարեկան մարդ:

Երիտասարդ- Հասուն անձնավորություն, որը կարող է իր աշխարհայացքները ունենալ այս կյանքում:

Ծեր-Ծերության հասած, շատ տարիներ ապրած մարդ:

Կրտսեր-Տարիքով փոքր, տարիքային տեսակետից երիտասարդ սերնդին պարկանող:

Անգլաամերիկյան լեզվամշակույթում ևս նկարագրական սահմանումը բավականին բնորոշն է *girl* (Someone with female anatomy. Young female child. Female considered to be young and not fully developed. A human, who biologically is female.) և *boy* (Someone with male anatomy. Young male child. Male not fully developed, young. A human, who biologically is male.) միավորներին: Այս շարքում կարելի է առանձնացնել *senior* և *junior* բառերը ևս, քանի որ դրանց հիմնականում տրվել են *an adult, who gave his son the same name as himself* և *a boy/man, who has the exact same name as his father* մեկնաբանությունները համապատասխանաբար, թեև սույն բառերին տրվել են այլ բացատրական մեկնաբանություններ ևս: Այլ օրինակներ՝

Young-Someone with little life experience. Someone who is not mature enough. People who have a lower age - less experience.

Old-Someone who lived his life and gained life experience. Having lived their life, wrinkled and blemished skin.

Child-Someone who is not yet aware of his or her actions. At primary school, play outside, and have to be dependent.

Adolescent-A high-school student that is a young adult looking to build its future career through education and work. Process of developing from a child into an adult.

Գնահատողական սահմանումները հետաքրքրական են այնքանով, որ գնահատում են կյանքի այս կամ այն շրջանը՝ ելնելով հարցվողի սեփական փորձից, հիմնվելով նրա սեփական ենթադրությունների և կարծիքի վրա: Այսպիսի զուգորդումները ևս կարելի է համարել հաճախադեպ երկու լեզվամշակույթները կրող հարցվողների շրջանում

(հայերեն՝ 9,4%՝ 104 օրինակ, անգլերեն՝ 11,7%՝ 123 օրինակ): Նյութի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ գնահատողական մեկնաբանությունները կարելի է բաժանել երկու ենթախմբի՝

ա. Դրական գնահատողական սահմանումներ

Հետաքրքիր է, որ այս ենթախմբի սահմանումները բնորոշ են հիմնականում կյանքի վաղ շրջանին և փուլերին՝

Երեխա-Երջանիկ ակնթարթներ: Էակ, ում սիրում են բոլորը, չարաճճի, աշխույժ:

Փոքր-Լսող և անկախ հանգամանքից ենթարկվող:

Տղա-Արական սեռի չարաճճի երեխա:

Երիտասարդ-Կյանքով լեցուն: Գունավոր կյանք:

Newborn- The newly born blessing to the family.

Infant- Cute and innocent creature. A beautiful angel baby and a gift from heaven above.

Toddler- Young beautiful baby who is beginning to walk.

Girl- Best creation of god...most powerful creature.

բ. Բացասական գնահատողական սահմանումներ

Բնականաբար, այս ենթատեսակը բնորոշ է կյանքի ավելի ուշ փուլերին, թեև այնքան էլ հաճախադեպ չէ՝

Տարեց-Անկենսունակ անձնավորություն:

Ծեր- Օգնության, հոգատարության կարիք ունեցող մարդ:

Երկարակյաց-Կյանքից հոգնած մարդ:

Adult-Life is over.

Middle-aged-Crisis, at risk of stagnation. Midlife crisis. Crisis, turn off priorities, family, monetary shift.

Aged- Stressful life, too much handled in life. Launched over and walking stick.

Long-lived-Old grumpy person. Time to die.

Ինչպես հայտնի է՝ համեմատությունը պատկերավորման այն միջոցն է, երբ որևէ առարկա կամ երևույթ համեմատվում է այլ առարկաների և երևույթների հետ, այն առավել պատկերավոր դարձնելու համար: Հայ մշակույթում համեմատական սահմանումների օրինակները պատկանում են մասնավորապես ավագ և կրտսեր միավորներին, որոնց բացատրություններում կիրառվել են *ավելի* և *պակաս* մակբայները, և *հասակակից* բառը, որը մեկնաբանվել է հիմնականում նույն կամ միևնույն դերանունների կիրառմամբ: Սակայն, հանդիպում ենք համեմատության այլ օրինակներ ևս (ընդհանուր առմամբ 3% կամ 33 օրինակ)՝

Մեծ-Չափերով, տարիքով, հասակով գերակշռող:

Փոքր-Չափերով, տարիքով, հասակով նվազ:

Կրտսեր-Եղբայրների կամ քույրերի մեջ փոքր՝ ուշ կամ վերջինը ծնված, տարիքով փոքր, տարիքային՝ հասակային տեսակետից երիտասարդ սերնդին պատկանող: Մարդ, որին շրջապատում են իրենից ավելի տարիքով մարդիկ, տարիքով ավելի փոքր: Փոքրը մի քանիսից, քո տարիքից ավելի ցածր մարդ:

Անգլերենում այսպիսի օրինակները մի փոքր ավելի հաճախադեպ են, քան հայերենում (3,5%՝ 37 օրինակ)

Senior- Bigger than junior, someone of greater authority or age relative to others, oldest, older than you, the elder in a group, older person, older than adult, older age.

Junior- Less annoying than an infant, smaller than senior, someone lesser in authority, youngest person, younger than you, a younger member of a group, younger age.

Juvenile- Something/someone younger, younger than adult age, older than a toddler.

Young- People who have a lower age - less experience

Անգլերեն օրինակներում նույնպես համեմատական զուգորդումներն ավելի բնորոշ են junior և senior բառերին, ինչը բավականին տրամաբանական է, քանի որ այս միավորների բառարանային սահմանումների շարքում տարիքային նկարագրությունները տրվում են համեմատության համատեքստում:

Զուգորդումների ժամանակագրական խումբը հիմնված է ժամանակի ընկալման և դրա չափման վրա: Երկու լեզվամշակույթներում էլ այս խումբը բավականին սովոր է, ինչը վկայում է այն մասին, որ տարիքային փուլերը թվերի օգնությամբ կարելի է արտահայտել ավելի հեշտ, քան բառային բացատրությամբ: Հայ հարցվողների զանգվածում հանդիպել ենք այսպիսի զուգորդման 79 դեպք (7,1%), օրինակ՝

Չափահաս-18 տարին լրացած անձ: 18 տարեկան և բարձր անձ:

Անչափահաս-Անձ, ում 18 տարին չի լրացել: 18 տարեկանից փոքր անձ: 18 տարեկանից ցածր անձ:

Երեխա-Մինչև 10 տարեկան մարդ:

Ծեր- 70 անց մարդ: 75 տարեկանից բարձր:

Անգլերենում բացատրության ժամանակագրական տեսակը կիրառվել է 93 անգամ (8,8%), օրինակ՝

Child- People under the age of 18. Person under 14. Someone between 0-16 years, youthful.

Adolescent- Teenager, people ages 13-18. Between 13 and 18 years, still in school and studying towards an adult life.

Middle-aged- People aged 45-65. A person around 35. Around 40 years of age. Between 35-60 years, settling down, making a family etc. Someone around 50-60 years of age.

Long-lived- A person living more than 75 years. People who live a long time like into their 80's or 90's. Someone/ thing who/ that has lived/ lasted longer than average e.g. 100 years.

Հարկ է նշել, որ ժամանակագրական վերոնշյալ բոլոր մեկնաբանությունները հեշտությամբ կարելի է տեղավորել նաև բացատրական սահմանումների ցանկում, քանի որ իրենց բնույթով դրանք նախ և առաջ հենց բացատրական են:

Հետաքրքրական է, որ հարցման արդյունքներում երկու լեզուներում հայտնաբերվել են այնպիսի պատասխաններ, որոնք ոչ մի կերպ հնարավոր չէր տեղավորել որևէ դասակարգման մեջ, օրինակ՝

Մեծ-Կլոր:

Պատանի-հնձ համար չկիրառվող տերմին:

Old-The animals are old in age.

Aged-The woman is middle-aged.

Adolescent-Trial by fire.

Juvenile-Do not use the word.

Adult-The adult went to the store.

Middle-aged-You are just old, not middle-aged.

Long-lived-I have never really heard this phrase. I guess it's just having lived for a long time? But nobody says it unless they are saying, "long live the queen" or something (but nobody says that either) և այլն:

Այսպիսի պատասխանները համատարած չեն և բնականաբար ունեն խիստ անհատական բնույթ, հետևաբար դժվար է դրանցից նույնպես առանձնացնել լեզվամշակութային առանձին տարրեր: Հարկավոր է նշել, սակայն, որ դրանք հայ մշակութային գրեթե բնորոշ չեն (ընդամենը 2 օրինակ), ինչը չի կարելի ասել անգլաամերիկյան մշակութային մասին (33 օրինակ): Թվային անհամապատասխանությունը ցույց է տալիս անգլաամերիկյան լեզվամշակույթը կրողների հուզական առումով ավելի ազատ և բաց լինելը, սահմաններից դուրս գալու և անհատապես ներկայանալու կարողությունը, ինչն այնքան էլ բնորոշ չէ հայ մշակույթը կրողներին:

Ամփոփելով Ժ.Վ. Ֆոմինայի կողմից առաջարկված նկարագրական զուգորդումների ուսումնասիրության կիրառությունը հայերենի և անգլերենի «տարիք» իմաստային դաշտում՝ կարող ենք նշել լեզվամշակութային հետևյալ առանձնահատկությունները, որոնք դուրս են բերվել հարցման արդյունքները քննելիս՝

- Ա՛ հայ, Ա՛ անգլաամերիկյան մշակույթների կրողները իրենց նկարագրություններում հիմնականում օգտագործել են բացատրական սահմանումներ: Այս փաստն ապացուցում է այն, որ, ինչպես «տարիք» իմաստային դաշտում ընդգրկված բոլոր միավորները, այնպես էլ աշխարհում ամեն ինչ կարելի է առավել հեշտությամբ ներկայացնել բացատրական նկարագրություններով և բարդ նախադասություններով, քան մեկ բառով,
- ուսումնասիրվող երկու մշակույթներում էլ կյանքի ավելի վաղ շրջաններին տրվում են դրական գնահատականներ՝ *անհոգ մանկություն, ժպիտներ, կյանքով լեցուն, cute and innocent, beautiful baby* և այլն, իսկ ծերությանը՝ հակառակը՝ բացասական գնահատողական սահմանումներ՝ *անկենսունակ, կյանքից հոգնած, life is over* և այլն: Կարծում ենք, որ նմանատիպ համընկնումը կապված է մարդկանց կարծրատիպային մտածելակերպի հետ, քանի որ հիմնականում ծերության ժամանակ են մարդիկ ձեռք բերում ֆիզիկական և հոգեկան մի շարք խնդիրներ: Այսպիսի կարծրատիպերը ենթադրություններ են այն մասին, թե յուրաքանչյուր տարիքում մարդն ինչպիսին պետք է լինի, ինչպես պետք է դրսևորի իրեն կամ ինչպիսի փորձությունների միջով պետք է անցնի: Նմանատիպ կարծրատիպերը հաշվի չեն առնում անհատական տարբերությունները և մի շարք այլ հանգամանքներ,
- հայ և անգլաամերիկյան մշակույթներում տարիքը բավականին հաճախ զուգորդվում է թվերի հետ, քանի որ «տարիք» հասկացությունն ունի ժամանակային սանդղակի կառուցվածք, որի վրա այս կամ այն նիշին համապատասխանում է տարիքային կոնկրետ փուլ: Վերջինս հեշտությամբ կարելի է արտահայտել թվերով,
- անգլերեն հարցման արդյունքներում հայտնաբերվեցին այնպիսի պատասխաններ, որոնք ոչ մի կերպ հնարավոր չէ տեղավորել վերոնշյալ զուգորդումների ցանկում: Կարծում ենք՝ սա պայմանավորված է անգլոշաամերիկյան մշակույթի ներկայացուցիչների հուզական առումով ավելի բաց բնույթով: Այս փաստը նրանց անհատապես ներկայանալու կարողության խոսուն վկան է, ինչը չի կարելի ասել հայ մշակույթը կրողների մասին: Վերջիններս ավելի ենթարկվող են և պահպանողական:
 Այսպիսի համեմատական ուսումնասիրությունն ակնառու է դարձնում այն փաստը, որ մշակույթն իր տեսանելի ազդեցությունն է ունենում լեզվի և լեզվամտածողության վրա և հակառակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976
2. Ասմանզույան Հ.Ա., Հովհաննիսյան Մ.Ի., Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, 1984
3. Ахманова О.С., Словарь лингвистических терминов: 4-е изд., Москва, 2007
4. Гумбольдт В.Ф., Язык и философия культуры, Москва, 1985
5. Красных В.В., Культура, культурная память и лингвокультура: их основные функции и роль в культурной идентификации, Вестник Центра международного образования Московского гос. ун-та. Серия «Филология. Куль-турология. Педагогика. Методика», №3, 2012
6. Кронгауз М.А., Семантика, Учебник для вузов, Москва, 2001
7. Леонтьев А.А., Языковое сознание и образ мира. Язык и сознание: парадоксальная рациональность, Москва, 1993
8. Луков В.А., Тезаурус и возраст // Вал. А. Луков. Тезаурусный анализ мировой культуры: сб. науч. трудов. – Вып. 13, Москва, 2007
9. Телия В.Н., Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты, Москва, 1996
10. Тер-Минасова С.Г., Язык и межкультурная коммуникация, Москва, 2000
11. Фомина Ж.В., Сравнительные характеристики в понятийно-вербальном сознании носителей русской и американской молодежных лингвокультур. Типы дефиниций, Lingua mobilis № 5 (51), Москва, 2014
12. Hornby A.S., Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, 2005
13. <http://doctors.am/hy/personality-and-psychics/socialization-and-identity>
14. <https://www.etymonline.com/search?q=juvenile>
15. https://www.etymonline.com/word/juvenile#etymonline_v_6581

REFERENCES

1. Aghayan E' B, Ardi hayereni bacatrakan bar'aran, Er&an, 1976
2. Asmangowlyan H.A., Hovhannisyan M.I., Angleren-hayeren bar'aran, Er&an, 1984
3. Ahmanova O.S., Slovar' lingvisticheskikh terminov:4-e izd.,Moskva, 2007
4. Gumbol'dt V.F., Jazyk i filosofija kul'tury, Moskva, 1985

5. Krasnyh V.V., Kul'tura, kul'turnaja pamjat' i lingvokul'tura: ih osnovnye funkicii i rol' v kul'turnoj identifikacii, Vestnik Centra mezhdunarodnogo obrazovanija Moskovskogo gos. un-ta. Serija «Filologija. Kul'-turologija. Pedagogika. Metodika», №3, 2012
6. Krongauz M.A., Semantika, Uchebnik dlja vuzov, Moskva, 2001
7. Leont'ev A.A., Jazykovoe soznanie i obraz mira. Jazyk i soznanie: paradoksal'naja racional'nost', Moskva, 1993
8. Lukov V.A., Tezaurus i vozrast // Val. A. Lukov. Tezaurusnyj analiz mirovoj kul'tury: sb. nauch. trudov. – Vyp. 13, Moskva, 2007
9. Telija V.N., Russkaja frazeologija. Semanticheskij, pragmaticeskij i lingvokul'turologicheskij aspekty, Moskva, 1996
10. Ter-Minasova S.G., Jazyk i mezhkul'turnaja kommunikacija, Moskva, 2000
11. Fomina Zh.V., Sravnitel'nye harakteristiki v ponjatijno-verbal'nom soznanii nositelej russkoj i amerikanskoj molodezhnyh lingvokul'tur. Tipy definicij, Lingua mobilis № 5 (51), Moskva, 2014

**МАРИАМ АДАМЯН - ЛИНГВИСТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ
ДЕФИНИЦИОННЫХ АССОЦИАЦИЙ В СЕМАНТИЧЕСКОМ ПОЛЕ
"ВОЗРАСТ"(НА МАТЕРИАЛЕ АРМЯНСКОГО И АНГЛИЙСКОГО ЯЗЫКОВ)**

Ключевые слова: лингвокультура, концептосфера "возраст", определение-описание, оценочное определение, сравнительное определение, хронологическое определение

Сегодня лингвокультурный концепт трактуется с разных точек зрения. С одной стороны, лингвокультура проявляется в менталитете человека, а с другой стороны, о концепте можно говорить, как о способе отражения культуры и ценностей. В статье была рассмотрена концептосфера "возраст" на материале армянского и английского языков, а также представлены результаты дефиниционного эксперимента, проведенного среди представителей армянской и англо-американской лингвокультур. В статье также обсуждаются сравнительные характеристики типов дефиниций, предоставленных респондентами двух лингвокультур.

MARIAM ADAMYAN-LINGUISTIC MANIFESTATIONS OF DESCRIPTIVE ASSOCIATIONS IN THE SEMANTIC FIELD "AGE" (ON THE MATERIAL OF THE ARMENIAN AND ENGLISH LANGUAGES)

***Keywords:** linguoculture, conceptual sphere "age", descriptive definition, evaluative definition, comparative definition, chronological definition*

Today, there are different interpretations for the linguocultural concept. On the one hand, linguoculture exists in the mentality of a person; on the other hand, it is a way of reflecting human culture and values. The article examines the conceptual sphere "age" on the material of Armenian and English languages, and presents the findings of the definitional experiment conducted among the representatives of Armenian and Anglo-American linguocultures. Comparative characteristics of the types of definitions provided by the respondents of the two linguocultures are also discussed in the paper.

Ներկայացվել է՝ 16.01.2020
Երաշխավորվել է ԲՊՀ Լեզվաբանության և
հաղորդակցման ամբիոնի կողմից՝ 01.04.2019
Գրախոսվել է՝ 29.03.2019

«ՄԵՂՐ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ ԼԵՂՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հիմնաբառեր՝ լեզվամշակույթ, դարձվածային միավոր, ասացվածք, իմաստային բաղադրիչ, աստվածաշնչյան գրվածքներ

Յուրաքանչյուր լեզու յուրովի է նկարագրում մեզ շրջապատող աշխարհը և իրականության կարգայնացումը տարբեր կերպ է դրսևորվում: Դարձվածային միավորները (հետայսու՝ ԴՄ-ներ) լեզվակիր հանրույթի պատկերավոր մտածողության և գեղարվեստական հարուստ միջոցների կիրառման արգասիք են:

ԴՄ-ները հարստացնում են լեզուն և օժտված են հուզարտահայտչական երանգավորմամբ: Գ. Անտրուշինան նշում է, որ «ԴՄ-ները լեզվի բառապաշարի ամենագունագեղ և արտահայտչական միավորներն են» (Антрушина 2005:225): Գ. Եղիազարյանը տարբերում է հուզարտահայտչական ԴՄ-ները արտահայտչական ԴՄ-ներից՝ փաստելով, որ «եթե հուզարտահայտչական ԴՄ-ներում գնահատման տարրը կարող է լինել բացահայտ կամ արտակա, ապա արտահայտչական ԴՄ-ների հուզական գնահատման իմաստը ներկա է և կարող է իրացվել միայն համատեքստում» (Yeghiazaryan 2006:81):

Իր հերթին, Ս. Ֆինկերը վկայում է, որ «մեր երկարատև հիշողության մեջ առկա են այնքան կարծրացած արտահայտություններ, որքան բառեր» (Pinker 1994:92-98): Հետաքրքրական է, որ անգլերենում *'idiom'* եզրույթը և *'idiotic'* բառերը ծագել են միևնույն *'idios'* արմատից: Վերջինս հունական ծագում ունի և նշանակում է «սեփական, մասնավոր»: Այսինքն՝ իդիոմները նույնպես մասնավոր արտահայտություններ են: Դրանք լեզվական հանելուկներ են, որոնք կարելի է լուծել՝ պատասխանը նախապես իմանալու պարագայում (<https://www.deccanherald.com/content/19769/idiotic-joy-idioms.html>):

Ըստ ձևակազմական-քերականական հատկանիշների տարբերում են ԴՄ-ների *անվանողական* և *հաղորդակցական* տեսակներ: Անվանողական դարձվածքները համընկնում են բառակապակցությունների կառուցվածքային տեսակներին, իսկ հաղորդակցական դարձվածքները՝ նախադասությանը (Խաչատրյան, Ավետիսյան 2015):

Սույն հոդվածի **արդիականությունը** պայմանավորված է բրիտանական և հայ լեզվամշակույթներում «մեղր» բաղադրիչով կազմված ԴՄ-ների ընդհանրությունների և տարբերությունների վերհանման կարևորությամբ: Հոդվածի հիմնական **նպատակն է** վեր հանել բրիտանական և հայ լեզվամշակույթներում «մեղր» բաղադրիչով կազմված ԴՄ-ներում առկայացած իմաստային բաղադրիչները: Կիրառվել են բաղադրիչային վերլուծության, նկարագրական, վիճակագրական, համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնասիրության մեթոդները:

Նախևառաջ, անդրադարձ կատարելով *honey* և *մեղր* բառերի ծագմանը՝ կարելի է փաստել, որ անգլերենում *honey* բառը սերում է հին անգլերենի ***hunig*** բառից, որն էլ գերմանական ծագում ունի (<https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/honey?q=honey>): Ըստ Հ. Աճառյանի՝ *մեղր* բառը հայերենում բնիկ բառ է (Աճառյան 1926:302/2004:184): Իսկ Գ. Զահուկյանը վկայում է, որ *մեղր* բառը բնիկ հնդեվրոպական է և ծագում է *melit* արմատից (Զահուկյան 2010:522):

Ինչ վերաբերում է բառարանային սահմանումներին, ապա *honey* բառն անգլերենում ունի երեք նշանակություն՝ ա/ *a sweet, sticky yellow-brown substance made by bees that is spread on bread, etc. like jam*; բ/ *a way of addressing somebody that you like or love*; գ/ *a person that you like or love and think is very kind* (OALD 2006:748): Հայերենում «մեղր» բառն ունի երկու նշանակություն՝ ա/ *քաղցր՝ մածուցիկ ու թանձր հյութ, որ մեղուները պատրաստում են մեղրաբեր բույսերի ծաղիկների նեկտարից*, բ/ *շաք քաղցր ախորժեղի բան, քաղցրություն* (Աղայան 1976:994): Բառի իմաստային դաշտում անգլերենում և հայերենում համընկնում է միմիայն հիմնանշանակային հասկացական հատկանիշը, այն է՝ *քաղցր՝ մածուցիկ ու թանձր հյութ, որ մեղուները պատրաստում են մեղրաբեր բույսերի ծաղիկների նեկտարից*:

Անգլերենում ***honey*** բառի բառակազմական բնի մեջ մտնում է տասը բառային միավոր՝ *honeytrap, honeybee, honeycomb, honeydew melon, honeyeater, honeyed, honeymoon, honeymooner, honeypot, honeysuckle* (OALD 2006:748): Իսկ հայերենի հարուստ բառակազմական միջոցների շնորհիվ ***մեղր*** բառի բառակազմական բնի մեջ մտնում է 27 բառային միավոր՝ *մեղրաբեր, մեղրաբերան, մեղրաբերք, մեղրաբլիթ, մեղրաբջիջ, մեղրաբուխ, մեղրաբույս, մեղրաբույր, մեղրագետ, մեղրագինի, մեղրագիշեր, մեղրագույն, մեղրադրում, մեղրազույգ, մեղրախմիչք, մեղրախոս, մեղրամիս, մեղրաթաթախ, մեղրախնձոր, մեղրահաց, մեղրածոր, մեղրանույշ, մեղրափունջ, մեղրիկ, մեղրուկ,*

մեղրածանձ, մեղրաբաժակ (Աղայան 1976:994-995; Գալստյան, Հովսեփյան & Սահակյան 2017:100):

Բառուբանի հյութով լեցուն հայ գրականության մեջ մեղր բառը գործածվել է բառակապակցություններում, որոնք փոխաբերական նշանակություն ունեն: Այսպես, *մեղր երազել, յոթփուֆ մեղրով չուրվող հայհոյանքներ, թանձր մեղրով համեմել խոսքը, մեղրի պես ձայնը ծորալ, խոսքից մեղր քամել, թույն է մեղրը գերության, հայրենիքի փուշը վարդ, թույն է մեղրն էլ օտարի* (<http://www.eanc.net>): Անգլալեզու գրականության մեջ *honey* բառը գործածվել է բազմաթիվ փոխաբերական բառակապակցություններում նույնպես: Այսպես, *“she rolled the words on her tongue like honey,” “her pony-tailed hair, which was colored like dark honey,” they would hang on his every word as if it were golden honey,” “time is honey from a wooden spoon,” “a mop of curls that looked in the darkness like honey swirled in chocolate”* (<https://www.english-corpora.org/coca>).

Շարունակելով մեր դիտարկումները՝ քննության առնենք «մեղր» բաղադրիչ պարունակող ԴՄ-ների օրինակներ: Ստորև ներկայացնում ենք անգլերենի «**honey**» բաղադրիչով ԴՄ-ների աղյուսակ, որում նշված է անգլերեն դարձվածային միավորը, դրա համարժեքը և/կամ թարգմանությունը հայերենում և բացատրությունը:

Աղյուսակ 1

Դարձվածային միավորը անգլերենում	Դարձվածային միավորի հայերեն համարժեքը և/կամ թարգմանությունը	Դարձվածային միավորի անգլերեն բացատրությունը
sweet as honey/ sweeter than honey	<i>կաթի ու մեղրի համ հունենալ/մեղր կաթել քերանից</i> , մեղրի պես քաղցր, շաքարի պես քաղցր (Նազարյան 2000: 153)	very sweet, charming
You can catch more flies with honey than with vinegar/honey catches more flies than vinegar	<i>լավ խոսքը հանգցնում է կրակը</i> , քաղցր խոսքով ավելի շատ բանի կարելի է հասնել, քան կոպտությամբ	it is easier to get what you want by flattering people and being polite to them than by making demands (http://idioms.thefreedictionary.com/honey)

<p>the land of milk and honey/ a land flowing with milk and honey</p>	<p>մեղր հոսել/մեղր ու կաթ թխել</p> <p>կաթի ու մեղրի երկիր/երկիր, ուր մեղր ու կարագ է հոսում</p>	<p>a country where people from other countries would like to live because the living conditions are excellent (http://idioms.thefreedictionary.com/honey)</p>
<p>Where bees are, there is honey/ While honey lies in every flower, it takes a bee to get the honey out</p>	<p>բարեկեցության կարելի է հասնել միմիայն քրտնաջան աշխատանքի շնորհիվ</p>	<p>humans can do what the hard-working honey bee does to produce natural sweetener (http://news.google.com/newspapers?nid=1241&dat=19950914&id=hGZTAAAAI8AJ&sjid=HoYDAAAAI8AJ&pg=4928,596439)</p>
<p>When bees are old, they yield no honey/Old bees yield no honey</p>	<p>տարեց մարդիկ չեն կարող եռանդով աշխատել</p>	<p>one should not expect old people to be very agreeable and cooperative, or even productive</p>
<p>Bees that have honey in their mouths have stings in their tails</p>	<p>արտաքինը խաբուսիկ է</p>	<p>people should be careful from people who pretend to be sweet</p>
<p>Honey is sweet but the bee stings/ If a bee didn't have a sting, he couldn't keep his honey/ There is no honey without a sting, nor a rose without a thorn</p>	<p>առանց վշի վարդ չկա,</p> <p>հաջողությունների հասնելու համար պետք է շատ դժվարություններ հաղթահարել,</p> <p>հեշտությամբ ոչինչ ձեռք չի բերվում</p>	<p>there may be risk, danger or disadvantages behind something that is attractive or profitable, so be careful or watchful</p>

No bees, no honey/It's the roving bee that gathers honey	<i>ով աշխատի, նա կուտի</i>	No work, no money/One who works hard, enjoys prosperity
The still bee gathers no honey/ The bee works all summer and eats honey all winter	<i>ինչ որ ցանես, այն կհնձես/ամառվա փուշ, ձմեռվա նուշ</i>	If you don't work, you don't get any profit or gain (http://www.weblearneng.com/bee-figures-of-speech)
The bee that makes the honey doesn't stand around the hive	պետք է անդուլ-անդադրում ջանքեր գործադրել ստեղծածը պահպանելու համար	the man who makes the money has to worry, work, and strive
When the bee sucks it makes honey, when the spider, poison	<i>նույն ծաղկից մեղուն մեղր է քամում, օձը՝ թույն</i>	from the same flower the bee makes honey, and the snake, a drop of poison

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ում, անգլերենում «honey» բաղադրիչով ԴՄ-ների մեծ մասը ասացվածքներ են և հաղորդակցական բնույթ ունեն: Ուսումնասիրված անգլերեն ԴՄ-ներում առկա են *if, when, while, where, but, that* շաղկապներով ձևավորված դարձվածք-նախադասություններ: Իսկ ածականական *sweet as honey/sweeter than honey* և գոյականական *the land of milk and honey* ԴՄ-ները անվանողական բնույթ ունեն:

Անգլերենի «honey» բաղադրիչով ԴՄ-ների գերակշիռ մասը չունի «մեղր» բաղադրիչով համարժեք հայերեն ԴՄ-ներ, կամ՝ համարժեք հայերեն ԴՄ-ները աչքի են ընկնում ընդգծված բաղադրիչային և շարահյուսական տարբերություններով: Բացառություն են միմիայն *sweet as honey/sweeter than honey, the land of milk and honey/a land flowing with milk and honey* և *when the bee sucks it makes honey, when the spider, poison* ԴՄ-ները: Իսկ *where bees are, there is honey, old bees yield no honey* և *the bee that makes the honey doesn't stand around the hive* ԴՄ-ները չունեն

համարժեք ԴՄ-ներ հայերենում և փոխանցվում են բացատրական թարգմանության միջոցով:

Հարկ է նշել, որ *While honey lies in every flower, it takes a bee to get the honey out* ԴՄ-Ը, որը նշանակում է «բարեկեցության կարելի է հասնել միմիայն քրտնաջան աշխատանքի շնորհիվ», անգլերենում ունի երկու հոմանիշ ԴՄ-ներ՝ *Life is not all cakes and ale* և *If life hands you lemons, make a lemonade*:

Այժմ ներկայացնենք «մեղր» բաղադրիչով կազմված ԴՄ-ները հայերենում, դրանց բացատրությունը, համարժեքները և/կամ թարգմանությունը անգլերենում և կիրառության օրինակները:

Աղյուսակ 2

Դարձվածային միավորը հայերենում	Դարձվածային միավորի բացատրությունը	Դարձվածային միավորի անգլերեն համարժեքը և/կամ թարգմանությունը	Դարձվածային միավորի կիրառության օրինակը
կաթի ու մեղրի համ ունենալ	շատ քաղցր լինել	<i>sweet as honey/sweeter than honey</i>	-Խորսիսի մեղր է կաթում քո շուրթերից, հարս, մեղր ու կաթ է քո լեզվի տակ (http://www.eanc.net):
մեղր կաթել/բերնեն մեղր ու կաթ վազել/ շրթունքեն մեղր հոսիլ	քաղցր խոսել	<i>sweet as honey/sweeter than honey,</i> roll the words on the tongue like honey	Երբեմն նա այնքան քաղցր էր, որ կարծես թե շրթունքներից մեղր էր կաթում, իսկ երբեմն այն աստիճան ժանտ էր, որ կկարծեիր, թե աչքերից, երեսից լեղի էր թափում (http://www.eanc.net):

մեղր հոսել/մեղր ու կաթ բխել	առատություն թափվել	the land of milk and honey/ a land flowing with milk and honey	Մեր նորավարտն հանդգնում է մի թեթև ճանապարհա-ծախքով ուղևորվիլ «...» դեպի այն ավետյաց երկիրը, ուր բարձրագույն կրթության մեղր ու կաթն է բխում (Բեդիրյան 2011:935):
մեղր ու շաքար կտրիլ	ցուցաբերել բարեհամբույր վերաբերմունք	be kind towards somebody	Պեյ Էֆենտին մեղր ու շաքար կտրած կհարցնե անուն, մամանուն, զբաղում և այլն (Բեդիրյան 2011):
մի կաթիլ մեղր	մեծ աղմուկ ոչնչից	much ado about nothing, to make a mountain out of a molehill	Այսպես կոչված հայ ազգը իր թվական համեմատությամբ մի կաթիլ մեղր է՝ լցված աշխարհի հարյուրից ավելի պետությունների մեջ (http://www.eanc.net):
նույն ծաղկից մեղուն մեղր է քանում, օձը՝ թույն/նույն ծաղկեն մեղուն մեղր կքաղե, օձը պուտ թույն	լավ մարդը բարություն է սերմանում, վատ մարդը՝ չարություն	When the bee sucks it makes honey, when the spider, poison	«...» ծաղիկը դրված է մեջտեղը և նույն ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը՝ թույն (https://www.goodreads.com/quotes/5750741):
մեղր ու կարագ դառնալ	բարեկամանալ, փափկել, բարեհամբույր	become friendly, be on good terms	«...» հակամարտող կողմերն արդեն մեղր ու կարագ են դարձել իրար

	դառնալ	with each other	նկատմամբ (https://news.am/arm/news/505867.html):
դունչը մեղրի մեջ թաղված լինել/մեղրի մեջ կենալ/ յուղ ու մեղրի մեջ լողալ/մի ձեռքը եղում, մյուսը մեղրում	լիության մեջ ապրել	live in prosperity and wealth	«...» իսկական իտալացու նման խոսող մի անգլիացի ռադիոյով ամեն օր պրոպագանդում էր, որ անգլիացիների գալու հետ մենք յուղ ու մեղրի մեջ լողալու ենք (http://www.eanc.net):
մի մատ մեղր դառնալ	խայտառակվել	digrace oneself	Այսպես թե այնպես, Դոլմագովի անունը կարող է քաղաքի բերանում մի մատ մեղր դառնալ, արդեն բամբասանքները սկսել են (http://www.eanc.net):
մի փուֆ մեղրով չի ուտվի	վիրավորական խոսքեր են	very offensive words	«Ափեր Ադիբեկի խոսքը մի փուֆ մեղրով չի ուտվի» «...» (http://www.eanc.net):
մեղրի պուլիկը լպստող	փշրանքներով կերակրվել	live on crumbs	Տո՛, մեղրի պուլիկը լպստող Սամփոն, վատ հոգեառի պես թողիր էլ ոչ թե մեղքներս խոստովանինք (Բեդիրյան 2011:935):

Վերը նշված աղյուսակում «մեղր» բաղադրիչով կազմված ԴՄ-ների մեծամասնությունը (*մեղր ու կարագ դառնալ, դունչը մեղրի մեջ թաղված լինել, մեղրի մեջ կենալ, մի ձեռքը եղում, մյուսը մեղրում, մեղր կաթել, բերանից մեղր թափել, կաթի ու մեղրի համ ունենալ, մեղր ու շաքար կտրիլ, մեղր հոսել/մեղր ու կաթ բխել*) դրական իմաստ են արտահայտում: Իսկ **մի մալ մեղր դառնալ, մի փութ մեղրով չի ուրվի և մեղրի պուլիկը լպստող** ԴՄ-ները բացասական իմաստ ունեն:

Հայ լեզվամշակույթում «**մի կաթիլ մեղրը**» նույնպես բացասական նշանակություն ունի և Հովհ. Թումանյանի հանրահայտ բալլադը վկայում է այն մասին, թե հայերը ինչպես են *չնչին բանից մեծ աղմուկ բարձրացնում*: Մինչդեռ անգլերենում «*լուն ուղարդանելը*» կամ «*չնչին բանից մեծ աղմուկ բարձրացնելը*» որևէ կերպ չի արտահայտվում «*մեղրի*» միջոցով: Այս առումով, հայերենի և անգլերենի միջև նկատվում է **համապատասխանության բացակայություն**: Բանն այն է, որ անգլերենում նշված իմաստն արտահայտվում է «***much ado about nothing***» և «***to make a mountain out of a molehill***» ԴՄ-ներով: Հարկ է նշել, որ անգլերենում ***much ado about nothing*** ԴՄ-ն ծագել է Ուիլյամ Շեքսպիրի «***Much ado about nothing***» (*հայ. Մեծ աղմուկ ոչնչից*) կատակերգության համանուն վերնագրից:

Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում ներկայացված անգլերեն և հայերեն «մեղր» բաղադրիչով ԴՄ-ների միջև առկա են հետևյալ համապատասխանությունները.

❖ *sweet as honey/ sweeter than honey* = կաթի ու մեղրի համ ունենալ, մեղր կաթել բերանից,

❖ *the land of milk and honey/a land flowing with milk and honey* = մեղր հոսել/մեղր ու կաթ բխել (կաթի ու մեղրի երկիր/երկիր, ուր մեղր ու կարագ է հոսում),

❖ *when the bee sucks, it makes honey; when the spider, poison* = նույն ծաղկից մեղուն մեղր է քամում/շինում, օձը՝ թույն/նույն ծաղկեն մեղուն մեղր կքաղե, օձը՝ պուտ թույն:

«Մեղր» բաղադրիչ պարունակող անգլերեն և հայերեն ԴՄ-ներում առանձնացրել ենք հետևյալ իմաստային բաղադրիչները.

❖ աղքատություն – հայ. մեղրի պուլիկը լպստող,

❖ առատություն – անգլ. *the land of milk and honey/a land flowing with milk and honey*; հայ. *դունչը մեղրի մեջ թաղված լինել, մեղրի մեջ կենալ/լող տալ, մի ձեռքը եղում, մյուսը մեղրում, մեղր հոսել/մեղր ու կաթ բխել,*

- ❖ բարեկամություն – հայ. մեղր ու կարագ դառնալ, մեղր ու շաքար կտրիլ,
- ❖ բարություն/չարություն - When the bee sucks, it makes honey; when the spider, poison; նույն ծաղկից մեղուն մեղր է քամում/շինում, օձը՝ թույն/նույն ծաղկեն մեղուն մեղր կքաղե, օձը պուտ թույն,
- ❖ իրարանցում/աղմուկ-աղաղակ – հայ. մի կաթիլ մեղր,
- ❖ խաբկանք – անգլ. Bees that have honey in their mouths have stings in their tails,
- ❖ խայտասակություն – հայ. մի մատ մեղր դառնալ,
- ❖ ծուլություն/հեղգություն – անգլ. No bees, no honey; the still bee gathers no honey; when bees are old, they yield no honey; old bees yield no honey,
- ❖ պայքար/դժվարությունների հաղթահարում – անգլ. Honey is sweet but the bee stings, If a bee didn't have a sting, he couldn't keep his honey, There is no honey without a sting, nor a rose without a thorn,
- ❖ ջանասիրություն – անգլ. Where bees are, there is honey; the bee works all summer and eats honey all winter; It's the roving bee that gathers honey; the bee that makes the honey doesn't stand around the hive; While honey lies in every flower, it takes a bee to get the honey out,
- ❖ վիրավորանք, անարգանք – հայ. մի փութ մեղրով չի ուտվի,
- ❖ քաղցրախոսություն/ձայնի հմայք – անգլ. You can catch more flies with honey than with vinegar/honey catches more flies than vinegar; հայ. մեղր կաթել, բերանից մեղր թափել,
- ❖ քաղցրություն – անգլ. sweet as honey/sweeter than honey; հայ. կաթի ու մեղրի համ ունենալ:

Ինչպես երևում է վերը նշվածից, *մեղր* բաղադրիչով անգլերեն ԴՄ-ներում բացակայում են *բարեկամություն*, *խայտասակություն*, *իրարանցում/աղմուկ-աղաղակ*, *աղքատություն* և *վիրավորանք*, *անարգանք* իմաստային բաղադրիչները, իսկ հայերենում՝ *ջանասիրություն*, *ծուլություն/հեղգություն*, *խաբկանք* և *պայքար/դժվարությունների հաղթահարում* իմաստային բաղադրիչները:

Առանձնակի ուշադրության է արժանի այն, որ անգլերենում և հայերենում «մեղր» բաղադրիչ պարունակող որոշ ԴՄ-ներ սերում են աստվածաշնչյան գրվածքներից: Նշված պնդումը բխում է մասնավորապես ամերիկացի ականավոր լեզվաբան Ռ. Լեդերերի և Գ. Հակոբյանի հոդվածների քննությունից:

Ամերիկյան *Language* ամսագրի «*Last writes*» վերնագրով հոդվածում լեզվաբան Ռ. Լեդերերը լուսաբանում է Աստվածաշնչի

գրվածքներից ծնունդ առած անգլերեն ԴՄ-ները: Պարզվում է, որ անգլերենը դարձվածքներով հարստացել է Անգլիայի թագավոր Ջեյմսի VI-ի կողմից Աստվածաշնչի թարգմանությունից հետո (Language, September 2011:46): Ռ. Լեդերերը վեր է հանել Աստվածաշնչի գրվածքներից ծնունդ առած ավելի քան 50 անգլերեն ԴՄ-ներ, որոնց շարքին է դասվում նաև **the land of milk and honey/a land flowing with milk and honey** ԴՄ-ը:

Իր հերթին, Գ. Հակոբյանը վեր է հանել *Աստվածաշնչի գրվածքների և հայերեն ասացվածքների ու առածների համապատասխանությունը*: Ստացված տվյալները վկայում են, որ հայերենի «**մեղրն ալ անուշ է, շափ ուտողին կը վնասե**», «**եղ ու մեղրի մեջ լող կուտայ**», «**եղ ու մեղրի մեջը խեղդավ**», և անգլերենի «**There is no rose without thorns/There is no honey without a sting, nor a rose without a thorn**» ԴՄ-ները ծագում են Աստվածաշնչի գրվածքներից (<https://www.csun.edu/~ghagogian/Documents/OriginalArmenianProverbsandtheBiblicalScripture.pdf>):

Աստվածաշնչից ծնունդ առած ԴՄ-ների իմաստային դաշտում կարելի է առանձնացնել *հարստություն/լիություն* (անգլ. *the land of milk and honey/a land flowing with milk and honey*; հայ. *եղ ու մեղրի մեջ լող կուտայ*), *ազահություն* (մեղրն ալ անուշե, շատ ուտողին կվնասե, եղ ու մեղրի մեջը խեղդավ) և *պայքար/դժվարությունների հաղթահարում* (անգլ. *There is no rose without thorns/There is no honey without a sting, nor a rose without a thorn*) իմաստային բաղադրիչները:

Ամփոփելով սույն ուսումնասիրության արդյունքները՝ բրիտանական և հայ լեզվամշակույթներում *մեղր* բաղադրիչով կազմված ԴՄ-ների վերաբերյալ, կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. «Մեղր» բաղադրիչ պարունակող ԴՄ-ները բրիտանական և հայ լեզվամշակույթներում իրականության կարգայնացման լեզվական միջոցներից մեկն են՝ և դրանց իմաստային կառուցվածքում առկա է հուզարտահայտչական գնահատման իմաստույթը:

2. Քննության առնված ԴՄ-ները առավել գործածական են խոսակցական լեզվում, գեղարվեստական գրականության մեջ, լրագրային հոդվածներում և արտահայտում են խոսողի հույզերը, զգացմունքներն ու վերաբերմունքը: Բրիտանական լեզվամշակույթում «*honey*» բաղադրիչ պարունակող ԴՄ-ների քանակը (16) գերազանցում է հայ լեզվամշակույթում ուսումնասիրված ԴՄ-ների քանակին (14): Եվ անգլալեզու, և՛ հայ գրականության մեջ *մեղրը* առկայանում է փոխաբերական բառակապակցություններում:

3. Երկու լեզուներում էլ «honey» և «մեղր» բաղադրիչներով ԴՄ-ները բազմաբաղադրիչ են: Դրանք անվանողական և հաղորդակցական բնույթ ունեն: Անգլերենում գերիշխում են հաղորդակցական բնույթի ԴՄ-ները, իսկ հայերենում՝ անվանական ԴՄ-ները: Անգլերենում առկա են շաղկապավոր դարձվածք-նախադասություններ (ընդամենը՝ յոթ ԴՄ), իսկ քննության առնված հայերեն ԴՄ-ներում շաղկապավոր դարձվածք-նախադասություններ չկան: Քննության առնված անգլերեն և հայերեն ԴՄ-ներից վեցը ծագել են Աստվածաշնչի գրվածքներից:

4. Քննության առնված «honey» և «մեղր» բաղադրիչներով ԴՄ-ներում առկա են այնպիսիք, որոնք հատուկ են միմիայն հայերենին (ընդամենը՝ յոթ ԴՄ) կամ միմիայն անգլերենին (ընդամենը՝ երեք ԴՄ): Սա վկայում է երկու հանրույթների լեզվամտածողության և լեզվափոխությունների տարբերությունների մասին:

5. Բրիտանական լեզվամշակույթում «honey» բաղադրիչով կազմված ԴՄ-ներում առկա են «քաղցրություն, քաղցրախոսություն/ձայնի հմայք, առատություն, երանություն, ջանասիրություն, ծուլություն, խաբկանք, պայքար/դժվարությունների հաղթահարում», բարություն/չարություն իմաստային բաղադրիչները: Հայ լեզվամշակույթում «մեղր» բաղադրիչով կազմված ԴՄ-ների իմաստային դաշտում առկա են «քաղցրություն, քաղցրախոսություն/ձայնի հմայք, առատություն ջանասիրություն, ծուլություն/հեղգություն, բարեկամություն, խայտառակություն, իրարանցում/աղմուկ-աղաղակ, վիրավորանք, բարություն/չարություն, աղքատություն» իմաստային բաղադրիչները:

Եզրափակելով՝ նշենք, որ «honey» և «մեղր» բաղադրիչներով կազմված ԴՄ-ների արտահայտած իմաստները մասամբ են համընկնում բրիտանական և հայ լեզվամշակույթներում: Դրանք արտացոլում են տվյալ լեզվակիրների արժեհամակարգերի մշակութային յուրահատկությունները և միջլեզվական մասնակի դարձվածային համարժեքության ցուցիչներ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ., Համեմատություն-դարձվածային արտահայտությունները հայերենում: (V-XVI դդ.), Երևան, Զանգակ, 2015, 192 էջ
2. Yeghiazaryan G., On the Emotive-Evaluative Meaning of Phraseological Units, Armenian Folia Anglistika, International Journal of English Studies, 1(2)/2006-Yerevan, pp. 75-81

3. Pinker S., On Language, Journal of Cognitive Neuroscience. 6. 92-98. 10.1162/jocn., 1994 6.1.92
4. Lederer R., Last writes, Language Magazine. The Journal of Communication & Education. September 2011, p.46. Available online at: <https://www.languagemagazine.com/last-writes-6> Last retrieved 28.01.2020.
5. O'Dell F., McCarthy M., *English Idioms in Use*, Cambridge University Press, 2010, 185p.
6. Антрушина Г., Афанасьева Н., Морозова Н., Лексикология английского языка, М., Дрофа, 2005, 286 с.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ

7. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 2, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, 1642 էջ
8. Աճառյան Հ., Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան, Ժնև, 2004, 300 էջ
9. Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1926, 2705 էջ
10. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 1410 էջ
11. Գալստյան Ա., Գալստյան Ս., Հովսեփյան Գ., Սահակյան Ա., Նոր բառեր, Գ պրակ, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2017, 158 էջ
12. Նազարյան Ա., Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան, Երևան, Ամարաս, 2000, 222 էջ
13. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2010, 820 էջ
14. Սահակյան Վ., Սահակյան Վ., Դարձվածքներ, Թևակոր խոսքեր, Շրջաստյաններ, Երևան, Նոր Տպագրիչ, 2011, 108 էջ
15. Davies, Mark. (2008-) *The Corpus of Contemporary American English (COCA): 520 million words, 1990-present*. Available online at: <https://www.english-corpora.org/coca> 28.01.2020.
16. OALD - Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford University Press, 2006

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

17. http://bijlmakers.com/entomology/proverbs_insects_2.htm Last retrieved 28.01.2020.
18. <http://idioms.thefreedictionary.com/honey> Last retrieved 28.01.2020.

19. <http://news.google.com/newspapers?nid=1241&dat=19950914&id=hGZTAAAAIbAJ&sjid=HoYDAAAAIbAJ&pg=4928,596439> Last retrieved 28.01.2020.
20. <http://www.eanc.net> Last retrieved 28.01.2020.
21. http://www.etymonline.com/index.php?allowed_in_frame=0&search=honey&searchmode=none Last retrieved 28.01.2020.
22. <https://www.csun.edu/~ghagopian/Documents/OriginalArmenianProverbsandtheBiblicalScripture.pdf> Last retrieved 28.01.2020.
23. <https://www.deccanherald.com/content/19769/idiotic-joy-idioms.html> Last retrieved 28.01.2020.
24. <https://www.goodreads.com/quotes/5750741> Last retrieved 28.01.2020.
25. <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/honey?q=honey> Last retrieved 28.01.2020.

REFERENCES

1. Xachatryan L., Avetisyan L., Hamematowt'yown-dard'vac'ayin artahaytowt'yownnery' hayerenowm: (V-XVIdd.), Er&an, Zangak, 2015
2. Antrushina G., Afanas'eva O., Morozova N., Leksikologija anglijskogo jazyka. M.: Drofa, 2005, 286 s.

DICTIONARIES AND DIRECTORIES

3. Aghayan E'd., Ardi hayereni bacatrakan bar'aran, hator 2, «Hayastan» hratarakchowt'yown, Er&an, 1976, 1642 e'j
4. Atwar'yan H., Hayeren stowgabanakan ar'd'er'n bar'aran, Jhn&, 2004, 300 e'j
5. Atwar'yan H., Hayeren Armatakan Bar'aran, Er&ani Hamalsarani Hratarakchowt'yown, Er&an, 1926, 2705 e'j:
6. Bediryan P., Hayeren Dard'vac'qneri Y'ndard'ak Bacatrakan Bar'aran, Er&an, EPH Hratarakchowt'yown, 2011, 1410 e'j:
7. Galstyan A., Galstyan S., Hovsep'yan G., Sahakyan A., Nor bar'er, G prak, «Asoghik» hratarakchowt'yown, Er&an, 2017, 158 e'j:
8. Nazaryan A., Angleren Dard'vac'qneri Owsowmnakan Hamar'ot Bar'aran, Er&an, Amaras, 2000, 222 e'j:
9. Jahowkyan G., Hayeren stowgabanakan bar'aran, «Asoghik» hratarakchowt'yown, Er&an, 2010, 820 e'j:
10. Sahakyan V., Sahakyan V., Dard'vac'qner, T'&avor Xosqer, Shrjasowyt'ner, Er&an, Nor Tpagrich, 2011, 108 e'j

URLs

11. http://bijlmakers.com/entomology/proverbs_insects_2.htm Last retrieved 28.01.2020.
12. <http://idioms.thefreedictionary.com/honey> Last retrieved 28.01.2020.
13. http://news.google.com/newspapers?nid=1241&dat=19950914&id=hGZTAA_AAlBAJ&sjid=HoYDAAAAlBAJ&pg=4928,596439 Last retrieved 28.01.2020.
14. <http://www.eanc.net> Last retrieved 28.01.2020.
15. http://www.etymonline.com/index.php?allowed_in_frame=0&search=honey&searchmode=none Last retrieved 28.01.2020.
16. <https://www.csun.edu/~ghagopian/Documents/OriginalArmenianProverbsandtheBiblicalScripture.pdf> Last retrieved 28.01.2020.
17. <https://www.deccanherald.com/content/19769/idiotic-joy-idioms.html> Last retrieved 28.01.2020.
18. <https://www.goodreads.com/quotes/5750741> Last retrieved 28.01.2020.
19. <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/honey?q=honey> Last retrieved 28.01.2020

ГАЯНЕ БАРСЕГЯН - ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ С КОМПОНЕНТОМ “МЁД” В БРИТАНСКОЙ И АРМЯНСКОЙ ЛИНГВОКУЛЬТУРАХ

Ключевые слова: лингвокультура, фразеологическая единица, пословица, семантический компонент, библейские писания

Данная статья посвящена сравнительному анализу культурно-языковых особенностей фразеологических единиц с компонентом мёд в английском и армянском языках. В статье выявляются сходства и различия исследуемых фразеологических единиц в двух лингвокультурах. Особый интерес представляет тот факт, что библейские писания послужили источниками для некоторых пословиц и поговорок, содержащих слово мёд. Фразеологические единицы анализируются с точки зрения их значения. В английском и армянском языках фразеологические единицы с компонентом мёд обладают символическими и метафорическими значениями, характерными только для культур данных языков. Вербализация фразеологических единиц с компонентом мёд в двух лингвокультурах показывает мировоззрение и образ мышления носителей двух языков.

GAYANE BARSEGHYAN - PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENT “HONEY” IN BRITISH AND ARMENIAN LINGUOCULTURES

Keywords: *linguoculture, phraseological unit, proverb, semantic component, Bible scriptures*

The present article comprises a comparative insight into the linguocultural features of the phraseological units with the component “*honey*” in English and Armenian. The article reveals the similarities and differences of the PhUs in the two linguocultures in question. Of special interest is the fact that Biblical writings served as sources for several PhUs with the component “*honey*”. The PhUs under study are analyzed from the point of view of their meaning. Both in English and Armenian, the PhUs in question possess symbolic and metaphorical meanings, peculiar to the cultures of the compared languages. The verbalization means of the PhUs with the component “*honey*” in British and Armenian linguocultures reveal the native speakers’ world outlook and their way of thinking.

Ներկայացվել է՝ 05.02.2020

Գրախոսվել է՝ 04.02.2020

MATHEMATICAL MODELING OF THE PHRASAL VERB “TO MAKE UP” IN MACHINE TRANSLATION

GAYANE YEGHIAZARYAN

Keywords: *linguistics, machine translation, mathematical modeling, phrasal verb, to make*

The paper is about mathematical modeling of the phrasal verb **to make up** as a means of Machine Translation (hereafter MT). In the 21st century, one of the most essential links between linguistics and technology is Machine Translation, which, as a sub-field of computational linguistics, investigates the use of software to translate a text or speech from one natural language to another. Experiments have proved that mother tongue is the main source, the main reason of typical mistakes made by the foreign language learners. Hence, the exposure and study of structural and semantic differences between the foreign language and the mother tongue is of great importance.

The *aim* of the research is to analyse and find out the inaccuracies in translations of phrasal verbs by the Machine Translation Systems, in this particular case, ISMA Machine Translator, and suggest possible mathematical models that will work correctly providing right and accurate translations of a phrasal verb.

Overall, the object of study of the paper are 13 English phrasal verbs with their different meanings singled out from the *Machmillan English Dictionary (2005)*, *Oxford Phrasal Verbs Dictionary (2012)* and *Longman Phrasal Verbs Dictionary (2002)*, but we will present only one example of the phrasal verb **to make** (in particular, **to make up**, as it has many different meanings) to demonstrate the challenges a phrasal verb may face during the translation from one language into another.

To process any translation, human or automated, the meaning of a text in the source language must be fully restored in the target language. While on the surface this seems straightforward, it is far more complex. Translation is not a mere word-for-word substitution. A translator must interpret and analyze all of the elements in the text and know how each word may influence another. This requires extensive expertise in grammar, syntax (sentence structure), semantics (meanings), etc., in the source and target languages.

Thus, the differentiation of word meaning is rather a difficult process, results of which cannot and should not be perceived as final. The method of mathematical modeling used in our research is quite persuasive, but nowadays there is no such an example on which we can explain all the examples, especially when all the words have denotational, connotational, contextual and other meanings.

According to Lyons (Lyons 2004:207), by 'denotation' of a lexeme is meant "the relationship that holds between that lexeme and persons, things, places, properties, processes and activities external to the language-system." Bright (1995) argues that "the denotation of a language expression is what a speaker or writer uses to mean on the world evoked by a text in which the word appears". The term 'connotation' is used in opposition with denotation and sense—the components of descriptive meaning of a lexeme. Connotation is, in fact, largely dependent on the context of usage of the word. Cruse (Cruse 1986:282) classifies non-propositional meaning (or connotation) into *expressive*, *presupposed* and *evoked* meanings. Geerearts (see: Asher 1994:154) and Jeffries (Jeffries 2008) state that connotation refers to "all types of non-denotational meaning as a whole" including emotive, stylistic, discursive and evocative meanings.

There are also syntactic differences in the typology of languages. Those "distinctive features, which identify or limit the freedom of syntax in the language, are most probably closely connected with the structure of the sentence case". (Fillmore 1968:67) The polysemy of words is also of crucial importance in the translation process. According to Leech (1974:228) polysemy is recognized if the senses concerned are related in two ways: *historically* and *psychologically*, which do not necessarily coincide.

Nevertheless, on a basic level, MT performs simple substitution of words in one natural language for words in another, but that alone usually cannot produce a good translation of a text because recognition of whole phrases and their closest counterparts in the target language is needed. Solving this problem with corpus and statistical techniques is a rapidly growing field that is leading to better translations, handling differences in linguistic typology, translation of idioms, and the isolation of anomalies. (Albat 2012)

The progress and potential of machine translation have been debated much through its history. Since the 1950s, a number of scholars have questioned the possibility of achieving fully automatic machine translation of high quality. Some critics claim that there are in-principle obstacles to automatizing the translation process. (Madsen 2010)

Since the mid 1990s, the Internet has exerted a powerful influence on MT development. However, much of the language used on the Internet is colloquial, incoherent, 'ungrammatical', full of acronyms and abbreviations, allusions, puns, jokes, etc. – this is particularly true for electronic mail and the language of chatrooms and mobile telephones. These types of language use differ greatly from the language of scientific and technical texts for which MT systems have been developed. **Google** has created an automatic translation tool that is unlike all others. It is not based on the intellectual presuppositions of early machine translation efforts – it isn't an algorithm designed only to extract the meaning of an expression from its syntax and vocabulary. In fact, it doesn't deal with meaning and doesn't take the linguistic expression of the word as something that requires decoding. Google's presentation of its service points out that given the huge variations between languages in the amount of material its program can scan to find solutions. (Bellos 2011)

The Armenian online translation **Translator.am** by ISMA was formed in 1978 under the guidance of Eduard and Suren Manukyans. It consists of professorial staff and scientific workers, who have been always occupied with development of knowledge bases and artificial intelligence (AI) systems. Since 2000 the focus was the development of textual analyzer. As a result the program package has been created. It allows to analyze the meaning of the text and represent it as a semantic tree. The laboratory was created on the basis of this program package in 2002. As a result, since October of 2006 the created system has been placed on the Internet (www.translator.am) for free use.

Today almost all machine translation systems have their vulnerable spots. In case of the application of the method of the mathematical models, those circumstances which form the word meaning are studied which means that these circumstances themselves have been changed during their development. While machine translation is unlikely to totally replace human beings in any application where quality is really important, there are a growing number of cases that show how effective and useful machine translation can be. Machine translation can be used on its own or in conjunction with human proofreaders and post-editors. Nevertheless, the quality of these translations is very poor, given the fact that language itself has a complex nature which changes and evolves day by day.

There is a lack of accurate and precise translations of **phrasal verbs** as this semantic unit cannot be understood based upon the meanings of the


individual parts in isolation, but rather it can be taken as a whole (https://www.merriam-webster.com/dictionary/phrasal_verb)

The aspect of phrasal verb constructions that makes them difficult to learn for non-native speakers is that their meaning is non-compositional. That is, one cannot know what a given phrasal verb construction means based upon what the verb alone and/or the preposition and/or particle alone mean. The English almost all phrasal verbs have multiple meanings. This is what makes it difficult for the machine to give right translations for the phrasal verbs, in this particular case, for the phrasal verb **to make up**.

Mathematical Modeling

In an elementary picture of the *scientific method* (see figure 1), we identify a “real world” and a “conceptual world.” The external world is the one we call real; here we observe various phenomena and behaviors, whether natural in origin or produced by artifacts. The conceptual world is the world of the mind—where we live when we try to understand what is going on in that real, external world. The conceptual world can be viewed as having three stages: observation, modeling, and prediction. Modeling is central to all of the conceptual phases in the elementary model of the scientific method. (Studies in Machine Translation and Natural Language Processing (10 vols., 1991-1998))

Figure 1.



In modern linguistics the search for the explanation methods of the word meaning is still being carried out. The most remarkable of these

methods is the experiments of mathematical modeling, which are usually carried out for the support of the machine translation, as well as for the precise transition of diplomatic, technical and scientific terms. Sometimes though, during machine translation, some difficulties arise, which are mainly conditioned by the abstract and concrete meaning of the word, sometimes expressed only in a particular context. This is where the machine translation fails or becomes difficult, as there is no single method with which we can distinguish the word meaning that is needed. (<http://k31-2.quantum.ru/puis/MSU.htm>)

V. Madoyan offers a new method for mathematical modelling, according to which, the word has a meaning both in the context and out of context. The meanings out of context are expressed in those sentences, which comprise of only that word. According to V. Madoyan, each word meaning can be illustrated in a specific model, which helps to identify each and every usage of that word. (Мадоян 2005:48)

Mathematical modeling is very important in linguistics as well, particularly in Machine Translation As MT evolves and improves day by day, there is an immense lack of accurate translations of phrasal verbs, conditioned by their difficult nature. It's particularly difficult to translate *transitive phrasal verbs* (followed by a noun or pronoun that is the object of the verb) and those phrasal verbs which are both transitive and intransitive. Our aim is to show how the mathematical models of a phrasal verb can help machine translation give accurate and precise translation.

To form the mathematical modeling of the English phrasal verbs, in particular, **to make up**, some symbols are to be used to present the semantic models¹:

Taking into account the above symbols, now we will try to make the mathematical models on the examples with the phrasal verbs **to make up**.

1. Make up

From the list of all phrasal verbs with the verb *to make* the phrasal verb **to make up** has the most meanings. In most of its meanings the phrasal verb is transitive, that is, requires an object. In only one of its applications the phrasal verb **to make up is** used as an intransitive verb.

¹ WM – word meaning, N – noun, N¹ – noun expressed by a person, N² – noun expressed by an animate thing, not a person, N³ – noun expressed by an inanimate thing, N⁴ – concrete noun, N⁵ – abstract noun, N⁶ – noun expressed by a proper noun, V – verb, V¹ – verb in active voice, V² – verb in passive voice, Adj – adjective, Adv – adverb, Num – Number, Prn – pronoun, Conj – conjunction, P – particle, P1 – preposition, P2 – adverb.

a) *to invent an explanation for something, especially in order to avoid being punished or embarrassed = invent*

Ex. He **made up** some excuse.

*There is no crisis. I have **made it up**.*

*The children **made up** a little poem.*

*That was a good story. Did you **make it up**?*

*The kids **are making** rhymes **up**.*

As the objects of most transitive phrasal verbs can go either between the verb and the particle, or after the particle, it is very important to know where to put the object. For the phrasal verb **to make up** both cases are possible. In some of the given examples the object either follows the particles or falls between the verb and the particle. In both cases the phrasal verb **to make up** is followed by a noun expressed by an animate thing, not a person or a pronoun. The group can include words like *lie, story, song, excuse, poem, etc.* Here the phrasal verb **to make up** is synonymous to *misspeak, deceive imagine, suppose, think up*, and needs to be translated into Armenian as **հորինել** or **բացարարություն հորինել**.

The possible mathematical models of the phrasal verb **to make up** based on the given examples, are the following:

$WM = V(V') \rightarrow P(P') \rightarrow N(N^3)$

$WM = V(V') \rightarrow Prn \rightarrow P(P')$

$WM = V(V') \rightarrow N(N^3) \rightarrow P(P')$

The Armenian translations provided by ISMA Machine Translator are the following:

- *Նա հնարեց որոշ արդարացում:*
- *Չկա ճգնաժամ: Ես շպարել եմ նրան:*
- *Երեխաները հնարեցին փոքր բանաստեղծությունը:*
- *Դա լավ պատմություն էր: Դու շպարեցիր նրան:*
- *Բալիկները հորինում են հանգեր:*

However, we suggest the following translations:

- *Նա հնարեց/հորինեց ինչ-որ արդարացում:*
- *ճգնաժամ չկա: Ես հորինել եմ դա:*
- *Երեխաները մի փոքր բանաստեղծություն հնարեցին/հորինեցին:*
- *Դա լավ պատմություն էր: Դու " ես այն հնարել/հորինել:*
- *Երեխաները հորինում են հանգեր:*

As the translated sentences illustrate, some of them do give the meaning of *հորինել*. ISMA translator fails to translate those sentences where there is a pronoun *it* as an object between the verb and the particle. Instead it translates it as *շպարել* which is a completely different meaning of the

phrasal verb **to make up**. To solve the problem, we suggest adding the mathematical model into the database for the meaning **հորհնել** or **բացադրույթուն հորհնել** of the phrasal verb **to make up**.

a) *to put make-up on someone's face*

Ex. They **made** my face **up** to look like a clown.

She **made up** her face to look twenty years older.

As a transitive verb the phrasal verb **to make up** is followed by an object which either follows or falls between the verb and the particle. It is interesting to note that in this meaning the object is almost always a part of body, particularly the face of the person. The group of words includes *face, eyes, cheeks, lips, etc.* Here the phrasal verb **to make up** needs to be translated into Armenian as **շպարվել, դիմահարդարվել**.

The possible mathematical models of the phrasal verb **to make up** with this meaning can be:

WM= V(V') → N(N³) → P(P')

WM= V(V') → P(P') → N(N³)

WM= V(V') → Prn → P(P')

ISMA Machine Translator translates:

- Նրանք ստիպեցին որ իմ դեմքն ընդհուպ մինչև ծաղրածուի նման նայում է
- Նա նայելու հնարեց դեմքը քսանամյակ ավելի հին:
- The closest Armenian translations could be:
- Նրանք շպարեցին իմ դեմքը, որ նման լինեմ ծաղրածուի:
- Նա այնպես շպարեց դեմքը, որ քսան տարի մեծ էր երևում:

As both examples show, the translations by ISMA are too far away from accurate translations. In the first example the machine didn't recognize **make up** as a phrasal verb but took it as separate word units and translated as *to force*. While in the second example, the machine didn't take into account the key word *face* as the object of the phrasal verb and translated it as *հնարել, հորհնել*.

a) *to make an amount or a number complete = deduce*

Ex. I'm paying £500, and Dave is **making up** the difference (= paying the rest).

If you're a few pounds short, I'll **make it up**.

As a transitive phrasal verb, the object either follows the particle, or falls between the verb and the particle. In this meaning the object is usually expressed by a common noun, which includes words meaning *money, currency, money difference, coins, etc.* It's very advisable for the machine to take the words before and after the phrasal verb in search of one of this

words. Finding one of the words of this group will prompt the machine to translate the phrasal verb **to make up** as **մնացորդը, հաշիվը փակել**.

The possible mathematical models of the phrasal verb **to make up** in its third meaning can be:

$$WM = V(V^1) \rightarrow P(P^1) \rightarrow N(N^3)$$

$$WM = V(V^1) \rightarrow N(N^3) \rightarrow P(P^1)$$

$$WM = V(V^1) \rightarrow Prn \rightarrow P(P^1)$$

ISMA Machine Translator translates as:

- Ես վճարում եմ £500 և Դեյվը կազմում է տարբերությունը:
- Կրիմահարդարեմ, եթե դու մի քանի ֆունտ չունես:

The closest Armenian translations could be:

- Ես վճարում եմ £500, իսկ Դեյվը փակում է մնացորդը:
- Եթե դու մի քանի ֆունտի պակասություն ունես, ես կփակեմ մնացորդը:

In the first translated sentence the machine more or less gave a close translation, though translated *վճարել* instead of *հաշիվը փակել*. In the second sentence the machine completely failed to give the accurate translation of the phrasal verb as *հաշիվը փակել* but rather translated as *դիմահարդարել*. To avoid the obscurity, we suggest using the possible mathematical models to clearly state the differences between meanings.

a) *often passive*

make up something to combine together to form something larger = form, constitute

Ex. *The series explain how the livings things **are made up**.*

*The committee **is made up of** eight women and three men.*

*Women **make up** 40 per cent of the workforce.*

Being a transitive phrasal verb, **to make up** is also used in the passive form. Even if the verb is normally 'separable', when it is in the passive the verb and the particle always stay together. In this meaning the phrasal verb **to make up** in passive is sometimes followed by the preposition *of*. When used in active form, it's usually followed by a common noun, usually expressed by words showing quantity or numbers, percent, etc (*40 per cent of the workforce*). In this respect, the phrasal verb **to make up** must be translated as **բաղկացած լինել, կազմել**.

The possible mathematical models of the phrasal verb **to make up** in its fourth meaning can be:

$$WM = V(V^2) \rightarrow P(P^1)$$

$$WM = V(V^2) \rightarrow P(P^1) \rightarrow of \rightarrow N(N^1)$$

$$WM = V(V^2) \rightarrow P(P^1) \rightarrow of \rightarrow N(N^3)$$

$$WM = V(V') \rightarrow P(P') \rightarrow Num \rightarrow of \rightarrow N(N^3)$$

ISMA Machine Translator translates as:

- Շարքը բացառում է ինչպես ողջերն իր հնարովի է:
- Կոմիտեն հնարովի է ութ կին և երեք տղամարդ:
- Կանայք պատրաստում են բանվորական ուժի քառասուն տոկոսը:

The closest Armenian translations should be:

- Այս սերիաները բացառում են, թե ինչպիսի կազմություն ունեն կենդանի օրգանիզմները:
- Հանձնաժողովը կազմված է ութ կնոջից և երեք տղամարդուց:
- Կանայք կազմում են բանվորական ուժի քառասուն տոկոսը:

As it is illustrated in the Armenian translation by ISMA, in none of the sentences come up with the right translation. In the first two sentences the machine translated the phrasal verb as *հնարել*. We have already given the mathematical models for the phrasal verb **to make up** when it means *հնարել*, and they significantly differ from the ones given for the meaning of *բաղկացած լինել*, *կազմել*. In the third example the machine translated the phrasal verb as *պատրաստել*, which shows that it doesn't take into account the word following the particle (*40 per cent of something*).

a) *to produce something from cloth/make up smth*

Ex. *She bought some fabric to **make up** a jacket.*

*You could **make up** some new curtains **from** that material.*

Being a transitive phrasal verb, **to make up** is always followed by an object. In this meaning it is always expressed by a piece of clothing, something that can be produced from cloth. It is sometimes followed by proposition **from** if there is a need to show what the thing is made from. The Armenian translation of phrasal verb **to make up** therefore will be **կարել, պատրաստել (կտորից)**.

The possible mathematical models of the phrasal verb **to make up** in this meaning can be:

$$WM = V(V') \rightarrow P(P') \rightarrow N(N')$$

$$WM = V(V') \rightarrow P(P') \rightarrow N(N') \rightarrow from \rightarrow N(N')$$

Here is what we see when we translate the above sentences with the phrasal verb **to make up** into Armenian.

- Նա գնեց ինչ-որ գործվածք բաճկոն կարելու համար:
- Դու կարող էիր կարել մի քիչ նոր վարագույրներ այն կտորից

The closest Armenian translations should be:

- Նա գնեց ինչ-որ գործվածք բաճկոն կարելու համար:
- Դու կարող էիր կարել մի քիչ նոր վարագույրներ այն կտորից

We can clearly state that this meaning of phrasal verb **to make up** is complete and accurate in the database and doesn't require any additional changes.

- a) *to become friendly with someone again after an argument = be reconciled ≠ fall out*

Ex. *Why don't you forget your differences and make up with the doctor?*

Tom still hasn't made up with Alice (her).

In this meaning the phrasal verb **to make up** is rather easy to present in a model, as it's always followed by the preposition *with*, which in its turn is followed by a proper noun or a pronoun. Here, the equivalent Armenian translation will be **հաշտվել, բարիշել**.

The possible mathematical models of the phrasal verb **to make up** in this meaning can be:

WM= V(V') → P(P') → with → N(N')

WM= V(V') → P(P') → with → N(N⁶)

WM= V(V') → P(P') → with → Prn

The translations of the above sentences with the phrasal verb **to make up** into Armenian are:

- *Ինչու՞ դու չես մոռանում ձեր փարբերությունները և հաշտվում բժշկի հետ:*
- *Թոմը դեռ չի հաշտվել Ալիսի (նրա) հետ:*

We can clearly state that this meaning of phrasal verb **to make up** is complete and accurate in the database and doesn't require any additional changes.

- a) *to work at different times from usual because you have not worked enough at the normal times*

Ex. *Sorry I'm late; I'll **make up** the time this evening.*

*I'll have to **make the hours up** over the weekend.*

As a transitive phrasal verb, the object falls either after the particle **make up smth**, or between the verb and the particle **make smth up**. As the meaning of this application of the phrasal verb **to make up** is *to work at different times from usual because you have not worked enough at the normal times* the object of the verb is always expressed by words like *hour, time*, etc. The Armenian translation will be **հավելյալ աշխատել, փեղը հանել**.

The possible mathematical models of the phrasal verb **to make up** in this meaning can be:

WM= V(V') → P(P') → N(N³)

$$WM = V(V') \rightarrow N(N^3) \rightarrow P(P')$$

The most important part to consider here is that the object expressed by an inanimate thing is almost always with *hour* or *time*. This will help the machine translate the usage of the phrasal verb as *հավելյան աշխատել, փեղը հանել*.

Here is what we see when we translate the above sentences with the phrasal verb **to make up** into Armenian.

- Ներողություն, ուշացա: Ես պատրաստելու եմ ժամանակը այս երեկո:
 - Ես հանգստյան օրը սրիպված եմ լինելու ժամերը շպարելի:
- The closest Armenian translations should be:
- Ներողություն, ուշացա: Ես հավելյալ կաշխատեմ այս երեկո:
 - Ես հանգստյան օրը սրիպված եմ լինելու հավելյալ աշխատելի:

As it is seen, ISMA machine translator failed to give appropriate translations for the sentences. This most probably is conditioned by the fact that the machine takes the literal or the dictionary translations of each word and doesn't take the contextual behavior of the sentence and the change of the word meaning. The machine most probably didn't take into account the words *hour and time* following the verb. We believe that if ISMA team takes into account the models offered by us, the Armenian translations of these phrasal verbs and their distinctive differences in meanings will be clear and accurate.

There are also some phrases where the phrasal verb **to make up** has fixed meanings.

- **make up a bed**-to put sheets and covers on a bed so that it is ready for someone to sleep in-անկողինը հավաքել
Ex. *I've still got to **make up the beds**.*
As a set phrase it's always followed by the noun **bed**, which makes it easy to construct a mathematical model.
 $WM = V(V') \rightarrow P(P') \rightarrow \text{a bed}$
- **make up the numbers**- to be at an event so that there are enough people there- քանակը լրացնել
Ex. *They invited the girl next door to dinner, just to **make up the number**.*
 $WM = V(V') \rightarrow P(P') \rightarrow \text{the numbers}$
- **make up one's mind**- to make a decision-որոշել/որոշում կայացնել
Ex. *I haven't **made up my mind** which bus to take.*
*I wish he'd hurry up and **make up his mind**.*
 $WM = V(V') \rightarrow P(P') \rightarrow \text{Prn} \rightarrow \text{mind}$

The study of the mathematical modeling of the phrasal verb with the verb *to make* as a means of Machine Translation and its analysis resulted in the following conclusions:

- The perfect description of word meaning is possible only with the help of linguistic standards. The word has meanings, which are applied in the context and are conditioned by the lexical and grammatical meanings of the words proceeding or following it.
- The method of mathematical modeling describes the word meaning with all its elements that is why it expresses the inner word structure which decides the word meaning more precisely.
- The main inaccuracies in translations were the result of the fact that the system takes the dictionary translation of the stem verb, and doesn't take into account the particles following it. As a result, it doesn't perceive the phrasal verb as phrasal, therefore comes up with a completely wrong translation.
- The machine failed to translate all fixed phrasal usages of the verb *to make*. The models suggested by us could help the system develop the translation not only of phrasal verbs but all their fixed usages as phrases.

Today automated translation can solve a huge number of translation challenges and increase productivity of translations, while making content that previously could not be translated due to cost, time and size is now accessible. However, machine translation is not flawless and definitely has a lot to go to catch up with human translation.

REFERENCES

1. Albat Th. F. "Systems and Methods for Automatically Estimating a Translation Time." US Patent 0185235, 19 July 2012.
2. Asher R. E. The Encyclopedia of Language and Linguistics. Oxford and New York: Pergamon Press. (ed.), 1994.
3. Bellos D. 'Is That A Fish In Your Ear: Translation and the Meaning of Everything', Particular, 2011.
4. Bright W. (ed.) International Encyclopedia of Linguistics. Cambridge: Cambridge University Press. 1995.
5. Commission of the European Communities in a series Studies in Machine Translation and Natural Language Processing, 10 vols., 1991-1998.
6. Cruse D. Lexical Semantics. Cambridge and New York: Cambridge University Press, 1986.

7. Dym L., Ivey Elizabeth S. Principles of Mathematical Modeling. Academic Press, 1980.
8. Fillmore C. J. The Case For Case; In: Universals in linguistic theory, New York, Holt, Rinehart and Winston Inc, 1968.
9. Jeffries L. Meaning in English. Hampshire: Macmillan Press Ltd. 2008.
10. Lyons J. Words, Meaning and Vocabulary: An Introduction to Modern English Lexicology, London, 2004.
11. Leech G. N. Semantics. Harmondsworth, Middlesex: Penguin. 1974.
12. Madsen M.: The Limits of Machine Translation. 2010.
13. Мадоян В.В. Толкование семантики. //Образование и наука в Арцахе, ЕГУ, н. 2. 2005.
Madojan V.V. Tolkovanie semantiki. //Obrazovanie i nauka v Arcahe, EGU, n. 2. 2005.

DICTIONARIES

14. Longman Phrasal Verbs Dictionary, by Pearson Education, Cambridge University Press, 2002.
15. Macmillan Phrasal Verbs Plus. Macmillan Education, Michael Rundell (Editor), 2005.
16. Oxford Phrasal Verbs Dictionary, Oxford University Press, 4th Edition, 2012.

URLs

17. British National Corpus at <http://www.natcorp.ox.ac.uk/>
18. Phrasal Verb. <https://www.merriam-webster.com/dictionary>
19. Моделирование систем управления <http://k31-2.quantum.ru/puis/MSU.htm>
20. Արևելահայերենի ազգային կորպուս <http://www.eanc.net/>
Ar&elahayereni azgayin korpows <http://www.eanc.net/>

ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - “TO MAKE UP” ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՄԵՔԵՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հիմնաբառեր՝ լեզվաբանություն, մեքենական թարգմանություն, մաթեմատիկական մոդելավորում, հարադիր բայ, to make

Հոդվածում ներկայացվում է **to make up** հարադիր բայի մաթեմատիկական մոդելավորման հնարավորությունը՝ մեքենական թարգմանության միջոցով: 21-րդ դարում լեզվաբանությունը և բարձր տեխնոլոգիաները կապող օղակներից է մեքենական թարգմանությունը, որը, որպես հաշվողական լեզվաբանության ենթադիրտ, ուսումնասիրում

է ծրագրաշարերի օգտագործումը՝ տեքստը կամ խոսքը մեկ բնական լեզվից մյուսը թարգմանելու համար:

Հետազոտության նպատակն է վեր հանել մեքենական թարգմանության համակարգերի, տվյալ դեպքում՝ ISMA մեքենայական թարգմանչի կողմից իրականացված հարադիր բայերի թարգմանության անճշտությունները, վերլուծել դրանք և առաջարկել հնարավոր մաթեմատիկական մոդելներ, որոնք կապահովեն հարադիր բայերի ճշգրիտ թարգմանությունը:

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН - МАТЕМАТИЧЕСКОЕ МОДЕЛИРОВАНИЕ ФРАЗОВОГО ГЛАГОЛА “TO MAKE UP” ПРИ МАШИННОМ ПЕРЕВОДЕ

Ключевые слова: лингвистика, машинный перевод, математическое моделирование, фразовый глагол

В статье предлагается возможность математического моделирования *фразового* глагола **to make up** в процессе машинного перевода. Одним из связующих звеньев между лингвистикой и высокими технологиями в XXI веке является машинный перевод, который, будучи отраслью компьютерной лингвистики, изучает использование программного обеспечения для перевода текста или речи с одного естественного языка на другой.

Целью настоящего исследования является выявление неточностей перевода в переводческих системах, в данном случае – машинного переводчика ISMA, анализ выявленных неточностей, а также предложение возможных математических моделей для обеспечения точного перевода глаголов.

Ներկայացվել է՝ 07.02.2020
Գրախոսվել է՝ 30.01.2020

ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ տեքստ, խոսույթ, տեքստի սահմանում, կանխենթադրության հենք, տեքստի կապակցվածություն, տեքստի ամբողջականություն, ճանաչողական, հաղորդակցական, հեզելեզվաբանական, աշխարհի պատկեր

Սույն հոդվածը նվիրված է տեքստի՝ որպես լեզվաբանական իրողության համալիր, միջգիտակարգային քննությանը: Այդ նպատակով հիմնվել ենք տեքստի լեզվաբանության ինչպես ավանդական, այնպես նոր՝ ճանաչողական, գործաբանական, հանրալեզվաբանական, էթնոլեզվաբանական, հոգելեզվաբանական և այլ միջգիտակարգային, մարդակենտրոն մոտեցումների վրա, որոնց առանցքը մարդու գիտակցությունն է, նրա գործառնման մշակութային և հասարակական առանձնահատկությունները, գիտակցության ճանաչողական ձևավորումը: Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ այն արտացոլում է տեքստի ընկալման նոր, համալիր՝ մինչ այժմ նախադեպ չունեցող բազմամիջգիտակարգային քննություն: Աշխատանքի **նորույթն** այն է, որ տեքստը քննվում է որպես լեզվակրի ներքին խոսքի՝ գիտակցության բազմաշերտ բովանդակության գործառնման արգասիք: Հետազոտությունն իրականացվել է համաժամանակյա պլանում: Քննությունն իրականացվել է ընդհանուր գիտական մեթոդներից վերլուծության և համադրության, իսկ լեզվաբանականներից՝ նկարագրության, իմաստի վերլուծության և ներհայեցման մեթոդներով:

Լեզվաբանության մեջ տեքստն ուսումնասիրում են տարբեր կողմերից՝ որպես դրա միավորների իմաստակառուցվածքային ամբողջություն, հատկապես լեզվական տեսանկյունից (Лосева 1980, Москальская 1981, Ван Дейк 2000, Николаева 2000, Звегинцев 2001, Weinrich 1966 և ուրիշներ), որպես հաղորդակցման միավոր (Болотнова 2011, Рябцева 2004 և ուրիշներ), որը թույլ է տալիս ««աներևույթը» ներկայացնել ֆիզիկական, շոշափելի աշխարհի միջոցով» (Рябцева 2004: 22), որպես միավոր, որի կառուցումն ու ընկալումը կանխորոշված է հաղորդակցման ոլորտով, սա ուսումնասիրում է տեքստի ոճական առանձնահատկությունները (Кожина 2003, Болотнова 2011 և ուրիշներ):

Տեքստը՝ որպես աշխարհի մասին գիտելիքներն ամրագրելու միջոց և հասկացությունների, գաղափարների, հասկացությունների մեկնության աղբյուր, որից ձևավորվում է աշխարհի պատկերը, համեմատաբար վերջերս է դարձել լեզվաբանության և ճանաչողական լեզվաբանության առարկա (Lakoff 1986, Panagl, Wodak 2004, Schlesinger 2006 և ուրիշներ): Տեքստը վերածվեց այնպիսի ուսումնասիրությունների առարկայի, որոնց նպատակն է ընտրել և մեկնել աշխարհի լեզվական պատկերի առանցքային հասկացությունները՝ հասկացությունը (Бартминьский 2005, Арутюнова 2008, Langacker 2002 և ուրիշներ): Տեքստի լեզվաճանաչողական ուսումնասիրության առարկան փաստորեն տեքստի հասկացությամբ կառուցվածքն է, քանի որ տեքստի լեզվական միավորները լեզվականացնում են աշխարհի պատկերը՝ որպես լեզվամտածողության բարդ պատկերների և դրանց համակցությունների ամբողջություն: Բացի այդ, տեքստի նշանագիտական ուսումնասիրությունները (Левин 1998, Eng & Grigar 1973 և ուրիշներ) նույնպես խթանեցին տեքստի լեզվաճանաչողական ուսումնասիրությունը, քանի որ նշանային իրողությունները, հատկապես տեքստը, հատուկ ծածկագրման են ենթարկում մշակութային, արտալեզվական գիտելիքը, որն ամփոփված է ճանաչողական կարգերում: Սա պայմանավորված է նրանով, որ մշակույթն արտալեզվական գիտելիքը կաղապարող բարձրակարգ մեխանիզմ է, որն ի վերջո մշակույթը վերածում է մշակութային ծածկագրի, որի միջոցով կառուցվում է աշխարհի պատկեր(ներ)ը: Մշակութային ծածկագիրը պարտադրվում է բնական լեզվին՝ որպես երկրորդային կաղապարող համակարգ: Ուստի բնական լեզուն և դրա տեքստերը մշակութային ծածկագրի աղբյուր են, որի վերլուծությունը հանգեցնում է հասկացությունների բացահայտմանը:

Ըստ լեզվաբանության նշյալ ուղղությունների՝ տեքստը լեզվական համակարգի ամենավերին մակարդակի միավորն է, որը լեզվականացնում է լեզվամտածական գործունեության արդյունքը՝ բանավոր կամ գրավոր: Լեզվաբանության մեջ նույն երևույթի երկակի ընկալումը՝ որպես լեզվի և խոսքի միավոր, սկիզբ է առնում Ֆ. դը Սոյուրից (Соссюр 1999): Լ. Շչերբայի կարծիքով լեզվական երևույթները եռակողմ են՝ մասնակցում են լեզվական գործունեությանը, լեզվական համակարգի միավոր են, լեզվական նյութ են (Щербա 2004): Լ. Շչերբայի գաղափարները հիմք դրեցին տեքստի ըմբռնմանը խորհրդային լեզվաբանության մեջ: Ըստ այդմ՝ տեքստը հակասական էության բերույթ է, որը մեկտեղում է հեղինակի և հասցեատիրոջ մտահղացումները, լեզվական համակարգն ու լեզվական արգասիքը (Бахтин 1979): Ընդ որում՝ տեքստն ունի մի շարք պարտադիր հատկանիշներ. մի կողմից այն կրկնելի է՝ որպես կաղապարվող միավոր,

մյուս կողմից այն անհատական է, անկրկնելի՝ որպես լեզվամտածական գործունեության արգասիք:

Տեքստն առանցքային տեղ է զբաղեցնում լեզվաբանական ուսումնասիրությունների հարացույցում, քանի որ մի կողմից՝ հաղորդակցման միավորը ոչ թե նախադասությունն է, այլ տեքստը, մյուս կողմից՝ ուսումնասիրություն կատարելիս լեզվաբանի հետազոտության մեկնակետը տեքստ է:

Այսօր արդեն ավանդական է դարձել Ռ. Հարթմանի կարծիքը, որ լեզվակիրները հաղորդակցվում են միայն տեքստերով, այլ ոչ թե բառերով կամ նախադասություններով, կամ՝ առնվազն նախադասություններով, որոնք կազմված են տեքստում առկա բառերից (Hartmann 1980): Տեքստը լեզվի ամենավերին մակարդակի միավորն է, որը կազմված է մեկ և ավելի նախադասություններից: Սակայն տեքստը տեքստույթ (текстема)՝ լեզվի որոշակի միավոր, չէ (Леонтьев 1976: 67-68): Այն բավականին անկախ, ինքնաբավ միավոր է, որը ձևավորվում է ավելի ստորին մակարդակների միավորներից, սակայն դրանց պարզ հանրագումարը չէ:

Մենք դիտարկում ենք տեքստը՝ որպես խոսույթի հիմնական միավոր, առաջնային լեզվական իրողություն: Տեքստը ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական երևույթ է: Ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել այն ոչ միայն զուտ լեզվաբանության տեսանկյունից, այլև ընդլայնել ուսումնասիրության սահմանները դեպի արտաքին լեզվաբանություն, քանի որ տեքստի կառուցման գործընթացում մասնակցում են ոչ միայն լեզվակրի զուտ լեզվական գիտելիքները, այլև գիտելիքների մի ամբողջ համալիր, որը նա ձևավորում է հասարակայնացման ընթացքում՝ որպես հասարակական-մշակութային անհատ: Այսպիսով, տեքստի ուսումնասիրությունն անհրաժեշտ և արդարացված է այնպիսի մարդաբանական միջգիտակարգերի կողմից, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը, էթնոլեզվաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը, գործաբանությունը, հանրալեզվաբանությունը և այլն:

Տեքստն իմաստակառուցվածքային, հաղորդակցական ամբողջություն է, որը կարող է առկայանալ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տարբերակներով:

Տեքստն ինքնին այնքան բազմակողմ և բազմաբովանդակ երևույթ է, որ չկա ու թերևս չի լինի դրա միանշանակ և ինքնաբավ սահմանում, քանի դեռ զարգանում է գիտական միտքը:

Рассказ Г. Матевосяна «*Կանաչ դաշտը*» (буквально: «*Зеленое поле*») имеет два варианта перевода заглавия – «*Зеленое поле*» и «*Зеленая долина*». В одном переводе заглавия существительное «поле» заменено другой лексемой – «долина». В этой замене очевидно лексическое различие, поскольку долина означает более узкое частное понимание пространства, чем «поле». Тем самым информативная функция заглавия реализуется неполностью и не дает возможности читателю понять идею оригинала. Кроме того, заголовок имеет явный концептуальный характер. Второй перевод – «*Зеленое поле*» – не только структурно, но и в смысловом отношении вполне эквивалентен, сохраняет образную составляющую и структуру заголовка. В этом образце соответствие в русском языке достигнуто.

В заключение можно сказать, что значительная часть рассмотренных нами заглавий нуждается в переработке. В своих переводах заглавий переводчики прибегали к разным переводческим приемам и трансформациям, что искажало и художественную действительность подлинника. Наиболее высокий уровень эквивалентности представлен в тех образцах переводов, в которых максимально сохраняется лексико-семантическое соответствие на двух языках. Очень важно при переводе учитывать социально-культурные особенности, которые, по словам В. Комиссарова, будут вынуждать переводчика сокращать или же опускать то, что в принимающей культуре представляется недопустимой из-за моральных, идеологических или эстетических соображений (Комиссаров 2012: 73).

Анализ переводов заглавий показывает, что переводчикам в целом удалось решить поставленную задачу, хотя некоторые переводы не лишены отдельных недостатков, что не позволяет считать их окончательными.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Бахтин М.М. Формы времени и хронотопа в романе. Очерки по исторической поэтике // Бахтин М.М. Вопросы литературы и эстетики. М.: Художественная литература, 1975. - 234-407 с.
2. Брюсов В.Я. Предисловие переводчика // По Э. Полное собрание поэм и стихотворений. М-Л.: Гос. изд. «Всемирная литература», 1924.- 128 с.
3. Васильева Т.В. Заголовок в когнитивно-функциональном аспекте: На материале современного американского рассказа // Автореферат дис. ... канд. фил. наук. М., 2005.- 22 с.
4. Джрбашян Э. Поэмы Туманяна. Ереван: Издательство Ереванского университета, 1964.- 162 с. (на арм. яз.). Об этом же см.: в книге автора, изданной на рус. яз.: Джрбашян Э. Поэзия Туманяна. М.: Художественная литература, 1969.- 94 с.
5. Кашкин И. Для читателя-современника. М.: Советский писатель, 1968. - 457 с.
6. Комиссаров В.Н. Современное переводоведение. М.: ЭТС, 2012.-424 с.
7. Лушникова Г.И. Заглавие художественного произведения: интерпретация и перевод // Актуальные проблемы современной гуманитарной науки: отечественные традиции и международная практика. Материалы Всероссийской научно-практической конференции. Симферополь: ИТ «АРИАЛ», 2017. - 67-73 с.

8. Николина Н. А. Филологический анализ текста. М.: Издательский центр «Академия», 2003. - 256 с.
9. Bernik F. Kulturna identiteta v obdobju globalizacije. Nevarnosti in perspective // Slavistična revija. Posebna številka. Zbornik referatov za trinajsti mednarodni slavistični kongres. Ljubljana, 2003. 51/8.

СЛОВАРИ

10. Образование этнохоронимов. Онлайн словарь. [Электронный ресурс] – Режим доступа: URL: <https://studbooks.net/921501/literatura/obrazovanie-etnohoronimov> (дата обращения: 17.11.2019)
11. Ожегов С.И., Шведова Н.Ю. Толковый словарь русского языка: 80000 слов и фразеологических выражений. М.: Азбуковник, 1999. - 944 с.
12. Толковый словарь русского языка: В 4 тт. // Под ред. Д.Н. Ушакова. М.: Гос. ин-т «Советская энциклопедия»; ОГИЗ; Гос. изд-во иностр. и нац. словарей, 1935-1940
13. Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան: Երևան, «Հայաստան» Հրատարակչություն, 1976, հատոր 2.-1022 էջ:
14. Հայոց լեզվի բարբառային բառարան: Երևան, Գիտություն, 2007, հատոր 4.- 371 էջ

REFERENCES

1. Bahtin M.M. Formy vremeni i hronotopa v romane. Ocherki po istoricheskoy pojetike // Bahtin M.M. Voprosy literatury i jestetiki. M.: Hudozhestvennaja literatura, 1975. - 234-407 s.
2. Brjusov V.Ja. Predislovie perevodchika // Po Je. Polnoe sobranie poem i stihotvorenij. M-L.: Gos. izd. «Vsemirnaja literatura», 1924. - 128 s.
3. Vasil'eva T.V. Zagolovok v kognitivno-funkcional'nom aspekte: Na materiale sovremennogo amerikanskogo rasskaza // Avtoreferat dis. ... kand. fil. nauk. M., 2005.- 22 s.
4. Dzhrbashjan Je. Pojemy Tumanjana. Erevan: Izdatel'stvo Erevanskogo universiteta, 1964.- 162 s. (na arm. jaz.). Ob jetom zhe sm.: v knige avtora, izdannoju na rus. jaz.: Dzhrbashjan Je. Pojezija Tumanjana. M.: Hudozhestvennaja literatura, 1969.- 94 s.
5. Kashkin I. Dlja chitatelja-sovremennika. M.: Sovetskij pisatel', 1968- 457 s.
6. Komissarov V.N. Sovremennoe perevodovedenie. M.: JeTS, 2012. - 424 s.
7. Lushnikova G.I. Zaglavie hudozhestvennogo proizvedenija: interpretacija i perevod // Aktual'nye problemy sovremennoj gumanitarnoj nauki: otechestvennye tradicii i mezhdunarodnaja praktika. Materialy

Vserossijskoj nauchno-praktičeskoj konferencii. Simferopol': IT «ARIAL», 2017. - 67-73 s.

8. Nikolina N. A. Filologičeskij analiz teksta. M.: Izdatel'skij centr «Akademija», 2003. - 256 s.
9. Bernik F. Kulturna identiteta v obdobju globalizacije. Nevarnosti in perspective // Slavistična revija. Posebna številka. Zbornik referatov za trinajsti mednarodni slavistični kongres. Ljubljana, 2003. 51/8.

SLOVARI

10. Obrazovanie jetnohoronimov. Onlajn slovar'. [Jelektronnyj resurs] – Rezhim dostupa: URL: https://studbooks.net/921501/literatura/obrazovanie_etnohoronimov (data obrashhenija: 17.11.2019).
11. Ozhegov S.I., Shvedova N.Ju. Tolkovyj slovar' russkogo jazyka: 80000 slov i frazeologičeskikh vyrazhenij. M.: Azbukovnik, 1999. - 944 s.
12. Tolkovyj slovar' russkogo jazyka: V 4 tt. // Pod red. D.N. Ushakova. M.: Gos. in-t «Sovetskaja jenciklopedija»; OGIZ; Gos. izd-vo inostr. i nac. slovarej, 1935-1940.
13. Aghayan E'. Ardi hayereni bacatrakan bar'aran: Er&an, «Hayastan» Hratarakchowt'yown, 1976, hator 2.-1022 e'j;
14. Hayoc lezvi barbar'ayin bar'aran: Er&an, Gitowt'yown, 2007, hator 4-371 e'j;

Приложение:

Туманян О.Т. Стихотворения и поэмы // Библиотека поэта. Малая серия. Л.: Советский писатель, 1958.

Песня пахаря. Пер. М. Павлова

Перевал. Пер. Вяч. Иванов

Сердце девы (Восточное предание). Пер. Вяч. Иванов

Сако Лорийский. Пер. А. Гатов

Взятие Тымкаберда. Пер. П. Антокольский

Туманян О.Т. Стихотворения и поэмы // Библиотека поэта. Большая серия. Л.: Советский писатель, 1969.

Песня пахаря. Пер. М. Петровых

Перевал. Пер. Вяч. Иванов

Сердце девы (Восточное предание). Пер. Вяч. Иванов

Сако Лорийский. Пер. А. Гатов

Взятие крепости Тмук. Пер. Вс. Рождественский

Туманян О.Т. Избранные произведения: В 3 тт. Ереван: Айастан, 1969.

Пахарь. Пер. Вяч. Иванов

Лориец Сако. Пер. А. Тарковский
Взятие крепости Тмук. Пер. П. Карп
Глупец. Пер. Я. Хачатрянц
Бесхвостая лиса. Пер. Я. Хачатрянц
Царь Чахчах. Пер. А. Тадеосян

Туманян Ованес. Стихи, четверостишия, поэмы, легенды и баллады. Ереван: Луйс, 1986 (оригинальный текст + перевод).

Пахарь. Пер. Вяч. Иванов
Лореци Сако. Пер. М. Гальперин
Взятие Тмкаберда. Пер. П. Антокольский
Сердце девы. Пер. Вяч. Иванов

Матевосян Г. Повести и рассказы // Перевод с армянского Анаит Баяндур. М.: Художественная литература, 1980.

Мы и наши горы
Мать едет женить сына

Матевосян Г. Зеленое поле: Рассказы // Перевод с армянского З. Медулашвили. Тбилиси: Мерани, 1986.

Наш род шутов-пересмешников / Перевод с армянского Н. Гончар
// Дружба народов. 2008, № 4.- 4-17 с.

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՈՌԻՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հիմնաբառեր՝ թարգմանչական հնարք, ձևափոխություն, փոփոխություն, բառային/ուղիղ թարգմանություն, հեղինակային մտահղացում, ազգային մշակույթ, գեղարվեստական թարգմանություն, վերնագրերի համադրություն, համարժեքության աստիճան

Հոդվածում դիտարկվում է Հ. Թումանյանի և Հ. Մաթևոսյանի ստեղծագործությունների վերնագրերի ուսերեն թարգմանությունների համարժեքության խնդիրը: Ընտրված վերնագրերի համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ վերնագրերի թարգմանությունները հաճախակի զուգորդվում են տարբեր փոփոխություններով, վերափոխումներով, որոնք պայմանավորված են բառագիտական, լեզվական, ոճական և գործառույթային գործոնների կիրառմամբ, լեզվաշխարհապատկերման (հասկացութաբանական) գաղափարական ըմբռնման առանձնահատկություններով, «օտար» իրականության, մշակույթի և իրադարձությունների ընկալման ինքնատիպությամբ, որը անխուսափելի է դարձնում իմաստային, ոճական և հասկացութային

կորուստները: Ռուս և հայ լեզվական իրականության լեզվամշակութային տարբերությունները առաջացնում են անճշտություններ, անգամ սխալներ՝ հայկական իրողությունների թարգմանության ժամանակ: Վերնագրերը թարգմանելիս կիրառվել են տարբեր թարգմանաբանական հնարքներ, այդ թվում և ձևափոխություններ, որը պատճառ է դառնում բնագրի գեղարվեստական իրականության խեղաթյուրմանը: Համարժեքության առավելագույն մակարդակը ներկայացված է այն թարգմանություններում, որտեղ երկու լեզուների բառաիմաստային համապատասխանությունը առավելագույնս է պահպանվում :

GAYANE KHACHATRYAN, SVETLANA BARSEGHYAN - EQUIVALENCE OF RUSSIAN TRANSLATIONS OF THE TITLES OF WORKS BY HOVH. TOUMANYAN AND H. MATEVOSYAN FROM A CROSS-CULTURAL PERSPECTIVE

***Keywords:** translation technique, transformation, substitution, literal/direct translation, author's intent, national culture, literary translation, title comparison, level of equivalence*

The article considers the problem of equivalence in Russian translations of the titles of works by Hovh. Toumanyane and H. Matevosyan. The comparative analysis of the selected titles shows that the translation of the titles is often accompanied by various transformations and substitutions caused by pragmatic, lexical, linguistic, stylistic and functional factors; peculiarities of the conceptual picture of the world; specificity of perception of “foreign” reality, culture and events, all of which lead to inevitable semantic, stylistic and conceptual losses. The linguo-cultural differences in Russian and Armenian linguistic relativity cause inaccuracies, and even errors while translating Armenian realities. Different translation techniques and transformations used by the authors precipitated some distortions in the literary reality of authentic texts. A relatively high level of equivalence prevails in those translations in which the lexico-semantic compatibility in the two languages is maintained to a greater extent.

Ներկայացվել է՝ 29.01.2020
Գրախոսվել է՝ 29.01.2020

**ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԿԱՆԱՆՑ ՀՈՒՋԱԶԳԱՑԱԿԱՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԽՈՍՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

ԱՆՆԱ ԿԵՅԱԶՅԱՆ

Հիմնաբառեր՝ գենդեր, գենդերային կարծրատիպեր, հարախոսքային միջոցներ, անեկդոպ, ձայնի որակ, ձայնի որակավորում

Մարդկանց առօրյա կյանքը, կարծրատիպերը, անհատի դերային դիրքորոշումները, գործողությունների գնահատումը մեծապես պայմանավորված են գենդերային փոխհարաբերություններով: «Գենդեր» եզրույթը վերաբերում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց զբաղեցրած դիրքին, նրանցից ակնկալվող վարքի նորմերին, հոգեբանական և սոցիալական առանձնահատկություններին:

Հետազոտության *առարկան* է կանանց և տղամարդկանց հարախոսքային տարբերությունները անգլիական «կենցաղային» անեկդոտներում:

Հետազոտության **արդիականությունը** և **կարևորությունը** պայմանավորված են այն հանգամանքով, որ հատկապես վերջին տարիներին «գենդեր» եզրույթը ակտիվորեն շրջանառվում է ընդհանրապես, և Հայաստանի Հանրապետությունում՝ մասնավորապես, քանի որ գենդերային փոխհարաբերությունների համաչափ զարգացումը լիակատար կերպով համահունչ է ընդհանուր ժողովրդավարացման գործընթացին: Գենդերային փոխհարաբերությունները ներազդում են ինչպես մշակույթի, լեզվի, սովորույթների, այնպես էլ հասարակական կառույցների, պետական հաստատությունների կողմից որոշումների ընդունման վրա և ձևավորում հանրամշակութային կարծրատիպեր:

Լեզվական նյութի վերլուծության և արդյունքների ներկայացման համար հիմնականում կիրառվել են *հանրամշակութաբանության, հանրալեզվաբանության, վիճակագրական մշակման, ինչպես նաև նկարագրական և զուգադրական վերլուծության մեթոդները՝* իրենց հիմնական բաղադրիչներով (*դիփարկում, ընդհանրացում, մեկնաբանում, դասակարգում*):

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում հարախոսքային մակարդակներում առանձնացվել են հուզարտահայտչական նշույթները: Վերլուծության է ենթարկվել ավելի քան 1000 *անգլիական «կենցաղային» անեկդոպ*: Նյութի ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել հույզեր

արտահայտող այն տարրերը, որոնք համապատասխանում են մեր հետազոտության մեջ բարձրացվող հիմնախնդիրներին:

Անգլիական «կենցաղային» անեկդոտներում ի շարս հաղորդակցության խոսքային և ոչ խոսքային միջոցների՝ օգտագործվում են հարախոսքային տարատեսակ միջոցներ: Այդ միջոցները ազդում են ասույթի իմաստի վրա, հայտնում են մարդու հույզերի, վիճակի, նրա վստահ կամ անվստահ լինելու մասին և այլն: Հարախոսքային հաղորդակցություն ասելով՝ հասկանում ենք հնչյունային այն ազդանշանների համախումբը, որոնք իրենց ֆիզիկական և քանակական բնութագրերով ուղեկցում են բանավոր խոսքը լրացուցիչ նշանակություններով:

Հարախոսքային առանձին միջոցներ գնահատվում են որպես ավելի իգական կամ ավելի արական՝ անկախ դրանք կիրառողի իրական սեռից: Հարախոսքային հաղորդակցության ժամանակ տեղեկատվությունը հաղորդվում է ձայնային նրբերանգների միջոցով (տե՛ս Ивяхкина 1996): Ուստի արտասանված բառը երբեք չեզոք չէ: Հաղորդման բովանդակությունից առավել քան կարևոր է՝ ինչպես ենք մենք խոսում: Խոսքի իմաստը կարող է փոխվել՝ կախված այն բանից, թե ինչ հնչերանգ, ռիթմ, տեմբո են օգտագործվել այն հաղորդելու համար:

Դ.Քրիստալը տարբերում է **«ձայնի որակ»** և **«ձայնի որակավորում»** հասկացությունները: Նա սահմանում է ձայնի որակը (**voice qualities**) որպես հնչյուն, որն առաջանում է որոշակի ձևով ձայնալարերի թրթռման արդյունքում (սրան դասվում են **շուկը, հնչեղությունը, խոպոպությունը, շնչեղությունը, խլությունը, զրնգունությունը**), իսկ ձայնի որակավորումները (**voice qualifications**) կարող են ավելանալ ձայնի վերոթվարկյալ որակների վրա (Crystal 1975):

Ձայնի որակը մարդու հուզավիճակի տեղեկատվական ցուցանիշն է: Արտասանված բառը երբեք չեզոք չէ: Ներքին վիճակը փոփոխվելիս փոխվում են լեզվական ալիքի ֆիզիոլոգիական չափանիշները՝ ձայնի և ձայնային ապարատի մկանների տատանումները, ձայնի հիմնական տոնի փոփոխությունը: Կարելի է առանձնացնել խոսքի հնչողության հետևյալ հատկանիշները՝ **ուժգնությունը, արագությունը, ռիթմայնությունը, տեմբո, մեղեդայնությունը, լարվածությունը**: Ձայնի որակը լրացուցիչ տեղեկատվություն է հաղորդում խոսողի հուզավիճակի մասին, ձայնի որակի փոփոխության միջոցով խոսողը կարող է արտահայտել իր վերաբերմունքն ասվածին: Այլ կերպ՝ խոսքային ձայնը խոսողի անհատական հատկությունների, նրա սոցիալական

պատկանելության, խոսելու պահին հոգեկան-հուզական վիճակի մասին տեղեկատվության աղբյուր է:

Ձայնի որակը համարվում է խոսքային ձայնի առաջնային բաղադրիչներից մեկը, որը վերջին շրջանում լեզվաբանների սևեռուն ուշադրության կենտրոնում է: Մանրամասն ուսումնասիրվել է ձայնորակի կապը խոսքային օրգանների աշխատանքի հետ, որը տարբերվում է մի լեզվից մեկ այլ լեզվի, մեկ հանրային խմբից մեկ ուրիշին, մի մասնագիտության ներկայացուցիչներից մյուսին անցնելիս և այլն: Խոսքային օրգանների առանձնահատուկ կարգավորվածություն է նկատվում այն մարդկանց շրջանում, որոնք գտնվում են որոշակի հուզավիճակում, պատկանում են տարբեր սեռերի, տարիքային խմբերի և այլն: Ձայնային ապարատի նման կարգավորումը հիմքում հատույթային չէ, սակայն այն ազդում է հնչյունակազմական բոլոր չափորոշիչների վրա՝ ինչպես հատույթային, այնպես էլ վերհատույթային մակարդակում: Ձայնային ապարատի յուրահատուկ կարգավորվածությունից կախված՝ տարբերակվում են ձայնային այնպիսի որակներ, ինչպիսիք են **շնչեղությունը, նվնվան փեմբըրը, ճղճղանությունը, շշուկը, խոպոպությունը** (Davydov, Egorov 1971; Миндрул 1980):

Ձայնի որակավորումներին են (**voice qualifications**) դասվում **ծիծաղը, քմծիծաղը կամ քթի փակ ծիծաղելը, հոգոցը, դողդոջունը, ափամները սեղմելը, շուրթերը երկարածգելը, շուրթերը փքելը**: Խոսքում ձայնի որակների իրականացրած հիմնական գործառույթներին է պատկանում հուզարտահայտչական-գնահատողական բովանդակության հաղորդումը (Козырева 1986):

Անգլիական լեզվամշակույթում արական հատկանիշների գերակայությունն արտահայտվում է լեզվի հարախոսքային բնութագրերում: Անգլիացիները նախընտրում են խոսել ցածր ձայնով, միջին տեմպով, միմյանց չընդհատելով և խստորեն հետևելով խոսքահերթի (**turn-taking**) կանոնին. երկար դադարներ չեն տալիս, տանել չեն կարողանում լռությունը: Հաստատական նախադասություններում բարձրացող ձայներանգի օգտագործումն ավելի իզական բնութագիր է համարվում, և դա բացատրվում է անվստահության դրսևորմամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, առանձնացնենք արական և իզական հարախոսքային հիմնական միջոցները անգլիական «կենցաղային» անեկդոտներում: Անգլիական անեկդոտներում կանայք հիվանդագին են արձագանքում խոսքի տոնայնության կտրուկ փոփոխություններին: Իսկ տղամարդիկ այդ փոփոխությունները, ընկալում են առանց որևէ բացասական հույզի, հատկապես եթե դրանք տեղին են: Տղամարդկանց

խոսքում առանձնապես ուժեղ հույզերի, օրինակ՝ **զայրույթի** արտահայտման ժամանակ նկատվում են բազմաթիվ արտասանական շեղումներ: Արական և իգական հարախոսքային հիմնական միջոցների վերլուծությունը թույլ է տալիս մեզ ուսումնասիրել տղամարդկանց և կանանց հարախոսքային առանձնահատկությունները լեզվի ու մշակույթի հարթության վրա:

Անգլիական անեկդոտներում հարախոսքային միջոցներն ավելի հուզառատ օգտագործելը բնորոշ է հենց կանանց: Արտահայտչականության և հույզերի ամենամեծ քանակությունը և՛ տղամարդկանց, և՛ կանանց խոսքում հիմնականում վերաբերում է նրանց բղավելով արված արտահայտություններին: Ընդ որում, տղամարդկանց վարքը բնութագրվում է **to roar, to bellow, to snarl, to grunt, to croak** բայերի օգնությամբ:

Օրինակ՝

1) *One day a wife complained, “This wall clock almost killed my mother today. It fell only seconds after she got up from the couch.” The husband **grunted** and replied, “The darn clock always was slow.”*

<https://www.native-english.ru/jokes/the-wall-clock>

2) *One of the fielders got hit in the crotch by a cricket ball, the pain was so severe he collapsed unconscious on the ground and woke up in hospital.*

*“Hey doc,” **he croaked**, “am I alright? Will I be able to play again?”*

The doctor replied, “Yes, you’ll be able to play again... that’s if you’ve got a women’s team at the club.”

(Sharpe 2004:267)

Բարձրաձայն խոսքը, որպես կանոն հատուկ է՝ **ինքնագոհությանը**, մինչդեռ ցածրաձայն խոսքը վկայում է մարդու **զուսպ, համեստ և թույլ** լինելու հանգամանքը: Ձայնի բարձրության նկատելի փոփոխությունները զրուցակցի դյուրագգացությունն ու հուզվածությունն են արտահայտում: Կանանց հարախոսքային վարքը կարելի է բնութագրել **to scream, to yell** բայերի օգնությամբ:

Օրինակ՝

3) *“I hope you don’t mind me asking,” said the young American girl to the Scotsman, “but I’ve often wondered what you wear under your kilt.”*

The Scotsman replied that if she was really curious to know, then she could put her hand up his kilt and find out for herself.

So, a little apprehensively, she did as he suggested and put her hand under his kilt.

*“Aaagh, it’s gruesome,” **she screamed**, quickly removing her hand.*

“Aye, it is that, lass,” replied the Scotsman, “and if you put your hand up again, you’ll find it’s gruesome more.”

(Sharpe 2004:270)

Հարախոսքային հաղորդակցության բնութագրերից են ձայնի նկարագրերը, որոնցով արտասանվել է այս կամ այն բանավոր տեքստը, ընդ որում՝ ամենից հաճախ ուղեկցվելով **զայրույթի** հույզով (**to groan loudly (S), to say affronted (S), to mutter (S/Կ), to murmur (S), to splutter (Կ), to explode (S/Կ), to hiss (Կ)**):

Օրինակ՝

4) *It’s no good, it’s over” said Julie. “You are so bad in bed.”*

“Oh come on,” **said the man affronted**, “how can you tell after 15 seconds?”

Adult Joke Book: Bedtime Stories

<https://www.tbr.fun/adult-joke-book-bedtime-stories/>

5) *Darling,’ says Barry to his wife, Sarah, “I invited a friend home for supper.’*

“What? Are you crazy?’ Sarah **splutters**, “The house is a mess, I didn’t go shopping, all the dishes are dirty, and I don’t much feel like cooking a fancy meal.’

“I know all that,’ **murmurs** Barry.

“Then why did you invite a friend for supper?’ **explodes** Sarah.

“Because the poor fool’s thinking about getting married,’ concludes Barry.

Groom Wedding Speech Jokes

<http://www.funny/groom_wedding_speech_jokes.html. >

Այսպես, հույզեր առաջանալիս բավականին դժվար է ձայնի փոփոխությունները թաքցնել: Երբ մարդը վշտացած է, նրա ձայնը բարձրանում է: Վախի կամ զայրույթի դեպքում ձայնը հնչում է ավելի բարձր ու զիլ, մինչդեռ խոսելու արագությունը չի փոխվում: Ձայնի բարձրությունը և բառային բովանդակության անհամապատասխանությունը (քանի որ ձայնը ավելի դժվարությամբ է ենթարկվում գիտակցական վերահսկողության, քան արտահայտությունների բովանդակությունը) կարող է ցույց տալ, որ տվյալ անձը իր արտահայտություններում անկեղծ չէ:

Անզխական անեկդոտներում կանանց համար բնութագրական է **ցածրաձայն, շշուկով խոսելը (to whisper)**:

Օրինակ՝

6) *A man was lying on his death bed, time was running out and his family were standing round about.*

“Joe, Joe,” whispered his wife, “is there anything I can do for you? Do you have a last wish?”

Joe lifted his head slowly from the pillow and sniffed the air.

He could smell his wife’s baking in the oven.

“Can I have just a last slice of the wonderful cake you’re baking?” he croaked.

“I’m afraid not, Joe, that’s for the funeral.

(Sharpe 2004:375)

*7) The beautiful curvaceous blonde patient was **whispering frantically.***

“Oh please kiss me again, please kiss me again.”

“I don’t know,” replied the doctor, “it’s not right, I really shouldn’t be fucking you at all.”

<https://www.tbr.fun/adult-joke-book-doctors-orders/>

Վերը բերված օրինակներում շշուկով խոսելը (**“Joe, Joe,” whispered his wife; The beautiful curvaceous blonde patient was whispering frantically. “Oh please kiss me again, please kiss me again.”**), անկասկած, ունի իր գործաբանական նպատակը՝ խոսքին հաղորդել որոշակի մտերմության, խորհրդավորության կամ թախանձանքի երանգներ: Տխրության պահին կանանց խոսքը հնչում է ավելի ցածրաձայն և հանդարտ:

Կանայք ավելի հաճախ ու բարձր են ծիծաղում և, համապատասխանաբար, ավելի հաճախ լալիս: Բնական է, որ կանանց խոսքն ուղեկցող հարախոսքային հաղորդակցության ամենահաճախ կիրառվող բաղադրիչներից են **cry; cry one’s eyes out; wail; mourn; weep; sob; be in floods of tears** ձևերը, որոնք գործածվում են տխրություն արտահայտելիս:

Օրինակ՝

*8) After a wonderful honeymoon night, the new husband wakes to **find his wife in floods of tears.***

“Darling, what’s wrong? Was it too much for you last night?”

“Oh no, no,” sobbed the wife, “but look at it this morning, I fear we’ve used it all up.”

(Sharpe 2004:112)

9) A little girl cuts her hand on the playground and runs crying to the teacher. She asks the teacher for a glass of cider.

“Why do you want a glass of cider?” the teacher asks.

*“To take away the pain,” **sobs the little girl.***

“What do you mean?” the teacher asks.

“Well,” **sobs the little girl**. “I overheard my big sister say that whenever she has a prick in her hand, she can’t wait to get it in cider.”

<https://unijokes.com/joke-3513/>

Տղամարդկանց վարքում նույնպես չի բացառվում, սակայն ավելի հազվադեպ է հանդիպում, լաց լինելը (**to cry**):

Օրինակ՝

10) *It was the funeral of John’s wife and he sat **crying his eyes out** in the front pew. He seemed inconsolable, so the Vicar decided to go over and have a word.*

“I’m so sorry, John, I know this is a difficult time for you but the pain will eventually lessen. You’re still quite a young man and maybe you’ll meet someone else one day.”

John stopped sobbing and looked up at the Vicar.

“It’s alright for you to say that, Vicar,” he complained, “but where am I going to get a fuck tonight?”

(Sharpe 2004:376)

Սակայն արական սեռի անձանց համար արտասովոր նշանակում է խախտել արականության մասին պատկերացումներն ու կարծրատիպերը: Արդյունքում տղաների մեջ կարող է ձևավորվել ֆեմիֆոբիա, այսինքն՝ կանացիության արտահայտման վախ: Մեծահասակ տղամարդկանց մեջ այդ վախի դրսևորումը կարող է պայմանավորված լինել այն պատկերացումներով, որ կանացիությունը հատուկ է համասեռամուլ տղամարդկանց (O’Neil 1990):

Ծիծաղը, քմծիծաղը կամ քթի տակ ծիծաղելը (**smile, giggle, laugh**) հարախոսքային հաղորդակցության միջոցներ են, որոնք հատուկ են թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց, սակայն անգլիական անեկդոտների լեզվական փաստական հարուստ նյութի քննությունը ցույց է տալիս, որ կինը ավելի հաճախ ժպտում է **ուրախության** հուզավիճակում, իսկ տղամարդկանց շուրթերին հաճախակի ժպիտ է հայտնվում բացասական հույզերի՝ **նյարդայնության, վախի, շփոթմունքի** դեպքում: Ժպիտը հաղորդում է ոչ միայն բնախոսական/հատկանշական և հաղորդակցական, այլև, որ ավելի կարևոր է, գործաբանական տեղեկատվություն, այսինքն հասցեատիրոջը այդ տեղեկատվությունը հաղորդվում է գիտակցաբար: Տվյալ դեպքում ժպիտը գիտակցված է և վերահսկվող:

Օրինակ՝

11) *A young hitch hiker got a lift with a lorry driver but halfway through the night they found themselves stranded on top of the moors. The driver told her they’d have to wait till morning before getting help so she could have his*

bed in the cabin and he would sleep on the seat. After a while, the girl whispered, "It's a shame you have to give up your bed, why don't you come in with me, there's plenty of room."

So the man got in beside her.

"It might be nice if we slept "married", she **giggled**.

"Whatever you like," he said, and he turned his back to her and went to sleep.

(Sharpe 2004:58)

Ինքնագոհ ժպիտը, հեզնական ժպիտը, քմծիծաղը՝ արտահայտված "**simper, grin**" բայերով, լինելով հարախոսքային հաղորդակցության միջոցներ, հատուկ են միայն տղամարդկանց:

Օրինակ՝

12) A man stops for the night at a country hotel and as he signs in, he notices a beautiful blonde sitting alone at the hotel bar. While the receptionist is sorting out the paperwork, he saunters over to the blonde and returns a couple of minutes later with the girl on his arm. **Grinning**, he says to the receptionist, "Would you believe it! I've just bumped into my wife, so we'd better have a double room."

The following morning, he goes to pay his bill and discovers it's for more than \$ 2,000.

"What the hell's this for?" he splutters. "I've only been here one night."

"Of course, Sir, but your wife has been here for more than a week!"

(Sharpe 2004:288)

Դիտարկումները ցույց են տալիս, որ հաղորդակցությունն անընդմեջ ու անդադար խոսք չէ (տե՛ս De Fransisco 1991): Շատ հաճախ բանավոր շփումը ներառում է **լռություն** և որոշ դեպքերում այն ավելի բարձր է գնահատվում, քան խոսքը: Լռությունը տեղի է ունենում, երբ խոսքային որոշակի գործողություն հրատապ չէ, սակայն անզամ այդ դեպքում հաղորդակցային նպատակը պահպանվում է (Zimmermann, West 1975): Ուստի հաղորդակցային առումով նշանակալի լռությունը (**silence**) հարախոսքային վարքի ևս մեկ բաղադրիչ է:

Օրինակ՝

13) WOMAN: What would you do if I died? Would you get married again?

MAN: Definitely not!

WOMAN: Why not - don't you like being married?

MAN: Of course I do.

WOMAN: Then why wouldn't you remarry?

MAN: Okay, I'd get married again.

WOMAN: You would? (with a hurtful look on her face)

MAN: (makes audible groan)

WOMAN: Would you sleep with her in our bed?

MAN: Where else would we sleep?

WOMAN: Would you put away my pictures, and replace them with pictures of her?

MAN: That would seem like the proper thing to do.

WOMAN: And would you let her use my golf clubs?

MAN: She can't use them; she's left-handed.

WOMAN: - - - **silence** - - -

MAN: Oh Shit.

<https://www.native-english.ru/jokes/conversation-over-dinner>

Վերը նշված անեկդոտի օրինակում լռությունը (**silence**) նշանակալի է, այն հուզական տեղեկատվություն է հաղորդում մի հաղորդակցվողից մյուսին: Համատեքստի, իրավիճակի օգնությամբ վերծանվում է հուզական տեղեկատվությունը, որի հիման վրա տեղի է ունենում շփման գործընթացը: Որպես կանոն՝ նման լռությունը կարող է առաջանալ ուժեղ հուզապրումի կամ հուզական ցնցման հետևանքով և այդ կերպ, արտացոլվում է հաղորդակցվողների հարախոսքային վարքագծում: Լռությունն ընդհանրապես նաև կարող է դիտվել որպես անզրոության վկայություն, իսկ ծավալուն, առատ խոսքը, համազոր է գերակայությանը: Տղամարդիկ գերակայում են կանանց՝ նրանց լռեցնելով: Լռությունը կանանց դեպքում ավելի բնութագրական է **վախի և զարմանքի** հույզեր արտահայտելիս, տղամարդկանց դեպքում ավելի հաճախ հանդիպում է **զայրույթի, վախի և ուրախության** հույզեր արտելիս:

Անգլիական անեկդոտներում տղամարդու խոսքը հնչում է ավելի ծանրակշիռ ու կտրական: Այդ տպավորությունը ստեղծելուն ինչ-որ չափով նպաստում են տեմպն ու դադարը. տղամարդկանց տեմպը փոքր-ինչ դանդաղ է, հիմնականում՝ ի հաշիվ դադարների ու շարույթների տևողության մեծացման, կանանց դեպքում դադարներն ավելի քիչ են:

Օրինակ՝

14) *Two fishing pals meet up on the riverbank.*

“Hello, Bob,” says his mate. “Long time no see, what’ve you been up to?”

Bob shakes his head sadly.

“I’ve been on my honeymoon.”

“Well, you sly old fox! You kept that quiet. I bet she’s a pretty lass.”

*“No, not at all. **In fact she’s ugly...and she’s useless in bed,**”*

Bob replies mournfully.

“But, I don’t understand. Why did you marry her then?”

“She’s got worms.”

(Sharpe 2004:182)

Հարախոսքային հաղորդակցության բնութագրերից է նաև **հոգոցը**: Կանանց խոսքում **gasp, sigh** հարախոսքային հաղորդակցության միջոցները ի հայտ են գալիս կանանց **անհանգստության և հուզմունքի**, իսկ տղամարդկանց դեպքում՝ **շփոթմունքի** հուզավիճակներում:

Օրինակ՝

15) “Oh Bob,” **sighed his wife**. “I wish you wouldn’t go down the pub every night. You drink far too much. Here, let me show you something.”

Bob’s wife put two glasses before him, one filled with whisky, the other with water. Into each she dropped a worm. The worm in the water swam around happily while the worm in the whisky had a fit and sank to the bottom, dead.

“There!” said the wife triumphantly. “Now what does that show you?”

Bob looked at the two glasses and replied, “It shows me that if you drink, you won’t get worms. Now I’m off to the pub.”

(Sharpe 2004:212)

Այսպիսով՝ հարախոսքային հաղորդակցությունն առավել հաճախ հանդիպում է տղամարդկանց խոսքային վարքագծում **զայրույթի** հուզավիճակում, իսկ կանանց խոսքային վարքագծում այն բնութագրական է **վախի և տխրության** հուզավիճակներին: **Տխրության** հույզի հարախոսքային արտահայտությունը ավելի տեսանելի է կանանց, քան տղամարդկանց խոսքում:

Ամենակայուն գենդերային կարծրատիպերից համարվում է կանանց մեծ զգացմունքայնությունը (տես՝ Օճոզոբ, Օճոզոբա 1981): Ուստի տղամարդու դերի վերաբերյալ արտահայտված ավանդական մոտեցում ունեցող տղամարդիկ համարում են, որ եթե տղամարդը զգացմունքային չպետք է լինի, ապա հարկ չկա զարգացնելու հուզարտահայտչական ունակությունները և մյուսների հույզերը հասկանալու կարողությունը: Արդյունքում տղամարդկանց և կանանց միջև եղած բնական տարբերություններն ավելի են մեծանում:

Հարախոսքային մակարդակում հուզարտահայտչական միջոցների գենդերային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացված է աղյուսակում:

Հարախոսքային միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
Շշուկ, փսփսոց, քչփչոց	85%	15%
Բղավոց, գոռգոռոց, գոռումզոչյուն,	40%	60%

զոգոոց		
Լաց	70%	30%
Ծիծաղ, ժպիտ, քրքջոց, կշկշոց	75%	25%
Քմծիծաղ, խնդուք	25%	75%
Դադար, լռություն, անխոսություն	40%	60%
Հոգոց	65%	35%

Ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ անգլիական «կենցաղային» անեկդոտների լեզվական փաստական նյութի վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու, որ գենդերային տարբերությունները առկա են նաև հարախոսքային մակարդակում: Այդ տարբերությունները բացատրվում են հետևյալ պատճառներով. կանանց և տղամարդկանց կազմախոսական կառուցվածքի և արտաքին տեսքի ակնհայտ տարբերությամբ, հանրային տարբեր դերերի կատարումով և վարքի ու մտածողության ինքնատիպ հակվածությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ивушкина Т.А., Манера речи и голос как характеристики языковой личности // Языковая личность: Культурные концепты. Волгоград – Архангельск: Перемена, 1996. С.133-141.
2. Козырева М.Н., Введение в изучение английского речевого голоса. М., 1986. 98 с.
3. Миндрул О.С., Тембр II в функциональном освещении Автореф. дисс...канд. филол. наук. М.,1980. 23 с.
4. Обозов Н. Н., Обозова А. Н., Три подхода к исследованию психологической совместимости // Вопросы психологии, 1981. № 6. С. 98-101.
5. Davydov M.V., Egorov G.G., English Phonology. М., 1971. 101 p.
6. De Fransisco V., The Sounds of Silence: How Men Silence Women In Marital Relations// Discourse and Society. Washington, 1991. № 2(4). p. 413 – 424.
7. O’Neil J. M., Assessing Men’s Gender Role Conflict // D. Moore, F. Leafgren (eds.). Problem Solving Strategies and Interventions For Men In Conflict. Alexandria, VA: American Association for Counseling and Development, 1990. p. 77-101.
8. Sharpe J., The Adult Joke Book. London: Arcturus Publishing Limited, 2004. 375 p.

- Zimmerman D. & West C., Sex Roles, Interruptions and Silences In Conversation // Language and Sex: Difference and Dominance / Thorne B., Henley N. Rowley, Massachusetts: Newbury House Publishers, 1975. p. 105-129.

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՂՔՈՒՐՆԵՐ

- Adult Joke Book: <https://www.tbr.fun/adult-joke-book-doctors-orders/> (10.07.2019)
- Adult Joke Book: <https://www.tbr.fun/adult-joke-book-bedtime-stories/> (05.07. 2019)
- Groom Wedding Speech Jokes: http://www.funny/groom_wedding_speech_jokes.(10. 01. 2020)
- Native English: <https://www.native-english.ru/jokes/the-wall-clock> (25.07.2019)
- Native English: <https://www.native-english.ru/jokes/the-wall-clock> (24.06.2019)
- Native English: <https://www.native-english.ru/jokes/conversation-over-dinner> (25.01.2020)
- Unijokes: <https://unijokes.com/joke-3513/> (05.04.2018)

REFERENCES

- Ivushkina T.A., Manera rechi i golos kak kharakteristiki yazykovoy lichnosti // YAzykovaya lichnost': Kul'turnyye kontsepty. Volgograd – Arkhangel'sk: Peremena, 1996. S.133-141.
- Kozyreva M.N., Vvedeniye v izucheniye angliyskogo rechevogo golosa. M., 1986. 98 s.
- Mindrul O.S., Tembr II v funktsional'nom osveshchenii Avtoref. diss...kand. filol. nauk. M.,1980. 23 s.
- Obozov N. N., Obozova A. N., Tri podkhoda k issledovaniyu psikhologicheskoy sovmestimosti // Voprosy psikhologii, 1981. № 6. S. 98-101.

АННА КНЯЗЯН - ПАРАВЕРБАЛЬНЫЕ СРЕДСТВА В ЭМОЦИОНАЛЬНОЙ РЕЧИ МУЖЧИН И ЖЕНЩИН

Ключевые слова: гендер, гендерные стереотипы, анекдот, качество голоса, дополнительные модификации голоса

В данной статье исследуются элементы паравербальной коммуникации в юмористическом дискурсе. В английских анекдотах были проанализированы следующие мужские и женские паравербальные

особенности: *громкость голоса, крик, шепот, улыбка, смех, вздох*. При паравербальной коммуникации информация передается через различные голосовые оттенки, которые влияют на смысл высказывания и сигнализируют об эмоциях человека. Качество голоса является показателем эмоционального состояния любого человека. В английских “бытовых” анекдотах более эмоциональное использование паравербальных средств характерно именно для женщин. Женщины чаще мужчин демонстрируют паравербальное выражение эмоции грусти. В мужском поведении паравербальная коммуникация наиболее часто проявляется в эмоциональной ситуации гнева. Женщины чаще мужчин сопровождают свою речь паравербальными компонентами коммуникации.

ANNA KNYAZYAN - PARAVERBAL MEANS IN MALE AND FEMALE EMOTIONAL SPEECH

Keywords: *gender, gender stereotypes, paraverbal means, anecdote, voice qualities, voice qualifications*

The article investigates paraverbal expression of emotions in humorous discourse. In English anecdotes the following male and female paraverbal peculiarities have been analyzed: *voice volume, cry, silence, scream, smile, giggle, laughter, simper, sigh*. In paraverbal communication, information is transmitted through various tones of voice, which affect the meaning of the statement and signal various emotions. Voice quality is an indicator of the emotional state of any person. Women manifest paraverbal expression of the emotion of sadness more frequently than men do. For male behaviour paraverbal communication is typical in the emotional situation of anger. Our study may contribute to understanding different emotional visions of the world and their reflection in male and female communication.

Ներկայացվել է՝ 16.01.2020
Գրախոսվել է՝ 16.01.2020

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐԻ
ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ և ՆՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ**

**ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հիմնաբառեր՝ ածանցում, հավաքականություն, ժխտում, վերացականություն բացասականություն, համարժեք, բազմիմաստություն, գործուն

Բառակազմությունը լեզվի հարստացման կարևորագույն միջոցներից է, և ցանկացած լեզվի հետազոտությունը անհնար է պատկերացնել առանց նրա ուսումնասիրության: Բառակազմության հնարավորությունները, եղանակները, ձևերն ու տեսակները բազմազան են: Բառակազմության օրինաչափությունները որոշում, սահմանում են բառերի կառուցվածքը՝ նրանց բովանդակային և արտահայտության պլանում: Հարստացնելով ցանկացած խոսքի մաս՝ բառակազմությունը առաջ չի բերում նոր շարահյուսական կարգեր: Լեզվի բառարաններում ձևավաբանորեն պարզ բառերի կողքին տեղ են գտնում նաև ավելի բարդ, ածանցյալ կառույցներ, որոնք հասկանալի են ձևաբանական և իմաստաբանական առումով: Առաջինները ըստ Սոսյուրի պայմանական են, իսկ երկրորդները՝ կառուցվածքային առումով պատճառաբանված (տես՝ Eisenberg 2006:212):

Թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում ածանցումը և բառաբարդումը հավասարապես տարածված են ու գործուն: Ածանցումը երկու լեզուներում էլ բառակազմության ամենաարդյունավետ ճանապարհներից է:

Կազմելով հիմնական բառապաշարի մեծ մասը՝ գոյականը հանդես է բերում բառակազմական մեծ հնարավորություններ: Խոսքի այլ մասերը չեն առանձնանում բառակազմական տեսակների այնպիսի բազմազանությամբ և տարբերակվածությամբ ինչպես գոյականը: Կարևոր չափանիշ է վերջածանցների դիրքը բառածևի մեջ: Թեքական վերջածանցները գերմաներենում ընդհանուր առմամբ դրվում են աջից, իսկ բառակազմական ածանցները՝ նրանցից ձախ (Eisenberg 2006:213): Ընդ որում՝ գոյականների դեպքում երկու լեզուներում էլ վերջածանցների կիրառումն ավելի տարածված է, քան նախածանցների:

Այս հոդվածի շրջանակում հիմնականում ուսումնասիրվում են հավաքականություն, ժխտում, բացասականություն և վերացականություն արտահայտող գոյականակերտ ամենակիրառական և կենսունակ ածանցները գերմաներենում և դրանց հնարավոր համարժեքները հայերենում: Հոդվածի նպատակն է պարզել նշված իմաստներ արտահայտող գերմաներենի ածանցների համարժեքները, ինչպես նաև նրանց ընտրության չափանիշները հայերենում:

Ակզբում կանդրանդառնանք գերմաներենի հավաքականություն, միասնություն, հավաքական հասկացություն արտահայտող ածանցներին:

Հավաքականությունը թվի կարգի արտահայտման միջոցներից է, երբ գոյականի ձևը և իմաստը գտնվում են հակառակ հարաբերության մեջ, այսինքն՝ ձևով եզակի են, իմաստով՝ հոգնակի: Հաճախ հավաքական գոյականը կարող է փոխարինվել հոգնակի թվով, օր.՝ *Ուսանողությունն այսօր լայն հնարավորություններ ունի:* հմմտ. *Ուսանողներն այսօր լայն հնարավորություններ ունեն:*

Գերմաներենի հավաքականություն արտահայտող ամենակիրառական նախածանցներից է **Ge-** նախածանցը: Տվյալ բառակազմական նախածանցի առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն մյուս բոլոր նախածանցների, նա որոշում է ածանցված բառի քերականական սեռը: Այսինքն **Ge-** նախածանցը գործում է, որոշ քիչ բացառություններով, որպես գոյականի քերականական սեռի կարգի ցուցիչ և չի շեշտվում:

Ge- նախածանցով կազմված գոյականները հանդես են գալիս երկու մեծ խմբով:

Առաջին խումբն ածանցյալ բառեր են, որոնք կազմված են գոյականի հիմքից, այսինքն՝ անվանակազմ են (Wahrig 1996:70), օր.՝

Ge-müse - բանջար-եղեն

Ge-schirr - աման-եղեն

Վերը նշված գերմաներեն գոյականները չունեն հոգնակի, ինչը հատուկ է նաև հայերենի **-եղեն** վերջածանցով կազմված բառերին: Գերմաներենից բերված ոչ բոլոր օրինակներում է այսօրվա տեսանկյունից անվանակազմությունը հստակ տեսանելի, մինչդեռ հայերենում գոյական անվան բաղադրիչը հիմնականում ակնհայտ է:

Ge- նախածանցով անվանակազմ գոյականները կարող են հայերենում ունենալ **-ույթ,-այնք** վերջածանցով կազմված համարժեքներ, ինչպես՝

Ge-bein - վերջ-ույթ-ներ, ոսկորներ

Ge-meinde - համայնք

Հայերենի **-ույթ,-այնք** վերջածանցներին հատուկ է նաև վերացականությունը, այդ պատճառով այն կարող է նաև ընդհանրացնող

իմաստ ունենալ, և այս վերջածանցներով կազմված ածանցյալ գոյականները կարող են կիրառվել նաև հոգնակի թվով, այսինքն նրանց հատուկ է թվի կարգը, ինչը չի գործում – **եղեն** վերջածանցի դեպքում:

Երկրորդ խումբն ընդգրկում է բայահիմքերից կազմված հավաքական գոյականներ, որոնք Ֆլայշերը դիտարկում է նաև որպես նախածացներով և վերջածանցներով համակցված ածանցում (Fleischer 2007:200), օր.՝

Ge-bäck - թխվածք
 Ge-bäud-e /bauen /- շենք, շին-ույթուն

Հարկ է նշել, որ գերմաներենում ուժեղ բայերի արմատները գրեթե հետևողականորեն հանդես են գալիս նշույթավորված ձևով՝ ձայնափոխության /Umlaut/ տարբեր տեսակների միջոցով (Gebäck), կամ արմատական ձայնավորի փոփոխությամբ /Ablaut/ (Gesang): Թույլ բայերի պարագայում **Ge-** նախածանցը բառակազմական միակ ցուցիչն է, քանի որ արմատական ձայնավորի փոփոխություն տեղի չի ունենում:

Ge- նախածանցի հայերեն համարժեքները բազմազան են: Վերջածանցի ընտրությունը հայերենում արվում է [±նչավոր] իմաստային հատկանիշի հիման վրա: Շնչավոր էակների, ինչպես նաև կենդանիների կողմից արձակվող ձայներ ցույց տվող գոյականները հայերենում կազմվում են **-ng** վերջածանցի միջոցով: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ գործ ունենք վերացականության հետ, հայերենում որպես համարժեք հանդես է գալիս **-ույթուն** բազմիմաստ վերջածանցը: Երբեմն դա տեղի է ունենում նաև ենթակայական դերբայի հիմքով, ինչպես *Gesang- երգեցողություն* բառի դեպքում: **Ge-** նախածանցը համարժեք է հայերենի **-ng** վերջածանցին, եթե այն պահպանում է իր հավաքական իմաստը և միևնույն ժամանակ ցույց տալիս ընթացք: Հայերենի **-ng** վերջածանցը բավականին գործուն և բազմիմաստ է, և դրանցով կազմված գոյականներն ունեն բայական հիմք: Հարկ է նշել, որ հայերենի ածանցների մեծ մասն առաջացել է գրաբարի քերականական ձևայններից (Էլոյան 1959:57), օր.՝

Ge-brüll /brüllen/ - մոնչ-ng
 Ge-schrei /schreien / - գոռ-գոռ -ng
 Ge-flüster /flüstern/ - շշնջ-ng

Ge+բայ+e բանաձևով կազմված գոյականները հավաքականի հետ մեկտեղ բացասական իմաստ ունեն (Elsen 2011:89), օր.՝

Ge-tu-e – ավելորդ գործողություն, վատ պահվածք

Հատկանշական է նաև այն փաստը, որ հայերենը՝ չունենալով **Ge-** ին համարժեք նախածանց, վերջինի գործառույթը կարող է կատարել վերջածանցների միջոցով: Սակայն կան դեպքեր, երբ հայերենում

համարժեքները պարզ բառեր են: Խոսքը առանձին ներքին թեքման դեպքերի մասին է, օր.՝

Geräusch – աղմուկ

Չնայած **Ge-** նախածանցը ծագումով բուն գերմանական է, այն կատարում է լատիներենի **con-** նախածանցի գործառույթը, որը գոյականին միասնականության իմաստ է հաղորդում (Wahrig, 1996:107): Հայերենը համարժեք նախածանց չունի, սակայն կա այդ իմաստն արտահայտելու մի քանի հնարավորություն, օր.՝

ա/ երկու պարզ բառերի միջոցով՝

Geschwister /Schwester +Bruder/ - քույր և եղբայր

բ/ թվի կարգի միջոցով՝

Gebrüder /Brüder/ - եղբայրներ

գ/ մեկ առանձին պարզ բառի միջոցով՝

Ge-mahl - ամուսին

Հայերենում գոյականի սեռի կարգի բացակայության պատճառով «ամուսին» բառը կիրառվում է երկու սեռի ամուսիններին անվանելու համար, մինչդեռ գերմաներենի Gemahl բառը, որը նախապես նշանակել է փեսացու /Bräutigam/, իգականություն արտահայտելու համար ունի **-in** վերջածանցը:

Ինչպես հետևում է բերված օրինակներից, գերմաներենի **Ge-** նախածանցով փոխանցվող հավաքականության իմաստը հայերենում արտահայտվում է լեզվական տարբեր մակարդակներում՝ իմաստային /երկու բառի արտահայտությամբ/, քերականական կամ մեկ պարզ բառույթով:

Ge- նախածանցը գերմաներենում բայահիմքից կազմված գոյականների դեպքում կարող է հանդես գալ գործողության արդյունքի իմաստով (Wahrig 1996:107), օր.՝

Gewächs /wachsen / - բույս

Geschenk /schenken/ - նվեր

Gebilde /bilden/ - ձև

Gebräu /brauen/ - թուրմ

Եթե գերմաներենում ածանցյալ բառերում ակնհայտ է ընթացքայնություն ցույց տվող բայարմատը, ապա հայերեն համարժեքները հանդես են գալիս միայն գործողության արդյունքի իմաստով և առանց արտակա (էքսլպիցիտ) բառակազմական միջոցների:

Գերմաներենում հավաքականությունը կարող է արտահայտվել նաև, **-ei**, **-erei** մշտապես շեշտվող վերջածանցների միջոցով: Այս վերջածանցը գերմաներեն է անցել ֆրանսերենից, սակայն ժամանակի ընթացքում առնմանության է ենթարկվել, (Fleischer 2007:148-149):

Գերմաներենում տվյալ վերջածանցը կարող է ցույց տալ նաև վայր, հաստատություն: Այդ դեպքում այն կազմվում է գոյականի հիմքից, օր.՝

Gerber-ei - կաշեգործ-ություն,
կաշեգործական արհեստանոց կաշեգործ-արան
Bücher-ei - գրա-դարան
Bäcker- ei - փուռ

Հայերենում այս վերջածանցը միանշանակ համարժեք չունի: Այն արտահայտվում է հիմնականում **-ություն**, **-արան**, **դարան** վերջածանցների և առանձին բառերի միջոցով:

Հավաքականության իմաստ է արտահայտում նաև գերմաներենի **-icht** - վերջածանցը է, թեև այն այսօր այդքան էլ գործուն չէ (Elsen 2011:91), օր.՝

Dickicht - մացառ-ուտ
Kehricht - թափ-ոն, աղբ

Հայերենում վերը նշված **-ույր/-ոն** վերջածանցները կարող են կազմել հավաքականություն նշող գոյականներ, որոնք «փոքր մասերից հավաքած, մասնիկներից բաղկացած մի բան» իմաստն ունեն:

Գերմաներենի **-icht** վերջածանցը առաջներում եղել է գործուն, սակայն այսօր նրանով այլևս նոր բառեր չեն կազմվում: Նրանք արդեն չեն ընկալվում որպես ածանցված բառեր: Բայափիմքին կցվելիս վերջածանցը բային հաղորդել է նաև բացասական իմաստ, իսկ գոյականներից և ածականներից կազմված լինելու դեպքում նրան հատուկ է հավաքական իմաստը (Nübling 2010:68):

Հավաքական իմաստ կարող է հաղորդել նաև գերմաներենի իզականություն նշող **-ung** բազմիմաստ վերջածանցը՝ գոյականի հիմքին միանալու դեպքում (Elsen 2011:84), օր.՝

Satzung - կանոնադր-ություն
Kleidung - հագ-ուստ

Որպես համարժեք այս դեպքում օգտագործվում է հայերենի ամենակիրառական **-ություն** վերջածանցը, երբեմն նաև **-ուսույր**-ը: Ի տարբերություն գոյականի հիմքից կազմված ածանցյալ բառերի **-ung** վերջածանցով բայակազմ գոյականները այսօր էլ գործուն են, օր.՝

Regierung - կառավար-ություն
Führung - ղեկավար-ություն
Verwaltung- վարչ-ություն

Հայերենում ածանցումն այս դեպքում տեղի է ունենում հիմնականում, եթե ոչ բացառապես, **-ություն** գործուն վերջածանցի միջոցով: Բայափիմքից և **-ung** վերջածանցով կազմված գոյականներն ունեն ընթացքի իմաստ:

Գերմաներենի մեկ այլ գործուն **-schaft** վերջածանցը, որի սկզբնական իմաստը եղել է «վիճակ, պահվածք» /Zustand, Verhalten/, ևս կարող է խումբ, կոլեկտիվ, մարդկանց միավորում իմաստը հաղորդել, (Elsen 2011:97), օր.՝

Lehrerschaft - ուսուցչ-ություն, ուսուցչական կազմ

Priesterschaft - հոգևորական-ություն և հոգևորական դաս

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում նույնպես հայերեն համարժեքները կազմվում են **-ություն** վերջածանցով:

Գերմաներենի **-schaft** վերջածանցը բազմիմաստ է, սակայն հավաքական իմաստ արտահայտող գոյականներ կազմելիս նրան հատուկ է շնչավոր իմաստային հատկանիշը:

Հավաքականության իմաստ ունի նաև գերմաներեն **-tum** վերջածանցը, որը ծագել է հին գերմաներենի **tuom** բառից և նշանակել է արժանապատվություն, խավ, դատողություն, իշխանություն /Würde, Stand, Urteil, Macht/ (Fleischer 2007:171), օր.՝

Beamten-tum - քաղաքացիական ծառայողներ

Rittertum - ասպետականություն

Գերմաներերում **-tum** վերջածանցը գոյականին հաղորդում է գնահատականի նրբերանգ: Հավաքականություն արտահայտելու համար գերմաներեն **-tum** վերջածանցին նույնպես ներհատուկ է \pm շնչավոր իմաստային հատկանիշը: Այս վերջածանցի միջոցով բայափոխից կազմված գոյականները պահպանում են բայիմաստի ընթացքայնությունն ու վերացականությունը, օր.՝

Irr-tum - մոլոր-ություն

Wachs-tum - աճ

Հավաքականություն են արտահայտում նաև հաճախ գերմաներենի **-heit, -keit** վերջածանցները, որոնք ի սկզբանե եղել են պարզ բառեր և ունեցել են *վիճակ, տեսակ, կերպ* /Zustand, Art, Wesen/ իմաստները (Elsen 2011:85): Նշված վերջածանցների օգնությամբ կազմված գոյականները հավաքականության հետ մեկտեղ ձեռք են բերում նաև վերացական իմաստ, ինչպես՝

Frei-heit - ազատություն

Christen-heit - քրիստոնե-ություն/ քրիստոնեա աշխարհ

Երկու լեզուներում կարևոր տեղ են զբաղեցնում **ժխտում** և **բացասականություն** արտահայտող համեմատաբար ավելի քիչ թվով ածանցներ: Հիմնականում ժխտվում են բայական և ածականական հիմք ունեցող վերացական գոյականները: Ժխտական նախածանցների շարքին են դասվում գերմաներենի **Miss**-ը և **Un**-ը:

Miss- նախածանցը, որն առաջացել է „Missetat“ /չարագործություն, ոճրագործություն/ բառից և ի սկզբանե ունեցել է «տարբերվող, փոփոխական» /„verschiedenartig, wechselartig“/ նշանակությունը, ավելի ուշ իմաստափոխվել է և ստացել „übel“ – վատ, չար նշանակությունը՝ բառին հաղորդելով հակառակ, բացասական իմաստ, օր.՝

Miss-achtung (achten) - ան-արգանք

Miss-billigung(billigen)- ան-հավանություն/հավանություն չտալը

Հայերենում որպես համարժեք հանդես է գալիս հիմնականում **ան-** նախածանցը: Այս կերպ կազմված գոյականների գերակշռող մասը վերացական գոյականներ են և նրանց համարժեքները հայերենում միասնական չեն: Որոշ դեպքերում նրանք արտահայտվում են հարադիր բայերով, ինչպես վերը նշված օրինակում:

Գերմաներենի **Un-** ժխտական նախածանցն ունի երկու նշանակություն: Այն կարող է հանդես գալ ուղիղ ժխտման և բացասական իմաստով: Այդ դեպքում հայերենում որպես համարժեք հաճախ կիրառվում են ձևային, բառակազմական տարբեր կառուցվածք ունեցող բառեր:

Un-fall - դժ-բախտ պատահար

Un-kraut - մոլ- ա-խոտ

Un-tat - ոճրա-գործություն / չարա-գործություն

Ինչպես նշվեց վերևում, այն կիրառվում է ոչ միայն ուղիղ իմաստով, այլև կարող է որոշ գոյականներին հակադիր, ժխտական իմաստ հաղորդել, օր.՝

Glück- երջանկ-ություն Un-glück - դժախտություն

Schuld -մեղ-ք Un-schuld - ան-մեղ-ություն

Հայերենի **-ք** վերջածանցը կարող է գոյականին, ի թիվս այլ իմաստների, հստակեցնող, կոնկրետացնող նշանակություն հաղորդել, ինչպես վերը բերված օրինակում (Էլոյան 1959:56):

Բային ժխտականություն հաղորդելուց բացի **Un-** նախածանցը ցույց է տալիս նաև մեծ քանակություն և աստիճանավորում օր.՝

Un-kosten - հսկա-յ-ական ծախս-եր

Un-menge - մեծ քանակ-ություն

Un-zahl - ան-հաշվելի քանակություն

Եթե գերմաներենում **Un-** նախածանցը բազմինաստ է՝ արտահայտելով մի կողմից ժխտում և բացասականություն, մյուս կողմից մեծ քանակ և աստիճանավորում, ապա հայերենում չկա այս իմաստով համարժեք ածանց: Մեծ քանակություն արտահայտելու դեպքում կիրառվում են աստիճանավորման իմաստ արտահայտող ածականներ:

Այն, որ վերը դիտարկված որոշ նախածանցներ կարող են կիրառվել նաև բացասական իմաստով, պայմանավորված է նրանց բազմիմաստությամբ, ինչպես գերմաներենի **-ei** վերջածանցի դեպքում, որը բացի հավաքականությունից արտահայտում է նաև բացասականություն, օր.՝

- Anpöbel-ei - խռովություն /զոռբայ-ույթուն
- Schmeichel-ei - կեղծավոր-ույթուն
- Heuchel-ei - երեսպաշտ-ույթուն
- Schweiner-ei - խոզ-ույթուն

Այս իմաստով ևս հայերենում որպես բառակազմական միջոց հիմնականում կիրառվում է **-ույթուն**-ը: Սակայն այստեղ հարկ է նշել, որ բառերի բացասական բաղադրիչը արտահայտվում է ոչ միայն **-ei** վերջածանցի միջոցով, այն առկա է արդեն ածանցյալ բառի հիմնական ձևույթի մեջ:

Գերմաներենի բացասական իմաստով **-ei** վերջածանցի մեկ այլ հայերեն համարժեք կարող է լինել **-ng**-ը, օր.՝

- Kritzel-ei - խզբզ-ոց
- Schmierer-ei - խզբզոց/քսմս-ոց

Գերմաներենի **-ling** վերջածանցն իր բնույթով ևս բազմիսաս է: Այն նշում է արական սեռի անձ (nomen agentis *-Lehrling*, nomen patientis *-Prüfling*), միևնույն ժամանակ այն կարող է արական սեռի անձին բացասական բնութագիր հաղորդել, օր.՝

- Feig-ling - վախ-կոտ
- Dichterling - գրչակ
- Wider-ling - զզվելի /մարդ/, գարշելի /մարդ/

Հայերենի **-կոպ** վերջածանցը ցույց է տալիս «հեշտ տրամդիր լինել մի վիճակ ունենալու» իմաստ (Աբեղյան 1974:212):

Բացասական իմաստը սերտորեն կապված է բացասական գնահատականի, բնութագրի և դրանով իսկ հատկություն նշելու հետ, հայերենն այս դեպքերում դիմում է **-կոպ** և **-ելի** ածականակերտ վերջածանցներին: Մինչ գերմաներենում այս գոյականները կազմվում են ածականներից, հայերենում նրանք ածանցման միջոցով դառնում են ածական՝ միևնույն ժամանակ գոյականաբար կիրառվելով: Հայերենի **-ելի** վերջածանցին հատուկ է նաև եղանակավորող իմաստը:

Զգալի թիվ են կազմում **գործող անձ և մասնագիտություններ** ցույց տվող գոյականակերտ ածանցները: Գերմաներենի որոշ վերջածանցներ նպատակահարմար է դասակարգել [+շնչավոր/+մարդ] իմաստային հատականիչի հիման վրա: Այստեղ որպես հիմք կարող են ծառայել գոյականներ, բայեր և ածականներ:

Գերմաներենի **-er, -ler, -ner** վերջածանցները բավականին գործուն են, և դրանցով կազմված գոյականները հիմնականում ծառայում են մասնագիտություններ անվանելուն:

Ինչպես երևում է օրինակներից, հայերենում մասնագիտությունների անվանումները կազմվում են թե՛ ածանցման և թե՛ բառակազմական այլ միջոցներով:

Հայերենի անձ անվանող ամենակիրառական վերջածանցներից է – **իչ**-ը, որը ծագում է գրաբարից և ունի ենթակայական դերբայի իմաստ (Էլոյան 1959:58): Այսօր էլ այն որևէ մասնագիտությամբ զբաղվող արական սեռի անձ անվանող ամենագործուն վերջածանցներից է, օր.՝

Lehr-er - ուսուց-իչ

Säng-er - երգ-իչ

Հայերենում այս վերջածանցներով մասնագիտության որոշ անվանումների դեպքում որպես համարժեք հանդես է գալիս գործուն և կենսունակ վերջածանց **-արար**-ը: Այն ինքնուրույն բառ է եղել և ունեցել «արարել, անել» նշանակությունը (Էլոյան 1959:50), օր.՝

Baumeist-er - շին-արար

Rett-er - փրկ-արար

Unternehm-er - գործ-արար

Որպես համարժեք կիրառվում է հաճախ **-ող** վերջածանցով ենթակայական դերբայը, օր.՝

Programmier-er - ծրագրավոր-ող

Kelln-er - մատուց-ող

Verkäuf-er - վաճառ-ող

Որոշ դեպքերում համարժեքներ կարող են լինել վերջածանցակերտ բառերը, օր.՝

Gerb-er - կաշե-գործ

Bäck-er - հաց-թուփ

Schust-er - կոշկա-կար

Հատկապես տարբեր մարզածների մարզիկներին անվանելու համար հայերենում հիմնականում կիռավում է **-որդ** վերջածանցը, որը ծագումնաբանորեն համարվում է «որդի, զավակ» բառի կրճատ ձևը (Էլոյան 1959:52), օր.՝

Schwimm-er - լող-որդ

Radl-er - հեծանվ-որդ

Eiskunstläuf-er - գեղ-ա-սահ-որդ

Գերմաներենի **-er, -ler, -ner** վերջածանցները անվանում են նաև ծագումը կամ ավելի շուտ պատկանելությունը որևէ տեղանքին: Նման

դեպքերում հայերենում որպես համարժեք հանդես է գալիս **-gh** վերջածանցը, օր.՝

Berlin-er - բերլին-ցի
Jerewan-er - երևան-ցի

Վերը դիտարկված **-schaft** վերջածանցը նույնպես կարող է ցույց տալ վերացականություն, օր.՝

Freundschaft - ընկեր-ություն
Bereitschaft - պատրաստական-ություն
Wissenschaft - գիտ-ություն
Gemeinschaft - հանր-ություն

Ինչպես երևում է բերված օրինակներից, **-ություն** վերջածանցը հայերենի ամենաբազմիմաստ և բազմագործառույթայիններից է, ինչպես նաև կիրառական է և գործուն, որը պայմանավորված նրա բազմիմաստությամբ: Որոշելու համար, թե ինչ իմաստ ունի **-ություն** վերջածանցը ամեն առանձին դեպքում հարկավոր է պարզել, թե խոսքի որ մասից է ածանցվել տվյալ բառը: Գոյականի հիմքից կազմված լինելու դեպքում, այն ունի հավաքական նշանակություն և հիմնականում համապատասխանում է գերմաներենի **-schaft** վերջածանցին, օր.՝

աշակերտություն - Schülerschaft
գյուղացիություն - Bauernschaft

Ածականի հիմքից կազմված բառերին հատուկ է առարկայացած հատկանիշի իմաստ, նրանք վերացական են և գերմաներենում նրանց համապատասխանում են **-heit/keit** վերջածանցները, օր.՝

խիզախություն - Tapferkeit
գեղեցկություն, հմայություն - Schönheit

Բայի հիմքից կազմված գոյականները արտահայտում են գործողություն, և նրանց համարժեքը կարող է լինել ամենագործուն **-ung** վերջածանցը, օր.՝

գործող-ություն - Handl-ung
ուսումնասիր-ություն - Forsch-ung
զնն-ություն - Beobacht-ung

Այստեղից կարելի է եզրակացնել, որ բառակազմական հիմքը ածանցի կիրառության համար որոշիչ կարող է լինել, հատկապես, թե արդյոք ածանցված բառը բայի թե գոյականի հիմքից է կազմված: Հայերեն համարժեքի ընտրության համար կարևոր գործոն է շնչավոր/անշունչ իմաստային հատկանիշը, ինչը գերմաներենին բնորոշ է:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որոշ դեպքերում գերմաներենն ու հայերենը հավաքականություն, վերացականություն, ժխտում, բացասականություն արտահայտելիս դիմում են

բառակազմական տարբեր միջոցների, ինչպես գնահատման և աստիճանավորման դեպքում, երբ հայերենը կիրառում է ածականը որպես բառակազմական միջոց:

Մինչ գերմաներենի ածանցները համեմատաբար ավելի հստակ են իմաստային առումով, հայերենի ածանցները դրսևորում են բազմիմաստություն, ինչպես երևում է աղյուսակում:

Ածանցներ	
Գերմաներեն	Հայերեն
Հավաքականություն	
Ge-	-ություն, -ելեն, -ոց
Schaft	-ություն,
-ei	-արան, -ություն, բառույթներ
-ung	-ություն, -ուստ / <i>հազվադեպ</i> /
Ժխտում	
Un-	ան-, դժ-
Miss-	
Բացասականություն	
-ei	-ոց, -ություն
-ling	-ոտ/-ելի
Վերացականություն	
-heit	-ություն
-keit	-ություն
-schaft	-ություն
Անձանց անվանումներ	
-er/-ler/-ner	-իչ, -որդ, -ցի, -արար
-chen/-lein	-իկ, -ուկ, -ակ
-schaft	-ություն,

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Elsen, H. Grundzüge der Morphologie des Deutschen, De Gruyter. 2011
2. Fleischer, G. Wortbildung der deutschen Gegenwartssprache, de Gruyter 2007
3. Duden Die Grammatik, Duden Band 4, Dudenverlag, Mannheim. Wien. Zürich. 2009

4. Eisenberg, P. Das Wort. Grundriss der deutschen Grammatik, 3. Auflage, J.B. Metzler, Stuttgart, Weimar 2006
5. Wahrig Deutsches Wörterbuch, Bertelsmann Verlag. 1997
6. Nübling, Damaris (in Zusammenarbeit mit Antje Dammel, Janet Duke und Renata Szczepaniak: Historische Sprachwissenschaft des Deutschen: Eine Einführung in die Prinzipien des Sprachwandels, 3. überarbeitete Auflage, Narr Verlag. 2010
7. Աբեղյան Մ. Երկեր հտ. 2, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1974
8. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզուԵրևան, 2002
9. Զահուկյան Գ. Ածանցումը որպես բառակազմական միջոց “Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանությունը և բառակազմությունը”, Երևան, 1989
10. Էլոյան, Ս. Ա. Ժամանակակից հայերենի ածանցների առաջացման ուղիների մասին. Պատմա-բանասիրական հանդես, N 4 . էջ. 46-68, 1959

REFERENCES

1. Abeghyan M. Erker ht. Z, Haykakan SSH GA Hratarakchowt'yown, Er&an, 1974
2. Asatryan M. Jhamanakacic hayoc lezowEr&an, 2002
3. Jahowkyan G. Ac'ancowmy' orpes bar'akazmakan mijoc “Jhamanakacic hayoc lezvi imastabanowt'yowny' & bar'akazmowt'yowny' ”, Er&an, 1989
4. E'loyan, S. A. jhamanakacic hayereni ac'ancneri ar'ajacman owghineri masin. Patma-banasirakan handes, N 4 . e'j. 46-68, 1959

КАРИНЕ ОАНИСЯН, РУЗАННА КАРАПЕТЯН - ПОЛИСЕМИЯ АФФИКСОВ ИМЕН СУЩЕСТВИТЕЛЬНЫХ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ И ИХ ЭКВИВАЛЕНТЫ В АРМЯНСКОМ

Ключевые слова: аффиксация, собирательность, отрицание, абстрактность, пейоративность, эквивалент, полисемия, продуктивность

Словообразование – один из важнейших путей обогащения языка. Существует много типов и видов словообразования. Наряду со словосложением деривация как весьма продуктивный способ словообразования широко распространена и в немецком, и армянском языках. Притом в обоих языках суффиксация превалирует над префиксацией.

В рамках данной статьи главным образом исследуются немецкие аффиксы, имеющие собирательный, абстрактный, пейоративный смысл, суффиксы, обозначающие название профессий и т.д., и их возможные эквиваленты в армянском языке.

Целью данной статьи является также и обоснование критериев выбора аффикса в обоих языках, выявление влияния семантического признака одушевленности/неодушевленности, принадлежности основной морфемы к определенной части речи.

KARINE HOVHANNISYAN, RUZANNA KARAPETYAN - POLYSEMY OF GERMAN SUBSTANTIVE AFFIXES AND THEIR EQUIVALENTS IN ARMENIAN

Keywords: *affixation, collectivity, negativity, abstraction, pejorative, equivalent, polysemy, productivity*

Word formation is one of the most significant ways of the vocabulary enrichment. Both, the derivation and the composition, are equally common and productive in both languages, German and Armenian. Suffixes are used much more commonly and frequently than the prefixes in forming substantives.

The present paper deals mainly with native German affixes denoting collectivity, abstraction, negativity, affixes naming occupations and place of origin and their possible equivalents in Armenian.

The main goal of the research is to find out the German native affixes conveying the mentioned meanings and their Armenian equivalents and the criteria determining the choice of the affix each language is based on, to research on how the semantic characteristics such as *animate* or *inanimate* influence the choice of the affix. Further aspect of the study is the role of the part of speech the word is derived of.

Ներկայացվել է՝ 04.02.2020
Գրախոսվել է՝ 31.01.2020

**ԻՍՊԱՆԱԿԱՆ ՊԻԿԱՐՈՅԱԿԱՆ ՎԵՊԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

**ԴՈՆԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ
ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

Հիմնաբառեր՝ անշաղկապ համադաս և ստորադաս կառույցներ, հուզարտայապաշակական կառույցներ, դրափոխություն, մասնատում, փրոհում, զեղչում, հարանշանակություն, միջտեքստային ակնարկ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել պիկարոյական վեպերի շարահյուսական կառուցվածքը և վեր հանել այս ժանրի տեքստերում օգտագործված քերականական բոլոր այն մեթոդները, որոնք հուզականություն են հաղորդում վեպին՝ ընդգծելով այս ժանրի լեզվաոճական ինքնատիպությունը և ընթերցողի մոտ ձևավորելով գնահատողական վերաբերմունք՝ կերպարների, նրանց փոխհարաբերությունների, շրջապատող աշխարհի նկատմամբ:

Պիկարոյական ժանրի ձևավորումը անմիջականորեն կապված է իսպանական գրականության և ազգային լեզվի զարգացման փուլերի հետ: Հարկ է նշել, որ XVI դարը համարվում է լեզվական յուրօրինակ հեղափոխության շրջան, երբ Իտալիայում, հետո նաև Իսպանիայում և Ֆրանսիայում, նկատվում է ազգային լեզուներով գրավոր և տպագիր ստեղծագործությունների զգալի աճ:

Պիկարոյական ժանրը, որի զարգացումը սկսվում է բարոկկոյի գրական ոճի հենքի վրա՝ լեզվական յուրաքանչյուր միավորի առավելագույն իմաստային հագեցվածության հետ զուգընթաց, փորձում է հաղթահարել լեզվի կիրառման քարացած նորմերը:

Պետք է ասել, որ բարոկկո շրջանի իսպաներեն լեզուն արդեն իսկ ուներ զարգացած քերականական համակարգ, որն ակտիվորեն զարգանում էր թե՛ չափածո խոսքում, թե՛ արձակում:

«Իսպանական գրական լեզվում նախադասության կառույցի զարգացումը» մենագրության մեջ Ի. Ա. Կորոլենկոն նշում է, որ «եթե գրական լեզվի կայացման վաղ շրջանում արձակում գերիշխում էին անշաղկապ համադասական (parataxe) կառույցի նախադասությունները, ապա հետագայում լայն զարգացում ստացան նախադասությունների ստորադաս (hypotaxe) կառույցները»: Նա նշում է նաև, որ «XVI-XVII

դարերի պատմողական արձակի լեզվում առավել գերակայում են բարդ նախադասությունները, ընդ որում դրանք իրենցից ներկայացնում էին կազմակերպված միասնություններ» (Короленко 1989: 178):

Բացի այդ, այս շրջանում իսպաներենի շարահյուսական կառույցներում կիրառվում էր նորմատիվ շարահասություն, որը հատուկ է ժամանակակից իսպաներենին, այն է՝

1. Ենթական իր լրացյալով
2. Ստորոգյալը՝ արտահայտված բայի դիմավոր ձևով
3. Ուղիղ խնդիր
4. Անուղակի խնդիր
5. Պարագա

Սակայն այս շարահասությունը նույնությամբ չի պահպանվում գրավոր և բանավոր խոսքում: Այսպես, օրինակ, անձնական դերանուններով արտահայտված ենթական բաց է թողնվում՝ ներակայորեն արտահայտված լինելով բայական խոնարհումների միջոցով: Ալարկոն Լյորաչը ենթակայի արտահայտման նման միջոցը անվանում է «ձևաբանական ենթակա»: Ուղիղ խնդիրը, որն օգտագործվում է «a», նախդրով, որն ի դեպ, գործածական էր դեռևս նախագրավոր շրջանում (Gill y Gaya 1968), ձգտում է բային հաջորդող դիրք զբաղեցնել, չնայած կարող է հանդես գալ նաև բայից առաջ: Նախադասության մեջ բավական շարժուն դիրք են գրավում նաև անուղակի խնդիրները և պարագաները: (Alarcós LLorach 1979; Gili y Gaya 1968): Կարելի է ասել, որ իսպաներենի շարահյուսական կառույցի ճկունության շնորհիվ է, որ նախադասությունը դառնում է առավել արտահայտչական և իր մեջ կրում է տեքստի ողջ հուզականությունը:

Օ. Ա. Տուրբինան գտնում է, որ հուզական շարահյուսությունը հակադրվում է տրամաբանական շարահյուսությանը, քանի որ վերջինս ունի նորմատիվ քերականության օրենքներին հետևող կանոնավոր շարահասություն և արտահայտում է չեզոք հուզականություն: Հուզական շարահյուսության խնդիրը պատկերավոր մտածողության, երևակայության ակտիվացումն է և միտված է ճանաչողական-հաղորդակցական գործընթացներին զուգընթաց ընթերցողին ներքաշել զգայական ոլորտ: (Турбина 1994: 193)

Պետք է ասել, որ պիկարոյական վեպերի տեքստերին հատուկ են «հուզական» կամ «արտահայտչական» շարահյուսական կառույցները, քանի որ պատումի հեղինակը հիմնականում վեպի կերպարներից մեկն է, որը հիմնականում հանդես է գալիս եզակի թվի առաջին դեմքի անձնական դերանունով *yo*, *ser* (լինել, հանդես գալ) և բայի առաջին

դեմքով և, որի լեզուն աչքի է ընկնում ինքնատիպ կառուցվածքով և յուրօրինակ ոճական հնարներով.

«Yo, mi señor Don Picaro, soy la melindrosa escribana, la honrosa pelona, la manchega al uso, la engulle figas...» (P.28) - «Ես, տեր իմ պարոն Պիկարո, քծնող, սեթևթ գրիչ (գրագիր) եմ, ազնիվ չքավոր գեղջկուհի, հալումաշ եղած փնթի կին, արարքների ու կատակների կլանիչ...» (Ֆ.Լոպես Ուրեդայի «Խորամանկ Խուստինան»):

Հուզականությունը ստեղծվում է տրամաբանական կատեգորիաների վերաիմաստավորման միջոցով, որը ենթադրում է այդ կատեգորիաների լեզվական միավորների շարահասության շեղում նորմատիվ քերականական կանոններից:

Ն.Դ. Արուսյունովան նշում է, որ իսպաներենում գոյություն ունեն հատուկ հուզա-արտահայտչական (empathique) այնպիսի կառույցներ, որոնք կարող են ազդել նախադասության այս կամ այն անդամի շեշտադրման վրա՝ դրան տալով հատուկ արտահայտչականություն, ինպիսիք են օրինակ, տարանջատումը կամ բանադարձումը, այսինքն՝ իմաստով անմիջականորեն կապված տարրերի անջատումը այլ տարրերի միջոցով, դրափոխությունը (transposition)՝ լեզվական տարրերի տեղափոխությունը նախադասության մեջ, որը հանգեցնում է նախադասության տարրերի վերաիմաստավորման, մասնատումը (decomposition), որը ենթադրում է լեզվական տարրերի իմաստային տարրալուծում, կամ նախադասության կառուցվածքային մասնատում և այլն: (Арутюнова 1999:463): Բացի այդ, իսպաներենում գոյություն ունի բայի անդեմ ձևերով կազմված բացարձակ և կապավոր կառույցների համակարգ, որը միտված է ուժգնացնելու տեքստի արտահայտչականությունը:

Ըստ Վ.Ա.Լիտվինենկոյի՝ տարանջատումը բարդ նախադասությունների մակարդակում հանդիպում է տվյալ շրջանի բոլոր տեքստերում՝ թե՛ հերոսների խոսակցական լեզվում, թե՛ հեղինակի շարադրանքում: Պիկարոյական վեպերի շարադրանքը աչքի է ընկնում կառուցվածքային միավորների պարզեցմամբ, համասեռ անդամներով գերհագեցած նախադասություններով, ստորադասական նախադասություններով և բայի անդեմ ձևերով կազմված կառույցներով (Литвиненко 1981: 61): Շարահյուսական կառույցների պարզեցման այս ձգտումը պայմանավորված է գրական լեզուն կենդանի, ինքնաբերական, հուզառատ խոսքին մոտեցնելու ցանկությամբ, որի շնորհիվ, ի դեպ, պիկարեսկայի հեղինակներին հաջողվել է ստեղծել իրական և համոզիչ

կերպարներ, որոնք դուրս են մղված, անարդարություններով լի այդ գարշելի հասարակությունից և օգտագործում են բոլոր միջոցները իրենց տեղը ունենալու այդ հասարակությունում:

Mas, según me parece, es regla ya ellos usada y gurdada. Aunque no haya cornado de trueco, ha de andar el berrete en su lugar (Lazarillo, 92) – Բայց, ինչպես ինձ է թվում, նրանք ունեն մի նվիրական, սրբազան կանոն՝ քիթը տնկել, անգամ եթե գրպանում մի գրոշ էլ չկա:

Mas de lo que al presente padecía, remedio no hallaba; que si el día que enterrábamos yo vivía, los días que no había muerto, por quedar bien vezado de la hartura, tomando a mi cotidiana hambre, más lo sentía. De manera que en nada hallaba descanso, salvo en la muerte... (Lazarillo, 53) – Այսպիսով, ես շարունակ տանջվում էի և փրկության ոչ մի ճանապարհ չէի տեսնում: Հոգեհացի օրերին ես կենդանի էի, իսկ երբ ննջեցյալ չկար, կշտությանն ընտելացալ ստամոքսս դժկամությամբ էր դիմանում ամենօրյա քաղցին: Ոչ մի բան ինձ չէր հանգստացնում, և ես ամենաբարձրացյալից մահ էի աղերսում...

Ինչպես տեսնում ենք, այս օրինակներում առկա է պատճառահետևանքային ստորադասական նախադասությունների տարանջատում «*que*», «*de manera de que*» շաղկապներով: Հարկ է նշել, որ կիրառման հաճախականությամբ պիկարոյական վեպերում շատ է հանդիպում «*que*» շաղկապով ներմուծված խնդիր-լրացման ստորադասական նախադասությունների տարանջատումները:

Պիկարոյական վեպերի տեքստերում լայնորեն կիրառված են նաև միջադաս նախադասություններ կամ բառապակցություններ, որոնք նախադասության ոչ մի անդամի հետ շարահյուսորեն կապված չեն, սակայն նախադասությանը հաղորդում են հուզա-արտահայտչականություն:

Yo, que vi la ocasión, dije que echaba menos mis pajes por no tener con quien inviar a casa por unas cajas que tenía (El buscón, 221) – Ես, տեսնելով ընձեռնված լավ հնարավորությունը, ասացի, որ ինձ պակասում են (բացակայում են) իմ ծառաները, որպեսզի նրանց տուն ուղարկեմ՝ ուտելիքի ետևից:

Այս օրինակում ներկայացված են բայի անորոշ դերբայով կազմված երկու դարձվածք՝ պատճառի պարագայի գործառույթով («*por no tener*» - «այն պատճառով, որ չունեի; բացակայում էին») և անուղակի լրացման

գործառույթով («con quien inviar» - «ում հետ ուղարկել»), ինչպես նաև նախադասությունը բարդեցված է որոշիչ ստորադասականով («que tenia»), որը բնորոշում է «unas cajas» լրացումը:

Ներքոնշյալ օրինակում նախադասության մեջ ներառված է ձևի պարագա ստորադասական միջադաս նախադասությունը՝ «como era vividor» և որոշիչ ստորադասականը՝ «que supiese trafagar con el dinero».

El, como era vividor, sólo buscaba hombre de mi taza, que supiese trafagar con el dinero (Guzmán de Alfarache, 766) - Նա, լինելով շատ ժիր, կայտառ, շարժուն մարդ, փնտրում էր իմ մաստի (բնույթի, բարքի) մի մարդ, որը կկառողանար տնօրինել կամ կառավարել փողերը:

Նախադասության արտահայտչականության ուժգնացմանը կարող է նպաստել նաև մի քանի դարձվածքների կամ համակատար դերբայի միաժամանակյա կիրառմամբ: Օրինակ՝

Mas el embajador de España, con su mucha prudencia, tomó la mano en meter el bastón, haciendo, con su discreción, chacota (Guzmán de Alfarache, 522) - Բայց Իսպանիայի դեսպանը՝ ողջ իր իմաստությամբ (խոհեմությամբ) վերցրեց իր ձեռքը խաղաղության հաստատման գործը, ուրախ, բայց համեստ կատակելով:

Հետևյալ երեք դարձվածքների միաժամանակյա կիրառումը՝ «tomar la mano en» (մասնակցել մասնակից դառնալ), «meter el bastón» (խաղաղություն հաստատել), «hacer chacota» (կատակել, կատակ խաղալ մեկի գլխին), ինչպես նաև «hacer chacota» դարձվածքի համակատար դերբայական ձևը՝ «haciendo chacota, որի ամբողջականությունը խախտված է բաղադրիչների միջև տրոհված ձևի պարագայի ներմուծմամբ՝ «con su discreción» (համեստ) ընդգծում են այս նախադասության ողջ արտահայտչականությունը՝ վեր հանելով պատումի հեղինակի թաքնված ծաղրը բարձրաստիճան անձի (Իսպանիայի դեսպանի) նկատմամբ:

Yo, si va a decir la verdad, aunque los compañeros me querían guiar a otras campañas, como no aspiraba a semejantes oficios, y el andar en ellos era por necesidad, ya que me vía con dineros y bien puesto, no traté de más que de holgarme (El buscón, 245) - Ես, եթե ճիշտն ասեմ (ճիշտն ասած), չնայած ընկերներս ուզում էին ինձ այլ թատերախումբ վերցնել, քանի որ շատ չէի ձգտում զբաղվել այդ արհեստով և ճանապարհորդելն իրենց հետ պայմանավորված էր միայն կարիքով, և նաև քանի որ այժմ ունեի

գումար և վատ չէի տեղավորվել, ձգտում է միայն ուրախանալ, զվարճանալ:

Նշված օրինակներում, ինչպես տեսնում ենք, առավել հաճախակի են հանդիպում որոշիչ ստորադասական նախադասությունների և համակատար դերբայով կազմված դարձվածքների միջադասությունը, որոնք, շարահյուսորեն խզված լինելով նախադասության մյուս անդամներից, ուժգնացնում են նախադասությունների արտահայտչականությունը՝ ընթերցողին փոխանցելով հեղինակի հույզերն ու զգացմունքները:

Հարկ է նշել, որ բայի անդեմ ձևով կազմված դարձվածքների տեղը ևս նախադասության մեջ բավական շարժուն է: Այս դարձվածքները, նախադասության մեջ հանդես գալով որպես պարագա, չունեն խիստ ֆիքսված տեղ, ուստի և կարող են դրվել նախադասության ցանկացած մասում՝ սկզբում, մեջտեղում կամ վերջում:

Իսպաներենի նախադասության կառույցի ճկունությունը թույլ է տալիս պիկարոյական վեպերի հեղինակներին ընդգծել նախադասության որոշ անդամներ՝ կախված նրանց իմաստից և տեղեկատվության կարևորությունից: Բացի այդ, լեզվում ամրապնդվել են հատուկ հուզակա-արտահայտչական (*empathique*) շրջուն շարահյուսական ձևեր (*inversion*), որոնք թույլ են տալիս ընդգծել ամբողջական նախադասությունը կամ առանձին անդամներ: Եթե չեզոք հուզականություն արտահայտող նորմատիվ շարահյուսական կառույցում նախադասության գլխավոր անդամը նախորդում է կախյալ անդամին՝ ստորոգյալին (գտնվում է նախադաս դիրքում), ապա հուզարտահայտչական կառույցում, ինչպես նշում է Արուտյունովան, «կախյալ տարրը զբաղեցնում է գլխավորի, կառավարողի դիրքը, իսկ գլխավորը զբաղեցնում է կախյալ դիրք»: Ն.Դ.Արուտյունովան նշում է նաև, որ «որոշի արտահայտչականությունը ի հայտ է գալիս, հատկապես հույզերով երանգավորված խոսքում» (Арутюнова 1999:463): Ուստի և, պիկարոյական վեպերին բնորոշ է շարահյուսական նման կառույցները, և ստորոգելիական իմաստ արտահայտող լեզվական մի շարք միավորներ՝ *pobre, desdichado, miserable, desgraciado* –թշվառ, խեղճ; *tonto, bobo* – հիմար, ապուշ; *loco* — խենթ; *pícaro* –խորամանկ), որոնք շնորհիվ նախադասության մեջ իրենց գրաված դիրքի, նպաստում են որոշչին հուզա-արտահայտչական բնույթ հաղորդելուն: Այսպես, օրինակ.

Con todo eso, el diablo del perrillo, como olió olla y carne, comenzó a ladrar por salir... (La pícaro Justina, 113) - Մինչ այդ սատանայական, անիծյալ

շնիկը , առնելով մսի ու լափի հոտը, սկսեց հաշալ,որպեսզի բաց թողնեն...

Empero con todas estas faltas, desdichada de la casa donde sus faldas faltan (Guzmán de Alfarache, 739) – Բայց այն ամենի հետ ինչ չի հասնում (բացակայում է), անիծված է այն տունը, որտեղ մուտք չեն գործում (բացակայում են) նրա կիսաշրջագգեստները:

Իսպանական պիկարոյական տեքստերի բնորոշ առանձնահատկություններից է նախադասության համասեռ անդամների կիրառումը: Որպես համասեռ անդամներ կարող են հանդես գալ որոշիչները, լրացումները և շատ հաճախ, անվանական ստորոգյալի անվանական բաղադիրչը: Որպես որոշիչ և ստորոգյալի անվանական բաղադիրչ օգտագործվում են անձի կամ առարկայի արտաքին տվյալները կամ բնավորությունը բնութագրող ածականներ և ստորոգելիական նշանակություն ունեցող գոյականներ: Օրինակ,

Es fiera, fea, fantástica, furiosa, fastidiosa, floja, fácil, flaca, falsa, que sólo le falta ser Francisca (Guzmán de Alfarache, 362) - Նա տգեղ է, դաժան, ֆանտաստիկ, կատաղի, նողկալի, դանդաղաշարժ, անխելք, նիհար, կեղծ; այնպես որ միայն մնում էր նրան Ֆրանցիսկա կոչել:

Այս օրինակում կիրառված է ինը ածական, որոնք սկսվում են «f» տառով և ունեն բացասական գնահատողական արժեք և բնութագրում են կարիքը և ջքավորությունը: Այս բոլոր ածականները, գտնվելով շարայուսական նույն դիրքում և հանդես գալով որպես ստորոգյալի անվանական բաղադիրչ, հանգեցնում են իմաստային համակենտրոնացման, ընդ որում դրանցից յուրաքանչյուրը ուժգնացնում է մյուսի բացասական իմաստը: Առավելագույն արտահայտչականության հասնելու նպատակով Ալեմանը վարպետորեն օգտագործել է լեզվական բոլոր մակարդակները՝ հնչյունական («f» հնչյունը, որն արտահայտում է նողկանքի ֆիզիոլոգիական հակազդում), բառային (բոլոր բառային միավորները արտահայտում են բացասական իմաստ), շարահյուսական (համասեռ անդամներով կառույց), ինչպես նաև կիրառել է ոճական այնպիսի հնարներ, ինչպիսիք են հարանշանակությունը (connotation) և միջտեքստային ակնարկը (allusion intertextuelle)՝ «Francisca fue flaca, fea, fría y floja»՝ հղում կատարելով իսպանական շուտասելուկին:

Սակայն ինը համասեռ անդամների կիրառումը մեկ նախադասության մեջ առավելագույն թիվը չէ: Լոպես դե Ուբեդայի

«Խորամանկ Խուստինա» վեպը սկսվում է գլխավոր հերոսին ներկայացնող ընդհանուր նախաբանով, որը կազմված է մեկ բարդ ստորադասական նախադասությունից, որն իր մեջ ներառում է երեք ստորադասական նախադասություն և 84 անվանական ստորոգելի՝ ստեղծելով խաբեբա և խորամանկ կնոջ հետաքրքիր, հմայիչ և հակասական կերպարը, քանի որ դրական գնահատողական արժեք ունեցող բառերի կողքին «*la encantadora*» (կախարդուհի, թովչուհի), «*la mirona*» (խոշոր աչքեր ունեցող), «*la bailona*» (պարուհի, պարասեր կին) մակդիրների կողքին հավասար շարահյուսական դիրքում գտնվում են հակառակ իմաստ ունեցող արտահայտություններ՝ «*la despierta dormida*» (արթնացած քնկոտը), «*la devota maridable*» (ամուսնացած ամուսնալուծվածը), «*la lloradora enjuta*» (չոր աչքերով ողբ-լաց անողը), «*la paseada*» (թեթևաբարո, պարկեշտ կինը) և այլն: Ավելի ուշ շրջանում և այլ ժանրերում նման կիրառումներ չեն հանդիպում:

Պիկարոյական տեքստերի հուզարտահայտչականությունը շարահյուսական մակարդակում արտահայտված է նաև գեղջված անդամներով (*elliptique*) նախադասությունների միջոցով, որտեղ գեղջված անդամը ընկալվում է համատեքստային իրադրության օգնությամբ: (Полянская 2001: 27)

Իսպաներենում որպես էլիպտիկ նախադասություններ առավել հաճախ հանդես են գալիս հարկադրական և բացականչական նախադասությունները, որոնք միտված են արտահայտելու հույզեր, զգացմունքներ, ինչպես նաև գործողության կատարման հրահանգ, դրդում: Պիկարոյական վեպերում նման նախադասությունները օգտագործվում են հերոսների ուղիղ խոսքում՝ արտահայտելու ինքնաբերական հուզական հակազդեցություն արտաքին աշխարհի իրադարձությունների նկատմամբ: Օրինակ,

Cuan al revés corre un rico! ¡Qué viento en popa! ¡Con qué tranquilo mar navega! ¡Qué bonanza de cuidados! ¡Qué descuido de necesidades ajenas! Sus alhies llenos de trigo, sus cubas de vino, sus tinajas de aceite, sus escritorios y cofres de moneda! (Guzmán de Alfarache, 354)- Ինչ այլ կերպ է ապրում հարուստը: Ինչ քամի է փչում նրա առագաստի ուղղությամբ: Ինչ խաղաղ, հանգիստ ծովով է նա նավարկում: Ինչ խաղաղություն, անհողմություն նախազգուշություններից: Ինչպիսի՞ անարգալից վերաբերմունք ուրիշների կարիքներին: Նրանց ամբարները լի են ցորենով, կճուջները՝ յուղով, տակառները՝ գինով, իսկ գրասեղանները և սունդուկները՝ մետաղադրամներով:

Այս հատվածում լիարժեք և էլիպտիկ հուզական-գնահատողական նախադասության հետ միասին առկա է բարդ համադասական նախադասություն, որը կազմված է չորս երկանդամ գեղջված նախադասություններից: Առաջին նախադասությունում ներկայացված է *„llenos, (լի) ստորոգելին*, բայց բացակայում է բայի դիմավոր ձևը, հաջորդող նախադասություններում ստորոգելին բացակայում է, որն ընկալվում է անուղակի լրացումների՝ *«de vino, de aceite, de moneda»* միջոցով:

Այսպիսով, մենք ուսումնասիրեցինք իսպաներենի հուզական շարահյուսության գրեթե բոլոր քերականական միջոցները, այն է՝ նորմատիվ շարահյուսական կառույցների շեղում, նախադասության որոշ անդամների մասնատում, տրոհում, այս կամ այն անդամի շեշտադրում կամ զեղչում, որոնք պիկարոյական վեպերին հաղորդել են հուզականություն՝ ընդգծելով այս ժանրի լեզվաճական ինքնատիպությունը և ընթերցողի մոտ ձևավորել են գնահատողական վերաբերմունք կերպարների, նրանց փոխհարաբերությունների, նրանց շրջապատող գծուծ և արգահատելի աշխարհի նկատմամբ: Շնորհիվ հուզարտահայտչական շարահյուսական ինքնատիպ կառույցների՝ պիկարեսկայի հեղինակներին հաջողվել է առավել հասանելի դարձնել այս ժանրի գաղափարական և գեղագիտական արժեքը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Alarcós LLorach „Comentarios lingüísticos de textos,, Universidad de Valladolid, 1979,
2. Gilí y Gaya S. Curso superior de sintaxis española. - Barcelona: Publicaciones y Ediciones Spes, 1968. - 317 p.
3. Guzman de Alfarache - Alemán M. Guzman de Alfarache. - Barcelona: Planeta, 1999.-989 p.
4. Castillo y Solórzano A. La garduña de Sevilla. - La Habana, 1964. - 275 p.
5. La picara Justina. - López Úbeda F. La picara Justina. - La Habana, 1977. - 445 p.
6. Lazarillo de Tormes. - Madrid: Cátedra, 1999. - 330 p.
7. El bucón - Quevedo F.de. El bucón (Historia de la vida del buscón, llamado don Pablos. - Madrid: Clásicos Castilla, 1990. - 257 p.
8. El Cojuelo - Vélez de Guevara L. El Diablo Cojuelo. - Madrid: Clásicos Castilla, 1988.-245 p.
9. Арутюнова Н.Д. Понятие пресуппозиции в лингвистике / Изв. АН СССР. Серия литературы и языка. - Т. 32. - М., 1972. - С. 84-89.

10. Короленко И.А. Развитие структуры предложения в испанском литературном языке. - Л.: Наука, 1989. -199 с.
11. Литвиненко Е.В. Из истории становления синтаксиса испанского языка (явление парцеляции). - Киев: Вища школа, 1981. - 112 с.
12. Полянская Л.П. Безглагольные предложения во французском языке эпохи классицизма.-Дисс. канд. фил. наук:10.02.05.-СПб.,2001.-223 с.
13. Турбина О.А. Формирование французского классического предложения: системный и структурный аспекты.-Челябинск, 1994.-269 с.

REFERENCES

1. Arutjunova N.D. Ponjatie presuppozicii v lingvistike / Izv. AN SSSR. Serija literatury i jazyka. - T. 32. - M., 1972. - S. 84-89.
2. Korolenko I.A. Razvitie struktury predlozhenija v ispanskom literaturnom jazyke. - L.: Nauka, 1989. -199 s.
3. Litvinenko E.V. Iz istorii stanovlenija sintaksisa ispanskogo jazyka (javlenie parceljacji). - Kiev: Vishha shkola, 1981. - 112 s.
4. Poljanskaja L.P. Bezglagol'nye predlozhenija vo francuzskom jazyke jepohi klassicizma. - Diss. kand. fil. nauk: 10.02.05. - SPb., 2001.- 223 s.
5. Turbina O.A. Formirovanie francuzskogo klassicheskogo predlozhenija: sistemnyj i strukturnyj aspekty. - Cheljabinsk, 1994.-269 s.

ДОНАРА КАЗАРЯН, МАРГАРИТА БАГРАМЯН – СИНТАКСИЧЕСКАЯ СТРУКТУРА ИСПАНСКИХ ПЛУТОВСКИХ РОМАНОВ

Ключевые слова: *бессоюзные сложносочиненные и сложноподчиненные конструкции, обособление, транспозиция, парцелляция, редукция, дислокация, компрессия, межтекстуальная аллюзия*

Плутовской роман относится к числу произведений «низшего жанра» Золотого века и стоит близко к народному фольклору, что позволяет авторам использовать разговорный язык разных социальных слоев общества. Цель данной статьи изучить синтаксическую структуру плутовских романов и выявить все те грамматические способы, использованные в текстах данного жанра, которые придают им эмоциональность, активируют воображение читателя, его образное мышление и вовлекают в чувственную сферу. Эмоциональность создается не только посредством языковых единиц, а также переосмыслением логических категорий, что предполагает синтаксические отклонения от правил нормативной грамматики. На

основе примеров были изучены такие грамматические способы, как отклонение от нормативных синтаксических структур, обособление, транспозиция, парцелляция, редукция, дислокация, компрессия, благодаря которым произведение данного жанра выделяется своим стилистическим своеобразием. Структуры эмотивной стилистики позволяют авторам пикарески сделать общедоступными идейные и эстетические ценности данного жанра.

DONARA GHAZARYAN, MARGARITA BAGHRAMYAN - SYNTACTICAL STRUCTURE OF SPANISH PICAESQUE NOVELS

Keywords: *conjunctionless compound and complex structures, fragmentation, division, deviation, compression, dislocation, intertextual allusion*

A Picaresque novel, one of the "lower class" genres of the Golden Age, stands closer to the folklore, which itself allowed the authors of these novels to use the spoken language of different social strata with their syntactic unique structures.

The article "Syntactic Structure Picaresque Novels" aims to study the syntactic structure of the Picaresque novels and to extract the grammatical techniques used in the texts of this particular genre, that provides in a unique layer of emotional expression aimed at activating the reader's imagination and the imaginative thinking, as well as along with the perceptive-communicative processes to get the reader into sensory fields. Thus, the emotion is created not only by the word units, but also by the reconsideration of logical categories, which, in relation to the normative grammatical rules, implies a deviation of the syntax of the linguistic units belonging to those categories.

On the basis of examples derived from Picaresque novels, we have studied almost all grammatical means of emotional Spanish syntax, such as the deviation of normative syntactic structures, the fragmentation or division of certain members of a sentence, the accentuation or discounting of one or more members, due to which the works from this particular genre attract the readers with their linguo-stylistic uniqueness and help them to form an appreciative attitude towards the characters, their relationships, their witty and respectful world. After all, it is due to these unique expressive syntactic structures that the Picaresque authors have managed to make the ideological and aesthetic values of this genre more accessible.

Ներկայացվել է՝ 05.02.2020
Գրախոսվել է՝ 03.02.2020

**ԱՐՎԵՍՏԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԵԶՐԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ԵՎ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ բառ-եզր, բառակապակցություն, տերմինապաշար, բարդ բառեր, ածանցավոր բառեր, նախդրավոր կապակցություններ, նախածանցներ, վերջածանցներ

Սույն հոդվածը նվիրված է իտալերենի և հայերենի արվեստի բառապաշարում տեղ գտած բաղադրություն-եզրերի ձևաբանական և իմաստագործառական առանձնահատկություններին: Վերջիններիս վերհանման նպատակով հիմնվել ենք իտալացի և հայ լեզվաբանների տեսական մոտեցումների, ինչպես նաև՝ մեր կողմից կազմված՝ արվեստի քառալեզու բառացանկում ընդգրկված իտալերեն և հայերեն բաղադրյալ եզրերի ուսումնասիրության վրա: Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է երկու մշակույթներում արվեստի ունեցած դերով ու կարևորությամբ, ինչպես նաև՝ մասնագիտական լեզուների կիրառման առանձնահատկություններով: Աշխատանքի **նորույթն** այն է, որ երկու լեզուների միջև արվեստի բաղադրյալ եզրերն առաջին անգամ են ենթարկվում զուգադրական ուսումնասիրության: Հետազոտությունն իրականացվել է համաժամանակյա պլանում: Ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են վերլուծության և համադրության, իսկ լեզվաբանականներից՝ նկարագրության և բաղադրիչային մեթոդները: Երկու լեզուների արվեստի բաղադրյալ եզրերը ենթարկվել են նաև քանակային վերլուծության, որի արդյունքները պատկերված են աղյուսակների տեսքով:

Լեզուների բառապաշարը բնութագրվում է որպես լեզվի բառերի ամբողջություն: Վերջիններս կարող են հանդես գալ միասին՝ կազմելով բառային կապակցություններ: Իտալական լեզվաբանության մեջ Պ. Դ'Աքիլեն «երկու և ավելի իրարից անջատ գրվող (վերլուծական) բաղադրիչներից կազմված բաղադրությունները, որոնք իմաստային առումով կազմում են մեկ ընդհանուր բառույթ, անվանում է «կայուն բառակապակցություն» կամ «արտահայտություն», թեև կարելի է հանդիպել նաև «շարահյուսական բառակապակցություններ», «բաղադրական բառույթներ» կամ «արտահայտություններ» եզրերը»:

Է. Աղայանը «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության մեջ գրում է. «Քաղաղրյալ բառերի յուրահատուկ տիպ են ներկայացնում այն բառակապակցությունները, որոնք անբաժանելի, կայուն միասնություն են կազմում որպես մի բառային իմաստ արտահայտող բաղադրություն, այլ կերպ ասած, բառակապակցությունը ամբողջությամբ վերցրած, ստացել է անվանողական դեր»: «Արդի հայերենի բացատրական բառարանում» կայուն կապակցություն կամ բառակապակցություն է կոչում «բառերի այն կապակցությունները, որոնք մեկ բառային կամ դարձվածային իմաստ են արտահայտում»:

Ժամանակակից իտալերենում կայուն բառակապակցությունները բազմաթիվ են, և դրանք ընդգրկում են բարդության բոլոր տարատեսակները, օրինակ՝ *arco trionfale* «հաղթական կամար», *foglia di acanto* «տերևանախշ», «հակինթանախշ», *pittura a olio* «յուղանկար», *veduta prospettica* «հեռանկարային տեսք» և այլն: Գ.+գ. կաղապարով որոշ կայուն բառակապակցություններ կարող են լինել հատվածական բաղադրություններ, այսինքն՝ գրվել գծիկով, օրինակ՝ *mostra-mercato*՝ *ցուցահանդես-վաճառք*: Ինչպես կարելի է նկատել, հայերենում նույնպես տվյալ եզրը պատկանում է բաղադրության միևնույն տեսակին: Հաճախ կայուն բառակապակցությունների մի որոշակի կաղապար հիմք է հանդիսանում նմանատիպ բաղադրություններ կազմելու համար, օրինակ՝ *quadro a olio/pittura a olio/ritratto a olio* (*a olio նշանակում է յուղաներկով նկարված*) «բազմահարկ շենք/սակավահարկ շենք» և այլն:

Իտալերենի և հայերենի տերմինաբանական բառապաշարի հարստացման ամենատարածված և արդյունավետ միջոցների շարքին է դասվում քաղաղրյալ եզր-նորաբանությունների ստեղծումը, որը ներկայացնում է իրար հետ սերտորեն կապված երկու գոյականի կամ մեկ եզրի և այլ բառերի կապակցություն: Նրա քաղաղրիչները գրվում են անջատ, սակայն իմաստաբանորեն կազմում են մեկ բառույթ: Կայուն բառակապակցությունների քաղաղրիչները հաճախ օժտված են բառային այնպիսի նշանակությամբ, որը հնարավոր չէ բխեցնել առանձին քաղաղրիչների հանրագումարից, որը տարբերվում է գլխավոր քաղաղրիչի նշանակությունից: Օրինակ՝ *carta vetrata* (բառացի՝ *սպակե թուղթ*) «հղկաթուղթ», *ponte di servizio* (բառացի՝ *ծառայողական կամուրջ*) «էստակաղա», *porta di servizio* (բառացի՝ *ծառայողական մուտք*) «հետնամուտք», *luce dell'arco* (բառացի՝ *կամարի լույս*) «կամարի բացվածք», *blu di montagna* (բառացի՝ *լեռնային կապույտ*) «պղնձի լաջվարդ»:

Ըստ Է. Աղայանի՝ «... բոլոր առարկաների, երևույթների և այլնի անվանումները կարող են դառնալ որևէ տերմինահամակարգի միավոր և

վերածվել տերմինի: Այնպես որ կարելի է ասել, թե ամեն մի գոյական անուն տերմին է կամ տերմինային բառ: Խոսքի մասերից ածականները դառնում են բաղադրյալ տերմինների որոշիչ անդամ, որոնք կարող են փոխանունությամբ գործածվել գոյականաբար և վերածվել գոյականի»:

Է. Աղայանը կարևորում է ժամանակակից հայերենի բոլոր բաղադրությունները երեք տիպի բաժանելը՝ *վերլուծական, համադրական և հապավական*: Ըստ նրա՝ «*վերլուծական են այն բաղադրությունները, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց բառային ինքնուրույնությունը, այսինքն՝ արտասանվում ու գրվում են որպես առանձին բառեր և մեծ մասամբ ստանում են անկախ բառային շեշտ, թեև ամբողջությամբ արտահայտում են մեկ բառային իմաստ*»: Վերլուծական բաղադրություններից *կայուն բառակապակցությունները, ըստ նրա, իմաստային տեսակետից անբաժանելի, կայուն միասնություն են կազմում՝ որպես մի բառային իմաստ արտահայտող բաղադրություն*: Այլ կերպ ասած՝ «*բառակապակցությունները, ամբողջությամբ վերցրած, ստանում են անվանողական դեր, բնութագրվում որպես մեկ հասկացություն, մինչդեռ շարահյուսական տեսակետից բնութագրվում են նրանով, որ նախադասության մեջ նրանք, իրենց բոլոր բաղադրիչներով միասին, հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ*»:

Ըստ Է. Աղայանի՝ բաղադրական կայուն բառակապակցություններ պետք է համարել նաև գծիկով միավորվող երկանդամ (քիչ դեպքերում՝ եռանդամ) ածականական այնպիսի կապակցությունները, որոնք միասնաբար, որպես կապակցության համազոր անդամներ են հանդես գալիս գոյականական բառակապակցություններում, ինչպես՝ *գիտահետազոտական (աշխատանք)* և այլն: Այսպիսի կայուն բառակապակցությունների մեծ մասն այժմ արդեն վերածվել է հատվածական բաղադրությունների, դրանցից էլ՝ հատվածական բարդությունների: Քսաներորդ դարում հայերենում մեծ զարգացում է ստացել վերլուծական բաղադրությունների մի այլ տեսակ՝ «*հարվածական բաղադրություն, որի բաղադրիչները նույնական կամ նույնիմաստ ածականակերպ ածանցներով կազմված և իրար հետ ստորադասության կամ համադասության հարաբերությամբ կապակցված բառեր են*: Այդպիսի բառակապակցությունները ստորադաս հարաբերության դեպքում լինում են սովորաբար որոշիչ-որոշյալ կապակցություններ, իսկ համադասության դեպքում՝ երկուսը միասին (սովորաբար և կամ ու շաղկապով միավորված)՝ մեկ որոշյալի որոշիչները:

Ինչպես վկայում է Է. Աղայանը, «*նման բառակապակցությունները մինչև անցյալ դարի 20-30-ական թվականները համարվում էին կա՛մ*

իբրև շարահյուսական բառակապակցություններ և գրվում բաղադրիչների պահպանումով, առանց որևէ կեղևադրական նշանի, ինչպես՝ Ճարտարապետական շինարարական համալսարան, կա՛մ առնվում էին իբրև երկու ածականների միասնություն ու միավորվում գծիկով կամ շաղկապով, ինչպես՝ Ճարտարապետաշինարարական համալսարան (երկու որոշիչները լրացնում են մեկ որոշյալի): Այս դեպքում բաղադրիչի ածանցը կրճաբանվում է՝ առնվելով իբրև միասնական բառակապակցություն, և գրվում է գծիկով:

Անվանական բառակապակցությունները, ըստ իրենց կառուցվածքի, մոտ են բաղադրյալ եզրերին կամ բառակապակցություն-եզրերին: Վ.Վինոգրադովը բնութագրում է եզրերը՝ «որպես բառակապակցություններ, որոնք հանդես են գալիս անվանողական գործառույթով: Տ.Չերդանցևան, խոսելով բաղադրյալ եզրերի մասին, նշում է. «Ընդունված է, որ պարզ և բաղադրյալ եզրերը զերծ են որևէ պարկերակորությունից, եթե նույնիսկ երկրորդական կազմությունների պարճառաբանվածության հիմքում ընկած է որոշակի պարկեր»: Ռուս լեզվաբանը նման բաղադրյալ եզրերն անվանում է «եզր-իրակություններ» և ավելացնում, որ «դրանք բազմիմաստ լինել չեն կարող, քանի որ հաղորդում են ճշգրիտ տեղեկություն, որը չի ընդունում որևէ երկրորդ բացատրություն, սակայն չի բացառվում, որ այդ եզրերը կարող են վերածվել դարձվածքների: Եզրերի գլխավոր տարբերությունը դարձվածքից այն է, որ դրանք կազմվում են որպես անվանումներ, դարձվածքները կարող են ստանալ անվանողական արժեք միայն որոշակի պայմաններում»:

Է. Աղայանը մեկ բառ ներկայացնող եզրերն անվանում է բառ-եզրեր, իսկ երկու կամ ավելի բառերի կապակցությամբ կազմված բաղադրյալ եզրերը՝ բառակապակցություն-եզրեր: Բառ-եզրերը նա անվանում է նաև «միանդամ եզրեր, իսկ բառակապակցություն-եզրերը՝ բազմանդամ եզրեր, վերջիններս էլ, կախված բաղադրիչների քանակից, երկանդամ, եռանդամ և այլն»: Դրանց անդամները կարող են լինել որոշիչ-որոշյալ, օրինակ՝ *խճանկարային առաստաղ*, հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունների մեջ, ինչպես օրինակ՝ *կամարի քայլ/բացվածք* օրինակում է: Հաջորդական ծավալման մեջ կարող է գտնվել եզր կազմող երկու բաղադրիչ՝ *ծավալվող*, որը լրացյալն է, և *ծավալող*, որը լրացումն է: Գլխավոր բաղադրիչը է. Աղայանը անվանում է *միջուկային տերմին* կամ *տերմինի միջուկ*, իսկ այն բառերը որոնք մասնավորում են այն՝ *ծավալիչներ*: «Ստորակարգային սանդղակի մեջ (օրինակ՝ *կամարի քար*, *կամարի շարվածքի քար*) ամեն մի աստիճանը մի նոր ծավալում է, մինչդեռ համադասական շարքի մեջ նույն ծավալումը,

բայց տարբեր ծավալիչներով (*օրինակ՝ կամարի պորտ, կամարի աղեղ, կամարի քիվ*), ցույց է տալիս առարկաների, երևույթների դասակարգում, խմբավորում միևնույն համակարգի կամ աստիճանի վրա»:

Այսպիսով, ըստ Է. Աղայանի՝ «ամեն մի բազմանդամ եզր կառուցվածքային տեսակետից բաղկացած է երկու բաղադրիչից՝ միջուկային եզրից (միջուկից) և ծավալիչից: Բազմանդամ եզրերի ինչպես միջուկը, այնպես էլ ծավալիչները կարող են լինել և՛ միանդամ, և՛ բազմանդամ, սակայն միշտ էլ բազմանդամ եզրը կառուցվածքային տեսակետից բաղկացած է երկու բաղադրիչներից՝ ծավալիչից և միջուկից»:

Առօրեական գործածության մեջ թե՛ բանավոր խոսքում և թե՛ գրավորում բազմանդամ եզրերը սովորաբար գործածվում են տարբեր կրճատումներով: Ըստ Է. Աղայանի՝ բազմանդամների կրճատումները հայերենում ունեն տարբեր տեսակներ, որոնցից ամենասովորականներն ու կենսունակները հետևյալներն են.

1. *Փոխանվանական կրճատում*, երբ բազմանդամի ածական ծավալիչը փոխանվանաբար արտահայտում է նաև միջուկային տերմինի իմաստը (*օրինակ՝ երկնաքեր շենք-երկնաքեր*):
2. *Բաղադրական ամփոփում*, երբ երկանդամ (հաճախ եռանդամ) եզրի ծավալիչից ու միջուկից կազմվում է բարդ (բարդաձանցավոր) բառ, ինչպես՝ *սյունների քայլ կամ սյունաքայլ, կամարի շարվածքի քար կամ կամարաքար*:

Արվեստի բնագավառում բաղադրական ամփոփման տարածված և կենսունակ տեսակներից մեկն է հատվածական բաղադրությունը, ինչպես՝ *քաղաք և ամրոց՝ քաղաք-ամրոց*: Երբեմն հատվածական բառակապակցությունում բացակայում է գծիկը, օրինակ՝ *անկյուն քար*: Առկա է նաև հոդկապավոր *անկյունաքար* տարբերակը:

Ի տարբերություն փոխանվանական կրճատման՝ բաղադրական ամփոփումն անմիջապես անցնում է կառուցվածքի մակարդակին՝ փոխարինելով բազմանդամի միջուկին կամ ծավալիչին, որով և բազմանդամ տերմինի կառուցվածքն է փոխվում: Այս տեսանկյունից ևս բաղադրական ամփոփումը կենսունակ և արդյունավետ միջոցներից մեկն է տերմինաշինության մեջ:

Ըստ Պ. Դ՝ Աքիլեի՝ «կայուն բառակապակցությունների թվին են պատկանում նաև նախդրավոր արտահայտությունները, մակբայականները, շղկապավորները»: Այդպիսիք են՝ *a cupola* «գմբեթավոր», *a fresco*՝ բառացի՝ *թարմ ներկով նկարվող* (որմնանկար), *in astratto* «վերացական ձևով»: Վերջիններս մակբայական բառակապակցություններ են:

Իտալերենում արվեստի եզրով կայուն բառակապակցություններում աչքի են ընկնում հետևյալ նախդիրներով ձևերը, որոնք ունեն համապատասխան իմաստագործառական առանձնահատկություններ.

ա նախդիր. **a forma di** կայուն բառակապակցությունում այն ցույց է տալիս արվեստի բնագավառի առարկայի կամ տարրի ձևը, մինչդեռ հայերենում այն արտահայտվում է կա՛մ ածանցներով, մասնավորապես վերջածանցներով, կա՛մ բառ-ձևույթներով, որոնք նկարագրում են հասկացություն, իր, կա՛մ արվեստի գործընթաց.

ա. **-վոր/-ավոր** վերջածանցի միջոցով, ցույց է տալիս *ինչ-որ հատկանիշ ունեցող, օժտված*, օրինակ՝ **a griglia** «վանդակավոր», **a nervature ed anelli** «կողողակավոր», **a cupola** «գմբեթավոր», **a gradini** «կամարաստիճանավոր», ինչպես՝ **pennaccio ad arco a gradini** «կամարաստիճանավոր առագաստ»: Ինչպես երևում է վերջին օրինակից, հայերենում համապատասխանում է բարդածանցավոր եզր:

բ. **-ային** ածականական վերջածանցով, օրինակ՝ **mosaico a tappeto** «խճանկարային առաստաղ»: Հայերենում կա *առասպաղ* եզրը, որը իտալերենում բացակայում է: Հետևյալ երեք օրինակներում՝ **tetto a mansarda** «ձեղնահարկային տանիք», **volta a cassone** «զարդափոսային կամար», **smalto a vernice** «լաքային արծն» երկրորդ բաղադրիչը՝ **a** նախդրի հետ միասին, հայերենում արտահայտվել է ածականով, իսկ իտալերենի բաղադրության առաջին եզր-բաղադրիչը հայերենում զբաղեցնում է բաղադրության երկրորդ տեղը:

գ. - **ձև** բառային ձևույթով, օրինակ՝ **a crociera** «խաչաձև», **capitello a fungo** «սնկաձև խոյակ», **ornamento a nastro** «ժապավենաձև նախշ», **cupola a bulbo** «սոխաձև գմբեթ»:

դ. **-կապ** բառային ձևույթով, որը նշանակում է *կապված ինչ-որ բանի հետ, կառուցված ինչ-որ բանով*, օրինակ՝ **solaio a volta** «թաղակապ ծածկ», **solaio ad arco** «կամարակապ ծածկ», **ponte ad arco** «կամարակապ կամրջակ»:

ե. **-զարդ** բառային ձևույթով և նշանակում է՝ *զարդարված ինչ-որ բանով*, օրինակ՝ **a colonne** «սյունազարդ», **ornamento a forma di lumaca** «խոյազարդ», **soffitto a pitture** «գեղազարդ առաստաղ»:

Իտալերենի **a** նախդրով կազմված որոշ կայուն բառակապակցությունների հայերենում համապատասխանում են մենաբառույթներ, մասնավորապես՝ բարդ բառեր, ինչպես նաև գծիկով գրվող բաղադրական կայուն բառակապակցություններով կազմություններ: Ըստ քերականական գործառույթի՝ դրանք կարող են ունենալ.

ա. գոյականի արժեք, օրինակ՝ *disegno a (la) penna* «գրչանկար», *pittura a olio* «յուղանկարչություն», *casa a torre* կամ *terem* «ապարանքիկ», *cornice ad arco* «կամարաքիվ», *tintura ad acquerello* «ջրաներկում», *volta a cupola* «գմբեթ-թաղանթ», *a fresco* կամ *affresco* «որմնանկար» կամ «ֆրեսկա», *vicolo a cieco* «փակուղի», *parete sottile* «նրբապատ»:

բ. *ածականի արժեք*, օրինակ՝ *a tre absidi* «եռաբսիդ», *a una nave* «միանավ», *a molte cupole* «բազմագմբեթ»:

Di նախդիրը արվեստի եզր պարունակող կայուն բառակապակցությունների ամենատարածված և կենսունակ նախդիրներից է: Այն կարող է արտահայտել.

ա. *պատկանելություն*, օրինակ՝ *luce dell'arco* «կամարի քայլ/բացվածք», *collarino del capitello* «խոյակի պարանոց» օրինակների համարժեքներում պատկանելության գաղափարն արտահայտվում է հայերենին՝ իբրև ձևաբանորեն համադրական լեզվին բնորոշ հոլովական ձևերով (մասնավորապես՝ սեռական հոլովի): Մինչդեռ *rampa della porta* «սանդղաբազուկ», *vano della porta* «դռնատեղ», *architrave della porta* «շեմագլուխ», *studio delle belle arti* «արվեստագիտություն», *mura della città* «բերդապարիսպ», «բերդապատնեշ» օրինակներում այն արտահայտվում է հոդակապավոր համադրական բաղադրություններով՝ բարդություններով:

բ. *ծագում*, օրինակ՝ *blu di montagna* *պղնձի լաջվարդ* (բառացի՝ *լեռնային կապույտ*) վերաբերում է մի գույնի, որն առաջանում է լեռներում: Հայերեն համարժեքը ցույց է տալիս այն մետաղը, որից սերում է վերը նշված գույնը:

գ. *նյութ*, օրինակ՝ *di oro* «ոսկե», *di mattone* «աղյուսե», *di smalto* «արծնե»:

Ի դեպ, **di** նախդիրով կազմված կայուն բառակապակցությունները նախադասության կազմում ձեռք են բերում *որոշի* գործառույթ, օրինակ՝ **di disegno** «գծագրական», **pietra di facciata** «ճակտոնային քար», **di appoggio/di arresto** «հենարանային», «նեցուկային» օրինակներում **di** նախդիրով բաղադրյալ կազմություններն արտահայտվում են *-ական* և *-ային* ածականակերտ վերջածանցներով: Հետևյալ՝ **d'arte** «արվեստի», **di copertura** «տանիքածածկի» օրինակներում, թեև հայերեն համարժեքներն արտահայտվում են սեռական հոլովի ձևերով, սակայն ունեն որոշի գործառույթ: *Sala di lettura* «ընթերցասրահ», *pietra di imposta* «կրնկաքար», *nicchia di appoggio* «հենախորշ», *entrata di servizio* «հետնամուտք», *arco di rinforzo* «նեցուկակամար», *piano di zoccolo* «գետնախարիսխ» օրինակներում հայերեն համարժեքներն

արտահայտվում են հողակապավոր բարդություններով, որոնց առաջին բաղադրիչը նույնպես ունի որոշիչ գործառույթ: Իտալերենի *materiali di tetto* «ծածկանյութ» օրինակում հոգնակի թվով դրված առաջին՝ *materiali* բաղադրիչը հայերենում արտահայտված է հավաքական *-նյութ*, բաղադրիչով: Ի դեպ, ակներև է այն փաստը, որ պատկանելություն ցույց տվող կայուն բառակապակցություններում *di* նախդիրը միաձուլված է բաղադրության մաս կազմող եզր-գոյականին բնորոշ որոշյալ հոդին: Իսկ որոշիչ գործառույթով տարբերակներում, որոնք հայերենում ունեն ածականական արտահայտության ձևեր, գոյական-բաղադրիչի որոշյալ հոդը բացակայում է: *Atrio di soggiorno* «սրահ-նախասրահ» օրինակի հայերեն տարբերակում գործ ունենք գծիկով միավորվող երկանդամ բաղադրական կայուն բառակապակցության հետ: *Ponte/pontile/rampa di servizio* «էստակադա», *arco di appoggio* «արկբուտան» օրինակների հայերեն տարբերակները փոխառություններ են ֆրանսերենից: *Plinto di fondazione* «սյունկալ» օրինակի հայերեն համարժեքը նույնպես մենաբառայությամբ արտահայտված բարդություն է, սակայն այնտեղ առկա չէ *-ա-* հողակապը: *Spazio di muro tra due finestre* «պատուհանամեջ» բառակապակցությունն իր բազմանդամության և *di* ու *tra* նախդիրների շնորհիվ իտալերենում նկարագրական ձևով արտահայտում է ճարտարապետական տարրի կառուցվածքը և տեղադրությունը: Մինչև նշանակությունն է արտահայտում նաև հայերեն բաղադրյալ համադրական համարժեքը: *Disegno eseguito a tratti di matita* «գծանկար» արվեստի եզրով կայուն բառակապակցությունը նկարչության բնագավառի մի ամբողջ գործընթացի գաղափար արտահայտող բաղադրություն է, որն ըստ խոսքիմասային պատկանելության՝ անվանական է, մասնավորապես գոյականական և հայերենում արտահայտվում է հողակապավոր մենաբառայթ-բաղադրությամբ:

Այսպիսով, վերը նշված օրինակներում առկա են այնպիսիք, որ կարող են ունենալ թե՛ *պարկանելության*, թե՛ *որոշիչ գործառույթ*, օրինակ՝ *passo di colonne* «սյունների քայլ» կամ «սյունաքայլ», *nicchia di appoggio* «հենարանի խորշ» կամ «հենարանախորշ», *gamma di colori* «գույների գամմա» կամ «գունային գամմա» կամ «գունակցություն»:

Da նախդիրը արվեստի եզր պարունակող կայուն բառակապակցություններում հանդիպում է մասնավորապես *նախադեսված լինել* նշանակությամբ և պարունակում է *նպատակի* գաղափար: Օրինակ՝ *sala da concerti*՝ «համերգասրահ», *sala da ballo*՝ «պարասրահ», *da coniare*՝ «դրոշմահատիչ, քանդակադրոշմիչ»:

In նախդիրը նույնպես, ինչպես և *di*-ն, կարող է ցույց տալ *նյութ*, օրինակ՝ *in oro* «ոսկե», «ոսկյա», *in mattoni* «աղյուսե» և այլն:

Con նախդիրը, գործածվելով գործողություն կամ գործընթաց ցույց տվող գոյականների հետ, արտահայտում է միջոց, գործիք, օրինակ՝ *dipingere con olio/acquerello* «նկարել յուղաներկով/ջրաներկով»: Որոշ դեպքերում կարող է նշանակել՝ «օժտված, ունեցող, զինված», օրինակ՝ *casa rurale con annessi* «տնակազմ», *plafond decorativo con prospettiva immaginata* «տարածախաբկանքային առաստաղ» (բառացի՝ *տարածական խաբկանք ունեցող/առաջացնող դեկորատիվ առաստաղ*):

Tra նախդիրը ցույց է տալիս հեռավորություն, տարածություն երկու առարկաների միջև, օրինակ՝ *spazio di muro tra due finestre* «պատուհանամեջ»:

Per նախդիրը, ինչպես և **da**-ն, գործածվելով արվեստի եզր պարունակող կայուն բայական բառակապակցության կազմում, նշանակում է նպատակ կամ նախատեսված լինել: Օրինակ՝ **per coniare** (կամ **da coniare**) «դրոշմահատիչ», «քանդակադրոշմիչ»:

Senza նախդիրը ցույց է տալիս զուրկ, զերծ ինչ-որ բանից: Օրինակ՝ *volta senza nervature* կայուն բառակապակցությունը թարգմանվում է *-ան ժխտական նախածանցի օգնությամբ՝ «անեզր կամար»*:

Աղյուսակ

ԱՐՎԵՍՏԻ՝ ԻՏԱԼԵՐԵՆ ՆԱԽԴՐԱՎՈՐ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ
 ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ
 ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

(քառալեզու բառացանկի հիման վրա)

Իտալերեն նախդրավոր անվանական կայուն բառակապակցություններ	Գործածության հաճախականությունը երկլեզվյա բառացանկում	Հայերեն համարժեքներ	Գործածության հաճախականությունը երկլեզվյա բառացանկում
A	90	Բաղադրյալ ածականով կազմված որոշիչ (որից 33-ը՝ -ձև բառային ձևույթով	87

		կազմված)	
Di	70	Սեռական հոլովի գոյականով արտահայտված որոշիչ	33
Da	20	-ային ածականակա ն վերջածանցով կազմված որոշիչ	31
In	20	-ե, -յա ածականակա ն վերջածանցով կազմված որոշիչ	25
Con	5	Բաղադրյալ մենաբառույթ գոյականով կազմված համարժեք	14
Per	5	-ավոր ածականակա ն վերջածանցով կազմված որոշիչ	10
Senza	5	Նկարագրական արտահայտությամբ համարժեք	6

Tra	5	Բացառական, ներգոյական հոլովներով գոյականներով արտահայտված որոշիչ	6
		Պարզ ածականով արտահայտված որոշիչ	3
		-իվ փոխառված վերջածանցով կազմված ածականով արտահայտված որոշիչ	2
		-ական վերջածանցով կազմված ածականով արտահայտված որոշիչ	1
		Հարադիր գոյականով արտահայտված որոշիչ	1
Ընդամենը՝	220		220

Ինչպես կարելի է նկատել, իտալերենի բառակապակցություններին հայերենի տերմինապաշարում համապատասխանում են գլխավորապես բարդ, ածանցավոր կամ բարդաձանցավոր համարժեքներ, ինչը վկայում է իտալերենի՝ ձևաբանական տեսանկյունից

վերլուծական, իսկ հայերենի՝ համադրական լեզուների տիպերին պատկանելու մասին: Ի դեպ, բազմանդամ եզրերի բաղադրական ամփոփումը հայերենում առավել կենսունակ և խնայողական միջոցներից մեկն է, իսկ ժամանակակից հայերենի բառակազմական միջոցների ու եղանակների հարստությունն ու ճկունությունը հնարավորություն են տալիս գրեթե ամեն մի բազմանդամ եզր վերածել համապատասխան բարդության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Բ, Ընդհանուր և հայկական բառագիտություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1984. - 371 էջ:
2. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, մաս Ա, ԵՊՀ հրատ., Ե., 1970
3. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, մաս Գ, ԵՊՀ հրատ., Ե.. - 1977
4. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, ԵՊՀ հրատ., Ե., 1983
5. Խլղայան Ֆ. Հ., Ժամանակակից հայոց լեզու, Մաս Ա, «Ձանգակ-97» հրատ., Ե., 2009
6. Խլղայան Ֆ. Հ., Ժամանակակից հայոց լեզու, Մաս Գ, «Ձանգակ-97» հրատ., Ե., 2009
7. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., Ե., 1987
8. Cardona G. R., Introduzione all'etnolinguistica, De Agostini Scuola SpA, Novara, 2006
9. Dardano M., La formazione delle parole nell'italiano di oggi, Bulzoni Editore, Roma, 1978
10. Introduzione all'italiano contemporaneo, Variazioni ed usi, a cura di A.A. Sobrero, Editori Laterza, Roma, 1993
11. Sensini M., Le forme della lingua (Parole, regole e testi), 2, Il lessico, Mondadori Education S.p.A., Milano, 2010
12. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976
13. Աճառյան Հր., Հայերենի արմատական բառարան, վեցհատորյակ, Երևանի համալսարան, ապակետիպ, N.60, 1960
14. Հացագործյան Զ. Ա., Դարբինյան Ա. Հ., Հովունյան Ն. Գ., Սրվանձտյան Գ. Հ., Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան,

Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն,
Ե., 1988

15. ARTEMISIA progetti editoriali, Dizionario etimologico Garzanti (edizione aggiornata), Legoprint, Trento, 2007
16. Avramenko B.I., Dizionario tecnico delle costruzioni italiano-russo e russo-italiano, a cura di Alissanov S.B., Casa editrice "Lingua russa", Mosca, 1978
17. Avramenko B.I., Sokolskij Ju.A., Dizionario politecnico russo-italiano, «Russo», Mosca, 2000
18. De Mauro T., Mancini M., Dizionario etimologico, Garzanti Linguistica, Milano, 2000
19. Silvestrini C., Dizionario illustrato plurilingue di arte italiana, Guerra Edizioni, Perugia, 2005

REFERENCES

1. Aghayan E'. B, Y'ndhanowr & haykakan bar'agitowt'yown, EPH hrat., Er&an, 1984. - 371 e'j:
2. Asatryan M. E., Jhamanakakic hayoc lezvi d'&abanowt'yan harcer, mas A, EPH hrat., E., 1970
3. Asatryan M. E., Jhamanakakic hayoc lezvi d'&abanowt'yan harcer, mas G, EPH hrat., E.. – 1977
4. Asatryan M. E., Jhamanakakic hayoc lezow, D'&abanowt'yown, EPH hrat., E., 1983
5. Xlghat'yan F. H., Jhamanakakic hayoc lezow, Mas A, «Zangak-97» hrat., E., 2009
6. Xlghat'yan F. H., Jhamanakakic hayoc lezow, Mas G, «Zangak-97» hrat., E., 2009
7. Jahowkyan G. B., Hayoc lezvi patmowt'yown, Naxagrayin jhamanakashrjan, HSSH Gitowt'yownneri akademiayi hrat., E., 1987
8. Aghayan E'. B., Ardi hayereni bacatrakan bar'aran, «Hayastan» hrat., E., 1976
9. Atwar'yan Hr., Hayereni armatakan bar'aran, vechatoryak, Er&ani hamalsaran, apaketip, N.60, 1960
10. Hacagorc'yan Z. A., Darbinyan A. H., Hovownyan N. G., Srvand'tyan G. H., R'ows-hayeren politexnikakan bar'aran, Haykakan sovetakan hanragitarani glxavor xmbagrowt'yown, E., 1988

**АНАИТ МКРЯН - МОРФОЛОГИЧЕСКИЕ И ЛЕКСИКО-
ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СОСТАВНЫХ ТЕРМИНОВ
ИСКУССТВА ИТАЛЬЯНСКОГО И АРМЯНСКОГО ЯЗЫКОВ**

Ключевые слова: *слово-термин, словосочетание, терминосистема, сложные слова, аффиксальные слова, предложные сочетания, префиксы, суффиксы*

Статья посвящена выявлению морфологических и лексико-функциональных особенностей итальянских и армянских составных терминов, относящихся к сфере искусства. Итальянским терминам-словосочетаниям в армянском языке в большинстве случаев соответствуют сложные, аффиксальные или сложно-аффиксальные эквиваленты, что с морфологической точки зрения свидетельствует о принадлежности итальянского языка к аналитическому, а армянского языка к синтетическому типу языков.

**ANAHIT MKRYAN - THE SEMANTIC, FUNCTIONAL AND
MORPHOLOGICAL CHARACTERISTICS OF SOME COMPOUND ART
TERMS IN ITALIAN AND ARMENIAN**

Keywords: *word-terms, word-combinations, compound words, prepositional phrases, prefixes, suffixes, affixes*

The study touches upon the semantic, functional and morphological characteristics of some compound art terms in Italian and their equivalents in Armenian. The study reveals the fact that most Italian word combinations correspond to Armenian compound, affixed and compound affixed equivalents which prove the Italian language to be analytic and Armenian to be synthetic.

**Ներկայացվել է՝ 30.01.2020
Գրախոսվել է՝ 30.01.2020**

«ՀԱՅՐԵՆԻՔ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԸՍՏ ԶՈՒԳՈՐԴԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ)

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ հասկացույթ, ճանաչողական հարկանիշ, գիտափորձ, դրդաբառ, զուգաբառ, զուգորդում

Անցյալ դարի 90-ական թվականներից սկսած «**հայրենիք**» հասկացույթը մեծ հետաքրքրություն է առաջացրել լեզվաբանների շրջանում, որը պայմանավորված է ազգային ինքնության պահպանման խնդրով: Այս հասկացույթը ուսումնասիրել են այնպիսի հայտնի լեզվաբաններ ինչպիսիք են Վեժբիցկան, Տոլստոյը, Տելիան և ուրիշներ, սակայն այն դեռևս մնում է հետազոտողների ուշադրության կենտրոնում, քանի որ այն կարևորագույն հասկացույթներից մեկն է անհատի կյանքում և սերտորեն կապված է թե՛ նրա ազգային ինքնագիտակցության և թե՛ պետական գաղափարախոսության հետ: Ըստ **Ռ. Պավլիլենիսի** բնորոշման՝ «Հասկացույթը մի տերմին է, որ ծառայում է մեր գիտակցության մտավոր և հոգևոր ռեսուրսների միավորների բացատրությանը և այն տեղեկույթի կառուցվածքի, որն արտահայտում է մարդու գիտելիքը և փորձը, այն հիշողության օպերատիվ բովանդակային միավորն է, մտավոր բառապաշարի, հասկացութային համակարգի և ուղեղի լեզվի, ինչպես նաև աշխարհի ամբողջ պատկերի, որն արտահայտված է մարդկային հոգեբանության մեջ» (Павиленис 1983:101-102): Դ. Լիխաչևը գտնում է, որ. «Հասկացույթը օգտագործելով բառի իմաստը, միաժամանակ ավելի լայն և ավելի հարուստ է այդ իմաստից, քանի որ ներառում է խոսողի անհատական փորձը» (Лихачев 1993:5): Հասկացույթի այս բնորոշումներից բխում է, որ հասկացույթը բարդ կառուցվածք ունի և այն «լեզվակիրի կողմից ոչ այնքան գիտակցվում է, որքան՝ ապրվում է որպես տվյալ մշակույթին բնորոշ զուգորդումներ, զգայություններ, գնահատականներ, ազգային պատկերներ և հարանշանակություններ» (Маслова 2004:36):

«**Հայրենիք**» հասկացույթը կարևոր տեղ է զբաղեցնում նաև հայ լեզվակիրների ազգային գիտակցության մեջ: Այդ հասկացույթի իմաստային դաշտի ամբողջական պատկերը ստանալու նպատակով անցկացվել է ազատ-զուգորդային գիտափորձ, որի արդյունքներն էլ ներկայացվում են սույն հոդվածում: Սակայն նախ անդրադառնանք վերը նշված հասկացույթն առկայացնող հայրենիք գոյականի բառարանային

իմաստներին: Ըստ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի՝ այն ունի հետևյալ իմաստները.

1. հայրենի երկիր, բնաշխարհ, նախնիքների դարերով ապրած երկիրը
2. ծննդավայր
3. որևէ բույսի կամ կենդանու, երևույթի ծագման՝ սկզբնավորման ու զարգացման վայր, բնաշխարհ (http://www.nayiri.com/ImagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&pageNumber=1638):

Գիտափորձը մեզ թույլ է տալիս հետազոտությունը տեղափոխել գործաբանության դաշտ և զուգահեռներ անցկացնել բառարանային տվյալների և կենդանի լեզվի միջև: Գիտափորձն անցկացվել է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողների հետ և նպատակ ունի ցույց տալ, թե «**հայրենիք**» հասկացության հետ կապված ինչ զուգորդումներ կարող են հանդիպել փորձարկվողների մոտ, հետևաբար, հասկացության ինչ նոր շերտեր կարող են հանդես գալ նրանց մոտ:

Դրդաբառին տրված զուգորդումները մանրագնին ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել, որը և ներկայացվում է ստորև: «Դրդաբառ-զուգաբառ հարաբերությունները բառայնացնում են դրդաբառի տակ թաքնված հասկացության որոշ ճանաչողական հատկանիշներ» (<http://dic.academic.ru/searchall.php?SWord=%D0>): Զուգորդային գիտափորձն անցկացվել է 2019 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում: Գիտափորձին մասնակցել են ընդհանուր թվով 100 փորձարկվողներ: Մասնակիցների տարիքը 18-ից 25 է, սեռը՝ 92 արջիկ և 8 տղա: Փորձարկվողներին նախապես բաժանվել են մաքուր հարցաթերթիկներ, նրանց բացատրվել է գիտափորձի նպատակը, սահմանվել է նաև առաջնային ազդակները գրելու համար հատկացվող առավելագույն երկու թուղթ ժամանակը: Կատարվել է ազդակների դասակարգում՝ ըստ փորձարկվողների կողմից տրված ազդակների հաճախականության, ապա զուգորդային նյութը ենթարկվել է քանակական և որակական վերլուծության: Հաշվարկվել են բազմակի, և եզակի, ինչպես նաև նկարագրական ազդակները: Փորձարկվողների կողմից տրված ազդակների ընդհանուր թիվը կազմում է 719: Ազդակների քանակն ընդհանուր առմամբ տատանվել է 1-ից 22-ի միջև:

Ներկայացնենք փորձարկվողների կողմից տրված ազդակները՝ ըստ դրանց հաճախականության (ազդակի հետ նշվում է զուգորդումների քանակը): Փորձարկվողների գիտակցության մեջ «**հայրենիք**» հասկացության հատկանիշներն են՝ **ընտանիք** (մեծ ընտանիք, հարազատ ընտանիք)-56, **տուն**-45, **սեր**-41, **հող**-25, **զինվոր/ներ**-20, **ազատություն**-

15, կարոտ-14, բանակ, ընկերներ, խաղաղություն (հոգու խաղաղություն), ծննդավայր, հանգստություն, նվիրվածություն, ջուր, օջախ-11, հայրենասիրություն, սահման-10, ազգ, հարազատներ, մշակույթ-9, բնօրրան, հպարտություն, հայրենի տուն, Հայաստան-8, հայրենի հող, արյուն, լեզու, հավատք, միասնություն, պատմություն, ուժ-7, մայր, պատերազմ-6, ապահովություն, երջանկություն, Արարատ սար/լեռ, լեռներ, ծնողներ, կրոն, հավատարմություն, պաշտպանություն, ջերմություն-5, ավանդույթ, ժողովուրդ, հարգանք, ոգի (անկոտրուն ոգի), սարեր-4, ապագա, բնություն, եկեղեցի, զենք, կապվածություն, կյանք, կոիվ, հաղթանակ, հզորություն, Սևան, վստահություն, տանիք-3, ամրություն, աշխատանք, աշխարհընկալում, Արցախ, արժեք, դավաճանություն, դպրոց, դրոշ, երկինք, երկիր, ընկերություն, ինքնություն, խաչ, կամք, կայունություն, համերաշխություն, Հայաստանի քարտեզ, հայր, հայրենասպաշտ, հավերժություն, հերոս/ներ, հիմք, հիշողություն, մանկություն, միություն, մտերիմ մարդիկ, նուռ, շրջապատ, շուն, պայծառ ապագա, պաշտպանվածություն, պետություն, տատ, տխրություն, ուսուցիչ-2, աշխարհ, լավ աշխատատեղ, ապահովության զգացում, ապրելատեղ, առաջընթաց, արժանապատվություն, արև, արտագաղթ, առյուծ, արոտ, արյան կանչ, արմատ, առվակներ, բարեկամներ, գաթա, Գեղարդ, գինի, գիր, գյուղ, դար, դժվարություն, երեխաներ, Երևան, Եռաբլուր, եռանդ, զգացմունք, զինանշան, էություն, թարմություն, թշնամի, ժպիտ, իշխանություն, ինքնավստահություն, խելք, ծաղիկ, ծառ, ծառայություն, ծիրան, ծիրանենի, ծնողների ապրած վայր, կամավոր, կազմակերպվածություն, կապ, կապույտ երկինք, կախվածություն, կանաչ դաշտեր, կանոններ, կարոտել, կարծրատիպ, Կոմիտաս, կովեր, կրթություն, հայ, հայոց բանակ, հայոց լեզու, հայրենի գյուղ, հայրենադարձություն, հանդուրժողականություն, հարևան, հարմարվողականություն, հարմարավետություն, հարմոնիա, հաշտություն, հեղափոխություն, հոգի, հիմն, հին, հաջողություն, հարստություն, հպատակ, հոգեհարազատություն, հույս, ղափամա, ճանաչում, ճիգ, մայրաքաղաք, Մաշտոց, Մասիս, մենք, միտք, մտածելակերպ, նախնիներ, Նիկոլ Փաշինյան, շունս, չքնել, պայքար-/պայքարելու ցանկություն, պայքարող ժողովուրդ, պաշտպան, պապիկ, պատասխանատվության զգացողություն, քառօրյա պատերազմ, պատիվ, հին և հարուստ պատմություն, պար, պարզություն, պարտք, պարծանք, պարտավորվածություն, ջանք, սերունդ, սիրած էակ, սիրտ, սիրտ ու հոգի, սևաչյա կանայք, սրամտություն, սրբություն, սպա, վախ, վերք, Տաթև, տարագ, տղամարդիկ, տոկունություն, ցավ, ուրախություն, օդ-1:

Վերը հոծ տառերով նշված են այն զուգաբառերը, որոնք փորձարկվողների կողմից ամենաշատն են նշվել: Ակնհայտ փաստ է, որ հարցվածների գիտակցության մեջ **«հայրենիք»** դրոշաբառի ամենավառ ճանաչողական հատկանիշը **ընտանիք** ազդակն է, որը նշվել է 56 անգամ: Արագ փոփոխվող այս աշխարհում ընտանիքը հասարակության մեջ այն կարևոր բջիջն է, որը մարդու համար ապահովում է պաշտպանվածության և անվտանգության զգացողություն՝ հաճախ նույնանալով հայրենի օջախի և հայրենիքի հետ: Հատկանշական է նաև, որ ամենավառ կերպով արտահայտված **ընտանիք** ազդակին հետևում են **տուն, հող, զինվորներ, ազատություն, բանակ, ընկերներ, խաղաղություն (հոգու խաղաղություն), ծննդավայր, ջուր, օջախ** ազդակները, որոնք փորձարկվողների կողմից նշվել են տաս անգամից ավել: Տաս անգամից ավել են նշվել նաև զգացմունքային դաշտի հետ կապված **սեր, կարոտ, հանգստություն, նվիրվածություն** ազդակները: Այնուհետև հետևում են **հայրենասիրություն, սահման, ազգ, հարազատներ, մշակույթ, բնօրրան** և այլ ազդակներ, **որոնց հաճախականությունը հարցվածների մոտ գնալով նվազում է (10-ից մինչև 4 անգամ):**

Ավելի պակաս հանդիպում են **ապագա, բնություն, եկեղեցի, զենք, կապվածություն, կյանք, կոիվ, հաղթանակ, հզորություն, Սևան, վատահույություն, տանիք** ազդակները, որոնք նշվել են երեք անգամ: Զգալիորեն պակաս են հանդիպում **ամրություն, աշխատանք, աշխարհընկալում, Արցախ, արժեք, դավաճանություն, դպրոց, դրոշ** և այլ ազդակներ, որոնք նշվել են միայն երկու անգամ: Մնացած ազդակները (ընդամենը՝118), ինչպես օրինակ՝ **ջանք, սրամտություն, տարազ** և այլն, ըստ իրենց հաճախականության ամենաթույլ արտահայտված հատկանիշներն են, քանի որ դրանք հարցվածների մոտ հանդիպում են միայն մեկ անգամ: Դրանք կարող են պայմանավորված լինել փորձարկվողների տվյալ պահին ունեցած հոգեվիճակով և զգացողությամբ, ինչպես նաև ընկալումներով, գիտելիքներով կամ կենսափորձով:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ **«հայրենիք»** դրոշաբառն առաջացնում է զուգորդումների հետևյալ իմաստային խմբերը՝

1. *բնակավայր/ծննդավայր կամ տուն՝* բնօրրան, ծննդավայր, հայրենի գյուղ, երկիր, ապրելատեղ, վայր, օջախ, տուն

2. *ընտանիքի անդամներ և այլ անձեր՝* պապիկ, հայր, մայր, տատ, տղամարդիկ, ուսուցիչ, ընկեր/ներ, հարևան, սևաչյա կանայք, մտերիմ մարդիկ, հպատակ, սիրած էակ, ժողովուրդ

3. երկրի պաշտպանության խնդրով պայմանավորված իրողություններ՝ սպա, զինվոր, հերոս, սահման, զինանշան, Եռաբլուր, պայքար, պատիվ, պաշտպան, քառօրյա պատերազմ, ոգի, անկոտրուն ոգի, հաղթանակ, կռիվ, արյուն, արյան կանչ, պայքար, պայքարելու ցանկություն, պայքարող ժողովուրդ, պատասխանատվության զգացողություն 4. աշխարհագրական անուններ՝ Հայաստան, Արցախ, Արարատ, Մասիս, Գեղարդ, Սևան, Տաթև

5. բնապատկերներ և կենդանիներ՝ կապույտ երկինք, առվակներ, լեռներ, սարեր, կանաչ դաշտեր, ծաղիկ, կովեր, շուն, առյուծ, արոտ, ծառ, ծիրանենի

6. սննդամթերք և խմիչք՝ գաթա, գինի, դափամա

7. ականավոր հայեր և ազգային խորհրդանիշներ՝ Կոմիտաս, Մաշտոց, Արարատ, ծիրան, նուռ, Նիկոլ Փաշինյան

8. բացասական հատկանիշներ՝ պատերազմ, դավաճանություն, արտագաղթ, թշնամի, վախ, վերք, ցավ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փորձարկվողների կողմից նշվել են նաև բազմաթիվ զգայական բնույթի ազդակներ, որոնք խորապես կապված են մարդու զգացմունքային դաշտի հետ, ինչպես օրինակ՝ **սեր, հպարտություն, ապահովություն, ուրախություն, ներդաշնակություն, երջանկություն, ջերմություն, վստահություն, հոգեհարազատություն** և այլն: Հետաքրքրական են փորձարկվողների կողմից նշված **լեզու, հայոց լեզու, մշակույթ, եկեղեցի, կրոն, հավատք, խաչ, գիր, հայոց բանակ** ազդակները. իրողություններ, որոնք մեր պատմության մեջ ազգապահպան դեր են կատարել և կատարում են նաև այսօր: Նախ Ղարաբաղյան պատերազմը, ապա մեզ պարտադրված քառօրյա պատերազմը, ի վերջո այսօրվա կիսապատերազմական իրավիճակը իրենց հետքն են թողել փորձարկվողների գիտակցության մեջ, որն էլ իր արտահայտությունն է գտել նրանց կողմից նշված զուգորդումներում: Մյուս կողմից էլ Հայոց բանակը որպես ազգային միասնականության և համախմբման կենդանի մարմնացում և որպես հպարտության և ազգային արժանապատվության ամուր մի սյուն ընկալելը, որի շուրջը ձևավորվում է գիտակից քաղաքացին, նույնպես իր արտահայտությունն է գտել փորձարկվողների կողմից նշված բազմաթիվ ազդակներում: Բանակի որպես խաղաղության մեր երաշխավորի կարևորության գիտակցումը պայմանավորում է փորձարկվողների մոտ այնպիսի զուգաբառերի առկայությունը, ինչպիսիք են՝ **հայոց բանակ, պայքարելու ցանկություն, հաղթանակ, ծառայություն, պարտք, սպա, զինվոր, պատասխանատվություն, ծառայություն** և այլն: Փորձարկվողների կողմից նշվել են նաև բազմաթիվ զուգորդումներ,

որոնք պայմանավորված են փորձարկվողների տվյալ պահին ունեցած հոգեվիճակով և զգացողությամբ, նրանց աշխարհընկալմամբ և անձնական փորձով, տվյալ հասկացույթի հանդեպ ունեցած նրանց արժեքային վերաբերմունքով և լեզվամշակութային իրազեկություններով, նրանց պատկերացումներով, ընկալումներով, գիտելիքներով և այլ հատկանիշներով: Փորձարկվողները տվել են գլխավորապես հարացուցային զուգորդումներ, սակայն առկա են նաև շարակարգային զուգորդումներ՝ **չքնել, կարոտել**: Նրանք ոչ միայն բառ-ազդակով են պատասխանել դրդաբառին, այլև՝ թևավոր խոսքերով՝ **պայծառ ապագա, արյան կանչ** կամ նկարագրական պատասխաններ են տվել՝ **այնտեղ, որտեղ թեկուզ հայերի փոքրիկ խմբեր կլինեն, ապահովության զգացում, հին ու հարուստ պատմություն, ծնողների ապրած վայր**:

Համեմատելով լեզվակիր-փորձարկվողների կողմից նշված զուգորդումները ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում ամրագրված բառարանային իմաստների հետ, կարելի է փաստել, որ *հայրենի երկիր, բնաշխարհ, նախնիքների դարերով ապրած երկիրը* և *ծննդավայր* իմաստերը նշվել են փորձարկվողների զուգորդումներում, բառարանային երրորդ իմաստը սակայն՝ *որևէ բույսի կամ կենդանու, երևույթի ծագման՝ սկզբնավորման ու զարգացման վայր, բնաշխարհ*, չի նշվել փորձարկվողների կողմից ոչ մի անգամ:

Ամփոփելով զուգորդային գիտափորձի արդյունքները՝ կարելի է նշել, որ փորձարկվողների լեզվական գիտակցության մեջ բառարանային իմաստները միշտ չէ, որ ամենավառ արտահայտված հատկանիշներն են: Հաճախ հանդիպում են այնպիսի հարանշանակային իմաստներ, որոնք բառարանային իմաստների հետ ոչ մի կապ չունեն: «Հայրենիք» բառ-ազդակը փորձարկվողների գիտակցության մեջ առաջացնում է որոշակի զուգորդային դաշտ, որի կենտրոնում գտնվում են այնպիսի հասկացություններ, ինչպես՝ **ընտանիք, ազատություն, ընկերներ, սեր, հայրենի տուն, ազատություն**: Ազատ զուգորդային գիտափորձը թույլ տվեց վեր հանել «հայրենիք» հասկացույթի այն բաղադրիչները, որոնք խորքային են և միշտ չէ, որ ընկալվում են որպես տվյալ հասկացույթի իմաստային բաղադրիչներ, ինչպես նաև բացահայտել հայ ուսանողների գիտակցության մեջ արժեքային վերաբերմունքը «հայրենիք» հասկացույթի նկատմամբ: Գիտափորձը ի հայտ է բերում նաև փորձարկվողների հոգեկերտվածքի առանձնահատկությունները՝ սերը և հավատարմությունը հայրենիքի հանդեպ, հանուն հայրենիքի պայքարելու պատրաստակամությունը և հպարտությունը հայրենիքով: «Հայրենիք» հասկացույթի զուգորդային դաշտի բազմազանությունը վկայում է նրա բովանդակային լրակազմի բարդության, բազմեզրության և լայնության

մասին և օգնում է բացահայտելու առավել կարևորագույն բաղադրիչները, որոնք մտնում են նրա կազմի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Маслова В., Введение в когнитивную лингвистику: учебное пособие В.А. Маслова. – Москва, Флинта:Наука, 2004, 36 с.
2. Лихачев Д., Статьи ранних лет. // Д. Лихачев, Тверь: Твер. обл. отделение Российского фонда культуры, 1993, 144 с.
3. Павленис Р., Проблема смысла. Современный логико-философский анализ языка. Р. Павленис, Москва: Мысль, 1983, 286 с.
4. http://www.nayiri.com/imaginedictionarybrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&pageNumber=1638
5. <http://dic.academic.ru/searchall.php?SWord=%D0>

REFERENCES

1. Maslova V., Vvedenie v kognitivnuju lingvistiku: uchebnoe posobie V.A. Maslova. – Moskva, Flinta:Nauka, 2004, 36 s.
2. Lihachev D., Stat'i rannih let. // D. Lihachev, Tver': Tver. obl. otd-nie Rossijskogo fonda kul'tury, 1993, 144 s.
3. Pavilenis R., Problema smysla. Sovremennyj logiko-filosofskij analiz jazyka. R. Pavilenis, Moskva: Mysl', 1983, 286 s.

ՏԻՐԱՆՈՒՄ ՍԵՄԱՆՏԻԿԵՍԻ ՕՍՈԲԵՆՆՈՒՄԻ ԿՈՆՇԵՊՏԱ «ՐՈԴԻՆԱ» (Վ ՏՎԵՏԵ ԱՍՏՈՑԻԱՏԻՎՆՈՒԳ ԷՔՍՔԵՐԻՄԵՆՏԱ)

Ключевые слова: концепт, эксперимент, ассоциация, словарные значения

Настоящая статья посвящается изучению особенностей лингвокультурного концепта “родина” в армянском языке. Нами был проведен ассоциативный эксперимент как метод изучения сознания, результаты которого показывают, что словарные значения не всегда самые ярко выраженные значения у респондентов. Согласно частотности ассоциаций Родина ассоциируется прежде всего с семьей у армянских респондентов.

**SIRANUSH PAPOYAN - SEMANTIC FEATURES OF CONCEPT
“HOMELAND” (FROM THE PERSPECTIVE OF AN ASSOCIATIVE
EXPERIMENT)**

Keywords: *concept, experiment, association, dictionary meanings, associative reaction*

The present article is devoted to the study of the features of the linguo-cultural concept “homeland” in the Armenian language. As a method of studying consciousness, we conducted an associative experiment, and the study of its results shows that the dictionary meanings of the words actualizing a concept are not always the most representative meanings for the respondents. According to the frequency of its associations the “homeland” is primarily connected with the concept „family” in the minds of Armenian respondents.

**Ներկայացվել է՝ 04.02.2020
Գրախոսվել է՝ 04.02.2020**

**ՏԱՐՈՒՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ
(ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

ԱՄԱԼՅԱ ԴՈՂՈՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ խոսքի մասեր, տաբու, գոյական անուն, դերանուն, ածական անուն, բայ, մակբայ, նախդիր, շաղկապ, ծայնարկություն

Յուրաքանչյուր լեզվի բառապաշար պարունակում է զանազան իմաստներ ունեցող բառային համակարգեր, որոնք ձևաբանական, շարահյուսական և ամենակարևորը՝ իմաստային առանձնահատկությունների հիման վրա, բաժանվում են որոշակի կայուն խմբերի: Այդ խմբերը լեզվաբանության մեջ կոչվում են **խոսքի մասեր**:

Լեզվաբանական տարբեր դպրոցներում ու ուղղություններում խոսքի մասերի դասակարգման վերաբերյալ տեսակետները հաճախ իրարամերժ են (Աբեդյան 1974: 291-321, Բարսեղյան 1980, Robins 1989): Այդ է պատճառը, որ խոսքի մասերի դասակարգումը մինչ օրս մնում է լեզվաբանության վիճահարույց խնդիրներից մեկը: Սակայն անվիճելի է այն փաստը, որ խոսքի մասերի դասակարգումը ենթադրում է բառապաշարային միավորների դիտարկում՝ ըստ խոսքիմասային իմաստի և բնորոշ իմաստային յուրահատկությունների:

Ըստ կատարված վիճակագրության՝ անգլերենի շուրջ 140 տաբու բառային միավորներն ունեն տարբեր խոսքիմասային պատկանելություն, որի հիման վրա էլ կատարվում է տաբու բառերի խոսքիմասային դասակարգումը: Տաբու բառերի այսօրինակ դասակարգումը ճանաչողական ու գնահատողական արժեք ունի, քանի որ թույլ է տալիս վերհանել դրանց քերականական և բառհասկացական առանձնահատկությունները, որոնք, արտացոլվելով տարբեր խոսքի մասերի առանձին քերականական կարգերում, առաջացնում են խոսքիմասային տարբերակման անհրաժեշտություն:

Անգլերենի տաբու բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս առաջնորդվել ենք ընդհանուր լեզվաբանության մեջ կիրառություն գտած և ավանդական դարձած չափանիշներով: Դրանք են. բառի ընդհանուր իմաստ, բառի ձևավորում ու ձևաբանական առանձնահատկություններ, բառերի շարահյուսական կիրառություններ (Ջահուկյան 1974: 125-150): Անգլերենի ժամանակակից քերականությունը

պարունակում է խոսքի մասերի դասակարգման տարբեր սկզբունքներ: Ըստ կիրառական նշանակություն ունեցող բազմաթիվ արդի տվյալների՝ անգլերենն ունի ութ խոսքի մաս՝ **գոյական անուն** (Noun), **դերանուն** (Pronoun), **ածական անուն** (Adjective), **բայ** (Verb), **մակբայ** (Adverb), **նախդիր/կապ** (Preposition), **շաղկապ** (Conjunction), **ձայնարկություն/բացականջություն** (Interjection) (The Parts of Speech, The Eight Parts of Speech, Speech English Grammar, Part of Speech Overview, [Haspelmath 2001: 16538-16545](#)):

Հետազոտությունները ցույց են տալիս, որ անգլերենում տաբու բառային միավորներն արտահայտվում են **գոյականով, ածականով, բայով**, ինչպես նաև՝ **մակբայով** և **բացականջությամբ**, որոնք գործածության ու քերականական առանձնահատկությունների առումով ենթարկվում են անգլերենի ներքին բոլոր օրինաչափություններին և աննմանօրինակություններ, չեն հայտաբերում մյուս բառաշերտերի համեմատությամբ: Տվյալ տաբուի խոսքիմասային պատկանելությունն ու քերականական կարգավիճակը պայմանավորում են դրա որոշակի իրացումը խոսքում և խոսքային գործընթացում: Հետազոտողներ Դ. Նապոլին և Ջ. Հոկսեման (2018) տաբու բառերի քերականական իրացումների մասին նշել են հետևյալը. «Տաբու տերմինները կարող են ի հայտ գալ նաև սովորական հայտարարություններում, որոնք ունեն քերականական շատ կարևոր կարգավիճակ: Նրանցից ոմանք ունեն առաջնային և երկրորդային ստորոգում, ոմանք պարսավանք արտահայտելու ձևափոխիչներ են, իսկ ոմանք՝ կեղծ բնութագրումների գլխավոր տարրեր: Այս բոլոր գործառույթներում կարևորն այն է, որ դրանց ազդեցությամբ ուժեղանում է կամ շեշտվում նաև արտասանությունը» (Napoli 2009:620-635):

Ստորև կդիտարկենք տաբուների խոսքիմասային առանձնահատկությունները խումբ առ խումբ՝ կարևորելով այդ առանձնահատկությունները ըստ առանձին քերականական կարգերի: Մյուս խոսքի մասերով անգլերեն տաբուներ չկան, և դա օրինաչափ է. դերանունները տաբու լինել չեն կարող, քանի որ անուն խոսքի մասերի լեզվական փոխարինիչներ են, իսկ **նախդիրները/կապերը, շաղկապները** չեն կարող լինել տաբուներ, քանի որ արտահայտում են բացառապես քերականական իմաստ: Ակնհայտ է, որ տաբուներ են դառնում խոսքի մասերում ընդգրկված այն բառամիավորները, որոնց բառհասկացություն լինելը կամ այդպիսի նշանակություն արտահայտելը պարտադիր է:

Տաբուների համար հուզականությունը կարևոր բաղադրիչ է: Սովորական բառհասկացություններ արտահայտող բառամիավորները

հենց իրենց հուզականությունն արտահայտելու հատկանիշի շնորհիվ են վերածվում տաբուների: **Ձայնարկություններն ու բացականչությունները** նույնպես տաբուներ չեն դառնում անզլերենում, քանի որ դրանք վերաբերմունքային, հուզական նշանակություն ունեցող բառամիավորներ են: Սակայն, ինչպես կտեսնենք, անզլերենում կան որոշ տաբու բառեր, որոնք, լինելով այլ խոսքի մասի պատկանող բառ, նախ վերածվել են բացականչության, որի հիման վրա էլ հետագայում տաբուացվել են:

Գոյական տաբուների քերականական առանձնահատկությունները

Անզլերենում տաբուները հիմնականում պատկանում են գոյական խոսքի մասին և դրանց ընդհանուր քանակը 94 է: Այս խմբին պատկանող տաբուներն ունեն գոյականին բնորոշ քերականական (ծևաբանական), իմաստային (արտահայտում են առարկայացված հասկացություններ), գործառական (շարահյուսական) ու զանազան այլ բնութագրական հատկանիշներ, որոնց համակարգերի ու ենթահամակարգերի առանձնահատկությունները կդիտարկենք ստորև:

Ըստ **բառիմաստային** և **քերականական** առանձնահատկությունների տաբու գոյականները բաժանվում են հետևյալ խմբերի՝

ա) Հասարակ և հատուկ տաբու գոյականներ: Անզլերենում մեծաթիվ են հասարակ տաբու գոյականները, և սա օրինաչափ իրողություն է: Բոլոր լեզուներում էլ հասարակ գոյականներն ընդգրկում են ամենամեծ բառաշերտը, քանի որ հենց այդ բառամիավորներն են ապահովում մարդկանց կենսագործունեությունը: Այն է՝ *abo, arse, ass, arsehole, arselicker, arse-licking, asshole, ass-licking, ass-licker, balls, jug, balls-up, bastard, blackamoor, bollocks, bollocking, BS, beaver, bugger, buggery, bugger all, butt, cock, cocksucker, cock-teaser, coolie, coon, crock, cunt, dyke, darkie, dick, dickhead, fag, fanny, fenian, fuck all, fuck, fucker, gook, greaseball, handjob, hump, injun, jack shit, jerry, kaffir, knob, knocker, kraut, midget, minge, nigger, piece, piss, piss-up, piss-take, piss artist, poof, prick, prick-teaser, pussy, queen, quim, red Indian, redskin, retard, savage, screw, shag, snatch, sod, sod all, shit, spade, spic, shite, spunk, stiffy, tit, tool, turd, twat, wanker, wetback, whore, wog, yid* (88 միավոր) միավորները կազմում են տաբուների ամենամեծ շերտը: Այս միավորները համընդհանուր գործածություն ունեցող բառեր են և, ինչպես արդեն նշել ենք, կազմում են անզլերենի տաբու բառային կազմի հիմնամասը: Այս խմբի գոյականներն ունեն ևս մեկ առանձնահատկություն. հատուկ անունները, որոշակի հնչյունական և բառակազմական փոփոխություններ կրելով, վերածվում են հասարակ գոյականների՝ *mick, paki, polack, popery* (4 միավոր): Անզլերենում

հատուկ անունները՝ անձնանուններն ու տեղանուններն իրենց ինքնանվանողական նշանակության և տեղանշության պատճառով չեն տաբուացվում: Ինչպես տեսանք, մի քանի հատուկ անուն տաբուացվել է՝ դառնալով իրենց բուն ձևերի այլընտրանքային տարբերակ՝ կրելով հնչյունափոխական ու բառակազմական փոփոխություններ: Սակայն անգլերենում կա մի տաբու՝ *Christ* գոյականը, որը կոնվերսիայով պայմանավորված՝ խոսքիմասային անցման է ենթարկվել և դարձել բացականչություն: Բացականչություն դառնալու շնորհիվ էլ այն վերածվել է տաբուի (այս գործընթացին դարձյալ կանդրադառնանք ստորև):

Հետաքրքիր է, որ հատուկ անունների տաբուացման հարցում կարևոր է ազգային հիշողությունն ու մշակութային գործոնը: Օրինակ, հայերենում *Վասակ* անձնանունը տաբուացվել է, քանի որ հայերը դավաճան համարվող Վասակ Սյունու պատճառով իրենց արու զավակներին գրեթե դադարել են *Վասակ* անվանել: Որոշ ժամանակ անունը կրել են իշխանական և կրոնական դասերի ներկայացուցիչները (Աճառյան 1942:43-53), բայց հետագա գործածությունը դադարել է անվան ակնհայտ բացասական կոնոտացիաի պատճառով:

Անգլերենում չկան տաբու հատուկ անունների՝ հասարակ անվան անցման այլ դեպքեր: Սակայն անգլախոս տարածքներում կա մի օրինաչափություն, որին հարկ է անդրադառնալ: Հատուկ անունների հետ կապված տաբու բառերը տեղանուններ են կամ բաղադրյալ տեղանվան բաղադրիչներ (Dirty Word Search Book for Adults 2017): Որպես տեղանուն գործածվող կամ տեղանուններում հանդիպող տաբուներ են՝ *Butts, Dick, Beaver city, Sugar tit, Blue bulls village, Floyds knobs, Dickshooter* և այլ միավորները, որոնք, ըստ էության, բառիմաստի նեղացման կամ ընդլայնման ցայտուն դրսևորումներ են: Հետազոտությունը փաստում է, որ նշված տաբուները ժամանակին սովորական իմաստ արտահայտող հատուկ անուններ են եղել, հետևաբար ազատ գործածվել են այլ կիրառություններում: Եվ միայն բառիմաստի հետագա փոփոխությունը, այսինքն նոր իմաստի ձեռքբերումն է հանգեցրել տաբուացման: Հայերենում նույնպես կա նման դեպք, երբ տաբու բառի հիմքում ընկած է տեղանուն: Խոսքը վրացերենից փոխառված *բոզ* (Ղազարեան 2000: 291) բառին է վերաբերում, որը, որպես տեղանվան բաղադրիչ, հանդես է եկել Լոռու մարզի բնակավայրերից մեկում՝ կոչվելով *Բոզի գեղ/Բոզիգյուղ* (Հակոբյան..... 1986: 717): Հետագայում տվյալ միավորը ձեռք է բերել այլ, անբարեհունչ բացասական իմաստ, և արդյունքում՝ բնակավայրի անունը փոխվել է *Մարգահովտի*: Նախկինում գյուղը կրել է նաև *Թագավորանիստ* և *Համզաշիման* անվանումները:

բ) Թանձրացական և վերացական տաբու գոյականներ:

Հասարակ գոյականների մեծաքանակությամբ պայմանավորված՝ ազդերենում մեծ են թանձրացական գոյականները, որոնք ընդգրկում են իրական անվանումների բազմաթիվ խմբեր՝ կապված մարդու և մարդկային, կենդանական ու բնության, օբյեկտիվ աշխարհի զանազան իրողությունների հետ: Անգլերենի թանձրացական տաբու գոյականներն են՝ *abo, arse, ass, arsehole, arselicker, arse-licking, asshole, ass-licker, balls, balls-up, bastard, bollocks, blackamoor, bollocking, BS, bugger, beaver, buggery, cock, cocksucker, cock-teaser, coolie, coon, crotch, cunt, darkie, dick, dickhead, fag, fanny, fenian, fuck all, fuck, fucker, gook, greaseball, handjob, hump, butt, injun, jug, jerry, kaffir, knob, knocker, kraut, ass-licking, piss-up, mick, midget, minge, nigger, paki, piss, piss artist, polack, poof, popery, prick, prick-teaser, pussy, queen, quim, red indian, redskin, retard, savage, screw, shag, snatch, shit, dyke, sod, shite, sod all, spade, spic, spunk, stiffy, tit, tool, turd, twat, wanker, wetback, whore, wog, yid* (88 միավոր) բառերը: Վերացական տաբու գոյականներ են *bugger all, bull-shit, jack shit, piece, piss-take, gobshite* (6 միավոր) բառերը:

Ինչպես տեսանելի է, անգլերենը ոչ նյութական հասկացություններ արտահայտող այս խմբին պատկանող տաբու գոյականներով հարուստ է, եղածներն էլ առարկայաբար հարակցվում են թանձրացականներին, թանձրացական նշանակությամբ մերձենում նրանց:

գ) Անձ և իրականություն ցույց տվող տաբուներ:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ անգլերենում մեծաթիվ են անձ ցույց տվող տաբու գոյականները: Սա կարևոր և բնութագրական հատկանիշ է, քանի որ բառերի տաբուացման գործընթացներն հիմնականում կապվում են մարդկանց հետ. դրանք մարդուն վերաբերող բառամիավորներ են, արտացոլում են մարդու նյութական ու հոգևոր, ներքին և արտաքին գծերը: Անգլերենի անձ ցույց տվող տաբու գոյականները *abo, arselicker, cock-teaser, arse-licking, ass-licking, ass-licker, bastard, blackamoor, bollocking, butt, bugger, cocksucker, cock-teaser, coolie, coon, cunt, darkie, dickhead, fag, fenian, fuck, fucker, gook, beaver, greaseball, handjob, injun, jerry, kaffir, knocker, kraut, mick, midget, dyke, nigger, paki, piss-up, piss-take, piss artist, polack, poof, popery, prick, prick-teaser, queen, red indian, retard, savage, screw, shag, redskin, spade, spic, arsehole, asshole, fuck all, sod all, spunk, stiffy, turd, twat, wanker, wetback, whore, wog, yid* (66 միավոր) բառերն են:

Անգլերենում կան նաև օբյեկտիվ իրականության զանազան կողմերն ու իրավիճակներն արտացոլող տաբուներ: Այդ տաբուները *arse, ass, bollocks, balls, balls-up, bugger all, gobshite, piece, BS, buggery, bull-*

shit, cock, crock, dick, fanny, hump, jack shit, knob, shit, minge, piss, pussy, quim, snatch, jug, sod, shite, tit, tool (28 միավոր) բառերն են:

Նկատենք, որ իրականություն ցույց տվող տաբու գոյականներն առնչվում են անձանց հետ, բնութագրում են մարդկանց կամ մարդկային մարմնի տարբեր անվանումներ են: Անգլերենում կան նաև 6 այնպիսի տաբու բառային միավորներ, որոնք և՛ անձ են ցույց տալիս, և՛ իր (*arsehole, asshole, bugger all, fuck all, gobshite, sod all*): Այս իրողությունը նույնպես օրինաչափ է, քանի որ պայմանավորված է անգլերենի բազմիմաստ լեզու լինելու փաստով:

դ) Շնչավոր և անշունչ տաբուներ: Շնչավորի և անշունչի բաղիմաստային տարբերակումը հիմնվում է առարկաների միջև եղած իմաստային տարբերությունների վրա: Ընդունված է համարել, որ շնչավոր գոյականները մարդկանց և կենդանիների հասարակ ու հատուկ անուններն են, իսկ մյուս բոլոր գոյականները համարվում են անշունչ, քանի որ արտահայտում են անշունչ առարկաների, երևույթների ու դրանց հարակցվող հասկացություններ:

Անգլերենի տաբուների համակարգը հարուստ է շնչավոր տաբուներով, որոնք են՝ *abo, arselicker, arse-licking, ass-licking, ass-licker, bastard, blackamoor, bollocking, bugger, cock-teaser, coolie, coon, cunt, darkie, dickhead, fag, fucker, gook, greaseball, handjob, injun, jerry, kaffir, gobshite, knocker, kraut, mick, midget, minge, nigger, paki, piss-up, piss-take, piss artist, polack, dyke, fenian, poof, popery, prick, prick-teaser, queen, red indian, redskin, retard, savage, screw, shag, snatch, spade, spic, spunk, stiffy, turd, twat, wanker, wetback, whore, wog, yid* (59 միավոր): Անգլերենի անշունչ տաբու գոյականներն են՝ *arse, bollocks, balls, balls-up, butt, BS, buggery, bugger all, bull-shit, cock, cocksucker, crock, dick, beaver, shite, fanny, hump, jack shit, knob, piece, piss, pussy, jug, quim, shit, sod, tit, tool* (28 միավոր):

Կատարված վիճակագրությունից կարելի է եզրակացնել, որ անգլերենում գերիշխող են շնչավոր տաբուները. և սա պատահական չէ, քանի որ տաբուները նախևառաջ մարդկանց ու մարդկային հարաբերություններ ներկայացնող և վերարտադրող բառամիավորներ են: Այդ միավորները կա՛մ արտացոլում են մարդուն, կա՛մ մարդկանց հարակցվող այնպիսի հասկացություններ, որոնք արտացոլում են մարդկանց մտավոր, հուզական, ներքին ու արտաքին աշխարհի տարբեր կողմերն ու գույները, ապրումները: Անշունչ տաբուները քանակապես ավելի քիչ են և հարակցվում են օբյեկտիվ իրականությանը: Այս միավորների հիմքում դարձյալ ընկած են մարդը և նրան վերաբերող բառհասկացական իրողությունները: Անգլերենում կա 6 տաբու, որոնք չեն

դասվում շնչավոր կամ անշունչ խմբերից որևէ մեկին, քանի որ կարող են լինել և՛ շնչավոր, և՛ անշունչ (*arsehole, asshole, ass, fuck all, fuck, sod all*): Նշված միավորների իմաստագործառական բաշխումը հավասարաբաշխված է:

Անդրադառնանք բառիմաստային այս խմբին վերաբերող մի առանձնահատկության ևս: Ինչպես բազմաթիվ հնդեվրոպական լեզուներում է, անգլերենում ևս շնչավորի և անշունչի տարբերակման հիմքում ընկած է նախևառաջ բառիմաստը, սակայն ընդգծենք, որ տարբերակումը կարող է ունենալ նաև քերականական հիմք, որի ակնհայտ դրսևորում է սեռական հոլովի (genitive case) իմաստի արտահայտումը. շնչավոր գոյականների դեպքում կազմությունը հետևյալն է՝ գոյական+ապաթարց(‘) և s մասնիկ, իսկ անշունչների դեպքում՝ of նախդիր+գոյական կաղապար (Кобрина...1999: 158-162): Տաբուների պարագայում լեզվական այս օրինաչափությունը գործում է բազմաթիվ լեզուներում:

Անգլերենի տաբու գոյականները քերականական վերոնշյալ առանձնահատկություններից բացի՝ պատկանում են քերականական մի շարք կարգերի, որոնց աչքի ընկնող յուրահատկություններին կանդրադառնանք ստորև ներկայացված խմբավորումներում՝

Ըստ տաբու բառերի **թվի քերականական կարգի**, ինչպես բոլոր հնդեվրոպական լեզուներում, անգլերենում ևս գոյական անունների թվի այս կարգը ներկայանում է եզակիի ու հոգնակիի հակադրությամբ: Այս կարգի հակադրության հիմքում ընկած է եզակի ու հոգնակի թվերի գաղափարը, որոնք ձևաբանորեն եզակի թվի համար նշույթավորվում են զրո, իսկ հոգնակի թվի համար՝ համապատասխան վերջավորությամբ: Հոգնակի թիվը, ի տարբերություն եզակիի, մատնանշում է նույն տեսակի մեկից ավելի առարկաներ:

Մեր դիտարկած տաբուները թվի կազմության տեսակետից բաժանվում են երեք խմբի՝

1. տաբուներ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ: Մեր դիտարկած տաբու գոյականների մեծամասնությունն ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թվերով գործածություններ: Անգլերենի տաբուների հոգնակի թիվը բացառապես կազմվում է -s քերականական մասնիկով, այն է՝ *abos, arses, arseholes, arselickers, assholes, ass-lickers, bastard, blackamoors, bollockings, buggers, cocks, cocksuckers, coolies, coons, crocks, cunts, darkies, dyke, dicks, dickheads, fags, fenians, fuckers, gobshites, greaseballs, red indians, handjobs, beavers, butt, humps, injuns, kaffirs, knobs, krauts, micks, midgets, minges, niggers, pakis, pieces, quims, piss-takes, piss artists, polacks, poofs, cock-teasers, prick-teasers, queens, quims, redskins, retards, savages, jug, pricks, sods, spades, spics, tits, tools, turds, twats, wankers,*

wetbacks, whores (64 միավոր): Հոգնակի թվի կազմության հարցում շեղումներ ու բացառություններ չկան:

Ինչպես տեսանելի է, *-s* մասնիկն ավելանում է այս խմբի թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ գոյականների բառահիմքին, որը կարող է լինել և՛ ձայնավորավերջ, և՛ բաղաձայնավերջ, իսկ բառահիմքը որևէ փոփոխության չի ենթարկվում: Սա կարևոր օրինաչափություն է և ցույց է տալիս, որ տաբու բառերի քերականական այս ենթահամակարգում տարբերություններ չեն հայտաբերվում գոյականի մյուս իմաստաթեմատիկ խմբերի հետ համեմատած, որն էլ կարող է տարբերակիչ հատկանիշ դիտվել: Բայց կան դեպքեր, երբ բառավերջին ձայնավոր հնչյունը հնչյունափոխության է ենթարկվում: Խոսքը *y>ie* հնչյունափոխությանն է վերաբերում հետևյալ բառերում՝ *fanny>fannies, jerry>jerries, popery>poperies, pussy>pussies, stiffy>stiffies* (5 միավոր). Բացի այդ, *-s* հոգնակերտից առաջ *ie* հնչյունակապակցությունը հնչում է որպես երկար *i*: Նաև, *snatch, ass* տաբուների հոգնակին համապատասխանաբար *snatches* և *asses* (2 միավոր) է, քանի որ *-ch* վերջնահնչյուն ունեցող գոյականների հոգնակին կազմվում է *-es* մասնիկով:

Ի դեպ, այս խմբում ընդգրկվում են նաև այնպիսի գոյականներ, որոնք համարվում են հաշվելի, բայց որպես տաբուներ ունեն միայն եզակի թվով գործածություններ, այն է՝ *fuck, screw, shag* (3 միավոր): Ի հակադրություն՝ կան նաև այնպիսի գոյականներ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թվեր, սակայն տաբու նշանակությամբ գործածվում են միայն հոգնակի թվով՝ *knockers* (1 միավոր):

2. անհոգնական և անհաշվելի տաբու գոյականներ: Այս խմբի միավորները ունեն միայն եզակի թվի ձև, ուստի հոգնակի թվով չեն գործածվում: Հնդեվրոպական գրեթե բոլոր լեզուներում էլ անհոգնական գոյականները սակավաթիվ են: Այսպիսի տաբու գոյականներով անգլերենը նույնպես հարուստ չէ, եղած բացառությունները հետևյալներն են՝ *arse-licking, ass-licking, bollocking, bollocks, piss-up, buggery, bugger all, bull-shit, fuck all, gook, shit, jack shit, shite, piss, sod all, spunk, BS* (17 միավոր): Այս կարգի գոյականները թվի կարգն արտահայտելիս փոփոխության չեն ենթարկվում՝ իմաստով եզակի լինելու պատճառով: Այս տաբու գոյականները հիմնականում քերականական ձևերից են առաջացել և բաղադրված, ածանցված ձևեր են:

Անհոգնական գոյականները հիմնականում նյութի անուններ են, վերացական գոյականներ, հատուկ անուններ, որոշ հիվանդությունների ու խաղերի անուններ, ինչպես նաև այլ կարգի գոյականներ (*Кобринна...1999:156*): Նկատենք, որ անգլերենում անհոգնական

տաբուները միանգամայն այլ բովանդակություն ունեն, որը լրացուցիչ բացատրության կարիք ունի: Անգլերենում այս խմբի գոյականները միայն վերացական գոյականներ չեն. նրանք հիմնականում առաջացել են մարմնանուններից, կրոնական բովանդակություն ունեցող բառերից, կենդանանուններից և այլն: Մեծ հավանականությամբ այս բառերի հոգնակի թվով չգործածվելը պատմականորեն առաջացած իրողություն է, որը կարող է քերականական տարբերակման հիմք հանդիսանալ: Միայն եզակի կիրառությամբ գործածվող այս բառերն ունեն իրադրական, անձնավորված բնույթ, ինչով էլ պատճառաբանվում է դրանց տաբու նշանակությունը:

3. անեզական տաբու գոյականներ, որոնք ունեն միայն հոգնակի թվի ձև և եզակի թվով չեն գործածվում: Այսպիսի տաբու գոյականներով անգլերենը հարուստ չէ: Եղած բացառությունները հետևյալներն են՝ *balls, balls-up* (2 միավոր): Թեև այս երկու գոյականներն այլ իմաստներով գործածվելիս ունեն նաև եզակի թիվ, այդուհանդերձ տաբու իմաստով գործածվելիս դրանք եզակիի գաղափար չեն արտահայտում, հետևաբար եզակի իմաստով չեն գործածվում: Կարծում ենք՝ այս հարցում կարող է դեր ունենալ իմաստափոխության հանգամանքը:

Անվիճարկելի է, որ տաբու բառերի մի մասն արտացոլում են անգլերենի բառապաշարի հնագույն շերտերը, սակայն մեր ուսումնասիրած տաբուների մեջ չկան այնպիսի դրսևորումներ, որոնց հոգնակին անկանոն է, այսինքն՝ տարահիմք:

Ըստ **հոլովի քերականական կարգի**, անգլերենի տաբուները գոյականի քերականական օրինաչափություններում տարբերակվածություն չունեն այլ բառաշերտերի հետ ունենցած համադրությամբ: Ինչպես հայտնի է, քերականական այս կարգը ցույց է տալիս գոյականների և այլ բառամիավորների գործածության առանձնահատկությունները և փոխհարաբերությունները խոսքում: Անգլերենում գոյականն ունի երկու հոլով՝ ուղղական հոլով և սեռական հոլով: Չնայած սրան՝ հարկ է նշել, որ անգլերենում հոլովի կարգը ոչ բոլոր գոյականներին է հատուկ: Կան որոշ անշունչ գոյականներ, որոնք չեն կարող գործածվել սեռական հոլովով:

Այս առումով անգլերենի տաբու գոյականները միավորվում են անգլերենի մյուս գոյականների հետ այն ընդհանուր օրինաչափությամբ, որ անխտիր ունեն ուղղական հոլով, որը բառի ուղիղ ձևն է և ունի զրո վերջավորություն՝ արտահայտելով բառի ամենաընդհանուր իմաստը: Սեռական հոլովի ամենաընդհանուր բնութագիրն այն է, որ բառին կցվող հատուկ վերջավորություն չունի: Սեռական հոլովի իմաստի

արտահայտման երկու քերականական միջոց կա անգլերենում,* որոնք շեղումներ չունեն կանոնակարգված օրինաչափություններից: Որպես բացառություն՝ ոչ շնչավոր տաբու գոյականները սեռական հոլովով գործածություններ չունեն, այն է՝ *arse, arsehole, balls, balls-up, BS, buggery, bugger all, bull-shit, cock, cocksucker, crock, dick, fanny, hump, jack shit, knob, piece, piss, pussy, quim, sod, tit, tool*:

Տաբու գոյականները հանդես են գալիս շարահյուսական զանազան պաշտոններով՝ դառնալով նախադասության գլխավոր ու երկրորդական անդամներ, գոյականական ու բայական անդամների լրացումներ, ինչպիսիք են՝ ենթակա, բաղադրյալ ստորոգյալի անվանական բաղադրիչ, ուղիղ խնդիր, խնդրի լրացումներ, որոշիչներ, պարագաներ և այլն: Պատկերավոր լինու համար, ստորև բերենք որոշ ամբողջական լեզվական կառույցներ՝ *That's a load of balls!*; *He's a real bastard*; *You're talking a load of bollocks!*; *Don't let the buggers get you down*; *Well, she was bugger all help*; *Don't listen to him-he's full of bullshit*; *Travelling all that way to work every day is a real fag*; *These instructions make fuck all sense to me*; *What the fuck are you doing?*; *What's all that gook on your face?*; *I'm going to give your finger a little prick with this needle* և այլն:*

Ինչ վերաբերում է **ածական տաբուների քերականական կարգին**, պետք է ասել, որ անգլերենում ածական խոսքի մասին պատկանող տաբուները շատ չեն: Ընդամենը տասնհինգ տաբու է պատկանում այս խմբին: Դրանք առարկայի հատկանշայնությամբ արտահայտում են առարկայի որակական զանազան կողմերը, ինչպես նաև բնութագրում են մարդու մտավոր և հոգևոր զանազան հատկանիշները: Ստորև կկատարենք անգլերենի տաբու ածականների իմաստային դաշտի երկու խմբավորում՝

* ա) Շնչավոր և այդպիսի գաղափար արտահայտող գոյականների սեռական հոլովը կազմվում է *s* ձևույթով, որը պատկանելություն արտահայտելու համար միանում է բառի ուղիղ ձևին ապաթարցի միջոցով՝ 's: Ընդ որում, հոգնակի թվում և այն բառերում, որոնք բառավերջում ունեն *s*, կրկնակի *s* մասնիկներից խուսափելու համար ապաթարցն ավելանում է բառի հոգնակիի ձևին՝ արտահայտելով պատկանելության իմաստը: Սեռական հոլովի կազմությամբ պայմանավորված՝ *s* մասնիկն ունի հնչման տարբերակներ՝ *u* (*s*), *q* (*z*), *u*ի (*siz*):

բ) Քանի որ սեռական հոլովի հիմնական նշանակությունը սերում, պատկանելություն արտահայտելն է, նրա արտահայտման երկրորդ եղանակը *of* նախդիր+ուղղական հոլով կառույցն է: Այս կաղապարով կազմվում է մյուս գոյականների սեռական հոլովը:

* Տաբու բառերի խոսքում ունեցած կիրառությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համակարգայնորեն ենթարկվում են անգլերենի հոդառության բոլոր օրինաչափություններին և չեն տարբերվում բառային այլ խմբերից որևէ հատկանիշով, հետևապես հորի, որի դրսևորման յուրահատկություններին քննությունը հարկ չենք համարում անդրադառնալ:

ա) մարդու մտավոր, հոգևոր, բարոյական, ֆիզիկական, տեսակային, կրոնական, գունային հատկանիշները ներկայացնող տաբուներ՝ *balls-out, bloody, dumb-ass, half-breed, half-caste, bugged, papist, popish, queer, savage, yellow* (11 միավոր):

բ) իրողության դրական և բացասական, արտաքին, ներքին, վիճակային կողմերը ներկայացնող տաբուներ՝ *effing, piss-poor, fucking, goddam* (4 միավոր):

Վերոնշյալ տաբու ածականներն արտահայտում են առարկաների էությունից բխող հատկանիշներ, ինչպես նաև՝ առարկաների տեղային-տարածական, ժամանակային, ծագման, պատկանելության և բազմաթիվ այլ հարաբերություններ, որոնց խմբավորման հիմքը նրանց ունեցած իմաստային, բառակազմական և քերականական առանձնահատկություններն են:

Անգլերենում գործածվող տաբու ածականները, ինչպես կռահելի է, և՛ որակական են, և՛ հարաբերական և խոսքում գործածվում են իրենց հատուկ քերականական հատկանիշներով: Հայ լեզվաբան Մ. Ասատրյանը որակական և հարաբերական ածականների տարբերակման սահմանների մասին գրել է. «...որակական և հարաբերական ածականների միջև չկան անանցանելի սահմաններ, գլխավորը որակական ածականների խումբն է, բազմաթիվ հարաբերական ածականների մեջ ժամանակի ընթացքում զարգանում է որակական հատկանիշի նշանակություն, և նրանք վերածվում են որակականների» (Ասատրյան 2004:133): Ընդ որում, հարաբերական տաբու ածականներն անգլերենում ավելի գերակշռող են, և կարծում ենք սա օրինաչափություն է: Ածական տաբուների մեծ մասը ձևավորվել է անգլերենի պատմական զարգացման տարբեր էտապներում՝ տարբեր ձևայինների համակցումից: Ինչ վերաբերում է որակական ածականներով արտահայտված սակավաթիվ տաբուներին, ապա՝ նկատենք, որ որակական ածականներն առհասարակ սահմանափակ են լեզուներում, հետևապես անգլերենում մի քանի որակական ածականների գործառույթ տաբու նշանակությամբ ինքնին հետաքրքիր երևույթ է:

Բայ տաբուների քերականական կարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերենում բայով արտահայտված տաբուները իրենց քանակով հաջորդում են գոյականով արտահայտված տաբուներին՝ քսանչորս բառամիավոր: Այս բայերը խոսքում ունեն բայական մյուս խմբերին բնորոշ եղանակաժամանակային բոլոր հատկանիշները: Այդուհանդերձ, որոշակի հատկանիշների հիման վրա կարող ենք կատարել ինչ-ինչ դասակարգումներ՝ հիմք ընդունելով բայ տաբուների հայտաբերած հատկանիշները: Հայտնի է, որ բայերն արտահայտում են

կա՛մ գործողություն, կա՛մ վիճակ ու դրություն: Կան բայեր, որոնք արտահայտում են այլ իմաստներ: Այդ բայերն են՝ մոդալ բայերը, պատճառական բայերը, անդեմ բայերը, հարաբերական կամ կապվող բայերը: Բայերի նշված տեսակները ներկայացնում են սահմանափակ, վերջնական և ոչ սահմանափակ, վերջնական համակարգային ձևեր, բացառությամբ մոդալ բայերի, որոնք ունեն ոչ սահմանափակ, վերջնական ձևեր:*

Տաբու բայերը բացառապես գործողություն և վիճակ, դրություն ցույց տվող բայեր են, այս առումով կարող են նաև որոշակիորեն դասակարգման ենթարկվել՝ ըստ իմաստային յուրահատկությունների: Գործողություն ցույց տվող տաբու բայերը հետևյալներն են՝ *arse, arse about/around, ball, balls up, bugger, bugger off, bugger up, bugger about/around, crap, eff off, jack off, scare, shit, sod off, wank* (15 միավոր): Վիճակ, դրություն ցույց տվող տաբու բայերը հետևյալներն են՝ *bull-shit, fuck, hump, piss, roger, root, sod, toss* (8 միավոր):

Գործողություն, վիճակ և դրություն ցույց տվող բայերի մեջ տարբերակման հիմք կարող է դառնալ նաև բայերի անցողականություն և անանցողականություն ցույց տալու հատկանիշը: Եղած տաբու բայերի մեջ այդպիսի բնութագրում ունեն հետևյալ բայերը՝ *ball* (անցողական, անանցողական), *bull-shit* (անցողական, անցողական), *shit* (անցողական, անանցողական), *piss* (անանցողական), *root* (անցողական, անանցողական), *crap* (անանցողական), *bugger* (անցողական, անանցողական): Ըստ բառարանային տվյալների՝ մյուս բայերը չունեն այս հատկանիշը:

Մյուս դասակարգումը, որին ենթարկվում են բայերը, նրանց **կազմությունն** է: Ըստ կազմության օրինաչափությունների՝ գործողություն, վիճակ, դրություն ցույց տվող բայերը լինում են՝ պարզ, ածանցավոր, բարդ/բաղադրյալ, դարձվածավոր:

Ըստ կազմության, անզլերենի տաբու բայերն ունեն բառակազմական հետևյալ բաշխվածությունը՝ **պարզ բայեր**՝ *to ball, to fuck, to hump, to piss, to roger, to root, to scare, to sod, to crap, to wank, to toss, to shit, to camp* (11 միավոր), որոնք ձևաբանորեն կազմված են մեկ

* Այս երկու խմբերի հիմնական ու գլխավոր տարբերությունն այն է, որ սահմանափակ, վերջնական բնորոշումն ունեցող բայախմբերն ունեն դեմքի, թվի, ժամանակի, եղանակի, վաղակատարի, սեռի և եղանակի կարգերը, որոնց շարահյուսական հիմնական գործառույթը ստորագյալ դառնալն է, իսկ մյուս խմբի բայերն ունեն չորս հիմնական քերականական հատկանիշ, լինում են անորոշ դերբայ, գերունդ, հատկանիշ և վիճակ ցույց տվող դերբայներ, ինչպես նաև ունեն սեռի, եղանակի և որոշ այլ կարգեր:

արմատից, **ածանցավոր բայեր՝** *to arse* (1 միավոր), որոնք սովորաբար կազմված են մեկ կամ երկու արմատից և իրենց կազմում ունեն ձևաբանորեն տարբերակվող միավորներ՝ նախածանցներ կամ վերջածանցներ, **բարդ/բաղադրյալ բայեր՝** *bull-shit* (1 միավոր), որոնք սովորաբար իրենց կազմում ունեն մեկ և ավելի արմատներ, **դարձվածավոր բայեր՝** *arse about/around, balls up, bugger off, bugger up, bugger about/around, eff off, jack off, sod off, toss off* (9 միավոր), որոնք բաղկացած են բայական անդեմ ձևերից և մակբայական մասնիկներից: Ընդ որում, մակբայական մասնիկները միշտ հաջորդում են բայական կառույցին և միասնաբար արտահայտում են մեկ բայիմաստ: Ըստ էության, դարձվածավոր բայերի դեպքում կարևորվում են ոչ միայն կազմության առանձնահատկությունները, այլև արտահայտած իմաստները, քանի որ նրանց հիմքում ընկած է մակբայական իմաստը:

Հետաքրքիր է, որ տաբու բայերը մեծամասամբ արտահայտվում են դարձվածավոր բայերով: Սա, կարծում ենք, պատահական լինել չի կարող, քանի որ դարձվածավոր բայերը վերափմաստավորումներ են և ցույց են տալիս անգլերենում ոչ միայն բայիմաստների արտահայտման հնարավորությունները, այլև պատմական զարգացման յուրահատկությունները: Դարձվածավոր տաբու բայերի գոյությունը վկայում է, որ վերափմաստավորումները տաբուների համակարգում կարևոր տեղ են գրավում:

Անդրադառնանք մի կարևոր խնդրի, ինչպիսին **կոնվերսիան** է: Այն համարվում է նոր բառերի առաջացման ձև, ուղի (Խաչատրյան 2008: 161), որը հատկապես անգլերենում լայն տարածում ունի. բառը կարող է տարբեր քերականական արժեքներով հանդես գալ (Crystal 2003): Ըստ լեզվաբանների՝ կոնվերսիան ձևաբանաշարահյուսական բառակազմության եղանակ է, որը աննշույթ է, ունի զրո ձևույթով վերջավորություն (Amold 1986: 161-164): Այս երևույթի հիմքում ընկած են իմաստափոխական որոշակի գործոններ, ինչպիսիք է բազմիմաստությունը, բառիմաստի ընդլայնումը և այլն: Կոնվերսիայի բուն էությունն այն է, որ տեղի է ունենում խոսքիմասային փոխանցում. բառը մի խոսքի մասից անցում է կատարում մեկ այլ խոսքի մասի՝ առանց որևէ ձևաբանական փոխոյությունների ենթարկվելու: Անգլերենում բազմաթիվ տաբուներ կան, որոնք առաջացել են հենց այս եղանակով՝ ունենալով տարբեր արժեքներ: Ստորև բերենք կոնվերսիայի միջոցով առաջացած տաբու միավորների դասակարգված օրինակներ՝ ա) բայերից առաջացած գոյական տաբուներ՝ *crap, shit*, բ) բայերից առաջացած ածականներ՝ *crap, shit*, գ) բայերից առաջացած մակբայներ՝ *crap*, դ) բայերից առաջացած բացականչություններ՝ *shit, shite*, ե) ածականներից

առաջացած մակբայներ՝ *bloody, fucking, goddam*, գ) գոյականներից առաջացած բացականչություններ՝ *Christ*:

Christ գոյականը, որպես անձնանուն, քրիստոնյաների համար աստծո որդին է, նրա ուսմունքը հիմնված է քրիստոնեական կրոնի վրա: Մեծ հավանականությամբ՝ բառիմաստի ընդլայնման օրենքով այն վերածվել է տաբու բացականչության, որի համարժեքը մոտավորապես հայերենում կլինի՝ «վա՛յ աստված»՝ արտահայտելով զայրույթ, ցասում և զարմանք: *Christ* բառը, որպես տաբու բացականչություն, բացառիկ է իր կրոնական բովանդակության շնորհիվ. բացականչության մեջ խտացված են անգլիացիների կրոնական վախերը, տագնապներն ու հիշողությունները: Հատուկ անունների տաբուացման համար Քեյթ Բարիջը (Burridge 2006) և Քեյթ Ալանը (Allan 2006) կարևոր դիտարկում են կատարել. «Անձնանունները տաբուներ են (կամ եղել են այդպիսին) մայրացամաքներում և դրանց միջև տեղակայված բազմաթիվ կղզիներում բնակվող որոշ ազգերի մոտ: Անուններով արտահայտվող տաբուները վախի լավագույն դրսևորումներն են» (Burridge, Allan 2006: 125):

Լեզուներում սովորական երևույթ է, որ մարդիկ անձնանուններին զուգահեռ կարող են ունենալ լրացուցիչ անուններ ու մականուններ: Այս իրողությունը դրսևորվում է անձնանունների կրած տարատեսակ փոփոխություններով: Անձնանունը կարող է աղճատվել, հնչյունական փոփոխությունների ենթարկվել: Օրինակ՝ *Mike* մականունը, որը անգլերենում նաև տաբու է *Mick* տարբերակով, *Michael* անձանվան լրացուցիչ տարբերակն է: Այս միավորները կոնտեքստային համապատասխանություններ են, որոնց տարբերակվածությունը պայմանավորված է լրացուցիչ իմաստների ձեռք բերած սեմանտիկ (իմաստաբանական) և պրագմատիկ (գործաբանական) զարգացումներով: *Christ* անձանվան տաբուացման հարցում դեր է կատարում ոչ թե բառի աղճատումը, այլ՝ հնչերանգը: Նույն երևույթը տեսանելի է կոնվերսիայի եղանակով բայերից առաջացած *shit, shite* բացականչությունների դեպքում: Ըստ էության, անձնանուններից առաջացած տաբուների հիմքում ընկած է տվյալ անձի նկատմամբ ունեցած վերաբերմունքը (Burridge, Allan 2006:143), որը *Christ* անձանվան դեպքում հնչերանգային դրսևորում է ստացել: Կարելի է եզրակացնել, որ անգլերենում հնչերանգը իմաստաբանական տարբերակման գործառույթ է կատարում, որը տեսանելի է համապատասխան տաբու բառերում: Սա նույնպես օրինաչափ է, քանի որ տաբու բառերը գրեթե միշտ հնչում են հուզական համապատասխան երանգավորմամբ, ձայնի որոշակի ընդգծված տոնայնությամբ, որում

առկա է ծայնալարերի բարձր ու ցածր հաճախականության լարում, որն այս բառերի պարագայում վերաձվել է բացականչության:

Վերոբերյալ փաստերի քննարկումը ցույց է տալիս, որ կոնվերսիան խոսքամասային անցման հիմք է, որն էլ իր հերթին վկայում է, որ տաբուները ձեռք են բերում լեզվական տարաբժեքություն:

Այսպիսով, անգլերենի տաբու բառերի խոսքիմասային դասակարգումը ցույց է տալիս, որ տաբուների համակարգը բավականաչափ ճկուն է, և այդ համակարգում ծանրակշիռ են գոյականի, բայի, ածականի, ապա՝ մակբայի ու բացականչության նշանակություն ունեցող տաբուները: Նրանց՝ հիմնականում նյութական նշանակություն ունեցող խոսքի մասերով արտահայտվելը վկայում է, որ տաբուները օբյեկտիվ իրականության արտացոլումներն են և արտահայտում են մարդկանց տարաբնույթ փոխհարաբերությունները: Այդ հարաբերությունների հիմքում ընկած է բնագոյը, կրոնը, մշակույթը, բնությունը և այլ հոգեմտածական երևույթներ:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերենի 138 տաբու բառամիավորներն ունեն տարբեր խոսքիմասային պատկանելություն: Անգլերենի տաբու բառային միավորներն հիմնականում արտահայտվում են գոյականով (94 միավոր), ածականով (17 միավոր), բայով (23 միավոր), ինչպես նաև՝ մակբայով (4 միավոր) և բացականչությամբ (2 միավոր): Անգլերենի տաբուների համակարգն այնքան ճկուն է, որ թույլ է տալիս տաբու միավորներ ստեղծել նաև կոնվերսիայի միջոցով՝ *crap*, *bloody*, *fucking*, *goddam* մակբայները և *shit*, *shite*, *Christ* բացականչությունները: Անգլերենի տաբու բառերի քերականական առանձնահատկությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս բառախումբն ենթարկվում է անգլերենի ներքին բոլոր օրինաչափություններին: Կարևորվում է, որ անգլերենում հնչերանգը տաբուների իմաստաբանական տարբերակման գործառույթ է կատարում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. 2., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 847
2. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Ե., ԵՊՀ հրատ., հ. 5, 1942, էջ 383
3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Ե., 2004, էջ 432

4. Բարսեղյան Հովհ., Խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀ հրատ., Ե., 1980, էջ 527
5. Իսախանյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 384:
6. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, ԵՊՀ հրատ., Ե., հատոր 1, 1986, էջ 992
7. Ղազարեան Ռ. Գրաբարի բառարան, ԵՊՀ հրատ., հ. 1, 2000, էջ 688
8. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., ԵՊՀ հրատ., 1974, էջ 586
9. Burridge Kate, Allan Kate, Forbidden words, Cambridge University Press, 2006, p. 303
10. Crystal David, The Cambridge Encyclopedia of the English Language, Cambridge University Press, 2003, p. 582
11. Dirty Word Search Book for Adults. UK: Dirty Word Search Puzzle Group, 2017, p. 56
12. Haspelmath Martin (2001). "Word Classes and Parts of Speech.": International Encyclopedia of the Social and Behavioral Sciences. Amsterdam: Pergamon.
13. Napoli, D. J., , J. (January 2009). *The grammatical versatility of taboo terms*. Studies in Language. International Journal sponsored by the "Foundations of Language", Volume 33, Issue 3.
14. Part of Speech Overview. (Copyright 2018). <[http:// partofspeech .org/](http://partofspeech.org/)>.
15. Parts of Speech English Grammar. (Copyright 2018). <<http://www.grammar.cl/english/parts-of-speech.htm>>.
16. Robins RH, General Linguistics: London, Longman, 4th ed.,1989, p.470
17. The Eight Parts of Speech. (Copyright 2018). [http:// www. butte. edu/ departments/cas/ tipsheets/ grammar/ parts_ of_ speech.html](http://www.butte.edu/departments/cas/tipsheets/grammar/parts_of_speech.html)>.
18. The Parts of Speech. (Copyright 2018). <[http://www. grammar. cl/ english/ parts- of- speech. htm](http://www.grammar.cl/english/parts-of-speech.htm), [http:// partofspeech.org/](http://partofspeech.org/)>.
19. Арнольд И. В., Лексикология современного английского языка, М. 1986, с. 295
20. Кобрин Н. А., Корнеева Е. А., Оссовская М. И., Гузеева К. А., Грамматика английского языка: Морфология. Синтаксис, 1999, с. 496

REFERENCES

1. Abeghyan M., Erker, h. Z., HSSH GA., E., ej 847
2. Atwaryan Hr., Hayoc andnanunneri bararan, E., EPH hrat., h.5, 1942, e'j 383
3. Asatryan M., Jhamanakakic hayoc lezu, D'&abanu'tyun, E., 2004, e'j 432
4. Barseghyan Hovh., Xosqi maseri usmunqy', EPH hrat., E., 1980, e'j 527
5. Xachatryan L., Lezvabanu'tyan neracu'tyun, E., 2008, e'j 384
6. Hakobyan T., Meliq-Baxshyan St., Barseghyan H., Hayastani & harakic shrjanneri teghanunneri bararan, EPH hrat., E., hator 1., 1986, e'j 992.
7. Ghazaryan R., Grabari bararan, EPH hrat., hator 1, 2000, e'j 688
8. Jahukyan G., Jhamanakakic hayereni tesu'tan himunqner, E., EPH hrat., 1974, e'j 586
9. Arnol'd, I.V. Leksokologiya sovremenno anglijskovo yazyka, M.1986,s. 295
10. Kobrina N. A., Korneeva E. A., Ossovskaya M. I., Guzeeva K. A., Grammatika anglijskovo yazyka: Morfologiya. Sintaksis, 1999, st. 496

АМАЛИЯ ПОГОСЯН - ЧАСТЕРЕЧНЫЕ ОСОБЕННОСТИ ТАБУИРОВАННЫХ СЛОВ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ (СИНХРОННОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Ключевые слова: части речи, табу, существительное, местоимение, глагол, наречие, предлог, союз, междометие

Исследования показывают, что 138 английских табуированных слов относятся к разным частям речи. Большинство английских табуированных слов выражены существительным (96 единиц), прилагательным (17 единиц), глаголом (23 единицы), а также наречием (4 единицы) и междометием (2 единицы). Система слов-табу английского языка достаточно гибкая и позволяет создавать слова-табу также с помощью конверсии наречий (*crap, bloody, fucking, goddam*) и междометий (*shit, shite, Christ*). Исследование частеречных особенностей английских запретных слов позволяет сделать вывод, что данная группа слов соответствует всем внутренним нормам английского языка. Важно отметить, что в английском языке интонация слов функционирует как семантическое различие табуированных слов.

AMALYA POGHOSYAN - PART OF SPEECH PECULIARITIES OF TABOO WORDS IN THE ENGLISH LANGUAGE (SYNCHRONIC STUDY)

Keywords: *parts of speech, taboo, noun, pronoun, adverb, verb, adverb, preposition, conjunction, interjection*

The studies show that 138 English taboo words belong to different parts of speech. The majority of English taboo words are expressed by noun (96 units), adjective (17 units), verb (23 units), as well as adverb (4 units) and interjection (2 units). The Taboo system of English is quite flexible and it allows to create taboo units with the help of conversion as well -adverbs *crap, bloody, fucking, goddam* and interjections *shit, shite, Christ*. Examining the part of speech peculiarities of English taboo words we can conclude that this word group corresponds to all the internal norms of the English language. It is important to note that in English the intonation of words functions as a semantic distinction of taboo words.

Ներկայացվել է՝ 07.02.2020

Գրախոսվել է՝ 07.02.2020

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 09.02.2020

ՄՈԳԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆՋԵԼԱ ՔԱՐԹԵՐԻ
«ԱՐՅՈՒՆՈՏ ՍԵՆՅԱԿԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ Անջելա Քարթեր, ժամանակակից անգլիական գրականություն, մոգական ռեալիզմ, «Արյունոտ սենյակը», Շարլ Պերո «Կապույտ մորուքը», ֆեմինիստական գրականություն

Հոդվածում ուսումնասիրված են 20-րդ դարի անգլիացի գրող Անջելա Քարթերի «Արյունոտ սենյակը» պատմվածքի գաղափարական և գեղագիտական հիմքերը և պատմվածքում «մոգական ռեալիզմ» գեղարվեստական մեթոդի դրսևորումները: Հոդվածի **արդիականությունը** պայմանավորված է մոգական ռեալիզմի դրսևորումների ժամանակակից ընկալումների համատեքստում գեղարվեստական երկի մեկնության կարևորությամբ: Համեմատական վերլուծության միջոցով ներկայացված են «Արյունոտ սենյակը» պատմվածքի և դրա ստեղծման սկզբնաղբյուրի՝ Շարլ Պերոյի «Կապույտ մորուքը» հեքիաթի ընդհանրությունները և տարբերությունները: Պարզաբանված են պատմվածքում տեղ գտած խորհրդանշաններն ու խորհրդանշական պատկերները, և դրանց միջոցով արտահայտված հեղինակի ուղերձը:

1976 թ.-ին Անջելա Քարթերը ստանում է Շարլ Պերոյի և Գրիմ Եղբայրների հեքիաթները անգլերեն թարգմանելու առաջարկ և հենց թարգմանական աշխատանքի ընթացքում ծագում է հեքիաթները նորովի մեկնաբանելու գաղափարը: Երեք տարի անց՝ 1979 թվականին, նա հրատարակում է «Արյունոտ սենյակը և այլ պատմվածքներ» (The Bloody Chamber and other stories) ժողովածուն, որում ընդգրկված պատմվածքները ստեղծվել են հայտնի հեքիաթների հիման վրա: Պետք է նշել սակայն, որ Անջելա Քարթերը օգտագործել է հեքիաթների միայն պատումային հիմքը՝ ֆաբուլան և, որ պատմվածքներն իրենց կառուցվածքով և բովանդակությամբ սկզբնաղբյուրից լրիվ տարբեր գեղարվեստական ստեղծագործություններ են: Հեքիաթների հետ համեմատելիս տեսնում ենք, որ, ինչպես «Արյունոտ սենյակը» պատմվածքում, այդպես էլ ժողովածուի մյուս պատմվածքներում՝ խախտված է գործողությունների ժամանակագրական կարգը,

շեշտադրված են այլ դեպքեր և կերպարներ: Քարթերը, կոմպոզիցիոն հետաքրքիր հնարներով կարծես, վերամշակել է հումքը՝ ստանալով ամբողջովին նոր գեղարվեստական արտադրանք: Իր հարցազրույցներից մեկում նա ասել է. «Իմ մտադրությունը եղել է ոչ թե ստեղծել հեքիաթների նոր տարբերակներ, կամ՝ «սարսափելի հեքիաթներ մեծերի համար», ինչպես նշել է ամերիկյան հրատարակության խմբագիրը, այլ՝ ես ցանկացել եմ բացահայտել ավանդական այդ պատմությունների թաքնված իմաստները» (տես՝ Haffenden 1985:80):

Մոգական ռեալիզմի ներկայացուցիչներին հատուկ է գաղափարների կամ կերպարների նախատիպեր ընտրելիս դիցաբանությունից, ժողովրդական առասպելներից, մոռացված կամ բոլորին հայտնի դասական հեքիաթներից օգտվելը: Հենց այդպես, Անջելա Քարթերը, վերցնելով հայտնի հեքիաթները, գործողություններին տվել է բոլորովին այլ ընթացք և գոյության նոր հնարավորություն: Իր «Նշումներ առաջնագծից» (Notes from the Front Line) էսսեում Քարթերը գրել է. «Ես միանգամայն կողմ եմ, որ գինու հին շշի մեջ լցնեն նոր գինի, հատկապես, եթե նոր գինու ճնշումը պայթեցնում է հին շիշը» (Carter 1983:69):

«Արյունոտ սենյակը» պատմվածքների ժողովածուն արժանանում է գրականագետների և քննադատների ուշադրությանը և Չելթենհեմ փառատոնի գրական մրացանակին (Cheltenham Festival Literary Prize): Գրաքննադատ Ջոան Ակոկելան գրքի մասին գրել է. «Սա մի գիրք է, որը միայն Քարթերը կարող էր գրել: Այստեղ տեսնում ենք, թե ինչպես է զարգանում այն լավը, որ կար Քարթերի մեջ, և ինչպես են բոլոր նրա թույլ կողմերը վերածվում ուժեղ կողմերի» (Acocela 2017): Իսկ բրիտանացի գրող, մոգական ռեալիզմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Սալման Ռուշդին, «Արյունոտ սենյակը» գրքի 1981 թ. հրատարակության նախաբանում անդրադառնալով Քարթերի արձակի՝ իր կարծիքով երկու գլխավոր հատկանիշներին, գրում է, որ առաջին առանձնահատկությունը՝ «անզուսպ, ամենուր և ամեն ինչում արտահայտված արտասովոր երևակայությունն է, որն արմատավորված է դաժանության ենթագիտակցական շերտում (երկու սահմանակից պահեր՝ «հեքիաթ» և «իրականություն»), և երկրորդը՝ գրելու վարպետությունն է. հարուստ, հաճախ բարոկկոյական ճոխ ոճը, որը բոլորովին բնորոշ չէ անգլալեզու գրականությանը, այլ հիշեցնում է Ժուլիեն Գրակի և Պիեր դե Մանդյարգայի սիմվոլիստական և սյուրռեալիստական ժառանգությունը» (տես՝ Carter 1981):

«Արյունոտ սենյակը» պատմվածքը, ժողովածուի առաջին և ամենաճավալուն պատմվածքն է: Մյուս ինը պատմվածքները ստեղծված

են նույն սկզբունքով. դրանցից յուրաքանչյուրի հիմքում հայտնի հեքիաթներից որևէ մեկն է: Այդպես, «Պարոն Լիոնի ամուսնությունը» (The Courtship of Mr. Lyon) և «Վագրի հարսնացուն» (The Tiger's Bride) պատմվածքները երկուսն էլ «Գեղեցկուհին և հրեշը» հեքիաթի քարթերյան մեկնաբանություններն են: «Կոշկավոր կատուն» (Puss-in-Boots) պատմվածքը հենց նույնանուն հեքիաթի հիման վրա է ստեղծված: «Անտառի թագավորը» (The Erl-King): Պատվածքը վերցված է գերմանական և սկանդինավյան ժողովրդական հեքիաթներից: «Ձյունանուշիկը» (The Snow Child) պատվածքի ակունքում Գրիմ եղբայրների «Սպիտակաձյունիկը» հեքիաթն է: «Սիրո տան տիկինը» (The Lady of the House of Love) պատմվածքի աղբյուրը «Քնած գեղեցկուհին» է և վամպիրների մասին առասպելները: Պերոյի «Կարմիր գլխարկը» հեքիաթը տեսնում ենք ժողովածուի վերջին երեք՝ «Թաքնված գայլը» (The Werewolf), «Գայլերի միությունը» (The Company of Wolves), և «Գայլ-Ալիսան» (Wolfe-Alice) պատմվածքներում:

Տասը պատմվածքներից բաղկացած ժողովածուն, և դրանում ամենից ծավալուն «Արյունոտ սենյակը» պատմվածքը՝ գաղափարական և գեղագիտական առումով, մոգական ռեալիզմի վառ օրինակ է: Այն իր մեջ ամփոփում է գրական այդ մեթոդին բնորոշ գրեթե բոլոր առնձնահատկությունները: Պետք է նշել, որ մոգական ռեալիզմին բնորոշ հատկանիշները՝ միստիկ, խորհրդավոր միջավայրը, խորհրդանշական պատկերները, փոխաբերությունները, սարսափի զգացում առաջացնող տեսարանները, ժամանակի և տարածության պայմանականությունը՝ այս կամ այն չափով բնորոշ են Քարթերի ողջ ստեղծագործությանը, սակայն «Արյունոտ սենյակը» պատմվածքում առկա է այդ առանձնահատկությունների խտացված արտահայտությունը:

Հայտնի է, որ անգլիական մոգական ռեալիզմը, որպես գրականության ուղղություն և մեթոդ, ունի աղերսներ՝ մի կողմից անցյալի անգլիական գրականության հետ, (հատկապես զգալի է գոթական գրականության ազդեցությունը), և մյուս կողմից՝ լատինամերիկյան մոգական ռեալիզմի հետ, որն իրենից գրեթե հիսուն տարի առաջ է ստեղծվել:

Բրիտանի համալսարանում ուսանելու տարիներին Քարթերն ուսումնասիրել է անգլիական միջնադարյան և գոթական գրականությունը, որի ազդեցությունը նկատելի է պատմվածքների վերոնշյալ շարքում: Միջնադարյան խորհրդավոր միջավայրը և առեղծվածային մթնոլորտը բնորոշ է ինչպես անգլիական գոթական գրականությանը, այդպես էլ մոգական ռեալիզմին և Անջելա Քարթերի ստեղծագործությանը: Գոթական գրականությունը Քարթերի համար

միշտ եղել է ներշնչանքի աղբյուր, և դա վառ դրսևորված է «Արյունոտ սենյակը» պատմվածքում: Այն հարուստ է սարսափ առաջացնող պատկերներով, փակ, կարծես իրենք իրենց մեջ ամփոփված մուգ տարածություններով, տեսիլքներով, արյունոտ տեսարաններով: Սարսափի պատկերները, որոնցով, ինչպես արդեն նշել ենք, հարուստ է գոթական գրականության մոգական աշխարհը, Քարթերի երկերում վերարտադրվում են լուսնի լույսով լուսավորված մուգ անտառների, գերեզմանատների, մոմերի լույսով լցված մեկուսացված ամրոցների, գաղտնիքի գայթակղությունն իրենց մեջ պահպանող «փակ» սենյակների և տարբեր խորհրդանշանների միջոցով:

«Արյունոտ սենյակը» պատմվածքում հերոսուհին, որը տասնյոթամյա աղջիկ է, Մարկիզի ամրոցը նկարագրում է այսպես. «...այդ ամրոցը ոչ ցամաքի և ոչ էլ ջրի վրա է. այլ վայր է առեղծվածային և երկկենցաղ՝ ժխտող և՛ հողի, և՛ ավիքների իրողությունը» (Carter 1993:13)¹: Քարթերը Մարկիզի ամրոցը տեղափոխում է մի աշխարհ, որը միևնույն ժամանակ և՛ կա, և՛ չկա: Պատմվածքում բոլոր նկարագրությունները պատված են սարսափի շղարշով, որն ուրվականի նման ընթերցողին հետևում է ամբողջ ստեղծագործության ընթացքում:

Սարսափի ժանրը Քարթերի նախասիրություններից մեկն էր, և այստեղ նկատելի է ոչ միայն գոթական գրականության, այլև՝ Էդգար Ալլան Պոյի ստեղծագործության ազդեցությունը: Քարթերն ինքը բազմիցս նշել է, որ իրեն համարում է Էդգար Ալլան Պոյի արձակի սիրահար: Դեռևս 1974 թվականին հրատարակված «Հրավառություն» պատվածքների ժողովածուի նախաբանում նա գրել է, որ միշտ կլինի Պոյի, Էննսոտ Հոֆմանի և գոթական պատմությունների երկրպագուն (Carter 1974): Քարթերը Պոյին անդրադարձել է նաև իր «Էդգար Ալլան Պոյի կաբինետը» պատմվածքում (The Cabinet of Edgar Allan Poe), որը տեղ է գտել 1985 թվականին լույս ընծայված «Սև Վեներան» (Black Venus) պատմվածքների գրքում:

Եվ «Արյունոտ սենյակը» պատմվածքների ստեղծման հիմնական աղբյուրը, իհարկե, 18-րդ և 19-րդ դարերի հեքիաթներն են. Շարլ Պերոն իր «Կարմիր գլխարկը», «Կապույտ մորուքը», «Կոշկավոր կատուն» հեքիաթներով, Գաբրիել Սյուզաննա Բարբո Դե Վիլնյովը «Գեղեցկուհին և հրեշը» հեքիաթով, Գրիմ Եղբայները՝ «Սպիտակաձյունիկը» հեքիաթով:

«Արյունոտ սենյակը» պատմվածքի համար Անջելա Քարթերը որպես հիմք օգտագործել է «Կապույտ մորուքը» առասպելի Շարլ Պերոյի

¹ Անգլերենից հայերեն թարգմանությունը հոդվածագրինն է:

մշակած հեքիաթը՝ հիմնվելով Պերոյի ներկայացրած սկզբունքների վրա: Հայտնի է, որ 17-րդ դարում Ֆրանսիական ակադեմիայում կար տարակարծություն «հնի» և «նորի» փոխհարաբերության շուրջ, որը հետագայում պատմության մեջ հիշատակվում է որպես «Բանավեճ հնի և նորի մասին»: Շարլ Պերոն, որը 1674 թվականից սկսած «Ժամանակակցի» կողմնակիցն ու գաղափարախոսն էր, 1687 թվականին Ակադեմիայում ներկայացնում է իր «Լյուդովիկոս Մեծի դարաշրջանը» պոեմը, որը «հնի և նորի» բանավեճին տալիս է առավել սուր զարգացում: Պահպանողականներին, բնականաբար, դուր չէին գալիս Պերոյի ելույթներն ու գաղափարները: 18-րդ դարի սկզբում բանավեճն արդեն դուրս էր եկել Ֆրանսիայի սահմաններից և դարձել էր այն առանցքը, որի շուրջ պտտվում էր գրական միտքը Եվրոպայում (տես՝ Рєиzов 1970): Անգլիայում նույնպես կարծիքները բաժանվում էին երկու խմբի, և այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում այդ քննարկումների ընթացքում, Ջոնսթան Սվիֆթն անվանել էր «գրքերի ճակատամարտ» (տես՝ Високова 2014): Ինչպես Պերոն 18-րդ դարի սկզբում, այդպես էլ Քարթերը 20-րդ դարում՝ ավանդույթներին ազատ վերաբերվելու կողմնակիցն էր և հետևորդը:

«Արյունոտ սենյակը» գրքում տեղ գտած պատմվածքները Քարթերը գրել է Ճապոնիայից վերադառնալուց մի քանի տարի անց: Նրա աշխարհայացքում այդ տարիներին տեղի ունեցած փոփոխությունները՝ մասնավորապես ֆեմինիստական գաղափարները, այս կամ այն չափով դրսևորված են ժողովածուի գրեթե բոլոր պատմվածքներում: Իսկ «Արյունոտ սենյակը» պատմվածքում Քարթերի ֆեմինիստական հայացքները արտահայտված են հենց բովանդակության միջոցով: Պատմվածքը շարադրված է գլխավոր կերպարի՝ դեռատի աղջկա կողմից: Պերոյի հեքիաթում այդպես չէ, քանի որ պատումը շարադրելու այդ եղանակը այն ժամանակ բնորոշ չէր հեքիաթի ժանրին: Դրանով Քարթերն իր հերոսուհուն ներկայացնում է ոչ թե որպես մի աղջիկ, որի մասին պատմում են, այլ ինքն է պատմում իր անձնական պատմությունը և կրում դա ներկայացնելու պատասխանատվությունը: Եվ դա հեղինակի զուտ գեղարվեստական լուծումը չէ, այլ ունի նաև գաղափարական իմաստ: Կինը, որն ավանդաբար միշտ եղել է կրավորական դերում, «Արյունոտ սենյակը» պատմվածքում ստանձնում է մեկ այլ՝ գործողություն կատարելու ունակ անձի դեր: Պատմվածքի շարադրման այդ եղանակը ոչ միայն ավելի համոզիչ և հավաստի է դարձնում հերոսուհու զգացումները և մտքերը, այլև փոխում է կնոջ դերի մասին ընդունված պատկերացումները: «Արյունոտ սենյակը» պատմվածքը թաքնված և միաժամանակ բացահայտ ուղերձ ունի, որը երևում է պատմվածքի

ավարտին: Դասական հեքիաթներում հերոսուհիներին, լինի դա արքայադուստր, թե, պարզապես, փոքր աղջիկ, վիուկներից կամ գայլերից սովորաբար փրկում են նրանց հայրերը, որսորդները, կամ ինչպես օրինակ «Կապույտ մորուքը» հեքիաթում է՝ եղբայրները, այսինքն՝ տղամարդիկ: Պատմվածքի ավարտին Քարթերը, կարծես, հնչեցնում է իր ասելիքի վերջին ակորդը՝ Մարկիզի ճիրաններից աղջկան փրկելով նրա մոր օգնությամբ: Պատմվածքն ունենում է շրջադարձային զարգացում և ավարտ, որտեղ մայրը փրկելով դստերը, կոտրում է կնոջ՝ որպես օգնություն հայցող թույլ էակի՝ դարեր շարունակ գույություն ունեցող կարծրատիպը:

Քարթերն «Արյունոտ սենյակը» պատմվածքում, հանձինս հերոսուհու մոր՝ կերտել է անվախ և ազատատենչ կնոջ կերպար: Աղջիկը նրան համարում է այն անձը, որը կարող է իրեն նեցուկ լինել: Մոր մասին խոսելիս որպես նրա խիզախության և անպարտելիության ապացույց՝ աղջիկն ասում է. «Իմ արծվի պես խիզախ մայրիկ, կոնսերվատորիայի ուրիշ ո՞ր ուսանողուհին կարող է պարծենալ, որ իր մայրը դեմ դիմաց կռվել է չինացի ծովահենների հետ, ժանտախտի ժամանակ խնամել է մի ամբողջ գյուղ, իր ձեռքով սպանել է մարդակեր վագրի և այդ ամենն՝ ավելի երիտասարդ տարիքում, քան ես եմ հիմա» (Carter 1993:6):

Կլարիսա Պինկոլա Էստեսի կարծիքով Կապույտ մորուքի կերպարը ընկալվում է որպես գիշատիչ, որի առաքելությունն է սպանել կանանց երազանքները և ամբողջությամբ վերացնել կնոջ անհատականությունը: Գիշատչի կերպարը «չարիքն է, թաքնված բարու դիմակի ետևում» (Յտեց 2015:50):

Կապույտ մորուքի կերպարը «Արյունոտ սենյակը» պատմվածքում մարմնավորված է Մարկիզի կերպարում: Այն ընթերցողին կարող է հիշեցնել Մարկիզ դը Սադին: Իրավամբ, դը Սադին՝ բարոյականության հարաբերականության իր տեսությամբ, նույնպես կարելի է Մարկիզի կերպարի նախատիպ համարել: Քարթերն իր «Կինը՝ ըստ մարկիզ դը Սադի և պոռնոգրաֆիայի գաղափարախոսությունը» (The Sadeian Woman: An Exercise in Cultural History, 1979) աշխատությունում վերլուծում է Մարկիզ դը Սադի «Ջասթինան» և «Ջուլիետան» երկերը, որտեղ երկու՝ ծայրահեղորեն միմյանցից տարբեր կանանց կերպարներ են. Ջասթինան, որը պահպանում է ընդունված բարքերը, բռնաբարվում և նվաստացումների է ենթարկվում, իսկ մյուս ստեղծագործության հերոսուհին՝ Ջուլիետան՝ Ջասթինայի հակապատկերն է:

Իր ստեղծագործական կյանքի ընթացքում Քարթերը մեկ անգամ չէ, որ օգտագործել է Սադի ծայրահեղությունների հասնող երևակայության պատկերները, որոնք նա կարողացել է վերափոխել

ժամանակակից խորհրդանշանների: «Արյունոտ սենյակը» պատմվածքում այդպիսի խորհրդանշական պատկեր է, օրինակ, հայելիների շուրջ կատարվող իրադարձությունները. «Մեր մահճակալը: Շրջապատված այդքան շատ հայելիներով: Բոլոր պատերին շքեղ ոսկեզօծ շրջանակների մեջ հայելիներ էին, որոնց արտացոլանքի մեջ ավելի շատ սպիտակ շուշաններ էին, քան ես նախկինում երբևէ տեսել էի: Նա լցրել էր սենյակը դրանցով, որ ողջուներ նորահարսին, երիտասարդ հարսնացուին: Այն հարսնացուին, որ այժմ վերածվել էր աղջիկների բազմության, որոնց ես տեսնում էի հայելիների մեջ» (Carter 1993:15):

Եվ այստեղ տասնյոթամյա հարսնացուն բախվում է Մարկիզի աշխարհին. «Տես,- ասում է Մարկիզը շարժվելով դեպի այդ նրբակիրթ աղջիկները,- ես մի ամբողջ հարեմ եմ ձեռք բերել» (Carter 1995:15): Մյուս կողմից տեսնում ենք աղջկա ներաշխարհը՝ փխրուն և միևնույն ժամանակ գաղտնիքներով լի. «Ես ամբողջովին դողում էի, արագ շնչում: Ես չէի կարողանում նայել նրա աչքերին և հպարտությունից ու ամոթից թեքեցի գլուխս, և տեսա, թե ինչպես էին տասներկու ամուսիններ տանսերկու հայելիների մեջ մոտենում ինձ» (Carter 1993:15):

«Արյունոտ սենյակը» պատմվածքում Մարկիզի և հերոսուհու մահճակալը չորս կողմից շրջապատված էր տասներկու հայելիներով: Քարթերը պարբերաբար անդրադառնում է հերոսուհու արտացոլանքին, որին հետևում էին թե՛ Մարկիզը, թե՛ հերոսուհին, և, թվում է՝ անգամ կենդանի շունչ ստացած սպիտակ շուշանները, որոնք հերոսուհուն թաղման արարողություն էին հիշեցնում:

Քարթերը ստեղծել է իրավիճակներ, երբ, հերոսները լինելով մոզական իրականության մեջ, հայտնվում են իրենք իրենց առջև՝ տեսնելով սեփական արտացոլանքը հայելու կամ ինչպես, օրինակ, ժողովածուի «Անտառի թագավորը» պատմվածքում՝ դիմացինի աչքերում: Երբ նայում ենք հայելիներին զուտ ֆիզիկայի օրենքների տեսանկյունից, ապա տեսնում ենք, որ հայելիները պարզապես արտացոլում են լույսը և պատկերում շրջակա աշխարհը: Այդ պարագային այն դիտարկվում է որպես պարզապես ապակի, որն արտացոլում է շրջապատը, սակայն, երբ փորձում ենք այդ արտացոլումը մեկնաբանել մեր զգացողության և գիտակցության միջոցով, ապա այն այլ մեկնաբանություններ և փոխաբերական տարբեր իմաստներ է ստանում: Երբ դիմում ենք հոգեբանական վերլուծության օգնությանը, որն անշուշտ ավելի ճիշտ մոտեցում է Քարթերի գրականությունը հասկանալու համար, ապա հայելին կարող է ընկալվել որպես առանցք, որ գոյություն ունի գիտակից և անգիտակից մտքի միջև: Ինչպես նաև այն կարող է լինել սեփական ներաշխարհը բացահայտող միջոց:

Հաջորդ խորհրդանշական իմաստ ունեցող պատկերը, որը Քարթերը հմտորեն օգտագործում է պատմվածքում, ռուբինե վզնոցն է: Այն, իր կարմիր գույնով, ասես գուժում է գալիք իրադարձությունները, որոնք սպասվում են հայելիներով պատված ննջարանում: Ռուբինը, որ խորհրդանշում է իշխանություն և հզորություն, նաև կրքոտ սիրո խորհրդանիշ է, սակայն պատմվածքում հերոսուհու կողմից մեկնաբանվում է այլ կերպ. «Նրա հարսանյաց նվերը փաթաթված է պարանոցիս: Երկու կարատ մեծության ռուբիններով վզնոցը, արտասովոր և թանկարժեք նվեր, որ խեղդում էր կոկորդս» (Carter 1993:10):

Գաղտնիքի գրավչության թեմային անդրադարձել են շատ գրողներ, և շատերիս գիտակցության մեջ այն նաև զուգորդվում է «արգելված պտղի», դրախտի և մարդկության «սկզբի» հետ: «Արգելված պտուղը քաղցր է» արտահայտությունը նաև գայթակղության և անկառավարելի ցանկության իմաստ ունի: Քարթերն այստեղ ևս իր ուրույն մեկնաբանությունն ունի: Նա շեշտում է մարդու գայթակղվելու հատուկ հակումը և համարում է դա մարդու էության կարևոր հատկանիշ: Բանալիները, որ Մարկիզը տալիս է կնոջը՝ բազում խորհրդանշական իմաստներ ունեն, որոնցից ամեն ընթերցող կարող է ընտրել իր համար ավելի հոգեհարազատ իմաստը: Բանալին կարող է ընկալվել տարբեր կերպ, և հետաքրքրական է, որ չնայած այդ իմաստների երբեմն միմյանց հակասելուն, դրանք բոլորը հավակնում են ճշմարիտ լինել: Մի դեպքում բանալին կարող է լինել ազատության, բաց դռների, հասանելի հարստության, անսահման սիրո, անխոչընդոտ ճանապարհի խորհրդանիշ, մինչդեռ մյուս դեպքում՝ այն փակ տարածության, կողպված փականների, շղթայված հարաբերությունների և անհասանելի գաղտնիքների «հովանավորն» է: Ինչ էր տալիս Մարկիզը երիտասարդ դաշնակահարուհուն բանալիների միջոցով, եթե ոչ ընտրություն կատարելու հնարավորություն՝ այդ երկու ծայրահեղ տարբեր որոշումների միջև: Մարկիզն աղջկան ասում է, որ յուրաքանչյուր տղամարդ անգամ իր կնոջից պետք է գոնե մեկ գաղտնիք ունենա, և խնդրում է նրան պահել իր գաղտնիքը: Քարթերը Մարկիզի կերպարի միջոցով տալիս է «գաղտնիքի» բանալին կնոջ ձեռքը, դրանով իսկ նրան տալով նաև ազատ ընտրություն կատարելու հնարավորություն և իրավունք: Բանալիները հանձնելու ժամանակ Մարկիզը մանրակրկիտ նկարագրում է, թե, որ միջանցքի որ անկյունում է այն դուռը, որն ի զորու է տալ բոլոր այն հարցերի պատասխանները, որոնց մասին հերոսուհին անգամ մտածել չէր համարձակվում:

«Արյունոտ սենյակը» պատմվածքում Քարթերը մոզական ռեալիզմի ժանրային առանձնահատկությունները հմտորեն կիրառելու շնորհիվ

անկարելին դարձնում է կարելի: Բանալիների վրա նախկին կանանց արյունն էր, որը ոչ մի կերպ չէր լվացվում, և հնարավոր չէր մաքրել: Լինելով մտքի ազատության ջատագով՝ Քարթերը ընթերցողին տալիս է երևույթը տարբեր տեսանկյուններից մեկնաբանելու հնարավորություն: Առաջին հայացքից, իհարկե, դա Մարկիզի մեղքն է, որն աններելի էր և չէր կարող ոչ մոռացվել և ոչ էլ մաքրվել կամ ներվել: Սակայն, մյուս կողմից, եթե անդրադառնում ենք պատմվածքի հերոսուհու կերպարին և բնավորության այն գծերին, որոնք են հետաքրքրասիրությունն ու գայթակղվելու հասկությունը, որն էլ ստիպում է նրան բացել արգելված դուռը, ապա կարող ենք զուգահեռ անցկացնել Ադամի և Եվայի պատմության հետ: Եվ այդ ժամանակ «Արյունոտ սենյակը» պատմվածքը կընթերցվի որպես ավանգարդ ոճով կատարված մի պատում, և արյունը կընկավի աստվածաշնչյան դժոխքի համատեքստում: Պատմվածքի իրադարձությունների զարգացումը մեզ տանում է մեկ այլ ուղղությամբ ևս, որտեղ ընթերցողը բախվում է արդեն հերոսուհու գաղտնիքը դարձած բանալիների և Մարկիզի կողմից սենյակում տեղի ունեցող իրադարձությունների անխուսափելի բացահայտմանը: Սակայն բանալիներից չմաքրվող արյունը կարելի է նաև կապել այն հավանական վախճանի հետ, որը պետք է, որ տեղի ունենար հերոսուհու հետ: Իսկ գուցե, պատմվածքի ավարտին Քարթերը որոշել է այդ արյունով առավել ազդեցիկ դարձնել կնոջ, որպես փրկչի, կերպարը: Դաշնակահարուհու մոր կերպարը առավել ուժեղացնելով, Քարթերը վերափոխել և նրան դարձրել է նախկինում արդեն սպանված կանանց, մայրերի հավաքական կերպար՝ այդպիսով նրան վերագրելով ոչ միայն դստեր փրկության, այլև արդարադատություն հաստատելու առաքելությունը:

Ասել, որ «Արյունոտ սենյակը» ժողովածուն պարզապես արդեն հայտնի հեքիաթների նոր վերարտադրությունն է՝ ճիշտ չէր լինի, քանզի այստեղ մենք գործ ունենք բոլորովին նոր ստեղծագործությունների և, որը շատ կարևոր է՝ նոր ուղերձի հետ: Հենվելով նույն սյուժետային առանցքի վրա՝ Քարթերը ժամանակակից կյանքի պայմաններում հեքիաթային հրեշներին կենդանացնում է և փոխում մեզանում արմատացած մտքերի ուղղությունը: Նա ոչ թե վերապատմում այլ, վերաիմաստավորում է հին առասպելներն ու հեքիաթները: Քարթերի այդ շարքի պատմվածքներում կյանք են ստանում այդ ժամանակներում իրենց իրավունքների պաշտպանության համար պայքարող կանանց կերպարները, որոնք ինչպես պատմվածքում, այդպես և իրական կյանքում, ունեցել են վճռորոշ, հասարակական դերակատարում:

Գրականագետ Գ. Եղիազարյանը իր «Անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի արժեքաբանական հարացույցը» մենագրության մեջ

գրել է. «1970-ականների երկրորդ կեսը և 80-ականների սկիզբը Անջելա Քարթերի համար «գենդեր» հասկացության սոցիալական, մշակութաբանական և հոգեբանական հետազոտությունների ժամանակաշրջան էր: Այս ժամանակահատվածը կարելի է Անջելա Քարթերի ստեղծագործության համար շրջադարձային համարել: Եթե վաղ շրջանի վեպերում գրողի հերոսուհիները հիմնականում տղամարդկանց զոհն էին կամ կամավոր սպասուհիները, որոնք տառապում էին միայնության զգացումից և սոսկ որպես սեռական անշունչ առարկա ընկալվելու զգացողությունից, ապա ավելի ուշ՝ նրա հերոսուհիները կամ տղամարդկանց լիիրավ զուգընկերներն են, կամ որպես իրենց կամքը բոլորին անխտիր թելադրող, ուրիշ ճակատագրեր կառավարող անվախ, անզիջում և բավական դաժան կանայք» (Եղիազարյան 2020:137): Անդրադառնալով «Արյունոտ սենյակը» ժողովածուին գրականագետը շեշտել է. «Ժողովածուի հերոսուհիներին բնորոշ է անհաղթահարելի հանդեպ կիրքը, կեցության «սայթաքող» իմաստն ըմբռնելու ձգտումը, ինչպես նաև՝ անտարբերության և ազահության խառնուրդը՝ տիրանալու համար այն ամենին, ինչ նրանց հաջողվել է «ճանկել» արագահոս այդ պայքարում» (Եղիազարյան 2020:137-138):

Որպեսզի լավ պատկերացնենք Քարթերի մտածողության մեջ ֆեմինիստական հայացքների սաղմնավորման և զարգացման ընթացքը, արժի համեմատել «Արյունոտ սենյակը» (1979թ.) պատմվածքի կանացի կերպարները ավելի վաղ գրված «Սերը» (1971թ.) վեպի գլխավոր կերպարի՝ Անաբելի հետ: «Սերը» վեպում Քարթերը կերտում է կնոջ գրական մի կերպար, որն այդպես էլ չի կարողանում գտնել իր տեղը կյանքում: Նա չգիտի, թե ինչ է ուզում կյանքից և չի կարողանում հասնել հոգեկան ներդաշնակության: Այդ իսկ պատճառով ամեն իրադարձություն նա տեսնում է ծայրահեղ ողբերգական լույսի ներքո: Վեպի առաջին իսկ նախադասությունը բացահայտում է հերոսուհու էությունը. «Մի օր Անաբելը տեսավ արևը և լուսինը երկնքում միառժամանակ: Այդ տեսարանից նա տագնապեց և այդ զգացումը չլքեց նրան մինչև գիշերը չավարտվեց աղետով, քանզի ինքնապաշտպանական բնազդը նրա մոտ բացակայում էր, երբ կանգնում էր երկընտրանքի առջև» (Carter 2006:1)

Այսպիսով, «Արյունոտ սենյակը» ժողովածուն առանձնահատուկ տեղ ունի Քարթերի ստեղծագործական ժառանգության մեջ և շատ կարևոր է նրա ստեղծագործական որոնումները և աշխարհայացքային փոփոխությունների ընթացքն ըմբռնելու համար: Գիրքն ամբողջովին բացահայտում է Քարթերին՝ որպես մոգական ռեալիզմ գրական հոսանքի հետևորդ: Պատմվածքում ներկայացված խորհդանշանները պատկերում

են գրողի ուղերձը, այն է՝ անկարելին կարելի դարձնելու հավանականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եղիազարյան Գ., «Անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի արժեքաբանական հարացույցը» մենագրություն, Երևան, 2020
2. Carter A., *The Bloody Chamber and Other Stories* Published by the Penguin Group Penguin Books USA Inc., Hudson Street, New York, 1993
3. Carter A., *Love*. Published by Vintage 2006 ISBN 9780099594215
4. Carter A., *Afterword. Fireworks*. 1974
5. Carter A., 'Notes from the Front Line', in *On Gender and Writing*, edited by Michelene Wandor (London, Boston: Pandora Press, 1983), pp. 69-77 (69)
6. Haffenden, (1985), "Angela Carter", *Novelists in Interview*, New York: Methuen Press, p. 80, ISBN 978-0-416-37600-5.
7. Angela Carter's Feminist Mythology by Joan Acocela. <https://www.newyorker.com/magazine/2017/03/13/angela-carters-feminist-mythology>
8. Высокова В. В. «Спор о древних и новых» и становление историзма в британской историографии XVIII в. // Известия Уральского федерального университета. Сер. 2, Гуманитарные науки. — 2014. — № 4 (133). — С. 110.
9. Реизов Б. Г. Из истории европейских литератур. — Л., 1970. — С. 11.
10. Эстесс К. Бегущая с восками. Женский архетип в мифах и сказаниях.- М.: София, 2015. 448 с.

REFERENCES

1. Eghiazaryan G., «Angliaci & amerikaci kin groghneri erkeri arjheqabanakan haracowycy» menagrowt'yown, Er&an 2020
2. Haffenden, (1985), "Angela Carter", *Novelists in Interview*, New York: Methuen Press, p. 80, ISBN 978-0-416-37600-5
3. Angela Carter's Feminist Mythology by Joan Acocela. <https://www.newyorker.com/magazine/2017/03/13/angela-carters-feminist-mythology>

- 4 Vysokova V. V. «Spor o drevnih i novyh» i stanovlenie istorizma v britanskoj istoriografii XVIII v. // Izvestija Ural'skogo federal'nogo universiteta. Ser. 2, Gumanitarnye nauki. -2014. - № 4 (133). -S. 110.
- 5 Reizov B. G. Iz istorii evropejskih literatur. — L, 1970. — S. 11.
- 6 Jestess K. Begushhaja s voskami. Zhenskij arhetip v mifah i skazanijah.- M.: Sofija, 2015. 448s

АНИ АСЛАНЯН - ПРОЯВЛЕНИЕ “МАГИЧЕСКОГО РЕАЛИЗМА” В РАССКАЗЕ АНДЖЕЛЫ КАРТЕР “КРОВАВАЯ КОМНАТА”

Ключевые слова: Анджела Картер, современная английская литература, магический реализм, “Кровавая комната”, Шарль Перро “Синяя борода”, феминистская литература

В статье рассматриваются идеологические и эстетические основы рассказа английской писательницы 20-го века Анджелы Картер “Кровавая комната” и анализируются содержащиеся в нем элементы магического реализма как художественного метода. С помощью сравнительного исследования представлены различия и сходства рассказа “Кровавая комната” с первоисточником - сказкой Шарля Перро “Синяя борода”. Рассмотрены символы и символические образы рассказа “Кровавая комната” и с их помощью выявлено главное послание Анджелы Картер читателям.

ANI ASLANYAN - MAGICAL REALISM IN THE NOVEL “THE BLOODY CHAMBER” BY ANGELA CARTER

Keywords: Angela Carter, Modern English Literature, Magical Realism, “The Bloody Chamber”, Charles Perrault “The Bluebeard”, feminist literature

The article introduces the collection of stories “The Bloody Chamber” by the late 20th century English novelist Angela Carter. The article analyzes the narrative style, metamorphosis and the issues of feminism in the stories by emphasizing traditional elements of Magical Realism and Gothic fiction. The article compares Carter’s main message, her writing style and the image system of the novel “The Bloody chamber” with that of the fairly tale “Bluebeard” by Charles Perrault.

Ներկայացվել է՝ 07.02.2020

Գրախոսվել է՝ 03.02.2020

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 09.02.2020

ԾԱՌԻ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ ԺԱՆ ԺԻՈՆՈՅԻ «ՄԱՐԴԸ, ՈՐ ԾԱՌԵՐ ԷՐ
ՏՆԿՈՒՄ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ ծառ, կյանքի խորհրդանիշ, վերածնունդ, ուղղահայաց բնույթ, էկոկրիտիկա, բնություն

Քսաներորդ դարի վերջում բնապահպանական խնդիրներով մտահոգ հասարակությունը սկսեց վերանայել մարդու վերաբերմունքը բնության հանդեպ և կարևորել շրջակա միջավայրի հանդեպ անձնական պատասխանատվության գիտակցումը: Բնականաբար, այդ վերաբերմունքի և փոխհարաբերության հայեցակարգն արտացոլված է արվեստում և գրականության մեջ, և դրա զարգացումը տեսանելի է գրական տեքստերի ուսումնասիրության միջոցով:

Մինչ այժմ բազմաթիվ գրքեր են հրատարակվում, որոնցում խորհրդածությունները բնության, բուսականության, շրջակա միջավայրի մասին են, կամ պատումը հյուսված է բնության և մասնավորապես ծառի շուրջ: Դրանցից են, օրինակ Դիդիե Վան Կովելարտի «Մի ծառի անձնական օրագիրը», Ռենե Ռապինի «Ծառը կամ ծառերի իմաստը» ստեղծագործությունները: Խոսքը վերաբերում է Բնապահպանական գրականությանը կամ էկոպոետիկային: Գրականագիտության մեջ առաջացավ էկոկրիտիկա¹ ժանրը, որի ուսումնասիրության առարկան շրջակա միջավայրի հանդեպ պատասխանատվության գիտակցման ու գեղագիտության միջև եղած կապն է: Էկոկրիտիկայի ժանրի նախակարապետ է համարվում Ժան Ժիոնոն, իսկ նրա «Մարդը, որ ծառեր էր տնկում» (1953) պատմվածքը համարվում է բնապահպանության շարժման մանիֆեստ: Տվյալ պատմվածքում ծառի սիմվոլիկայի վերհանումն էլ մեր հոգվածի նպատակն է:

Պատմվածքը հովիվ էլզեար Բուֆիեի մասին է, ով տնկում է հարյուր հազարավոր կաղնիներ մի հողի վրա, որն իրեն չի պատկանում: Պատմվածքի իրադարձությունները տեղի են ունենում Ալպերի շրջանում մի տեղ, որի ճշգրիտ աշխարհագրական տեղադրությունը կարդում ենք տեքստում, ինչն էլ տպավորություն է ստեղծում, թե խոսքն իրական դեպքի մասին է: Տեղանքն իրենից ներկայացնում է անապատային ու չոր, խիստ կլիմայով բնակավայր, ուր ջրի աղբյուրները ցամաքած են,

¹ Տերմինն առաջին անգամ օգտագործվել է 1978թ William Rueckert-ի հեղինակած « Literature and Ecology : An Experiment in Ecocriticism » հոդվածում

գյուղացիներն էլ՝ կոպիտ ու դժբախտ: Տարածված են խելագարության ու ինքնասպանության դեպքերը, քամին էլ փչում է անդադար: Այս նկարագրությունից կարծես հետևում է, որ բնական հավասարակշռությունն ու ներդաշնակությունը խախտված են տվյալ տարածքում, և միայն գերբնական միջամտությունը կարող է շտկել իրավիճակը: Փաստորեն, հիմնական արհավիրքն այստեղ ներկայացվում է ոչ թե պատերազմի, այլ՝ բնական աղետի տեսքով, և փրկության ճանապարհը նույնպես պետք է համարժեք լիներ:

Պատմվածքի սյուժեն սահմանափակվում է պատումի հեղինակի՝ Ալպեր ունեցած մի քանի այցելություններով, որոնց շնորհիվ ականատես է լինում այն հսկայական փոփոխությանը, որ տեղի է ունենում ծառեր տնկելու արդյունքում: Պատմվածքում ընթերցողը տեղեկանում է դրսում մոլեգնող երկու համաշխարհային պատերազմների մասին, սակայն դրանք հեռու են, և հերոսը՝ Էլզեար Բուֆիեն հազիվ տեղյակ է դրանց ընթացքից: Ժիոնոն ինքը մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, սակայն Երկրորդ համաշխարհայինի ժամանակ հանդես է եկել խաղաղասիրական հայտարարություններով, դեմ եղել պատերազմին ու դիմադրությանը, ինչի համար էլ մեղադրվել է շատերի կողմից, համարվել դավաճան: Այդ իսկ պատճառով այս ստեղծագործությամբ նա կարծես արտահայտել է իր դիրքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ: Ժիոնոյի հերոսը ոչ թե գնում է պաշտպանելու հայրենիքը՝ կռվելով մարտի դաշտում՝ տալով իր կյանքը կամ խլելով ուրիշներին, այլ՝ երկրին ու մարդկությանը նվիրում մի ամբողջ անտառ՝ այս կերպ պայքարելով չարի և կորստի դեմ:

Վերլուծելով Ժիոնոյի ստեղծագործությունը՝ հայ ժամանակակից գրող Արամ Պաչյանը գրում է. «Փրկել վիճակը, նշանակում է ապրել մենակ եւ անընդհատ հողի մեջ թաղել սերմնահատիկներ. հազարավոր սերմնահատիկներ՝ ապավինելով բնության ու հոգու ներդաշնակությանը եւ համաշխարհային պատերազմների սոսկալի ավերումների մեջ շարունակել ծառ տնկելու համարյա աննկատ գործողությունը՝ որպես հակադրություն պատերազմի 7 մահվան քմահաճույքի» (Պաչյան <https://bit.ly/2RROCs1>): Նրա տնկած կաղնիների մի մասը կտրում են պատերազմի ժամանակ՝ որպես վառելիք: Պատերազմը սպանում էր կյանքը, իսկ նա՝ տնկում «կյանք»: Ակնհայտ է, որ ծառն այստեղ **կյանքն է** խորհրդանշում, սակայն հաջորդող վերլուծությունից պարզ է դառնում, որ Ժիոնոյի պատմվածքում ծառը շատ ավելի հագեցած և բազմաբնույթ խորհրդանիշ է:

Պատմողի առաջին նախադասությունը Էլզեար Բուֆիեի մասին հետևյալն է. «Ինձ թվաց, թե հեռվում նշմարում եմ մի փոքր, սև, կանգնած

ուրվագիծ: Ես կարծեցի թե միայնակ ծառի բույն է»:[Ժ. Ժիոնոն: 4]. Հենց սկզբից առկա է ծառի հետ եղած համեմատությունը, որը պայմանավորված է մարդու և ծառի ուղղահայաց բնույթով: Այստեղ տեղին է թերևս վերհիշել ֆրանսիացի դիվանագետ և գրող Պոլ Կլոդելի «Սոճին» ստեղծագործությունը, որի առաջին նախադասությունը հետևյալն է. « Բնության մեջ միայն ծառն է մարդու պես ուղղահայաց» (Claudel 2016: 101) : Փիլիսոփա և մշակութաբան Գաստոն Բաշլարն այս նմանության առիթով գրում է. « Մարդը, ինչպես և ծառը, մի էակ է, որում խառնված ուժերը հավաքվում են՝ ուղղահայաց կանգնելու» : [Գ. Բաշլար: 239] Այստեղ «ուղղահայաց կանգնել» արտահայտությունը, հակադրվելով «խառը» բառին, ցույց է տալիս ավելի «վեհ» վիճակ, քանի որ այն ուղղված է դեպի վեր, դեպի լույսը, դեպի զարգացում:

Ուղղահայաց բնույթով պայմանավորված՝ ծառը հնագույն ժամանակներից եղել է երկիրը երկնքին կապողի, ըստ այդմ՝ աշխարհի առանցքի խորհրդանիշ: Նրա՝ դեպի վեր խոյացող բնույթի հետ կապված սիմվոլիկան ուսումնասիրել է ֆրանսիացի հեղինակ Ժիլբեր Դյուրանն, ով հայտնի է դիցաբանության ու երևակայականի շուրջ ունեցած աշխատանքներով: Իր՝ «Երևակայականի մարդաբանական կառույցները» գրքում նա գրում է, որ ուղղահայացությունը հեշտացնում է մեր երևակայության մեջ ծառի՝ բուսականից մարդկային մակարդակի անցումը, քանի որ « Իր սլացիկ բնույթով, տիեզերական ծառը մարդկայնացվում է և վերածվում մարդ-ուղղահայաց միկրոկոսմոսի խորհրդանշին» (Durand 1969:239): Գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Շեյլինգն իր՝ «Դիցաբանության փիլիսոփայության ներածություն» աշխատությունում գրում է, որ միայն ուղղահայաց ուղղությունն է ակտիվ ու հոգևոր, իսկ լայնությունը՝ պասիվ ու նյութական: Ըստ այդմ՝ մարդկային մարմնի նշանակությունն իր բարձրության մեջ է շատ ավելի, քան լայնության (Bachelard 1999: 315): Ուղղահայաց կանգնելը պայքար է երկրի ձգողության ուժի դեմ, քայլ է դեպի լույսը:

Այսպիսով, դեպի երկինքը ձգտող այս ուղղահայաց դիրքը, որ նույնացնում է մարդուն ծառի հետ, վերջինիս դարձնում է վեր խոյացող ամենահիմնական խորհրդանիշներից մեկը: Մարդը նմանվում է ծառին ոչ միայն արտաքին ուղղահայաց դիրքով, այլև՝ մղումով դեպի վերը, դեպի երկինք կամ երկնայինը:

Պատումի հեղինակը միևնույն նախադասության մեջ առկա է նաև հերոսի միայնության գաղափարը, որը և շուտով հաստատվում է: Միայնակ ծառի անձնավորման օրինակները բազում են համաաշխարհային գրականության մեջ: Հակադրելով անտառի ծառերի «ամբոխին»՝ հեղինակները դրան վերագրում են վեհ ու դրական մարդկային

հատկանիշներ՝ տոկունություն, վսեմություն, ազնվություն և այլն: Այս առիթով հիշենք Պարույր Սևակի «Միայնակ ծառը» բանաստեղծությունը, որում անտառը «չի սիրում» «մենակ ու մռայլ» կաղնուն, այնինչ նա է կատարում շանթարգելի դերը [Պ. Սևակ]: Ֆրանսիացի բուսաբան և գրող Բերնարդեն դը Սեն Պիեռն, իր «Բնության ներդաշնակությունները» աշխատության մեջ միայնակ կաղնուն համեմատելով խիտ աճող եղևնիների հետ, գրում է. «Մեզ ուժի զգացողություն է փոխանցվում այս եռանդուն ծառից, որին Բնությունը օժտել է փոթորիկներին միայնակ դիմակայելու կարողություն:» (De Saint-Pierre 2014:166):

Ծառի հետ ունեցած մեկ այլ նմանություն է Էլզեար Բուֆիեի լռակյաց ու սակավախոս լինելը. ապրելով միայնության մեջ՝ Էլզեար Բուֆիեն ձեռք էր բերել ծառերի՝ լուռ ապրելու և «աշխատելու» արվեստը: Սակայն նա ոչ միայն ծառի է նմանեցվում, այլև՝ ծառի բնին. այստեղ էլ անշուշտ կա ակնարկ հերոսի հաստատունության ու ամրության մասին, ինչում էլ համոզվում ենք պատմվածքի վերջում. «Բայց երբ հաշվարկում եմ, թե որքան շատ հաստատակամություն էր հարկավոր հոգու մեծությունը պահելու եւ որքան մոլեգնություն՝ վեհանձնության համար... անսահման հարգանքով եմ լցվում այդ ծերունագարդ, անուս գեղջուկի հանդեպ» (Giono 2016:16):

Պատումի հեղինակն այցելում է նույն վայրերն Առաջին համաշխարհային պատերազմից հետո և հանդիպում Էլզեար Բուֆիեին: Վերջինիս մասին ասում է. «Նա նույնիսկ ահագին կանաչ էր» (Նույն տեղում:9): Նմանատիպ արտահայտության ընտրությունը՝ ցույց տալու համար, որ նա երիտասարդ տեսք ուներ ու առույգ էր, անշուշտ, նպատակ ունի ևս մի անգամ նմանություն գտնելու հերոսի և ծառի միջև: Նա կանաչապատում էր լեռները՝ «կանաչելով» դրա հետ համընթաց, քանի որ շրջապատող բնությունը միշտ էլ ազդեցություն ունի մարդու հոգեվիճակի և առողջության վրա: «Այս մարդու ներկայությունը խաղաղություն էր հաղորդում»- (Նույն տեղում:7) -նրա ներկայությունը մարդկանց վրա ուներ նույն ազդեցությունն, ինչ ուներ անտառը ողջ տարածաշրջանի համար: Հիմա անտառը ձգվում էր կիլոմետրեր, իսկ ցամաքած առուներում կրկին ջուր էր հոսում, «Ջրի վերադառնալու հետ մեկտեղ ի հայտ եկան նաև ուռենիները, եղեգները, այգիները, ծաղիկները և մի տեսակ ցանկություն ապրելու:»:(Նույն տեղում:11): Վերականգնվում էր բնական հավասարակշռությունն ու ներդաշնակությունը:

Նույն վայրերը վերադառնալով 1945թ-ին՝ պատումի հեղինակը տեսնում է նոր տներ, մրգատու այգիներ, գյուղական տոներ. մարդիկ անգամ ավելի ուրախ էին դարձել: «Ես տեսա որ աղբյուր են կառուցել, որ դրանից առատ ջուր էր հոսում և,...դրա կողքին տնկել էին լորենի, որ չորս

տարի անց կարող էր դառնալ արդեն հարության անժխտելի խորհրդանիշ» [Նույն տեղում:15]: Այս վերածնունդը հնարավոր դարձավ ծառեր տնկելու շնորհիվ. այսինքն ծառը **վերածնության**, բնության տարերքների միջև հավասարակշռություն ստեղծող խորհրդանիշ է: Ծառերի առկայության շնորհիվ ջուրը վերադարձավ տվյալ շրջան, քամին մեղմացավ, հողն էլ դարձավ բերրի:

Պատմվածքի սկզբում Էլզեար Բուֆֆիեի տունը նկարագրելիս պատմողը նշում է. «...երևում էր որ նա ինքնուրույն «կարկատել» է իր գտած ավերակը» (Նույն տեղում: 5): Այստեղ արդեն նրան վերագրվում է վերակենդանացնողի շնորհ, և տան վերափոխման երևույթը տեղի էր ունենալու նաև շրջապատող բնության մասշտաբով:

Էլզեար Բուֆֆիեի աշխատանքը համարյա աստվածային է, քանի որ նա ոչ միայն ստեղծում է բնապատկեր, այլ ամենից առաջ՝ կյանք: Իսկ որպես կյանքի ու արարման կատարյալ խորհրդանիշ՝ հանդես է գալիս ծառը: Ծառ տնկող մարդը մոտենում է Աստծուն, և պատմողը եզրակացնում է, որ մարդն էլ կարող է Աստծո պես «արդյունավետ» լինել ստեղծել/արարելու հարցում. «Նա աստվածային ատլետ էր» (Նույն տեղում: 13): Սակայն նրա «արարումը²» Աստծո արարման պես արագ չէր ընթանում. այլ դանդաղ և լուռ՝ ինչպես ծառերի աճը:

Պատմողը ոչ միայն վստահ է, որ «Սա Աստծուն արժանի ստեղծագործություն է» (Նույն տեղում:17), այլև այն համեմատում է աստվածաշնչյան Քանաան երկրի հետ, որ Աբրահամին խոստացված երկիրն էր: Փաստորեն, միայնակ մարդն իր համառ ու անշահախնդիր աշխատանքի արդյունքում կարող է ինքն իրեն գերազանցել ու մոտենալ Աստծուն, ինքն էլ արարել ու երկրի վրա ստեղծել այգի, որ նոր դրախտ կդառնա:

Այսպիսով, երբ պատմվածքում հերոսը համեմատվում ու նույնացվում է ծառի հետ, այն դառնում է լուռ ու մենավոր գոյության խորհրդանիշ: Սակայն առաջին հերթին ծառը կյանքի խորհրդանիշ է, որովհետև հավասարակշռության բերելով բնության տարերքները՝ հնարավոր է դարձնում վերածնունդը: Ընդ որում, այն խորհրդանշում է և՛ կյանքն առհասարակ, հակադրվելով մահվանն ու խավարին, և՛ կյանքն իր գիտական, կենսաբանական իմաստով՝ պատմելով հենց ծառի, անտառի, բնության և դրանց կարևորության մասին:

² Ֆրանսերեն լեզվում «արարել» և «ստեղծել» բայերը թարգմանվում են նույն՝ «créer» բառով, ինչը թույլ է տալիս բառախաղ՝ նույնացնելու համար Բուֆֆիեի աշխատանքն աստվածային արարման հետ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պաչյան, Ա, <https://bit.ly/2RROC51>
2. Սևակ Պ, Երկերի ժողովածու, Երևան, Հայաստան, 1972, 524 էջ
3. Bachelard G., L'air et les songes. Essai sur l'imagination du mouvement . L'arbre aérien , Paris, José Corti , 1990, pp. 310-315
4. Claudel P., Connaissances de l'Est. Le Pin, Paris, Gallimard, 1974, pp. 336
5. Giono J., L'Homme qui plantait des arbres, Paris, Gallimard, 2016, pp.92
6. De Saint-Pierre B., Harmonies de la nature, p. 38 in Alain Corbin, La Douceur de l'ombre, Paris ; Flammarion, 2014, pp. 392
7. Durand G., Les Structures anthropologiques de l'imaginaire, Paris, Bordas, 1969, pp. 549
8. Shelling F., Introduction à la philosophie de la mythologie in Gaston Bachelard, La terre et les rêveries de la volonté, Les classiques et sciences sociales, bibliothèque numérique, pp.358

REFERENCES

1. Pachyan, A, <https://bit.ly/2RROC51>
2. Sevak P, Yerkeri joghovatsu, Yerevan, Hayastan, 1972, p. 524

ԱՐՔԻՆԵ ԱՐՄԵՆՅԱՆ - ՍԻՄՎՈԼԻԿԱ ԴԵՐԵՎԱ Բ ՐԱՏՏԿԱԶԵ ՋԱՆԱ ՋԻՕՆՕ «ՉԵԼՈՎԵԿ, ԿՈՏՐՅԻ ՏՅՅԱԼ ԴԵՐԵՎՅԱ»

Ключевые слова: *дерево, символ жизни, лес, элементы природы, война, возрождение*

Целью данной статьи является изучение символики дерева в рассказе французского автора Жана Жионо «Человек, который посадил деревья». Рассказ об одиноком пастухе Альзаре Буффье, который сажает сотни тысяч дубов на земле, которая ему не принадлежит. Так он создает лес и благоустраивает всю территорию.

В сравнении и идентификации с героем рассказа дерево становится символом безмолвного и одинокого существования. Но, в первую очередь, дерево предстает как символ жизни, поскольку уравнивает элементы природы, делая возможным ее возрождение. В то же время дерево символизирует как жизнь в целом, в противопоставлении со смертью и тьмой, так и жизнь в ее научном, биологическом смысле.

ARPINE HARUTYUNYAN - THE SYMBOL OF TREE IN “THE MAN WHO PLANTED TREES” BY JEAN GIONO

Keywords: *tree, symbol, forest, nature, war, rebirth, shepherd*

The article aims at studying the symbol of the tree in the 20th century French author Jean Giono's short story “The Man Who Planted Trees”. The story tells about a lonely shepherd, Alzare Bouffier, who plants thousands of oaks on a land that he does not own. So he creates a forest and upgrades the whole area.

In the story, the tree becomes a symbol of silent and solitary existence when the hero is compared and identified with the tree. But first and foremost, the tree is a symbol of life as it ensures the possibility of rebirth, balancing the elements of nature. At the same time, the tree symbolizes both life in general as opposed to death and darkness, and life in its scientific, biological sense.

Ներկայացվել է՝ 07.02.2020

Գրախոսվել է՝ 03.02.2020

Երաշխավորվել է ԲՊՀ համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի կողմից՝ 09.02.2020

СТРУКТУРНЫЙ АНАЛИЗ СКАЗКИ А. РЕМИЗОВА «ЦАРЬ НАРБЕК»:
МОТИВ СВАТОВСТВА

ЭГИНЕ СААКЯН

Ключевые слова: армянская сказка, морфологический анализ сказки, функции сказочных персонажей, герой-искатель, мотив скорой свадьбы, большой дом, сестрица

Сказка А. Ремизова «Царь Нарбек» – авторская волшебная сказка с элементами сватовства. В фабулу сказки вплетены две независимые сюжетные линии с общим мотивом неверной жены. Первая и основная сюжетная линия – история о Тархане и его женитьбе. Ключевые эпизоды сказки связаны с отъездом героя из дома в целях преодоления «недостачи». Герой женится на девушке, которая проживает вместе с братьями-охотниками в лесном доме. В ремизовской сказке отражен намек на ритуал принятия нового члена в братство, который совершается посредством заключения брака. В рассматриваемой сказке наблюдается мотив скорой свадьбы – вместо традиционного празднования в течение семи дней и семи ночей свадьба совершается за одну ночь. Таким образом, «недостача» в сказке А. Ремизова ликвидируется свадьбой. В сказке выявлена трансформация традиционного сказочного сюжета – герой не наказывает вредителей.

Актуальность статьи определяется необходимостью выявления закономерностей воплощения фольклорного мотива сватовства в сказке А. Ремизова «Царь Нарбек», установления сходств и отличий авторской обработки с русской, армянской, грузинской фольклорной традицией.

В рамках статьи проведен структурный (морфологический) анализ сказки «Царь Нарбек» с привлечением богатого фольклорного материала армянского, русского и грузинского народов с целью выявления сходств в изображении мотива сватовства-похищения и женитьбы-посвящения.

Задачами данной статьи является определение черт девушки, проживающей в мужском доме, рассмотрение похищения в качестве возможной причины ее пребывания в доме, установление ее связи с братьями-охотниками и ее роли в братстве.

Для достижения поставленной цели используются сравнительно-сопоставительные аналитические *методы*.

Новизна статьи заключается во всестороннем анализе мотива сватовства, выявляемого в авторской сказке А. Ремизова «Царь Нарбек», при сопоставлении с фольклорными текстами, а также с текстом первой редакции.

Сказка А. Ремизова «Царь Нарбек» написана в 1915 году и впервые была опубликована в журнале «Аргус»¹ (1915. N 6, стр. 9-22). Выбор сказки для публикации в этом номере журнала сделал С. Лодыгин², рисунки которого были помещены в ремизовский текст. Об этом А. Ремизову в письме от 25 августа сообщает В. Регинин³: «Художник отдал предпочтение для иллюстраций первой сказке»⁴. Сказку со слов старшего стражника Сергея Матвеевича Долмазова – крестьянина селения Коды – записал Н. Чернявский⁵.

В сказке А. Ремизова молодой охотник и стрелок Тархан хочет жениться и, не найдя невесту по сердцу, седлает волшебного коня и уходит жить в лес. Затем Тархан женится на девушке из чужого края, у которой шестеро братьев-охотников. У жены Тархана появляется любовник, и, чтобы избавиться от мужа, она отправляет его мериться силой с царем Нарбеком. Царь, разгадав истинную причину неудовольствия жены, советует Тархану вернуться домой. Дома Тархан обнаруживает жену с любовником, но не наказывает их, а смиряется со своим положением.

В первой редакции сказка имела подзаголовок «кавказская сказка». Здесь она называется «Царь Нарибег», а имя главного героя – Тарихан. В составе «кавказских сказок» в сборнике «Среди мурья» сказка уже имеет подзаголовок «армянская сказка» и в нее введен образ волшебного коня Раши. Нужно отметить, что в дальнейших редакциях выявляется и следующее различие: будущая жена Тархана и царь Нарбек угощают его не чаем (10: 166; 169), а вином (9: 585; 588-589; 589), вместо самовара (10: 166; 169) – кувшин (9: 589), вместо стакана (10: 169) – чарка (9: 589).

Ремизовская сказка «Царь Нарбек» начинается традиционной зачинной формулой «жил-был». Ключевые эпизоды сказки связаны с отъездом героя из дома. По В. Проппу, отлучкой героя из дома начинаются «сказочные ходы». Все три отлучки в сказке «Царь Нарбек» связаны с так называемой «недостачей», что и вызывает поиски, потому

что «герою чего-то не хватает, ему хочется иметь что-либо» (Пропп 1969: 37).

Первая отлучка – герой не находит подходящей невесты и свое место в обществе. Тархан отправляется жить в лесу в полном одиночестве, с ним только его верный конь. Герой строит дом у часовни. Часовня, как и молитва, выступают здесь в качестве христианских символов.

То, что герой ищет невесту вдалеке, а не у себя на родине В. Я Пропп считает явлением экзогамии (Пропп 1986: 22). Экзогамия – запрет брачных отношений между членами родственного коллектива. В то время как эндогамия – заключение брака в пределах определенной группы. И тот и другой случаи отражены в сказках с подобной сюжетной линией, в зависимости от экзогамного / эндогамного типа общественного строя в период их создания. например, в русской сказке, записанной в Сибири, царевна объясняет, что ей нельзя выходить замуж в своем государстве, так как все будут считаться ей братьями. (№ 6) (Сказки Сибири 1993: 134). Фактически в сказке отражен древний мотив приравнивания государства к роду.

Похищение и сватовство

В русской сказке из сборника А. Афанасьева в лесу живут два богатыря: один слепой, другой без ног. Как-то они заскучали и украли купеческую дочь, привезли в свою лесную избушку. Попросили быть им вместо родной сестры, хозяйство вести. Братья все время на охоте, а названная сестра дома, всем хозяйством заправляет, обед готовит, белье моет. (№ 198-200) (Афанасьев 1958а: 72-90).

В русской сказке «Волшебное зеркальце» каждый из братьев хотел на девушке жениться, но так как не смогли между собой договориться, то взяли ее себе за сестру (№ 210) (Афанасьев 1958а: 123-126). В другой версии сказки, названные братья клянутся расправиться саблей с обидчиком сестры, даже если это будет кто-то из них (№ 211) (Афанасьев 1958а: 129-133).

В белорусской сказке за царевну одновременно сватаются двенадцать женихов-разбойников (№ 344) (Афанасьев 1958б: 93-94).

В. Пропп считает, что это отдельные случаи, возникшие под влиянием более поздних форм брака, исключая полиандрию (Пропп 1986: 213).

Немецкий этнограф Г. Шурц мужское население в мужских домах делит на непосвященных, юношей в вольных брачных отношениях, и женатых, живущих в брачных отношениях. Причем в мужских домах

женщины и девушки могли оказаться в результате насильственного увода или по желанию родителей. Женщины туда иногда бежали от своих мужей (цит. по Проппу 1986: 212). Например, в пермской сказке поповская дочь в брачную ночь от своего мужа бежит к любовникам. Муж отправляется ее искать и узнает, что она у Харк Харковича, Солона Солонича в доме, который по описанию похож на разбойничий большой лесной дом: «вкруг дома тын, на каждой тынинке по человечьей головинке» (№ 20)(Зеленин 1914: 182-187). Мотив бегства жены от мужа в лесной дом и/или дворец любовника часто встречается в кавказских сказках. В армянской сказке «Царь Смавон и Гюл» жена царя ночью бежит от мужа к любовнику арабу в лес в его пещеру (Армянские народные сказки 1962:80-94). В грузинской сказке «Алмасхан» жена ночью отправляется к своему любовнику – царю каджей в его дворец (Грузинские народные сказки 1988: 293-304).

В сказочной традиции похищение девушки (царевны, детей) имеет двойное значение. В первом случае похищение связывается с представлениями о смерти. Сюда относятся похищение девушек змеями, демонами (впоследствии – разбойниками, охотниками), в них отражены представления о возможности брака с существом из иного мира, причем этот брак совершается против воли похищенной героини. В данном случае Змей – символ похищения души, смерти, а освобождение пленницы равносильно акту возвращения души. В подобных сказках герой проходит через испытание в «ином царстве», «в ином мире», причем герою помогает девушка, находящаяся во власти змея (дэва). Так как брак царевны (девушки) с существом из иного мира осуществляется с нарушением эндогамии, она должна быть отнята у «далекого жениха из другого мира» и отдана спасителю из «своего мира».

Во втором случае похищение представлено параллельно с мотивом посвящения: увод или изгнание детей в лес или похищение их лесным духом, избушка, обрубание пальца и т.д. Последующий период отражен в мотивах большого дома, накрытого стола в нем, охотников, разбойников, сестрички, красавицы в гробу, в саду, во дворце и т.д. Часто испытания заканчиваются свадьбой и воцарением героя. Как видим, оба случая похищения тесно связаны между собою, так как обряд посвящения предполагает и борьбу с опасностями и смертью, а завершаются они почти всегда сватовством и женитьбой.

Вторая отлучка «героя-искателя» (В. Пропп) из дома напрямую связана с первой отлучкой и обусловлена поисками жены. Для этого герой поворачивает коня на «чужую сторону». Интересно, что часто в

сказках существует запрет на брак с девушкой из чужой местности, что является основным указом родителей. При нарушении запрета с самим героем или в его семье случается беда. В рассматриваемой сказке нет подобного предупреждения, однако просматривается скрытое ожидание отрицательных последствий.

В части сюжетов волшебных сказок, когда герой-искатель приходит в чужой дом, тот обычно бывает пуст. Иногда героя встречает старуха, иногда – молодая девушка. Старых женщин братья называют матерями, а молодых – сестрицами. В сказке «Царь Нарбек» Тархана встречает молодая девушка – сестрица. Рассмотренные выше примеры также доказывают, что девушка, проживающая в мужском доме, отнюдь не «сестрица» братьев.

Тархан женится на девушке, которая проживает вместе с братьями-охотниками в лесном доме. В результате всестороннего анализа воплощения древнего фольклорного мотива побратимства в рамках статьи «Мотив побратимства и его воплощение в сказке А. Ремизова «Царь Нарбек» (Саакян 2018: 62-66) нами было установлено, что проживание девушки в лесном доме братьев-охотников (разбойников) вполне историческое явление, а сама она не является сестрицей мужчин, как и последние не являются кровными братьями.

В рассматриваемой сказке не сообщается, каким образом девушка попала к братьям. Имеющийся богатый фольклорный материал позволяет предположить, что она также могла быть похищена братьями. Число братьев девушки может быть разным. В сказке А. Ремизова их было шестеро.

В сказке «Царь Нарбек» также отражен намек на ритуал принятия нового члена в братство, который совершался посредством заключения брака: от предложения братьев стать их седьмым братом Тархан отказывается и выражает желание жениться на их сестре (Ремизов 2000: 585).

В сказке А. Ремизова «братья» сразу же соглашаются выдать за Тархана «сестрицу» – вместо традиционного празднования в течение семи дней и семи ночей свадьба совершается за одну ночь. Таким образом, «недостача» в сказке А. Ремизова ликвидируется свадьбой.

Появление второго охотника тоже заведомо представлено как введение отрицательного персонажа, так как охотник является чужеземцем. Автор специально характеризует его эпитетом «млявый»⁶. Другой охотник в сказке выступает в роли антагониста героя – вредителя, который вступает в действие в отсутствие героя. В ремизовской сказке

сохранена основная характеристика антагониста: «выведывание сведений о своей жертве через других лиц; обманывание жертвы, чтобы овладеть ею (или имуществом)» (Пропп 1969: 32).

Обращение к свахе распространенный фольклорный мотив. Однако в сказке «Царь Нарбек» в данном фрагменте нами выявлен мотив ложного разносчика товаров. Это распространенный мотив обманщика-вредителя в мировом фольклоре. Достаточно вспомнить хотя бы королеву-мачеху в сказке «Белоснежка» (по классификации Аарне-Томпсона – АaTh 709 «Мертвая царевна»). Старуха-ворожбуха прикидывается «сердечной старушкой». В качестве основных ее способов воздействия отмечаются: 1) уговор; 2) волшебное средство; 3) обман или насилие (Пропп 1969: 33). Как видим, под это определение вполне попадают действия старухи из ремизовской сказки.

Третья отлучка из дома – отправка «героя-пострадавшего» (В. Пропп). Герой охотится за головой царя Нарбека, хочет доказать свое превосходство.

Третья отлучка связана с ложной «недостачей». Жена Тархана, имя которой в сказке не приводится, становится невольным пособником героя-антагониста. Выявляется мотив непослушания мужу – по ее мнению, есть на свете молодец, который сильнее ее мужа. В сказках жена часто осознанно отправляет мужа в другое царство с невыполнимыми поручениями, истинная цель которых – погубить героя. Иногда жена по наущению любовника, а им может быть не человек, а какое-то сверхъестественное существо, например, дэв, притворяется больной и посылает мужа за каким-то лекарством. Ср.: с армянской народной сказкой «Неверная жена» (Армянские народные сказки 1962: 474-497).

В свою очередь, интересно функциональное смешение в образе царя Нарбека. Сначала Нарбек выступает как волшебный даритель. Расспросы героя и угощение можно рассматривать как испытание дарителем. В качестве дара царь рассказывает историю о своей неверной жене, объясняет Тархану истинную причину претензий его жены. Далее царь выступает как помощник, указывающий путь – провожает до ворот и советует вернуться домой.

Возвращению героя домой должно последовать наказание врага, в редких случаях – великодушное прощение. В рассматриваемой сказке Тархан прощает жену и не наказывает вредителя. Но в скором времени у них дома обнаруживается «еще один Нарбек». Нарбек становится собирательным образом любовника и в нем кроется причина измены жены. Мы предполагаем, что в фрагменте смирения Тархана с

появлением все новых Нарбеков у себя дома, возможно, отражен искаженный мотив лесного братства.

По В. Проппу, в случае отсутствия в действии сказки боя, сражения, в концовке должно быть наказание антагониста-вредителя. В сказке А. Ремизова произошла трансформация традиционного сказочного сюжета – вместо отмщения герой смиряется со своим положением обманутого мужа и, несмотря на смысловую деформацию, мы склонны относить рассматриваемую сказку к типу АаTh *905 – «Соломон и его неверная жена»: «Жена бежит от Соломона к другому; Соломон находит ее, она прячет его в сундук, затем показывает новому мужу; Соломон на виселице играет в рожок (три раза), вызывает свое войско; спасается, казнит жену и ее мужа» (Андреев 1929: 65).

Таким образом, в результате структурного анализа сказки А. Ремизова «Царь Нарбек» были выявлены древние фольклорные мотивы сватовства в функциональной роли братьев-разбойников. В частности, было установлено, что проживание девушки, которая ведет хозяйство в мужском доме в лесу у братьев-охотников, вполне исторично, а девушка – отнюдь не сестра мужчин, собственно, как и мужчины не связаны между собой кровными узами. В сказочных сюжетах охотники могут быть заменены разбойниками и даже сверхъестественными и хтоническими существами, такими, как дэвы, Кощей или Змей. Из возможных форм попадания девушки в дом в статье рассмотрено ее похищение, связанное с мотивом сватовства.

Примечания:

«Аргус» – ежемесячный иллюстрированный художественный и литературный журнал. Издавался в Петербурге с 1913 по 1917 гг. акционерным обществом «Биохром» под редакцией В. Регинина (Раппопорта).

Лодыгин Сергей Петрович (1892-1948) – художник-иллюстратор, оформитель книг. В 1910-ых годах удачно сотрудничал с рядом известных изданий: «Столица и Усадьба», «Солнце России», «Сатирикон», «Аргус», «Художественная Открытка».

Регинин Василий Александрович (1883–1952) – журналист. Редактор журналов «Синий журнал», «Аргус», «Тридцать дней».

Ремизов А.М. Переписка редакций и издательств «Аргус», «Лукоморье», «Народоправство» и др. в связи с изданием его произведений // ИРЛИ Ф. 256. Оп. 2. Ед. хр. 24. Л. 22.

Николай (Колау) Андреевич Чернявский (1893–1945) – поэт, собиратель русского и кавказского фольклора, переводчик с грузинского

языка. Познакомился с А. Ремизовым в 1912 г., снабжал его фольклорным материалом и принимал непосредственное участие в создании «Кавказских сказок». млявый (диалект.) – слабый, хилый, тщедушный.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Андреев Н.П. Указатель сказочных сюжетов по системе Аарне. Ленинград: Государственное русское географическое общество, 1929 - 120 с.
2. Армянские народные сказки. Т. 3. Ереван: Издательство АН Армянской ССР, 1962.- 672 с. (на арм. яз.).
3. Афанасьев А.Н. Народные русские сказки ВЗ тт. М: Государственное издательство художественной литературы. Т. 2. 1958.- 510 с.
4. Афанасьев А.Н. Народные русские сказки ВЗ тт. М: Государственное издательство художественной литературы. Т. 3. 1958.- 572 с.
5. Грузинские народные сказки: В 2 кн. М.: Главная редакция восточной литературы издательства «Наука». Кн.1. 1988.- 337 с.
6. Зеленин Д.К. Великорусские сказки Пермской губернии // Записки императорского русского географического общества по отделению этнографии: Т. ХLI. Пг., 1914.- 656 с.
7. Пропп В.Я. [Исторические корни волшебной сказки](#) Л.: [Издательство ЛГУ](#), 1986.- 364 с.
8. Пропп В.Я., Морфология сказки. М.: Главная редакция восточной литературы издательства «Наука», 1969.- 168 с.
9. Ремизов А.М. Собр. Соч.: В 10 томах. М.: Русская книга, 2000. Т. 2. Докука и балагурье.- 716 с.
10. Ремизов А.М. Среди мурья. М.: Северные дни, 1917.- 235 с.
11. Русские сказки Сибири и Дальнего Востока: Волшебные и о животных / Сост. Р.П. Матвеева, Т.Г. Леонова. Новосибирск: ВО «Наука», Сибирская издательская фирма, 1993.- 352 с.
12. Саакян Э.А. Мотив побратимства и его воплощение в сказке А. Ремизова «Царь Нарбек» // Языки и фольклор коренных народов Сибири. № 1 (37). Новосибирск. 2018.- 62-66 с.

REFERENCES

1. Andreev N.P. Ukazatel' skazochnyh sjuzhetov po sisteme Aarne. Leningrad: Gosudarstvennoe russkoe geograficheskoe obshhestvo, 1929, 120 s.

2. Armjanskije narodnye skazki. T. 3. Erevan: Izdatel'stvo AN Armjanskoj SSR, 1962, 672 s. (na arm. jaz.)
3. Afanas'ev A.N. Narodnye russkie skazki V 3 tt. M: Gosudarsvennoe izdatel'stvo hudozhestvennoj literatury. T. 2. 1958, 510 s.
4. Afanas'ev A.N. Narodnye russkie skazki V 3 tt. M: Gosudarsvennoe izdatel'stvo hudozhestvennoj literatury. T. 3. 1958, 572 s.
5. Gruzinskije narodnye skazki: V 2 kn. M.: Glavnaja redakcija vostochnoj literatury izdatel'stva «Nauka», 1988. Kn.1, 337 s.
6. Zelenin D.K., Velikorusskie skazki Permskoj gubernii // Zapiski imperatorskogo russkogo geograficheskogo obshhestva po otdeleniju jetnografii: T. XLI, Pg., 1914, 656 s.
7. Propp V.Ja., Istoricheskie korni volshebnoj skazki L.: Izd-vo LGU, 1986, 364 s.
8. Propp V.Ja., Morfologijaskazki. M.: Glavnajaredakcijavostochnojliteraturyizdatel'stva «Nauka», 1969, 168 s.
9. Remizov A.M., Sobr. Soch.: V 10 tomah. M.: Russkajakniga, 2000. T. 2. Dokuka i balagur'e, 716 s.
10. Remizov A.M., Sredimur'ja. M.: Severnyedni, 1917, 235 s.
11. Russkie skazki Sibiri i Dal'nego Vostoka: Volshebnye i o zhivotnyh / Sost. R.P. Matveeva, T.G. Leonova. Novosibirsk: VO "Nauka", Sibirskaja izdatel'skaja firma, 1993, 352 s.
12. Saakjan H. A., Motiv pobratimstva i ego voploshhenie v skazke A. Remizova «Car' Narbek» // Jazyki i fol'klor korenyh narodov Sibiri. № 1 (37). Novosibirsk. 2018, S. 62-66.

ՀԵՂԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ - ԱՌԵՄԻՉՈՎԻ «ՆԱՐԲԵԿ ԱՐՔԱ» ՀԵՔԻԱԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԽՆԱՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԸ

Հիմնաբառեր՝ հայկական հեքիաթ, հեքիաթի ձևաբանական վերլուծություն, հեքիաթային հերոսների գործառույթներ, փնտրող հերոս, արագ հարսանիքի մոտիվ, մեծ տուն, քույր

Ա. Ռեմիզովի «Նարբեկարքա»-ն խնամախոսության տարրերով հրաշապատում հեքիաթ է: Երկու անկախ սյուժետային գծերը հեքիաթի ֆաբուլայում միավորված են անհավատարիմ կնոջ ընդհանուր մոտիվով: Առաջին և հիմնական գիծը Թարխանի ու նրա ամուսնության պատմությունն է: Հեքիաթի հիմնական դրվագները կապված են հերոսի՝ տանից հեռանալու և, այսպես կոչված, «պակասի» հետ: Եղբայրների թիվը հեքիաթներում տատանվում է: Ա. Ռեմիզովի հեքիաթում նրանք վեցն են: Հաճախ այդ եղբայրները ավազակներ են: Դիտարկված

օրինակներից հետևում է, որ տղամարդկանց տանն ապրող աղջիկը բնավ եղբայրների «քույրը» չէ: Տուն մուտք գործելու հնարավոր ձևերից ենք համարում նրա առևանգումը, քանի որ առևանգման մեջ ի հայտ է գալիս խնամախոսության մոտիվը: Ա. Ռեմիզովի հեքիաթում վերափոխվել է ավանդական հեքիաթը: Վրեժի փոխարեն հերոսը հարմարվում է խաբված ամուսնու իր կեցվածքին: Եվ չնայած սյուժեի իմաստային ձևափոխմանը, մենք հակված ենք այն ներառել AaTh *905՝ «Սողոմոնը և նրա անհավատարիմ կինը» հեքիաթային տիպում:

HEGHINE SAHAKYAN - STRUCTURAL ANALYSIS OF A. REMIZOV'S TALE "TSAR NARBEEK": MATCHMAKER MOTIVE

***Keywords:** Armenian fairy tale, morphological analysis of a fairy tale, functions of fairy tale characters, a seeker hero, motive for an early wedding, big house, sister*

The tale by A. Remizov "Tsar Narbek" is a fairy tale with matchmaking elements. Two independent plot lines are woven into the main plot of the narration, with a common motif of the unfaithful wife. The first and main plotline – the story of Tarkhan and his marriage. The key episodes of the tale are connected with the character's departure from his native land and are connected with the so-called shortage. The number of brothers varies in different tales. In the tale of A. Remizov there are six of them. Often these brothers are robbers. The given examples prove that the young lady living in the men's house is not their "sister" at all. The abduction of the girl is considered to be an expression of the matchmaking phenomenon. In A. Remizov's tale the traditional tale has changed: instead of revenge, the main character resigned to his position as a deceived husband. And despite the semantic deformation, we include the fairy tale in the type of AaTh * 905 – "Solomon and his unfaithful wif

Ներկայացվել է՝ 29.01.2020

Գրախոսվել է՝ 20.12.2019

Երաշխավորվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գրականության ամբիոն կողմից՝ 24.12.2019

**ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՆԱ-
ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ԼԻԼԻԹ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

Հիմնաբառեր՝ ինքնություն, սփյուռք, գրականություն, մշակույթ, Իրան, հայրենիք, ազգ, հիշողություն, վտարանդիություն

Արդի համաշխարհայնացման գործընթացի մեջ խիստ արդիական է ինքնության խնդիրների շուրջ ծավալվող խոսույթը: Ինքնության խնդիրները առաջնային են դառնում, մասնավորապես սփյուռքի գրական մշակույթի մեջ: Սույն հետազոտության մեջ քննության է առնվում իրանա-ամերիկյան բազմէթնիկ և բազմակրոն սփյուռքի գրականությունը, որտեղ արծարծվող հարցադրումները աղերսներ ունեն հայկական սփյուռքի, հատկապես իրանահայ համայնքի հետ:

Ինքնությունն անընդհատ փոփոխվող և զարգացող գործընթաց է: Այն իմաստային և արժեքային համակարգ է, որը միտված է պահպանելու ազգի շարունակականությունը:

Ինքնությունը հարաբերական, բովանդակային և ժամանակային սահմանում է, և սփյուռքի անդամ լինելը կարգավիճակի և ինքնության խնդիր է: Ներգաղթյալը, որպես կանոն, հիմնականում պահպանում է իր մշակութային ինքնությունը, որը ձևավորվել է դեռևս իր հայրենիքում (Левин 2007:140): Ինչպես կարծում է Ս. Հոլը. «Ինքնությունը «արտադրանք» է, որը երբեք ավարտված չէ, մշտապես գործընթացի մեջ է, մշտական ներքին ընթացք է...» (Hall 2003:222-224):

Խոսելով իրանական ինքնության և վերջինիս շուրջ ծագած բանավեճերի մասին՝ հարկ է հատուկ դիտարկման արժանացնել լուսանջելեյան համայնքը (իրանական այլ մեծ համայնքները, ինչպիսին են Վաշինգտոնինը կամ Նյու Յորքինը, առավել համասեռ են), որն ամենատեսանելին է իրանական սփյուռքի բազմէթնիկ քարտեզի վրա:

Լոս Անջելեսում բնակվող իրանական համայնքը կազմված է պարսիկ մուսուլմաններից, հայերից, հրեաներից, ասորիներից, գրադաշտականներից, բահայիներից և քրդերից:

Ահա այսպիսի էթնիկական, կրոնական կամ կրոնաէթնիկական նկարագրի մեջ երերուն է դառնում իրանական ինքնության գաղափարը.

օրինակ, երբ հարց է ծագում էթնիկական ինքնության վերաբերյալ, իրանահայերն իրենց համարում են հայեր և շփվում են հայկական սփյուռքի այլ համայնքների հետ: Նման կերպ են վարվում նաև հրեաները: Մինչդեռ հիմնականում մուսուլմաններն են իրենց համարում իրանցիներ (Bozorgmehr, Sabagh, Der-Martirosian, 1993:59-60):

Իրանական-ամերիկյան սփյուռքի գրականությունը կարևոր անդրմշակութային հարթակ է, որտեղ ինքնության հայեցակարգերն մշտապես փոփոխվում, վերանորոգվում և վերակազմավորվում են: Իրանական սփյուռքի գրական անդրադարձներում ազգային, էթնիկական, էթնոկրոնական ինքնության մասին խոսելիս ներկայացնում ենք պարսիկ, հայ, հրեա, բահայի գրողների ստեղծագործություններից քաղված՝ ինքնության հետ առնչվող մտորումները:

Այսպես, Խ.Թոլոյանը, կարևորելով հայալեզու գրականության գոյությունն ամերիկահայ սփյուռքում, նշում է. «Անգլերենով գրված ամերիկահայ գրականությունը հավասարազոր ուշադրություն է սևեռում ծագումնաբանության բնորոշ գծերին կամ նրանց ամբողջական պատմական նշանակության փորձառությանը և հիմնախնդիրներին» (Knippling 1995:25): Ամերիկայում բնակվող իրանահայ գրող, թարգմանիչ, հայտնի գրականագետ, Յութայի համալսարանի Մերձավոր և Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի պրոֆեսոր Լեոնարդո Ալիշանը իր ապրած երկրային կարճ ու հախուռն տարիների ընթացքում թողեց հարուստ գիտական, գրական ժառանգություն: Ճակատագրի տարբեր հանգրվաններում՝ Զուլֆայի տատիկի պարտեզներում պահմտոցի խաղացող մանկիկից մինչև Լոնդոն և վերջնակետը՝ Ամերիկա դեգերող Ալիշանը կրողն էր հայկական, իրանական, ամերիկյան մշակույթների:

Ինչպես նշում է Ռուբինա Փիրումյանը. «Նա գրում ու ստեղծագործում էր անգլերեն և պարսկերեն, հիմնականում անգլերեն, սակայն երազում, սիրում և թախծում էր հայերեն: Ալիշանը մշտապես խնդիր ուներ ինքնության բնորոշման հետ: Բնորոշ են նրա «Փախստական» բանաստեղծության տողերը. «Ես կարիք ունեմ կառուցվածքի: Ձևի կարիք ունեմ, երբ պոետը խենթ հայ քահանա է, երբ պոետը հարբած իրանական հոգևորական է» (Peroomian 2006:288): Ինչպես նշում է Վահե Օշականն իր «Հայկական սփյուռքի գրականություն» ուսումնասիրության մեջ. «Սփյուռքը գերշարժուն և հարափոփոխ իրականություն է: Մտքերի խճանկար և մասամբ հյուրընկալ երկրի մշակույթով, մասամբ ազգային ավանդույթով նորացված կենսաոճ» (Oshagan 1986:224): Ալիշանը թողել է արդի իրանական պոեզիայի ուսումնասիրություններ ի հարուստ գիտական

ժառանգություն: Հետմահու լույս են տեսնում նրա ստեղծագործությունների ամբողջական հավաքածուները՝ «Մեռած մարդու ստվերը» (2010) , «Ազատ անկում» (2010թ.) խորագրերով:

Գրականագետ, գրող, հրատարակիչ, իրանա-ամերիկյան գրականության բազմաթիվ ընտրանիների խմբագիր Փ. Քարիմը իր «Նուռեր» բանաստեղծության մեջ քննության է առնում երեք սերունդների մշակութային ինքնության խնդիրը: Իրանական, հրեական, ամերիկյան ինքնությունները՝ մեկտեղված մեկ մարդու ճակատագրի մեջ:

«Արմատներ ունենալու համար իրենց նոր հողում՝ մայրիկը և Բաբան տնկեցին հայրենի ծառեր. մադրոն, կաղնի: Եվ մանգանիտա՝ ճանապարհի վերջում: Հիշելու համար իրենց օտարությունը՝ նրանք տնկեցին ձիթապտուղ, նուշ, սերկևիլ, նուռ... Ինչպես ճաշակել նուռ առանց ինքնատիպության: Այն դանդաղ և հստակ ճիգ է, պաշտամունքի պահ...

Այս աշուն իմ երկու տարեկան մանչուկը, անվախ ուտելով առաջին նուռը, իր նրբիկ, զննող մատիկներով՝ սերմերը բերքի մեկ առ մեկ, ձեռակերտ նախշազարդ իր մկրտությամբ առաջարկեց ինձ՝ անավարտ պատմության մնացուկների նման, ժառանգած մոր որովայնում...» (Karim 2006: 102-104):

«Իումիի ժպտացող նուռեր» պոեմում Քարիմը գրում է. «...ժպտացող նուռը ողջ այգին լցնում է կյանքով: Պահպանելով ընկերությունը սրբի: Դարձնելով քեզ մեկը նրանցից...Նուռը մաքրագործում է արյունը, այն օգնում է երկու սեռերի պտղաբերությանը, ահա թե ինչու են Իրանում նռան գավաթը առաջարկում որպես հարսանեկան նվեր... Նուռը և սերը ունեն հատուկ կապ» (Sayres 2013:113):

Իրանա-ամերիկյան սփյուռքում հրեա կանայք իրենց լիովին չեն ամերիկանացրել, փոխարենը՝ ուղղակիորեն ներդաշնակ են դարձրել ու հարթեցրել են շատ ինքնություններ, որպես կին, որպես հրեա, որպես իրանցի և որպես ամերիկացի: Մինչ առաջին սերնդի կանայք յուրացնում էին շիական և գրադաշտական կրոնական ծեսերը, իսկ երկրորդ սերունդը որդեգրում էր շահական աշխարհիկ գիտակցությունը, երրորդ սերնդի կանայք որդեգրում և ողջունում են Լոս Անջելեսում գործող Աշքենագի կրոնական շարժումը (Soomekh 2012:176): Իրանցի հրեա կանայք շարադրում են իրենց պատմություններն ու հուշերը վտարանդիության լեզվով՝ փորձելով ցույց տալ հրեա-իրանցիների ճակատագիրը Ամերիկայում և կարոտը դեպի տուն (Milani 2011:1-2):

Ինչպես նշում է գրող Ֆ. Գոլդինը՝ «Մինչ արտագաղթը Միացյալ Նահանգներ՝ Է. Յաքոբիանը մնում էր եզակի հրեա կին ստեղծագործողը

իրանական գրականության մեջ» (Goldin 2009:110): Այսօր իրանա-ամերիկյան գրական ընտրանիներում մեծ թիվ են կազմում հրեա կանանց հուշապատումները: Դարեր շարունակ կյանքի պատմությունները գերիշխող են եղել իրանցի հրեա կանանց բանավոր ավանդույթում:

Հրեա երիտասարդ շատ կանայք հիասթափություն են ապրում ինքնագոհաբերության և սեփական զգացմունքային ու հոգեբանական կարիքներն անտեսելու՝ իրենց մայրերի օրինակից: Նրանք համարում են, որ հետևելով *նաջիր- ազնիվ, վսեմ* մնալու ավանդույթին՝ մայրերը թյուր դաստիարակություն են տալիս սեփական դուստրերին:

Արդի իրանական վտարանդի գրականության ներկայացուցիչ Ջ. Նահայիի արձակում մշտապես հրեական ինքնության, տան կարոտի պատմություններն են: «Սիրամարգի ճիչը» վեպում սիրամարգի սիմվոլիկ կերպարի միջոցով ներկայացվում են հրեա մայրերն ու կանայք՝ սկսած XIXդ. Մինչև իսլամական հեղափոխությունը: Վտարանդիության մասին են պատմում Նահայիի «Լուսնի շողը Հավատքի պողոտայում», «Կիրակնօրյա լույթուն», «Կասպից ծովի երազները» վեպերը:

Իր «Հարսանեկան երգ. իրանցի հրեա կնոջ հուշերը» գրքում Ֆ. Գոլդինը գրում է. «Նկարագրում եմ ընտանիքիս փախուստը Իրանից Իսրայել, մենք թափառեցինք երկրագնդի շուրջ՝ փորձելով գտնել տուն» (Goldin 2009:119): Գոլդինի հուշերը հյուսվում են մանկության բակի՝ Շիրազի *մահալեի կամ հրեական* թաղամասում: Հ. Սարշարի կարծիքով. «Իրանի մշակութային բնապատկերի վրա մահալեն մշտապես ներկայացրել է «այլոց» անհամատեղելի գոյության տարածք՝ հեռու զարգացող հասարակությունից կամ ոչ հարազատ, նույնիսկ, 1960-ի ինտեգրված իրանցի հրեաներից: Գոլդինը մեզ ուղեկցում է այդ ժամանակաշրջանի Շիրազի մեկուսացված, չքավոր անկյուն» (Sarshar 2014:191):

Գ. Ասայեշի՝ մանկության օրերի մասին պատմող «Շաֆրանե երկինք» հուշապատկերային ասեղնագործության մեջ առանձնակի գունազարդում ունի պապիկի այգին՝ «լի ծիրանի, ուռենու ծառերով, որտեղ սպիտակ բալենու եթերային բողբոջները միախառնվում են ճապոնական սերկևիլի մեղմ վարդագույն բողբոջների հետ» (Asayesh 1999:71):

Այս հուշագրություններում հաճախ հուշերը ներկայացվում էին որպես վտարանդիության ներքին տեղագրություններ: Թ. Բարամփուրի «Տեսնել և նորից տեսնել» հուշագրության մեջ հեղինակի խնդիրը ոչ այնքան Իրանի կարոտն էր, որքան «նորմալ» ամերիկյան մանկության տենչանքը, որտեղ փոքրիկ Թարան հանդես է գալիս որպես արքայադուստր՝ գերեվարված իր թագավորությունից» (Darznik 2008:61):

Մեկ այլ՝ «Վտարանդիություն, սնունդ և ինքնություն. միջադեպեր և բաղադրատոմսեր Ա. Նազարյանից» գրքում ծագումով հրեա Նազարյանը գրում է. «Ես գրում եմ ընտանիքիս հուշերում. Կյանքը Այցելու է: Մենք չբերեցինք կահույք, ոչ էլ շատ հագուստ... Նա, ով երբեք ստիպված չի եղել լքել իր հայրենիքը, անհրաժեշտությունը այս «իրերի» դժվար կկարողանա հասկանալ: Շատ մարդիկ ունեն ընտանեկան գանձեր՝ հավաքված օրինակելի, անխռով ողջ կյանքի ընթացքում, անցկացնելով նույն քաղաքում կամ նույն հարևանության միջավայրում:

Նրանք իրենց պահպաններին շարունակականության և ինքնության զգացում են հաղորդում: Ամենաարժեքավոր գանձը իրանահրեական համայնքի սերն էր ծեսերի հանդեպ, մեր սերը՝ պահպանելու և տոնելու մեր հրեական ժառանգությունը: Միջին Արևելքի կամ պարսկական բուրմունքները նման են սոսնձի, որոնք համախմբում էին մեզ որպես համայնք, նույնիսկ երեսուն տարի անց, Իրանը լքելուց և Ամերիկայում հաստատվելուց հետո...» (Nazarian 2013: 109):

Օմիդ Ֆալահազադի «Այսպես են բարձրանում կոպերը կյանքի» գրքում զետեղված «Սաբգե» պատմվածքում շոշափվում են ազգային ինքնության, ցավի ու վտարանդիության խնդիրները մի բահայի ընտանիքի աչքերով, որը, կորցնելով տան ավագին, շարունակում է իր ցավի նոր ուղին օտար ափերում, որտեղ այնքան չպատմված զրույցներ պետք է լսելի դառնան: Վտարանդիության նեղ ու անեզր տարածությունների ներքին պահանջով պետք է սպիանան հին վերքերը՝ կյանքի նոր ռիթմը զգալու համար: Զիբայի և Զոհրաբի մոր խնդրանքով, ով Բոստոնի տարեցների տանը խնամակալ էր աշխատում, մինչև Նոուտուզը պետք է աճեցված լինի սաբգեն, որն առաջինը կզարդարի «հաֆթ-սինի» ավանդական սեղանը:

Մայրը գտել էր ծանր հուշերի մեջ սուզված իր զավակներին հաշտեցնելու գաղտնիքը: Սաբգեն նորի ու ծաղկունքի խորհուրդն է, որի գոյությունը հիշողության և ազգայինի պահպանման հրամայականն է՝ ապրեցնելու հայրենիքի կարոտը երիտասարդների վիրավորված հոգիներում (Fallahazad 2013: 77-93):

Այսպիսով, իրանա-ամերիկյան սփյուռքի գրականության մեջ հիշողության միջոցով վերակազմավորված «ինքնություն» և «մշակույթ» սահմանումների համար ազգը և տունը դառնում են առանցքային հայեցակարգեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Asayesh G., *Saffron Sky: A Life Between Iran and America*, Boston: Beacon Press, 1999, p. Berkeley, Los Angeles, Oxford: University of California Press, 1993, pp. 59-60.
2. Darznik J., *The Perils and Seductions of Home: Return Narratives of the Iranian Diaspora* - MELUS, 33(2), 2008, p. 61.
3. Fallahzad O., *Sabzeh* (excerpted from *So Lifts the Eyelid of Life*), *Tremors, New Fiction by Iranian American Writers*, Fayetteville, AR: University Arkansas Press, 2013,
4. Goldin F., *The Ghosts of Our Mothers: From Oral Tradition to Written Words- A History and Critique of Jewish Women Writers of Iranian Heritage* - *Nashim: A Journal of Jewish Women Studies & Gender Issues*, Number 18, Fall 5770/ 2009, p. 110.
5. Hall S., *Cultural Identity and Diaspora*, - *Identity: Community, Culture, Difference*, ed. Rutherford J., London: Lawrence & Wishart Ltd, 2003, pp. 222-224.
6. Karim P., M., *Let Me Tell You Where I've Been: New Writing by Women of the Iranian Diaspora*, Fayetteville: University of Arkansas Press, 2006, pp. 102-104.
7. Knippling A., Sh., *New Immigrant Literatures in the United States: A Sourcebook to Our Multicultural Literary Heritage*, West Port CT: Greenwood Publishing Group, 1996, p. 25
8. Nazarian A., *Exile, Food and Identity: anecdote and recipe* by Angela M., Nazarian - Sayres M., N., *Love and Pomegranates: Artists and Wayfarers in Iran*, Orange County, California: Nortia Press, 2013, p. 109.
9. Milani F., *Words Not Swords: Iranian Women Writers and Freedom of Movement*, New York: Syracuse 2011, pp. 1-2.
10. Oshagan V., *Literature of Armenian Diaspora* - *World Literature Today*, Vol. 60, No. 2, *Literatures of the Middle East, A Fertile Crescent*, (Spring 1986), p. 224
11. Peroomian R., *The Restless world Leonardo Alishan (March 1951- January 2005): A Burnt Offering on the Altar of the Armenian Genocide* - *Genocide Studies and Prevention: An International Journal*, Issue 3, Article 6, Vol. 1, 2006, p. 288.
12. Sayres M., N., *Love and Pomegranates: Artists and Wayfarers in Iran*, Orange County, California: Nortia Press, 2013, p. 113.

13. Sarshar H., The Jews of Iran: The History, Religion and Culture of a Community in the Islamic World, New York: I. B. Tauris & Co Ltd, 2014, p. 191.
14. Soomekh S., From the Shahs to Los Angeles: Three Generation of Iranian Jewish Women Between Religion and Culture, Albany: State University of New York Press, 2012, p. 176.
15. Левин З. И., Восток, Идентичность и Глобализация, Москва, ИВ, РАН, 2007, ст. 140.

REFERENCES

1. Levin Z. I., Identichnost I Globalizaciya, Moskva, IB, РАН, 2007.

ЛИЛИТ САФРАСТЯН - ПЕРЕОСМЫСЛЕНИЕ ИДЕНТИЧНОСТИ В КОНТЕКСТЕ ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЫ ИРАНО-АМЕРИКАНСКОЙ ДИАСПОРЫ

Ключевые слова: *идентичность, диаспора, литература, культура, Иран, родина, нация, память, изгнание.*

Литература ирано-американской диаспоры является важной межкультурной платформой, где иранская и западная концепции идентичности постоянно меняются, обновляются и реорганизируются. Иммигрант, как правило, в целом сохраняет свою культурную идентичность, которая сформировалась еще на родине. Приводятся размышления об этнокультурной идентичности, которые нашли место в произведениях иранских, армянских, еврейских и бахаистских писателей.

LILIT SAFRASYAN - REDIFYING IDENTITY IN THE CONTEXST OF LITERATURE OF IRANIAN-AMERICAN DIASPORA

Keywords: *identity, Diaspora, literature, culture, Iran, country, nation, memory, exile.*

The literature of the Iranian-American Diaspora is an important cross-cultural platform where the western and the Iranian concepts of identity are constantly changing, renovated, and reorganized. As a rule, the immigrant mainly preserves his cultural identity, which was formed even in his homeland.

Reflections on ethnocultural identity, which found a place in the works of Iranian, Armenian, Jewish and Baha'i writers, are presented.

Ներկայացվել է՝ 07.02.2020
Գրախոսվել է՝ 30.01.2020

**ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*Հիմնաբառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Միացյալ
Հայաստան, արևմտահայ փախստականներ, Արևմտահայ 2-րդ
համագումար, արևմտահայ Գործադիր Մարմին*

Արևմտահայ Գործադիր Մարմինը՝ հիմնվելով Արևմտահայ 2-րդ համագումարի որոշումների վրա, իր գոյության կարճատև ժամանակահատվածում (1919թ. փետրվար-հունիս) Հայաստանի Հանրապետության կառավարության հետ հաստատել է որոշակի հարաբերություններ: Մի քանի կարևոր, երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման համար իրականացվել են գործնական շփումներ և հանդիպումներ Գործադիր Մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների միջև: Արդյունքում ձեռք է բերվել քաղաքական գործակցության որոշակի փորձ: Այդ ժամանակաշրջանում արևմտահայ փախստականների ղեկավարների համար կարևոր քաղաքական խնդիր է հանդիսացել Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից Միացյալ Հայաստանի անկախության մասին հրապարակային հայտարարությունը: Արևմտահայ փախստականների ղեկավարները այդպիսի հայտարարությունը դիտարկել են որպես նախապայման՝ հանրապետության իշխանությունների նկատմամբ արևմտահայ փախստականների կողմից դրսևորված անվստահության զգացմունքի հաղթահարման և նրանց հետ քաղաքական գործակցության սկզբնավորման համար: Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից Միացյալ Հայաստանի անկախության մասին պատմական ակտի ընդունումը և Հայաստանի Խորհրդում Միացյալ Հայաստանի անկախության ակտի հանդիսավոր հռչակումը պայմանավորված է եղել մի շարք արտաքին և ներքաղաքական հանգամանքներով: ՀՀ իշխանությունների 1919թ. մայիսի 28-ի պատմական այդ ձեռնարկումը, միանշանակ, պայմանավորված է եղել նաև Միացյալ Հայաստանի անկախության հայտարարության նկատմամբ Արևմտահայ փախստականների 2-րդ

համագումարի քաղաքական որոշումներով և արևմտահայ Գործադիր Մարմնի նպատակասլաց քաղաքական գործունեությամբ:

Հայ ժողովրդի համար նվիրական՝ Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացումը նշանակել է հայկական հարցի փաստացի լուծում: Այդ հիմնանպատակի իրագործումը անհնար էր առանց հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների փոխադարձ համաձայնության և միասնական նպատակամղված գործունեության վրա հիմնված համատեղ գործակցության: Այդպիսի իրողության ստեղծման համար անհրաժեշտ է եղել հաղթահարել Հայաստանի Հանրապետությունում (1918-1920թթ.) տեղ գտած հատվածականությունը՝ իր դրսևորումներով (Հայրապետյան; 164-209) և հաստատել փոխադարձ վստահության վրա հիմնված միջհատվածական քաղաքական հարաբերություններ: Այդ նպատակների իրականացմանը ուղղված Հայաստանի Հանրապետության ազգային իշխանությունների և հանրապետությունում ապաստանած մոտ 150 հազար արևմտահայ փախստականների (Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ.; 60) ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների միջև երկխոսության և գործակցության սկիզբը փաստացի դրվել է 1919թ. փետրվարի 6-ից 13-ը Երևանում կայացած արևմտահայ փախստականների 2-րդ համագումարում (Հայրապետյան; 136-146):

Արևմտահայ 2-րդ համագումարի վերջին օրը՝ փետրվարի 13-ին, գաղտնի քվեարկությամբ ընտրվել է «Արարատեան Հանրապետութեան մէջ ապրող արևմտահայ հատուածի «Գործադիր Մարմին» (Համառօտ Տեղեկագիր; 15): Հայաստանի Հանրապետության իշխանությունների և օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների հետ տարատեսակ, այդ թվում դիվանագիտական շփումների ժամանակ արևմտահայ Գործադիր Մարմինը հանդես է եկել որպես Հայաստանի Հանրապետության սահմաններում ապաստանած արևմտահայ փախստականության օրինական շահերը ներկայացնող՝ Արևմտահայ 2-րդ համագումարի կողմից լիազորված մարմին: Գործադիր Մարմինը կոչված է եղել «Արարատեան Հանրապետութեան կառավարութեան և խորհրդարանի գործակցությամբ և համաձայնութեամբ» (Համառօտ Տեղեկագիր; 14-15) իրագործել Արևմտահայ 2-րդ համագումարի որոշումները: Համագումարը պարտադրել է Գործադիր Մարմինին «մնալ իր ստանձնած պարտականութիւններու և իրավասութեան մէջ մինչև Միացեալ Ազատ Հայաստանի պետական-օրէնսդրական հաստատութիւններու իրականացումը» (Համառօտ Տեղեկագիր; 14-15):

Արևմտահայ Գործադիր Մարմնի կարճատև գործունեության ժամանակահատվածում ¹ Հայաստանի Հանրապետության կառավարության և նրա առանձին ներկայացուցիչների հետ շփումների ժամանակ արծածված հարցերի, նրանց միջև ծավալված երկխոսության և գործակցության առանձնահատկությունների, այդ ընթացքում ծագած խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ ձեռք բերված փորձի բազմակողմանի և խորը վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ինչպես Հայաստանի առաջին հանրապետության, այնպես էլ նրանում ապաստանած արևմտահայերի պատմությունը լիարժեք ուսումնասիրելու համար:

Արևմտահայ 2-րդ համագումարը՝ փետրվարի 12-ին «քննելով Հայ ժողովրդի ներկայ կացութիւնը», «սրտագին» ողջունել և հայտարարել է «Ազատ և Միացեալ Հայաստանի անկախութիւնը» (Համառօտ Տեղեկագիր; 13): Հռչակելով «իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն համազգային հատաձներու և երկրամասերու միաւորութեամբ» (Համառօտ Տեղեկագիր; 13-14), համագումարը՝ քաղաքական բանաձևի հինգերորդ կետով պարտադրել է Գործադիր Մարմնին «գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան և խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու և իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար» (Համառօտ Տեղեկագիր; 13-14): Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացումը գործնական հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ էր հասնել Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից Միացյալ Հայաստանի անկախության ճանաչման մասին պաշտոնական հայտարարությանը: Արևմտահայ ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների համար Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից այդպիսի հայտարարությունն հանդիսացել է քաղաքական նախապայման՝ միջհատվածական գործակցությունը սկզբնավորելու և այն շարունակաբար իրագործելու համար: Այդ պաշտոնական հայտարարությունը արևմտահայ ղեկավար շրջանակների համար անհրաժեշտ էր Հայաստանի Հանրապետության և նրա իշխանությունների նկատմամբ արևմտահայ փախստականների մոտ ձևավորված անվստահությունն և սառնությունը փարատելու համար:

¹ Արևմտահայ Գործադիր Մարմինը գործել է 1919թ. փետրվար-հունիսին:

Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ գործակցության անհրաժեշտության վերաբերյալ ձևավորված գիտակցությունը արևմտահայ փախստականների ղեկավար շրջանակների մի մասի մոտ վերածվել էր անդրդվելի համոզմունքի: Վերջինս պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ նրանց մեծամասնությունը վստահ է եղել, որ առանց հայ ժողովրդի արևելահայ հատվածի ռազմաքաղաքական և մտավոր ներուժի օգտագործման անհնար կլինի Միացյալ Հայաստանի գաղափարի իրագործումը: «Միացյալ Հայաստանի մասին եկանք այն եզրակացության, որ եթե Կովկասահայությունը մեզանից անջատվի, Հայաստանը կը կորցնի իր նշանակությունը, որովհետև հայ ժողովուրդը չունի ստեղծագործելու համար բավարար ուժեր, եթե մյուսները չօգնեն նրան,- համագումարում քաղաքական բանաձևի շուրջ ծավալված մտքերի փոխանակության ժամանակ իր ելույթում մեծամասնության տեսակետը այսպես է հիմնավորել Ռ. Դրամբյանը,- Եթե մենք ունենանք երկու անջատ հայրենիքներ, ջլատված կը լինենք, ունենալ մեկ հայրենիք և մեկ կառավարություն, դա է եղել բոլոր հայերի իդեալը: Հանձնաժողովի մեծամասնությունը եկավ այն եզրակացության, որ այդ ակտը պետք է կատարել ամեն գնով, այսինքն միացման հարցը որոշել գործնականապես, եթե մենք հայտարարում ենք միացյալ Հայաստանի անկախությունը, ապա և աստիճանաբար պիտի գործի անցնել»²:

Հայաստանի Հանրապետության իշխանությունները՝ իրենց հերթին, դիվանագիտական խողովակներով Միացյալ Հայաստանի տեսլականը առաջ էին քաշել Փարիզի հաշտության վեհաժողովի առջև: Եվ իրոք, 1919թ. փետրվարի 12-ին Ա. Ահարոնյանի և Պողոս Նուբարի ստորագրությամբ Փարիզի հաշտության համաժողովի ղեկավար մարմնին ուղղված զեկուցագրում արդեն իսկ առաջադրվել էր Միացյալ Հայաստանի անկախության գաղափարը: Զեկուցագիրը վերահաստատել է դեռևս 1918թ. նոյեմբերի 30-ին դաշնակից պետությունների կառավարություններին Ազգային պատվիրակության կողմից Միացյալ Հայաստանի անկախության մասին արված հայտարարությունը³ : Համազգային այդ հիմնախնդրին վերջնական լուծումներ տալու համար հանրապետության իշխանությունները որպես ելակետ դիտարկել են արդեն իսկ գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս խորհրդարանի ու կառավարության իր կազմակերպված պետական կառավարման համակարգով: Հայաստանի Հանրապետության ազգային

² «Ժողովուրդ», Երևան, 26 փետրվարի 1919 թ.

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1005, թ. 1:

իշխանությունները՝ հաշվի առնելով հանրապետության ամրապնդան և հզորացման, ներքաղաքական կայունության ապահովման գործում արևմտահայ փախստականների ռազմաքաղաքական ներուժն օգտագործելու կարևորությունը ձգտել են արևմտահայերին ներգրավել հանրապետության ներքին սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին: Այդ է պատճառը, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար պետական կարևոր և առաջնահերթ լուծումներ պահանջող հիմնականպատակ է հանդիսացել հատվածականության՝ որպես ազգային-քաղաքական երևույթի հաղթահարումը: Վերջինս անհնար կլիներ առանց միջհատվածական համախմբված համերաշխ գործունեության ապահովման միջոցով համատեղ գործակցության առաջացման և զարգացման: Միջհատվածական այդպիսի գործակցության համար հիմք կարող էր հանդիսանալ Միացյալ Հայաստանի անկախության գաղափարի իրագործմանն ուղղված համատեղ գործունեությունը:

Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման գործադիր և օրենսդիր մարմինների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի խորհրդի «համաձայնությունը» ստանալու համար Գործադիր Մարմինը՝ իր գոյության արդեն իսկ առաջին օրերին, դիմել է գործնական քայլերի: Գործադիր Մարմինը առաջին հերթին դիմումներ է հղել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի խորհրդին: ՀՀ կառավարության 1919թ. փետրվարի 25-ի նիստում Ա. Խատիսյանը ներկայացրել է Միացյալ Ազատ Հայաստանի մասին ՀՀ իշխանությունների կողմից հայտարարություն անելու վերաբերյալ 1919թ. փետրվարի 23-ին «Արեւմտահայ Բ. Համագումարի» անունից «Արարատեան Հանրապետութեան պ. Մինիստր Նախագահին»⁴ ուղղված Գործադիր Մարմնի դիմումը (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ.:; 119):

«Արեւմտահայ Բ. Համագումարի» անունից «ողջունելով Արարատեան հայութեան կառաւարութեանը» Գործադիր Մարմինը նշել է, որ «լիահոյս է, որ այն եւս կը միացնէ իր ծայնը Արեւմտահայ համագումարի ծայնին – ունենալ մէկ հայրենիք եւ մէկ Միացեալ Ազատ Հայաստանի պետական կազմակերպութիւն»⁵: «Համագումարը գտնելով սոյն խնդիրը չափազանց այժմէական եւ հայութեան համար պատմական

⁴ Հայաստանի առաջին հանրապետությունում այդպես է անվանվել ՀՀ վարչապետի պաշտոնը:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 68:

ամենակարեւոր խնդիր, հաւատացած է, որ Արարատեան հանրապետութեան կառավարութիւնը կը փութայ օր առաջ յայտարարել Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը եւ գործնական քայլեր առնել միացումը իրականացնելու համար կեանքի մէջ,- նշվել է Գործադիր Մարմնի դիմումում⁶:

Միջազգային մեծ հնչեղություն ունեցող, պետության անվտանգության ապահովման առումով որոշակի վտանգներ պարունակող այդպիսի քաղաքական քայլը ձեռնարկելու համար հանրապետության ղեկավարությունը պարտադրված էր դրսևորել զգուշավոր և շրջահայաց մոտեցում: Լիապես համաձայն լինելով Գործադիր Մարմնի նշված դիմումում արտահայտված մտքերի հետ, ՀՀ կառավարությունը՝ այնուամենայնիվ, որոշել է հանձնարարել արտաքին գործերի նախարարին «Մինիստրների խորհրդին ներկայացնել զեկուցում՝ Արևմտահայ Խորհրդի առաջարկությունն իրականացնելու մասին» (Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ.:; 119): Կառավարության նման գուսպ և սպասողական դիրքորոշման պատճառները միանգամայն հասկանալի են: Անհրաժեշտ էր դիվանագիտական խողովակներով ճշտել Միացյալ Հայաստանի անկախության հայտարարության նկատմամբ Փարիզի հաշտության վեհաժողովի մասնակից պետությունների վերաբերմունքը այդպիսի հայտարարության նկատմամբ, վերլուծել այդ քայլի արտաքին քաղաքական հետևանքները:

1919թ. փետրվարի 28-ին Գործադիր Մարմինը որոշել է, «որ կարևոր է Արևմտահայ պատգամավորների մտնելը պարլամենտ և ապա Համագումարի Քաղաքական բանաձևը գործադրել՝ յայտարարելով Միացեալ ազատ Հայաստանի անկախությունը»⁷: Սակայն մարտի 13-ի նիստում Գործադիր Մարմնի նախագահ Վ. Տերոյանը հայտնել է, «որ պարլամենտը յայտարարում է դադար, ուստի անկախ մեր կամքից մեզ չի յաջողում Խորհրդարան մտնել, որով յառաջ է գալիս մի նոր հարց, ինչ յարաբերութիւն պէտք է պահել կառավարութեան հետ և ինչ պարտավորվածություններ դնել նրանց վրայ»⁸: Նույն օրը Գործադիր Մարմինը հրավիրել է «արտակարգ նիստ», որտեղ քննվել է «Կառավարութեան հետ յարաբերութեան հարցը»⁹: «Անդրադառնալով այն հանգամանքին, որ Խորհրդարանի մէջ մեր մասնակցութիւնը և

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 3 (հակ.):

⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 9 (հակ.):

⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 10:

Միացեալ Հայաստանի անկախութիւնը գործնական հողի վրայ դնելու խնդիրը ձգձգում է և յառաջ բերում դժուարութիւններ Հանրապետութեան Կառավարութեան և Խորհրդարանի կողմից, Գործադիր Մարմինը՝ «մեր դիրքը ճշտելու համար» որոշել է «դիմել կառավարութեան և պահանջել 670,000 ռ. Արևմտ.[ահայ] գումարներու հաշիւը և առաջարկել տալ Գործադիր Մարմին 300,000ր. փոխառութիւն ներգաղթի համապատասխան աշխատանքների համար»¹⁰: Արևմտահայ Գործադիր Մարմինը՝ իր հետագա գործունեությունը ապահովելու նպատակով կառավարության առջև, փաստացի, դրել է որոշակի պահանջներ: Ընդ որում, այն ունեցել է վերջնագրի տեսք: Կառավարության հետ ապագա գործակցության հնարավորության վերաբերյալ կարելի կլիներ գալ որոշակի եզրահանգման միայն նշված պահանջների նկատմամբ նրա վերաբերմունքը պարզելուց հետո:

Հաջորդ օրը Գործադիր Մարմնի նիստում Վ. Տերոյանը զեկուցել է, «որ ինքը Արևմտահայ գումարների և փոխառնութեան համար դիմել է Մինստր Նախագահին պաշտօնապէս. Արևմտահայ գումարների մասին նա յայտնել է, որ ինքը կը պահանջի Ֆինանսների Մինստրից հաշիւները և կը ներկայացնէ մեզ: Իսկ փոխարինութեան ¹¹ մասին Մինստր Նախագահ յայտնել է, որ դժար է այդ կատարել օրէնսդրական ճանապարհով, որովհետև մի շաբաթ յետոյ հաւանօրէն պարլամենտը գոյութիւն չի ունենայ, ուստի նա կըտայ Խնամատարական Մինստրութեան միջոցներից, որը ունի չնախատեսուած ծախսերից գումարներ: Ապա Մինստր Նախագահը յայտնել է Տերոյեանին, որ պէտք է կառավարութեան և Գործադիր Մարմնի յարաբերութիւնը ճշտել»¹²: Գործադիր Մարմինը որոշել է «բերանացի բանակցութիւններ շարունակել և եթէ որոշակի արտայայտութիւն կը լինի խնդիրը բերել ժողովի»¹³: Ինչպէս տեսնում ենք, ՀՀ վարչարպետ Հ. Քաջազնունու կողմից Գործադիր Մարմնի ֆինանսավորման հետ կապված հարցը լուծում է ստացել: Հ. Քաջազնունու այդ որոշումը, մի կողմից, պայմաններ է ստեղծել Գործադիր Մարմնի բնականոն գործունեությունը ապահովելու համար, մյուս կողմից, նպաստել է ՀՀ կառավարության և Գործադիր Մարմնի միջև գործակցությունը ծավալելու համար:

1919թ. մարտի 17-ին կառավարությունը քննարկել է արևմտահայ Գործադիր Մարմնի՝ «վիճակագրություն կազմելու և ներգաղթը կազմակերպելու համար նրան 300 000 ռ. փոխարինաբար բաց թողնելու

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Խոսքը փոխառվության (վարկի) մասին է:

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 10 (հակ.):

¹³ Տե՛ս նույն տեղում:

մասին» դիմումը»¹⁴: «Համարելով Տաճկահայերի վիճակագրությունը և ներգաղթի կազմակերպումը պետության ներքին գործ», կառավարությունը որոշել է. «Հանձնարարել Խնամատարության մինիստրության հոգ տանել այդ բոլորի մասին և հարկ եղած դեպքում միջնորդել Մինիստրների Խորհրդի առաջ վարկ բանալու մասին»¹⁵: Խնամատարության նախարարության դիվանից ստանալով կառավարության վերը նշված որոշման պատճեն¹⁶, Գործադիր Մարմինը 1919թ. մարտի 24-ին դիմել է «Արարատյան Հանրապետության» մինիստր-նախագահին¹⁷: Այդտեղ Գործադիր Մարմինն ներկայացրել իր տեսակետը կառավարության նմանօրինակ դիրքորոշման մասին: Նշելով, որ ներգաղթը ոչ թե մասնավոր կամ տեղական մի խնդիր է, այլ «Հայկական ընդհանուր մի հարց է» և որ այդ գործի կազմակերպման համար Գործադիր Մարմինն, ըստ ամենայնի, ցանկանում է առաջին հերթին համաձայնության գալ «Հանրապետական կառավարութեան հետ»¹⁸:

Սակայն՝ «շնորհիվ այն հանգամանքի, որ Հանրապետութեան Նախարարական Խորհուրդը ներգաղթը կը համարէ պետական ներքին գործ», առաջ է գալիս «քաղաքական մեծ դժարութիւն մը», - նշվել է Գործադիր Մարմնի գրությունում¹⁹: Գործադիր Մարմնի կարծիքով քաղաքական այդ «մեծ» դժվարությունը կայացել նրանում, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները փաստացի խուսափել են ի լուր ամբողջ աշխարհի բարձրաձայնել Միացյալ Հայաստանի անկախության վերաբերյալ իրենց քաղաքական դիրքորոշումը: Այսպես օրինակ, երբ Արևմտահայ 2-րդ համագումարը հայտարարել է «իր միաձայն կամքը» անկախ և միացյալ Հայաստանի վերաբերյալ՝ «Հանրապետութեան Խորհրդարանը ոչնչով ընդառաջ չգնաց այդ հայտարարության»²⁰: Մինչդեռ «յատկապէս մեր ժողովուրդը»²¹ իր ներկայ տառապանքներու մէջ՝ տեսնելով հանրապետության իշխանությունների «անորոշ և տատանող» քաղաքականությունը, կարիք է ունեցել «ապացուցանելու թէ դաշնակից ենք եղած և կուող կողմ, կամ պետութիւն ունենք և անկախութիւն կը ցանկանք, թէ հայ ժողովուրդեն

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 45:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 6, թ. 51:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 9, թթ. 55-55 (հակ.):

¹⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 55:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Տե՛ս նույն տեղում:

²¹ Նկատի ունեն արևմտահայ հատվածը:

հատաձևերը թույլ տալով անգամ չեն տատանվիր Միության և Միացյալ Հայաստանի հայտարարության և իրականացման առջև, թեև մասնակի յայտարարություններ հեռու և այստեղ էլ ատոնց հակառակ կը խոսին, բայց դարձեալ չեն հերքեր այդ ակտերի դեռևս չիրականացած լինելուն փաստը՝ ժողովուրդի, ժողովրդական ներկայացուցչության և անոր կառավարության կողմեն»²² : Այստեղ ակնհայտ ի հայտ է գալիս արևմտահայ հատվածի ազգային-քաղաքական դեկավար շրջանակների անվստահությունը Հայաստանի Հանրապետության իշխանությունների քաղաքականության նկատմամբ:

Հրավիրելով կառավարության ուշադրությունը նշված դժվարությունների վրա, Գործադիր Մարմինը այնուհետև հույս է հայտնել, որ ՀՀ կառավարությունը «լուրջ քննութեան» կենթարկի իր «քաղաքական դիրքի ճշտման հարցը նախարարական խորհրդի մէջ և այդպիսով մեզ հնարաւորութիւն տա՞ծ կ'լինե՞ք մէկ քայլ առաջ երթալու համագումարի որոշումներուն ընդառաջ, որ Միացեալ և Անկախ Հայաստանի յայտարարութիւնը պիտի լինի այժմ և եթ և առաջին հերթին...»²³: Ինչպես տեսնում ենք, Գործադիր Մարմինը փաստացի պնդել է, որ Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայտարարությունը կառավարությունը պետք է կատարի անհապաղ՝ «այժմ և եթ և առաջին հերթին»: «Գործադիր Մարմինս այնքան մեծ նշանակութիւն կուտայ ատոր, որ կը կարծէ թէ առանց այդ կանխորոշումներուն շատ դժար կը լինի ներգաղթը արտաքին թէ ներքին մեկ գործ համարել»,- ասվել է Գործադիր Մարմնի գրության մեջ²⁴:

Սակայն կառավարությունը չի շտապել արևմտահայ Գործադիր Մարմնի այդ նամակին, ըստ էության, հստակ պատասխան տալ: Այդ է պատճառը, որ վերջինիս մարտի 31-ի նիստում քննարկվել է «Գործադիր Մարմնի և կառավարութեան յարաբերութեան խնդիրը»²⁵: Արձանագրվել է, որ Գործադիր Մարմինը այդ «խնդրի շուրջը գրել է կառավարութեան և պահանջել, որ նա որոշի իր դիրքը, և յատնէ, սակայն մինչև հիմա պատասխան չէ ստացված»²⁶ : Որոշվել է «բերանացի յիշեցնել կառավարութեան» որ պատասխանի²⁷: Հետաքրքիր է, որ այնուհետև առաջարկվել է «համագործակցութեան մի ծրագիր մշակել կառավարութեան հետ աշխատելու՝ տանելու զինուորական, ներգաղթի և

²² Տե՛ս Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 9, թ. 55:

²³ Տե՛ս նույն տեղում, թ. 55 (հակ.):

²⁴ Տե՛ս նույն տեղում:

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 15 (հակ.):

²⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

այլ խնդիրներ»: Սակայն «հարցը թողնում է յաջորդ նիստին»²⁸: Ապրիլի 3-ին Գործադիր Մարմնի նախագահ Վ. Տերոյանը ՀՀ վարչապետի հետ հանդիպման ժամանակ նորից խոսել է քաղաքական խնդիրների մասին և առաջարկել է Հ. Քաջազնունուն պատասխանել «Արարատեան Հանրապետութեան քաղաքական դիրքը ճշտելու մասին» Գործադիր Մարմնի դիմումին²⁹:

Ակներև է, որ Գործադիր Մարմնի նշված գրավոր և բանավոր դիմումներով է բացատրվում նաև 1919թ. ապրիլի 3-ի կառավարության նիստում ընդունված որոշումը: ՀՀ կառավարությունը որոշել է. «Հայտարարել Հայաստանի Խորհրդում, որ հայկական պատգամավորությունների կողմից Փարիզում ընդհանուր համաձայնությամբ և մեր որոշման համեմատ հայտարարված է Միացյալ Հայաստանի անկախությունը»³⁰: Եվ իրոք, 1919թ. փետրվարի 12-ին Ա. Ահարոնյանի և Պողոս Նուբարի ստորագրությամբ Փարիզի հաշտության համաժողովին ուղղված զեկուցագրում արդեն իսկ առաջադրվել էր Միացյալ Հայաստանի անկախության գաղափարը: Զեկուցագիրը վերահաստատում էր ազգային պատվիրակության կողմից դեռևս 1918թ. նոյեմբերի 30-ին դաշնակից պետությունների կառավարություններին Միացյալ Հայաստանի անկախության մասին արված հայտարարությունը³¹: Անհրաժեշտ էր սպասել այդ քայլի նկատմամբ միջազգային՝ առաջին հերթին Փարիզի հաշտության վեհաժողովում հավաքված պետությունների արձագանքին: Այդ է պատճառը, որ 1919թ. ապրիլի 6-ի Գործադիր Մարմնի նիստում նորից քննարկվել է կառավարութեան հետ «Ընդհանուր հարցերի և վերջնական յարաբերութիւններու որոշման խնդիրը»³²: Որոշվել է կառավարության հետ գործակցության ընթացքում կուտակված և լուծում չստացած հարցերը «ուժեղ, կտրուկ և ուլտիմատի կերպով յաջորդի մշակել և առաջարկել կառավարութեան»³³:

Արդեն իսկ ապրիլի 8-ին Գործադիր Մարմնի նիստում Վ. Տերոյանը տեղեկացրել է Գործադիր Մարմնի անդամներին, «որ Քաջազնունին յայտնել է. կառավարութիւնը որոշում ունի Հայաստանի անկախութեան մասին և ցանկանում է բանակցութիւններ վարել այդ առթիւ Գործադիր

²⁸ Տե՛ս նույն տեղում:

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 17:

³⁰ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 60:

³¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1005, թ. 1:

³² Տե՛ս նույն տեղում, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 17 (հակ.):

³³ Տե՛ս նույն տեղում:

Մարմնի հետ և նշանակել է ժամադրություն»³⁴ : Նույն նիստում Վ. Տերոյանը հայտնել է նաև, որ «կառավարությունը որոշել է իբրև ինֆորմացիայ պարլամենտում յայտարարել, որ Հայկական պատգամաւորութիւններու կողմից Փարիզում ընդհանուր համաձայնութեամբ և իր որոշման համեմատ յայտարարել է Միացեալ Հայաստանի անկախութիւնը»³⁵ : Հայտնելով այդ մասին Վ. Տերոյանին, վարչապետը այնուհետև «հարցրել է թէ Գործադիր Մարմին բաւարարած է այս որոշումով թէ ոչ»³⁶ : Այդ առթիվ Գործադիր Մարմնի նիստում ծավալվում է երկարաշունչ քննարկում : Արդյունքում Գործադիր Մարմինը «որոշում է. յաջորդին մշակել Գործադիր Մարմնի պլատֆորման քաղաքական խնդրի, ներգաղթի և արտաքին քաղաքականութեանց վերաբերմամբ և երբ այս պլատֆորման ընդունւի կառավարութեան կողմից այդ դէպքում բաւարար համարել կառավարութեան յայտարարութիւնը Միացեալ Հայաստանի մասին»³⁷ : Որոշվել է ներկայացվելիք «պլատֆորման մշակել հետևեալ հիմունքներով՝ ազգայնացում, ներգաղթ, զինուորական մասեր, Միացեալ Հայաստանի օրէնտացիա, ընտրովի պարլամենտ»³⁸ :

Գործադիր Մարմնի հաջորդ՝ ապրիլի 11-ի նիստում Վ. Տերոյանը ներկայացրել է «Գործադիր Մարմնի Կառավարութեան հետ ունենալիք յարաբերութեան իր կազմած պլատֆորման», որը չի ընդունվել³⁹ : Ապրիլի 28-ին Գործադիր Մարմինը քննարկել է «ստեղծված ներկայ կացութեան վերաբերմամբ Հանրապետութեան քաղաքականութեան հանդէպ» նոր առաջարկների մասին հարցը⁴⁰ : Առաջարկվել է Հանրապետության կառավարության «ներկայ քաղաքականութեան հանդէպ նոր առաջարկներ բերել» : Քննարկման արդյունքում «թեր ու դէմ վիճաբանութիւններից յետոյ» Գործադիր Մարմինը «որևէ եզրակացութեան չի յանգում և հարցը յետաձգում է»⁴¹ : Ինչպես տեսնում ենք, ՀՀ կառավարության գործակցության հետ կապված հարցերի շուրջ արևմտահայ Գործադիր Մարմնի անդամների մոտ առկա էին տարածայնություններ, որոնք հնարավորություն չեն տվել նրանց հանգելու միասնական դիրքորոշման :

³⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 18 :

³⁵ Տե՛ս նույն տեղում :

³⁶ Տե՛ս նույն տեղում :

³⁷ Տե՛ս նույն տեղում :

³⁸ Տե՛ս նույն տեղում :

³⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 19 (հակ.) :

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 25 :

⁴¹ Տե՛ս նույն տեղում :

Մայիսի 13-ին Գործադիր Մարմնի հերթական նիստում ընթերցվել են «Փարիզի հայ պատվիրակության» նամակները⁴²: «Կարդացում է Դաշնակից պետութիւններուն Պողոս Նուբար փաշայի, Ա. Ահարօնեանի ներկայացուցած յուշագիրը ներգաղթի մասին: Նախագահն յայտնում է, որ միաժամանակ մեկ գրութիւն են ուղղել դաշնակիցներուն պարենաւորման խնդիրներու շուրջը, իսկ Ա. Ահարօնեան մեկ հատուկ գրութեամբ պահաջել է իրեն տեղ տալ Հաշտութեան Կոնֆերանսում, որպէս Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչի, որ Անդրկովկասի անկախութենէն ետքը թիրքերու դէմ պատերազմող է և այլն»⁴³: Այդ նամակները՝ մի կողմից, հաստատել են կառավարության պնդումը, որ Միացյալ Հայաստանի անկախության մասին համատեղ դիրքորոշումը ներկայացվել է Փարիզի վեհաժողովին Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի և ՀՀ կառավարության պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանի կողմից, մյուս կողմից, ակներև վկայել են նրանց միջև որոշակի գործակցության փաստի մասին: Այնուհետև Տերոյանը զեկուցել է «Խատիսեանի հետ ունեցած տեսակցութեան մասին», նշելով որ «Խատիսեանը վերադառնալով Թիֆլիզից յայտնում է. 1) Որ Անգլիացիները համաձայնել են, որ կառավարութիւնը վերցնէ Մակուի երկաթգիծը և սկսէ ներգաղթ դէպի Բայազետ, Ալաշկերտ. 2) Յայտնել են, որ իրենք Անգլիացիներն էրզրումում ամրանում են»⁴⁴:

1919թ. մայիսի 14-ի Գործադիր Մարմնի նիստում «քննում է ներգաղթի համագործակցութեան ծրագիրը: Ելնելով Գործադիր Մարմնի այդ նիստում կայացած քննարկման և քվեարկության արդյունքներից նախագահ Վ. Տերոյանը՝ ով ՀՀ կառավարության հետ գոծակցության հարցերում ունեցել է ավելի արմատական հատվածական դիրքորոշում, հրաժարական է տալիս: Ձայների մեծամասնությամբ Գործադիր Մարմնի նախագահ է ընտրվել ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցության կողմնակից Վ. Քրմոյանը:

1919թ. մայիսի 25-ին Գործադիր Մարմնի նիստում քննարկվել է «Մայիս 28-ի Հանրապետութեան անկախութեան տոնի» մասին հարցը⁴⁵: Այստեղ նշվել է, որ «յառաջիկայ Մայիս 28-ին տօնւելու Հայաստանի անկախութեան առաջին տարեդարձը» և որ «Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը յայտնել է Գործադիր Մարմնի նախագահին, որ իրենք նախօրօք կը համաձայնեն Արևմտահայ պատգամաւորներ գան

⁴² Տե՛ս նույն տեղում, թ. 30:

⁴³ Տե՛ս նույն տեղում:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 30 (հակ.):

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 34 (հակ.):

Պարլամենտ և նոյն նիստում յայտարարել Միացեալ Հայաստանի անկախութիւնը»⁴⁶: Գործադիր Մարմինը որոշել է, որ «այս խնդրի առթիւ Գործադիր Մարմինն ունի իր գրութիւններ ուղղած Խորհրդարանի ֆրակցիաներին, որոնց պատասխանը տակաւին չէ ստացւած: Եւ քանի որ խնդիրը դրում է ժողովի կիսապաշտօնական ձևով և որևէ պաշտօնական գրաւոր առաջարկ չը կայ, ուստի այս հարցը ըստ էութեան չի քննուում»⁴⁷:

1919թ. մայիսի 26-ին ՀՀ վարչապետի տեղակալ Ա. Խատիսյանը նախարարների խորհուրդին է ներկայացրել «Մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության տարեդարձի տոնին, անկախ և միացյալ Հայաստանի ակտը հայտարարելու մասին» իր զեկուցումը⁴⁸: ՀՀ կառավարությունը որոշել է «հավանություն տալ առաջարկված ակտի խմբագրությանը» և հանձնարարել վարչապետին հրապարակել այդ ակտը⁴⁹: «Միացեալ Հայաստանի յայտարարութեան բնագրի նախագիծը ես կազմեցի,- գրել է Ա. Խատիսյանը,- նախարարներու խորհուրդը քանի մը խմբագրական սրբագրութիւններ մտցնելէ ետք, հաստատեց զայն» (Խատիսյան, 151): Հունիսի 4-ի Հայաստանի Խորհրդի նիստում Ա. Խատիսյանը հայտնել է, որ այդ որոշումը կայացնելու ժամանակ կառավարության նիստին «ներկայ եղջը նախարարներէն հինգը կողմնակից էին յայտարարագրի հրատարակման, մէկը ձեռնպահ էր, իսկ երթերորդը՝ դէմ: Ձեռնպահ նախարարը սկզբունքով համաձայն էր, բայց յայտարարագիրը հրապարակելու իրաւասութիւնը կը վերապահէր խորհրդարանին, եւ ոչ թէ կառավարութեան» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 93-94):

Գործադիր Մարմնի մայիսի 25-ին հաջորդած նիստում ներկայացվում է «Հայաստանի Հանրապետութեան N1427 27 Մայիս 1919 թ. գրութիւնը ուղղած Գործադիր Մարմնին, որով առաջարկուում է Պարլամենտին ուղարկել 12 պատգամաւորներ» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 36): Այստեղ Վ. Տերոյանը առաջարկում է «այս օր և եթ գրել կառավարութեան և հարցնել թէ՞ կառավարութիւն ինչ՞պէս է հասկանում իւր ուղղած երկու պաշտօնական գրութիւնների իմաստը, որոնցից մեկի մէջ Գործ.[ադիր] Մարմինը համարում է Արևմտահայ կեանքի լաւատեղեակ մի հաստատութիւն, միւսի մէջ հրաւիրում է Արևմտահայ ներկայացուցիչներ ղրկել Պարլամենտ, այս հարցը դրական իմաստով ստուգելուց յետոյ ուղարկել պարլամենտ ներկայացուցիչներին» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական

⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 112:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում:

Քայլը; 36): Այդ արաջարկությունը քվեարկվում է. սակայն չի անցնում (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 36): Փաստացի՝ Գործադիր Մարմնի նիստում մասնակցող անդամների ձայները հավասարապես կիսվել էին: Ելնելով քվեարկության նմանօրինակ արդյունքից՝ նիստը «երկար վիճաբանության նիւթ է դարձնում այս խնդիրը և 5 ձայնով որոշում է. եթէ քվեարկության ժամանակ ձայներ կէս առ կէսի բաժանւեն նախագահի ձայնը գերակշռող է» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 36): Այնուհետև նիստում «առաջարկում է կառավարութեան առաջարկէն դրական իմաստով պատասխանել, ստանում է 4 ձայն և անցնում է նախագահի 1/2 ձայնի առաւելութեամբ, դեմ են Սմբատ, [Վ.] Տէրոյեան, [Գ.] Բուլկարացի, [Ռ.] Դրամբեան, կողմ են [Վ.] Քրմոյեան, Արմէն [Սասունի], [Վ.] Յօխիկեան, [Ա.] Կիտուր» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 36): Որոշվում է, որ Գործադիր Մարմնի անդամներից Հայաստանի խորհուրդ են մտնելու Ա. Սասունին, Վ. Հոխիկանը, Վ. Քրմոյանը, Ա. Կիտուրը: Սմբատը, Վ. Տերոյանը, Գ. Բուլկարացին, Ռ. Դրամբյանը հրաժարվել էին» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 36, հակ.): Նիստի վերջում որոշվում է «Հայաստանի անկախութեան ակտի առթիւ կարդալ հետևեալ դեկլարացիան. <<Կանգնած մնալով Արևմտ.[ահայ] Բ. Համագումարի ընդունած քաղաքական բանաձևի տեսակէտի վրայ Գործադիր Մարմինը որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմաններում ապրող Արևմտահայերու ներկայացուցչական օրգան՝ լսելով կառավարութեան յայտարարութիւնը Հայաստանի միացման և անկախութեան մասին, սրտագին ողջունում է կառավարութեան կատարած ակտը և իր լիակատար պատրաստակամութիւն է յայտնում Հայաստանի պարլամենտի և կառավարութեան մէջ իր գործօն մասնակցութիւնը բերելու Միացեալ Հայաստանի գաղափարն իրականացնելու և Հայ ժողովրդի ազատութիւն և բարգաւաճումը ամրապնդելու համար»» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 36, հակ.):

Հաջորդ օրը՝ մայիսի 27-ին կառավարությունը՝ լսելով «Հայաստանի Խորհրդի ներկա կազմը Արևմտահայ Գործադիր մարմնի 12 ներկայացուցիչներով ուժեղացնելու մասին» վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանի զեկուցումը, որոշել է. «Համաձայն 1919 թ. ապրիլի 27-ի օրենքի հրավիրել Հայաստանի Խորհրդի նիստերին մասնակցելու որպէս Խորհրդի անդամներ Արևմտահայ Գործադիր Մարմնի 12 ներկայացուցիչներ»⁵⁰: Այդ որոշումը ձևակերպվել է նաև

⁵⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 114:

օրենքի տեսքով⁵¹: Նույն օրը Ա. Խատիսյանը գրությամբ դիմել է Գործադիր Մարմնին՝ խնդրելով «վաղվանից ուղարկել Ձեր 12 ներկայացուցիչները Պարլամենտի նիստերին ամսույս 28-ից մասնակցելու համար»⁵²: Գործադիր Մարմինը 12 պատգամավորների մասին իր որոշումը նույն՝ մայիսի 27-ին, ուղարկել է Հայաստանի Խորհրդի նախագահությանը⁵³:

Միացյալ Հայաստանի անկախության ակտի հայտարարման, Հայաստանի Խորհրդի նիստերին մասնակցելու համար արևմտահայ 12 պատգամավորներին հրավիրելու հետ կապված կառավարության որոշումների ընդունումը և դրանց հանդիսավոր հրապարակումը իրականացվել է բավականին արագ, առանց ավելորդ բյուրոկրատական քաշքշուկի: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ միայն մայիսի 30-ին վարչապետի կարգադրությամբ կառավարության գործերի կառավարչությունը խնդրել է Գործադիր Մարմնին «հայտնել արևմտահայերի կողմից ընտրված այն տասներկու անձնավորությանց անուն ազգանունները, որոնք մայիսի 28-ի ակտով մտնում են Հայաստանի Խորհրդի անդամների կազմի մեջ»⁵⁴: Նույն օրը Գործադիր Մարմինը Հայաստանի կառավարությանը և Խորհրդին ևս մեկ անգամ ներկայացրել է արևմտահայ 12 պատգամավորների անվանացանկը⁵⁵: Եվ միայն հունիսի 3-ին կառավարության գործերի կառավարչությունը Հայաստանի Խորհուրդ է ներկայացրել կառավարության մայիսի 26-ի և 27-ի վերը նշված որոշումները, Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը և արևմտահայ 12 պատգամավորների անվանացանկը⁵⁶: ՀՅԴ արևելյան բյուրոն Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտի «արձանագրությանը» անդրադարձել է միայն հուլիսի 4-ին և «որոշ ուղղումներից հետո» վավերացրել⁵⁷:

Հայաստանի Խորհրդի հունիսի 4-ի նիստում վարչապետ Ա. Խատիսյանը նշել է, որ մայիսի 28-ին Միացյալ Հայաստանի անկախության հայտարարության ակտի ընդունման համար դրդապատճառ են հանդիսացել, մի կողմից, այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության սահմանները հասել են նախկին

⁵¹ Տե՛ս նույն տեղում, գ. 27, թ. 213:

⁵² Տե՛ս նույն տեղում, գ. 23, մաս 2, թ. 259:

⁵³ Տե՛ս նույն տեղում, թ. 276:

⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 2, թ. 266:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 277:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 290:

⁵⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 144, թ. 5:

Թուրքիայի սահմաններին, մյուս կողմից՝ որ սահմանների վրա արևմտահայ փախստականների կուտակվելու պատճառով «ոչ մեկ հնար չկա ներգաղթը կանգնեցնելու» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 94): «Գործնական տեսակետն անհրաժեշտ էր ստեղծել Միացյալ Հայաստանի կառավարություն», - իրավացիորեն նշել է Ա. Խատիսյանը (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 94): «Ներգաղթի մասին Դաշնակիցներու հետ բանակցութեան ատեն հարց ծագած էր,- նծել է Ա. Խատիսյանը,- թէ ի՞նչ իրաւունքով է որ Հայաստանի կառավարութիւնը կը միջնորդէ Աւեմտահայերու համար, եւ թէ ի՞նչ երաշխավորութիւն կայ որ կառաւարութիւնը կը վայելէ Աւեմտահայերու վստահութիւնը: Այդ պակասը կը զգացվէր թէ՛ Դաշնակիցներու եւ թէ՛ մեր կողմէ: Բացատրութիւն կը տրուէր, որ փաստօրէն միացած ենք, բայց ձեւական պակասը կը զգացվէր ամէն քայլափոխի» (4, Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 94): Անհրաժեշտ է եղել փարատելու ինչպես արևմտահայ փախստականների մոտ, այնպես էլ արտերկրում տարածված այն կասկածը՝ «թէ Հայաստանի Հանրապետութիւնը չի ձգտիր բացարձակ անկախութեան եւ թէ այն կը վարանի Ռուսիայէն բաժնուելու համար» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 95): Մատնաշելով այն հանգամանքը, որ դաշնակիցների կողմից արդեն վաղուց թույլատրված էր ներգաղթը դեպի Բայազետ և Ալաշկերտ, Ա.Խատիսյանը ասել է. «Չէր կարելի երկիր մտնել իբրեւ հպատակ կամ օտար. պետք է մտնէինք որպէս տէրեր, եւ անհրաժեշտ էր օրինական իրաւասութիւն այդ երկրի տէրը համարուելու համար» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 95):

Արևմտահայ և արևելահայ հատվածների ղեկավար շրջանակների և նրանց ազգային-քաղաքական մարմինների միջև անմիջական, գործնական շփումների միջոցով իրականացվող քաղաքական գործակցությունն միայն կարող էր հանգեցնել համազգային այդ նվիրական գաղափարի՝ Միացյալ Հայաստանը տեսականը երկուստեք կյանքի կոչելուն: 1919թ. մայիսի 28-ին Հայաստանի Խորհրդի շենքում հանդիսավոր պայմաններում վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը հայերենով, ապա ֆրանսերենով հրապարակել է Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտը(Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 80-81): «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն», - նշվել է

ակտում⁵⁸: Միաժամանակ, ակտով հայտարարվել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը «հանդիսանում է միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը»⁵⁹ : Միացյալ Հայաստանի անկախության հայտարարման ակտի հրապարակումից հետո արևմտահայ 12 պատգամավորներ՝ Վ. Քրմոյանը, Ա. Սասունին, Վ. Հոխիկյանը, Ա. Կիտուրը, Հ. Մանուկյանը, Ա. Մաքսապետյանը, Վ. Առաքելյանը, Զ. Կորկոտյանը, Հ. Կոստյանը, Վան-Փուշը, Հ. Հայրապետյանը, Ա. Միրզոյանը⁶⁰ հրավիրվեցին տեղ գրավելու Հայաստանի Խորհրդի անդամների շարքում (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 81): Հանդիսավոր արարողության ժամանակ հնչեցին բազմաթիվ ճառեր և ողջույնի խոսքեր: Այդ շարքում երկրորդը՝ Հայաստանի Խորհրդի փոխնախագահ Ա. Սահակյանից հետո, Ամենայն Հայոց կաթողիկոսից առաջ Գործադիր Մարմնի անունից ողջույնի խոսքով հանդես է եկել Վ. Քրմոյանը: Վերջինիս կողմից ընթերցվել է նաև «Գործադիր Մարմնի գրավոր հայտարարությունը այն մասին, որ այս կառավարությունը կընդունվի իբրև կորիզ երկու հատվածներու քաղաքական պետականության, որուն շուրջ պետք է խմբվի Միացյալ Հայաստանի պետական կյանքը» (Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը; 83):

Այսպիսով, արևմտահայ Գործադիր Մարմնի գոյության կարճ ժամանակահատվածում (1919թ. փետրվար-հունիս) Հայաստանի Հանրապետության կառավարության հետ տեղի են ունեցել անմիջական շփումներ և երկխոսություն, հաստատվել են գործնական հարաբերություններ: Այդ ընթացքում ձեռք է բերվել քաղաքական գործակցության որոշակի փորձ: Բնական է, որ այդ գործակցությունը իրականացվել է երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ: Արևմտահայ փախստականների ղեկավար շրջանակների համար քաղաքական կարևոր խնդիրներից է հանդիսացել Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից Միացյալ Հայաստանի անկախության հրապարակային հայտարարության հարցը: Միացյալ Հայաստանի անկախության հայտարարությունը նրանց կողմից դիտարկվել է որպես հայ ժողովրդի արևմտահայ հատվածի առջև ծարացած ազգային-քաղաքական նպատակների իրականացման գործում առաջնահերթ քաղաքական քայլ: Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ գործակցության հաստատման գործում նրանց համար այն, փաստացի, հանդիսացել է նախապայման: ՀՀ

⁵⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 4, թ. 1, նույնը տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 56, թ. 16:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 23, մաս 2, թ. 277:

կառավարության կողմից Միացյալ Հայաստանի անկախության մասին պատմական ակտի ընդունումը և Հայաստանի Խորհրդում Միացյալ Հայաստանի անկախության հայտարարության ակտի հանդիսավոր հոչակումը պայմանավորված է եղել մի շարք արտաքին և ներքաղաքական հանգամանքներով: ՀՀ իշխանությունների կողմից 1919թ. Մայիսի 28-ի պատմական ձեռնարկումը, միանշանակ, պայմանավորված եղել է նաև Միացյալ Հայաստանի անկախության հայտարարության նկատմամբ Արևմտահայ փախստականների 2-րդ համագումարի քաղաքական որոշումներով և դրանց իրականացմանն ուղղված արևմտահայ Գործադիր Մարմնի նպատակաւլաց գործունեությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրութ, Բ. տպագրութիւն, տպարան «Համազգային», 1968, էջ 151:
2. Հայրապետյան Կ., Հատվածականության հաղթահարման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում, «Վէմ» համահայկական հանդես, Ժ (ԺԶ) տարի, 2018, թիվ 4(64), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ. 164-209:
3. Հայրապետյան Կ., Արևմտահայ 2-րդ համագումարը, «Բանբեր Երևանի համալսարանի», հասարակական գիտություններ, ԵՊՀ, Եր., 1992, էջ. 136-146:
4. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 198, ց. 1, գ. 4, թ. 1:
5. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 45, թ. 60, թ. 112, թ. 114:
6. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 68:
7. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 2, թ. 259, թ. 266, թ. 276, թ. 277, թ. 290:
8. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, թ. 213:
9. ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 56, թ. 16:
10. ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 6, թ. 51:
11. ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 7, թ. 3 (հակ.), թ. 9 (հակ.), թ. 10 և 10 (հակ.), թ. 15 (հակ.), թ. 17, թ. 17 (հակ.), թ. 18, թ. 19 (հակ.), թ. 25, թ. 30, թ. 30 (հակ.), թ. 34 (հակ.):
12. ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 9, թթ. 55-55 (հակ.):
13. ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1005, թ. 1:
14. ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 144, թ. 5:

15. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., Երևան, Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), 2010, էջ 60:
16. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ: 1918-1920թթ., Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2014, էջ. 119:
17. Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, տպ. «Աշխատավոր», 1919, էջ 15:
18. «Կառավարության լրաբեր», Երևան. 15 հոկտեմբերի 1918թ.:
19. «Ժողովուրդ», Երևան, 26 փետրվարի 1919 թ.
20. Միացյալ և Անկախ Հայաստան, Պատմական Քայլը, տպագրություն Օ. Արզուման, Կ. Պոլիս, 1919, էջ. 80-81, 83, 93-95:

REFERENCES

1. Xatisyan A., Hayastani Hanrapetowt'ean c'agowmn ow zargacowmy', Pe'yrowth', B. tpagrowth'iwn, tparan «Hamazgayin», 1968, e'j 151:
2. Hayrapetyan K., Hatvac'akanowt'yan hagh't'aharman himnaxndiry' Hayastani Hanrapetowt'yownowm, «Ve'm» hamahaykakan handes, Jh (JhZ) tari, 2018, t'iv 4(64), hoktember-dektember, e'j. 164-209:
3. Hayrapetyan K., Ar&mtahay 2-rd hamagowmary', «Banber Er&ani hamalsarani», hasarakakan gitowt'yownner, EPH, Er., 1992, e'j. 136-146:
4. Hayastani Azgayin arxiv (HAA), f. 198, c. 1, g. 4, t'. 1:
5. HAA, f. 199, c. 1, g. 14, mas 1, t'. 45, t'. 60, t'. 112, t'. 114:
6. HAA, f. 199, c. 1, g. 23, mas 1, t'. 68:
7. HAA, f. 199, c. 1, g. 23, mas 2, t'. 259, t'. 266, t'. 276, t'. 277, t'. 290:
8. HAA, f. 199, c. 1, g. 27, t'. 213:
9. HAA, f. 199, c. 1, g. 56, t'. 16:
10. HAA, f. 243, c. 1, g. 6, t'. 51:
11. HAA, f. 243, c. 1, g. 7, t'. 3 (hak.), t'. 9 (hak.), t'. 10 & 10 (hak.), t'. 15 (hak.), t'. 17, t'. 17 (hak.), t'. 18, t'. 19 (hak.), t'. 25, t'. 30, t'. 30 (hak.), t'. 34 (hak.):
12. HAA, f. 243, c. 1, g. 9, t't'. 55-55 (hak.):
13. HAA, f. 4033, c. 2, g. 1005, t'. 1:
14. HAA, f. 4047, c. 1, g. 144, t'. 5:
15. Hayastani Hanrapetowt'yan par'lamenti nisteri ard'anagrowth'yownner 1918-1920t't', Er&an, Hayastani azgayin arxiv (aysowhet' HAA), 2010, e'j 60:

16. Hayastani Hanrapetowt'yan kar'avarowt'yan nisteri ard'anagrowt'yowner: 1918-1920t't'. Er&an, Hayastani azgayin arxiv, 2014, e'j. 119:
17. Hamar'o't Teghekagir Ar&mtahay erkrord hamagowmari & kazmakerpich ko'mite'i hashivy', T'iflis, tp. «Ashxatavor», 1919, e'j 15:
18. «Kar'avarowt'yan Iraber», Er&an. 15 hoktemberi 1918t'.:
19. «Jhoghovowrd», Er&an, 26 p'etrvari 1919 t'.
20. Miacyal & Ankax Hayastan, Patmakan Qayly', t'pagrowt'iwn O'. Arzowman, K. Polis, 1919, e'j. 80-81, 83, 93-95:

КАРЕН АЙРАПЕТЯН - ВОПРОС ЕДИНОЙ АРМЕНИИ В ОТНОШЕНИЯХ ИСПОЛНИТЕЛЬНОГО ОРГАНА ЗАПАДНЫХ АРМЯН С ВЛАСТЯМИ РЕПУБЛИКИ АРМЕНИЯ

***Ключевые слова:** Республика Армения, Единая Армения, западноармянские беженцы, Второй съезд западных армян, Исполнительный орган западных армян*

За короткий период своего существования (февраль-июнь 1919 года) Исполнительный орган западных армян, основываясь на решениях Второго съезда западноармянских беженцев установил определенные отношения с правительством Республика Армения (РА). Вокруг некоторых важных, представляющих взаимный интерес вопросов осуществлялись деловые контакты и встречи между членами Исполнительного органа западных армян и правительства РА. В результате приобретался определенный опыт политического взаимодействия. Для западноармянских беженцев в этот период важным политическим вопросом являлся вопрос провозглашения властями РА о независимости Единой Армении. Руководящие деятели западноармянских беженцев такое публичное заявление правительства РА рассматривали как предпосылку для начала последовательного политического взаимодействия между ними и руководством РА. Для правительства РА принятие исторического акта о независимости Единой Армении и ее торжественное провозглашение на заседании парламента РА было обусловлено некоторыми внутри и внешнеполитическими обстоятельствами. Предпринятый властями РА этот исторический шаг был предопределен также политическими решениями Второго съезда западноармянских беженцев и целенаправленной деятельностью Исполнительного органа западных армян.

KAREN HAYRAPETYAN - THE ISSUE OF UNIFIED ARMENIA IN THE INTERRELATION OF THE EXECUTIVE BODY OF WESTERN ARMENIANS WITH THE AUTHORITIES OF THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *Republic of Armenia, United Armenia, Western Armenian refugees, Second Congress of Western Armenians, Executive Body of Western Armenians*

For a short period of its existence (February-June 1919), the Executive Body of Western Armenians, based on the decisions of the Second Congress of Western Armenian Refugees, established certain relations with the Government of the Republic of Armenia (RA). Business contacts and meetings were held between members of the Executive Body of Western Armenians and the Government of Armenia on some important issues of mutual interest. As a result, a certain experience of political interaction was acquired. During this period, an important political issue for Western refugees was the proclamation about the independence of a united Armenia by the authorities of the Republic of Armenia. The leading figures of the Western Armenian refugees considered such a public statement of the Government of Armenia as a prerequisite for the beginning of consistent political interaction between them and the leadership of the Republic of Armenia. For the Government of Armenia, the adoption of the historical act of independence of the United Armenia and its solemn proclamation at a meeting of the Parliament of the Republic of Armenia was due to some internal and foreign political circumstances. The historic step taken by the Armenian authorities was also predetermined by the political decisions of the Second Congress of Western Armenian Refugees and the purposeful activities of the Executive Body of Western Armenians.

Ներկայացվել է՝ 07.02.2020
Գրախոսվել է՝ 03.02.2020

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ՄԱՐԻԱՄ ԱԴԱՄՅԱՆ - հայցորդ, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն, ԲՊՀ

МАРИАМ АДАМЯН - соискатель, каф. языкознания и теории коммуникации, ГУ им. В. Брюсова

MARIAM ADAMYAN - PhD student, Chair of Linguistics and Theory of Communication, BSU

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ - հայցորդ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԲՊՀ

АНИ АСЛАНЯН - соискатель, каф. мировой литературы и культуры, ГУ им. В. Брюсова

ANI ASLANYAN - Ph.D student, Chair of World Literature and Culture, BSU

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ - ավագ դասախոս, ռոմանական լեզուների ամբիոն, ԲՊՀ

МАРГАРИТА БАГРАМЯН - старший преподаватель, каф. романских языков, ГУ им. В. Брюсова

MARGARITA BAGHRAMYAN - senior lecturer, Chair of Romance Languages, BSU

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵԴՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, անգլերենի ամբիոն, ԲՊՀ

ГАЯНЕ БАРСЕГЯН - кандидат филологических наук, старший преподаватель, каф. английского языка, ГУ им. В. Брюсова

GAYANE BARSEGHYAN - Ph.D, senior lecturer, Chair of English, BSU

ՍՎԵՏԼԱՆԱ ԲԱՐՍԵԴՅԱՆ - դասախոս, Ռուսաց լեզվի ամբիոն, բանասիրական ֆակուլտետ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

СВЕТЛАНА БАРСЕГЯН - преподаватель, каф. русского языка, филологический факультет, Ванadzорский государственный университет имени О. Туманяна

SVETLANA BARSEGHYAN - lecturer, Department of Russian language, Faculty of Philology, Vanadzor State University named after H. Toumanyan

ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերենի ամբիոնի վարիչ, ԲՊՀ

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН - доктор филологических наук, профессор, зав. каф. английского языка, ГУ им. В. Брюсова

GAYANE YEGHIAZARYAN - Doctor in Philology, Prof., Head of Chair of English, BSU

ՀՐԱՆՈՒՇ ԹՈՎՄԱՍՅԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն, ԲՊՀ

ГРАНУШ ТОВМАСЯН - доктор филологических наук, доцент, каф. лингвистики и теории коммуникации, ГУ им. В. Брюсова

HRANUSH TOVMASYAN - Doctor of Philological Sciences, Associate Professor, Chair of Linguistics and Theory of Communication, BSU

ԳԱՅԱՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ - դասախոս, ռուսաց լեզվի ամբիոն, բանասիրական ֆակուլտետ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

ГАЯНЕ ХАЧАТРЯН - преподаватель, Кафедра русского языка, филологический факультет, преподаватель, Ванadzорский государственный университет имени О. Туманяна

GAYANE KHACHATRYAN - lecturer, Department of Russian language, Faculty of Philology, Vanadzor State University named after H. Toumanyana

ՌՈՒԶԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - ավագ դասախոս, գերմաներենի ամբիոն, ԲՊՀ

РУЗАННА КАРАПЕТЯН - старший преподаватель, каф. немецкого языка, ГУ им. В. Брюсова

RUZANNA KARAPETYAN - senior lecturer, Chair of German, BSU

ԱՆՆԱ ԿՆՅԱԶՅԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլիական բանասիրության ամբիոն, ԵՊՀ

АННА КНЯЗЯН - доктор филологических наук, профессор, каф. английской филологии, ЕГУ

ANNA KNYAZYAN - Doctor of Science in Philology, Professor, English Philology Chair, YSU

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - պ.գ.թ., գիտության բաժնի պետ, ԲՊՀ

КАРЕН АЙРАПЕТЯН - к.и.н., руководитель по научной части, ГУ им. В. Брюсова

KAREN HAYRAPETYAN - Ph. D in History, Head of the Science Department, BSU

ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - ասպիրանտ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԲՊՀ

АРПИНЕ АРУТЮНЯН - Аспирант, каф. мировой литературы и культуры, ГУ им. В. Брюсова

ARPINE HARUTYUNYAN - PhD student, Chair of World Literature and Culture, BSU

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, գերմաներենի ամբիոն, ԲՊՀ

КАРИНЕ ОАНИСЯН - кандидат филологических наук, доцент, каф. немецкого языка, ЕГУЯСН

KARINE HOVHANNISSYAN - Ph.D. Associate Professor, Chair of German, BSU

ԴՈՆԱՐԱ ԴԱԶԱՐՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռոմանական լեզուների ամբիոն, ԲՊՀ

ДОНАРА КАЗАРЯН - кандидат филологических наук, доцент, каф. романских языков, ГУ им. В. Брюсова

DONARA GHAZARYAN - Ph.D., Associate Professor, Chair of Romance Languages, BSU

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ - ավագ դասախոս, ռոմանական լեզուների ամբիոն, ԲՊՀ

АНАИТ МКРЯН - старший преподаватель, каф. романских языков, ГУ им. В. Брюсова

ANAHIT MKRYAN - senior lecturer, Chair of Romance Languages, BSU

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, գերմաներենի ամբիոն, ԲՊՀ

СИРАНУШ ПАПОЯН - кандидат филологических наук, доцент, каф. немецкого языка, ГУ им. В. Брюсова

SIRANUSH PAPOYAN - PhD, Associate Professor, Chair of German language, BSU

ԱՄԱԼՅԱ ՊՈԴՈՍՅԱՆ - ասպիրանտ, Անգլիական բանասիրության ամբիոն, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, ԵՊՀ

АМАЛИЯ ПОГОСЯН - аспирант, каф. английской филологии, факультет европейских языков и коммуникации, ЕГУ

AMALYA POGHOSYAN - PhD student, Chair of English Philology, Faculty of European Languages and Communication, YSU

ՀԵՂԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ - հայցորդ, գրականության ամբիոն, Վանաձորի պետական համալսարան

ЭГИНЕ СААКЯН - Соискатель, каф. литературы, Ванадзорского государственного университета

HEGHINE SAHAKYAN - PhD student, Chair of Literature, Vanadzor State University

ԼԻԼԻԹ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Արևելագիտության ֆակուլտետ, ԵՊՀ,

ЛИЛИТ САФРАСТЯН - кандидат филологических наук, доцент, фак. Востоковедения, ЕГУ

LILIT SAFRASTYAN - Ph.D., Associate Professor, Faculty of Oriental Studies, YSU

Համակարգչային ձևավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի,
Աննա Ավետիսյանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (374 11) 300-150
Էլ. հասցե՝ info@brusov.am
<http://www.brusov.am>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 1(52) համարը երաշխավորվել է տպագրության ԲՊՀ-ի գիտական խորհրդի 30.06.2020 թվականի № 15 նիստի որոշմամբ: